

Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhib.am/>

E-mail: info@artsakhib.am

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhiblibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

ՎԱՔՐԱՆ ԱՌԱՆԵՄՅԱՆ

ԵՐԿՐԻ ԺԱՄԱՆԱԿԸ



ՎԱՅՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

ԵՐԿՐԻ ԺԱՄԱՆԱԿԸ

«Վաչագան Բարեպաշտ» հրատարակչություն
Ստեփանակերտ, 2014

ՀՏԴ 821.19-31 Աթանեսյան
ԳՄԴ 84(53)-44
Ա 263

Տպագրվում է ԼՂՀ պետպատվերով

*Ծնողներին՝ Սերգեյ, Նինել, տատիս՝
Հերսելյա Ղուլյանների պայծառ հիշատակին
Նվիրում եմ քույրերին՝ Վահիդային, Սուսանին,
Նվարդին, Նելլին, կնոջս՝ Ժեննիին,
զավակներին՝ Տաթևիկին, Տիրանին,
թոռներին՝ Վահրամին, Գոհարին, Գոռին*

Աթանեսյան Վահրամ

Ա 263 Երկրի ժամանակը/ Վ. Աթանեսյան.- Ստեփանակերտ:
«Դիզակ պլուս» հրատ., 2015, 256 էջ:

Գիրքն իր կառուցվածքով, ինքնատիպ շարադրանքով նոր սահմաններ է գծում վեպ հասկացության համար, ընթերցողը դառնում է գործողությունների անմիջական մասնակիցը. վեպը քնարական երկխոսություն է հեղինակի եւ ժամանակի միջեւ:

ՀՏԴ 821.19-31 Աթանեսյան
ԳՄԴ 84(53)-44

ISBN 978-9939-1-0166-8

© Վահրամ Աթանեսյան, 2015

ԻՐԵՎ ԱՌԱՋԱԲԱՆ՝ ԻՄ ՆԵՆԼԻ ՔՐՈՋ ԿԱՐԾԻՔԸ

Որպես հարազատ չէի ցանկանա, որ գիրքը տպագրվի: Պետրեները չեն մահանում, նոր ժամանակների Պետրեները ավելի սարսափելի են, չեմ ուզում, որ մեր երեխաների երեխաները նույնպես ապրեն թշնամական մթնոլորտում:

Իբրեւ ընթերցող ասեմ. գիրքն իր կառուցվածքով, ինքնատիպ շարադրանքով նոր սահմաններ է գծում վեպ հասկացության համար, ընթերցողը դառնում է գործողությունների անմիջական մասնակիցը. վեպը քնարական երկխոսություն է հեղինակի եւ ժամանակի միջեւ:

Ինձ համար նորություն էր Մեծ Մայրիկի կերպարի խտացումը, գոնե ինձ ծանոթ չէ նման կերպար հայ գրականության մեջ: Ազնվական ծագում չունեցող կինը ազնվական է՝ օժտված ոչ միայն իրեն պարտադրված, զսպված հանդուրժողականությամբ, այլեւ քաղաքագետի նուրբ հոտառությամբ, այս արժանիքներն իր ժառագանքին անաղմուկ փոխանցելու կարողությամբ:

Վեպում ընդգծված են պատմա-քաղաքական զուգահեռներ, ինչով պայմանավորված են անհատների խոր հիասթափությունը, այլեւ ժողովրդի բեկված ճակատագիրը. Պետրեգլխավոր հրամանատար, Բակունց- երիտասարդ սպա կալանավոր, Հասան Ջալալ Դոլայի արյունոտած ոտքեր Մեծ քոչի ճանապարհին- Մեծ քոչի զարհուրելի երթ եւ այսպես շարունակ...

Եւ այս մեծ հոլովույթի մեջ մարդ մնալու գերագույն ճիգ, երկիրը չլքելու, հողին կառչած մնալու, ինքն իրենից ու շրջապատից վեր կանգնելու տանջալի զգացում: Ժամանակն ինքնին անմիաստ է, մարդն է իմաստավորում ժամանակը, շունչ տալիս, հարմարեցնում իր նպատակներին, արդարացումներ փնտրում: 1920- 2010 թվականներն իմաստավորվում են գրքի հերոսներով: Կարծում եմ, վեպը կարելի է նաեւ անվանել «Մենք եւ ժամանակը»: Այն, ինչ գրված է վեպում, հնարավոր է տեսնել Էկրանին, կարծում եմ՝ վեպն իբրեւ սցենար հնարավորություն կտա որեւէ ռեժիսորի՝ ֆիլմ նկարահանելու:

20. 12. 2014թ.
Առաջածոր

ԵՐԿՐԻ ԺԱՄԱՆԱԿԸ

*Ձանգակատնից՝ անլուր, մառախլապատ
Ձանգերն է ինչ-որ մեկը գողացել...
Օսիպ Մանդելշտամ*

1941թ. հունիսի 22-ի գիշերը Տղան, որ տասներկու տարեկան էր, սարսափելի երազ տեսավ. «Մեւ ձիավորը, սուրը շողացնելով, թրատում է անտառի կատարները, նժույզը նրա տակ կատաղի խաղում, մոլապար է տալիս, երկնքում ոչ արեւ կա, ոչ՝ լուսին, - ցերե՞կ է, թե՞ գիշեր, - ոչինչ որոշ չի գատվում, ձայները խլացած են», - նա ճչաց ու արթնացավ՝ վաղ լուսաբաց էր: Քնել էր պատշգամբում՝ թախտի վրա: Տունը լուռ- լուռ էր: Ուզեց իջնել՝ մարմինն ընդարմացած, սառը - քրտնած էր: Փակեց աչքերը, բայց վախեցավ, որ երազը կկրկնվի: «Ու՞ր են տնեցիք», - կամացուկ հարցրեց ինքն իրեն եւ ավելի սարսափեց. այգում՝ ընկուզենու ամենաբարձր ճյուղին Ազոավն էր թառել: Կոռաց, եւ աշխարհը, որ երազի մեջ խուլուհամր, անգույն էր, չարագուշակ կենդանացավ: Վախը բջիջ առ բջիջ տիրացավ երեխայի գիտակցությանը:

Շատ տարիներ հետո նա երազը պատմում էր մանրամասն, որ՝ «եկավ, ծառերը թրատելով հասավ Յացուտ սար, հետո ձին գլուխը շուռ տվեց, դանդաղ վարճեց երկնքում ու գնաց՝ որտեղ արեւը մայր է մտնում՝ կորավ», - եւ ասում, որ դա եղել է Մեծ պատերազմի իր ստույգ կանխագագացումը, որ լինելու է կոտորած, ավերումն, սով, բայց՝ «մենք հաղթելու ենք»:

Պատերազմն այդ տնից երեք տղամարդ տարավ, տվեց յոթ երեխայի որբություն, մեծ-համերաշխ ընտանիքի բաժանում, - հորեղբոր կինն աղջիկներին հավաքեց - ետ գնաց հորանց. երեւի ճիշտը դա էր՝ եթե առավոտ վաղ նրա սենյակից Մեկի գողեգող դուրսգալը պիտի տեսնվեր՝ թող հորենական տանը լիներ՝ ինչ որ անմարդ ջահել հարսին ոչ արժեք կլինես, ոչ՝ արտոնող, համարյա՝ կես-մասնակից, - հայրն այգի ուներ, կով-ոչխար՝ աղջկա որբերին տիրություն կաներ, նրա տղան, որ փոխնակ կնոջից էր ու-

նեցել, ճակատից վիրավոր ետ եկել՝ մոտիկ տեղ՝ Քուլատակ դասատու էր, մարդուկին եւ աշխատավարձ էին ստանում, եւ՝ վիրավոր բանակայինի ամսապահիկ, գուցե ամերիկյան ձվի փոշուց՝ մի պտղունց, շաքարից մի կտոր էլ հորեղբոր թողած աղջիկներին տային՝ գնաց, մտավ կուսակցության շարքերն ու կոլխոզում եղավ օղակավար՝ իր նման որբեւայրիների վրա:

Հորը զորակոչեցին երազի հաջորդ տարվա գարնանը: Ամիս չանցած՝ կիսամեռ եկավ, թախտին, ինչպես բարձրացրել - պառկեցրել էին, քառասուն գիշեր խառը, դժնատեսիսլ երազների հետ կռիվ տվեց, քառասունմեկերորդ լուսաբացին ընկուզենու ամենաբարձր կատարին Ագռավն էլի կռռում էր, կնոջն ասաց. «Մեկիքսեթը խփվել է, բայց Խորենը կգա», - այդպես թախտի վրայից էլ տարան՝ գերեզման դրեցին, եւ հետո չէր հիշվում՝ անդազա՞ղ թաղեցին, թե՞ հին օրերից պահած տախտակ ունեին. ետ - բերածը բժշկագինվորական հանձնաժողովի Եզրակացությունն էր ծառայությանն անպիտանելիության մասին, եւ հարյուր ռուբլի փող՝ թուրքի Շիրվանլու գյուղում ստացել, նույն օրն էլ տարել էին Եվլախ՝ գնացք նստեցրել՝ հասցրել Դաղստանի Մախաչկալա՞, Թեմիրխանշուրա՞, - չէր ծախսել, ճոճան ռուբլիանոցների կապուկը, բանկային շրջաթուղթը դեռ վրան, պիջակի գրպանում էր, բայց արդեն փող չէր, «վերցրու, ասելն էլ ամոթ է՝ որտեղդ քսիր», - եթե գարու փուլն արժեր հազար ռուբլի, - վրա շաքար չանցած՝ Մայրը պիտի Մարտակերտ գնար՝ ում որ պետք է՝ բժշկագինվորական հանձնաժողովի Եզրակացությունը ներկայացնի, չորս որբին թոշակ նշանակեն, գյուղագործկոմի նախագահ Պետրեն ասաց. «Ախչի, դժվար ճամփա է, փախած բանակային ես տեսել Մեհմանա, տուր, ես երկու օրը կտանեմ», - բայց վերցրեց՝ Սորն արտելից հանել տվեց՝ տարավ կոլխոզ:

Արտելը կես-բանակային էր, ճակատի համար ֆուրգոն էին կապում, չիր էին չորացնում, փուռ բացել՝ բանվորներին շունչը կես կիլո հաց էին տալիս: Կոլխոզը՝ սրբած - մաքուր՝ «ամեն ինչ՝ ռազմաճակատի համար, ամեն ինչ՝ հաղթանակի համար», - եւ դեռ Հոր թղթերն էլ «կորցրեց», Սոր վրա գորգոռաց. «Ձենդ կտրի, անհարազատ կուլակային էլեմենտ, մարդդ ֆրոնտից եկել՝

տանդ մեռել, դու ուզում ես ընկեր Ստալինը լակոսներիդ թռչա՞կ տա»: Պետրեի հայրը Տղայի Թեոս պապի ոչխարածն էր եղել, ևս այդ տան հացը կերել էր, տղա երեխեքի հին շորը՝ հագել, «դասակարգային արդար վրեժի իրավունք» էր բանեցնում. պղինձը հավաքեց՝ «պաշտպանության ֆոնդի համար», աղբյուրի ճանապարհին կուժը Մոր ուսից իջեցրեց, ջուրը թափեց՝ տարավ, մատի հարսանեկան մատանին, որ ծանր էր՝ շուշեցի ոսկերչի աշխատանք, քաշեց-հանեց:

Տասնչորս տարեկան Տղան խուրձ էր կրում կալերը, քարկապում եզները սայլը շուռ էին տվել, անիվն անցել էր ոտքից, բժիշկ Շահգեղոյանին բերեց Լեւոն քեռին, որ կաղության հանգամանքով գորակոչից ազատ էր, բժիշկն ասաց՝ «մի քսան-երեսուն ձու է պետք՝ «յախու» դնեմ», - գիպս չուներ, ջարդվածքին ձվի դեղնուցից ամրակապ էր անում, - մաքուր սպիտակ կտոր կար, ձուն հարեւանով-բարեկամով հավաքել՝ երեխայի սրունքին «յախու» էին դրել, բայց մի ոտի վրա ոստոստալով՝ տնից փախել, գնացել էր դպրոց՝ սեպտեմբերի 1-ին, որովհետեւ տունը նրան ուտում էր Երազի եւ Ագռավի կռռոցի ահով կամ արդեն սիրահարված էր իրենց դասարանցի Նինելին, որ սովի եւ անմաքրության այդ տարիների բոլոր երեխաներից փախչում՝ դասերին միայն նրա կողքին էր նստում, որովհետեւ «ամեն իրիկուն ջուր էի տաքացնում, ինչքան էլ ուշ լիներ՝ երեխեքի ոտուզուխը լվանում էի, կիրակիներն էլ՝ լողացնում», - թեեւ օճառ չկար, մոխրաջրով էին մաքրվում, եւ չորս երեխաներից ոչ մեկին Մայրը դպրոցից ետ չէր քաշել՝ գնան, կոլխոզում աշխօր անեն. իսկ Նինելը Մինասյանի աղջիկն էր՝ «տաճկահայաստանցի էն որբի», որ 1924թ. ամռանն այդ գյուղն ուսուցչության էր եկել՝ հագին ամերիկյան սպիտակ քաթանից շալվար ու անթեւ բլուզ եւ հացը դանակով կտրում՝ նոր էր ուտում:

Նրա Լուսիկ կինը որբերի մանկապարտեզի վարիչն էր, ամուսնու անունով, որ դարձյալ ճակատում էր, «պայոկ» էր ստանում՝ ձվի փոշի, շաքար, խտացրած կաթ, կակաո, աղջկան հագցնում - զուգում էր, եւ Նինելը գեղեցկուհի էր, հասակը՝ բարձր, մազը՝ երկար, հյուսած - ծամ արած, հոնքերը՝ «ասես դալամով քաշած»,

աչքերը՝ սեւ, խումար-խումար: «Երանի Էն կնկան, որ սա նրա հարսն է լինելու», - սարի ճանապարհին էր տեսել՝ Մայրը: Ինքը՝ մի շալակ խոտի տակ ճկռած, Լինելը՝ փոքր քրոջ հետ ցախ քարշ տալիս: Բարձրաձայն երազելու իրավունքը սրտում խեղդել՝ նա լուռ մտածել էր, նայել աղջկա խոնավ աչքերին, ասել էր. «Տունդ բրիշակ մնա, Յիտլեր, ինչ մեր օրը սեւացրիր», - բայց դա՝ Ստալինի հասցեին, քանի որ Գերմանիան՝ հեռու-հեռու՝ եւ չէր իմացվի՝ նրանց այրինե՞րն էլ գյուղից ձմեռանոց խոտ են կրում, թե՞ տանը նստած՝ զոհվածի թոշակն ստանում եւ ընդամենը կարոտում կամ ափսոսում են, որ կարող էր նաեւ այդպես չլինել, իրենց ամուսինները չզոհվեին, եւ որբեւայրիությունը գնար- պտտվեր, աշխարհում ուրիշ մեկին գտներ կամ առհասարակ՝ ճիշտն այն կլիներ, որ պատերազմ չսկսվեր, այստեղ, մինչդեռ, կոլխոզի տաժանակիր սովահարության հետ խորհրդային «պայծառ արեւների տակ» ինքը տարեկան երկու փուլ աղարար յուղ, միսուձու, բուրդ էլ տուրք էր տալիս Ստալինին, քանի որ ամուսինն, ուրեմն, ոչ թե զոհվել, այլ առոք-փառք եկել՝ մեռել էր տանը:

Տուրքից ազատ էին նրանք, ում ամուսնու «սեւ թուղթն» ստացվել, զինկոմիսարիատում էր, եւ տուրքավորվում էին նաեւ ընտանիքներ, որ ճակատում կռվող տղայից կամ ամուսնուց նամակ չէին ստանում, չգիտեին՝ զոհվածների՞ հարազատի արդար ցուցակում են, թե՞ կասկածվող «անհայտ կորածների. Մայրը հարկադրվում էր կրկնակի, քանի որ մեկ՝ ամուսինը թաղված էր պապենական գերեզմանոցում, երկրորդ՝ Խորենն ընտանիք չէր հաշվվում, որովհետեւ ամուսնացած, Ղուլունց գերդաստանից առանձնացած չէր: Շուշի երաժշտական ուսումնարանն ավարտել՝ բանակային ծառայության էր կոչվել՝ որ պատերազմն սկսվեց՝ հենց սահմանի վրա էր, նրանից նամակներ չէին գալիս: «Դե գերի է հանձնվել, Էլի, որ սպանված լինե՞ր՝ թուղթ կստանայիք», - ասել էր գործկոմ Պետրեն եւ մաքուր կուսակցականի խղճով տուրքի մթերքները երկուսով բազմապատկել. յուղ՝ չորս փուլ, միս՝ վաթսուն կիլո, բուրդ՝ քսան: «Չարուստ տուն եք եղել, ծախելու բան - ման կունենաս, գնա», - Մորը գրասենյակից դուրս էր արել:

...Նրա հագին ռետիկետ տրեխ էր: Մելիքսեթի կարած չուստուկոշիկը, Աղդամից առածը,- հին օրերից մի օր ամուսինը նրան տարել էր կիրակնօրյա շուկա, ծաղկավոր շալ էր առել, շորումոր, կոնֆետ ու հալվա, մի գիշեր պահել էր հյուրանոցում, թե՞ ճանաչ թուրքի տան, որ գևան թատրոն՝ լսեն Աշուղ Ղարիբի պատմությունը, հաջորդ օրը փափուկ դողերով ֆայտոն էր վարձել, բոժոժների զնգոցով քշել տվել գյուղ,- տալիս էր՝ աղջիկներից Լուսիկը հագնի՝ առաջնեկը, հոր սիրելին, եղևիկի անմեղ հայացքով, մազը՝ շեկ, ունքները՝ սեւ. մեծացել՝ Շուշի մանկավարժական ուսումնարան էր մտել՝ սովի այդ տարում, երբ տան եղած-չեղածը վաղուց գնացել էր Աղդամ, որ ունենա մի քանի փութ ցորեն: Լավ ապրուստի տարիներին Տղայի հայրը թուրքերում սայլ էր կապում, նրանց կանանց համար, որպեսզի կիթը հեշտ անեն, կարճոտ աթոռակներ, եւ բերում էր ցորեն, բուրդ, յուղուպանիր, գորգ, կտորեղեն, երեխաներին՝ խաղալիք, կոնֆետ, չամիչ, հալվա, որ հատկապես սիրելի էր նաեւ տան մեծերին:

Պատերազմը սրբել-տարել էր ամեն ինչ, նույնիսկ՝ տասանոց լամպը, ամենավերջին պղինձն ու կաթնամանը. նա լաց չեղավ եւ չանիծեց, ռետիկետ տերիսների մեջ՝ նրա ոտքերը չմրսեցին, հինգ վերստ ճանապարհը նա կես ժամում կտրեց, բացեց Սամսոն եղբոր տան դուռը՝ հորենական Գառնաքար գյուղում, ասաց. «Կով չունեմ, բայց երկու փութ յուղ տուրք պիտի տամ, թե չէ Լուսիկին ուսումնարանից են հանուն, մյուսներին՝ դպրոցից»: Յուղ Գառնաքար էլ չկար, Փիրուզա ախպերակինը գարու ալյուրից շփոթ էր եփել, կերան, լաց եղան, կծովի՝ տանձաչրով, թեյ խմեցին, մինչեւ Սամսոն եղբայրը մթնով կոլխոզի գործից պրծներ-գար,- նա «բրոն» ուներ, պահել էին, քանի որ քառասունն անց էր, մեկ պահերստապետ էր, մեկ՝ հաշվառ,- եկավ. մարդուկին ի՞նչ խոսեցին,- ախպերակին Փիրուզան նաեւ տալ էր, մի աղջիկ տվել՝ մեկը բերել էին 1924 թվի նույն տարում,- Սամսոնը ճաղատ ու չորբարձրահասակ էր, բայց որ կողքի սենյակից ներս մտավ՝ կծկված- մի բուռ էր, հանգած, աչքերը՝ կուլ գնացած, ասաց՝ «Էս թուղթը կտաս Մանյային, նայիր՝ ուրիշ մարդ չիմանա, թե չէ ինձ էլ կբռնեն, նրան էլ», - Մանյան զոհվածի կին էր, տուրք մթերքի

պահեստապետ, եւ կարծիք կար, որ բանակ չտարած բոլոր տղամարդիկ նրա հետ գործ ունեին, Փիրուզան ասաց. «Ինչ ասում են, Սամսոն, լավ էլ անում ես», - եւ դա նրա ներողամտությունն էր, բայց ավելի շատ՝ ուրախությունը, որ մարդուն բանակ չեն տարել, գյուղում կա, տուն հացութեաց է բերում, եւ ուրիշ շատ կանայք կուգենային, որ իրենցն էլ մնար, գործի արանքներում թեկուզ մի քիչ էլ «շնություն» աներ, - խոր կեսգիշերին Մայրը հորանց տևից դուրս էր եկել եւ, ռետինե տրեխների մեջ, ոտքը սառած ձյունների վրա չէր պլստացել, քանի որ ոչ թե քայլել, այլ կարծես հինգ վերստ ճանապարհն անընդհատ սղղացել, մի տեսակ՝ օդի մեջ է եղել, եւ ոչ ոքից ու ոչնչից չի վախեցել՝ մեջքին մի խուրջին հաց, թեւատակին՝ կես պարկ կորեկ, դեռ գոգնոցն էլ լիքը՝ փոխինձ, որից շատ չէ՝ մի -երկու բուռ կերել է, որ գլուխը չպտտվի, որովհետեւ աստղալույս - սրտուռ գիշեր էր, եւ Լեւոն եղբայրն էլ ասած էր եղել. «Որ ետ գաս՝ փռով կանցնես», - եւ երկու բոքոնը տաք - տաք էր. հաց թխում էին արտելի բանվորության համար, Լեւոնն ինչպե՞ս էր իր համար հացթուխի եւ փռան կառավարչի պաշտոն պոկել՝ չէր իմացվում, բայց լավ էր, որ կար՝ օգնում էր՝ ոչինչ չանելու նման, թեւ ստույգ էր, որ եթե իմացվի՝ կբռնեին, դատի կտային եւ կաքսորեին՝ գնա, սիբիրներում խելքը գլուխը հավաքի, բայց եղբոր ճակատագրի հանդեպ անհանգստությունն, այնուամենայնիվ, ավելի նվազ էր, քան՝ որ երեխեքը գոնե շաբաթը մեկ կարգին հացի երես տեսնեն, որովհետեւ սաչին իր թխածը գարու - կորեկի խառնուրդ թեփից էր՝ կոշտ՝ «բկին մնացող», կարմիր բոքոնն, այնինչ, հիշեցնում էր հին օրերի մաքուր-զարդա ցորնալյուրն ու՝ որ «խոնչան» ուսին թոնրատնից գալիս էր, ու թարմ հացի բուրմունքը լցվում էր քրտնած ծոցը եւ դեռ երկար չէր մնում, եւ դա հաճելի էր՝ մանկան կաթնահոտի հետ խառը:

Սառնամանիք գիշերով՝ ճոթեր ասվող թաղի իր տան ճանապարհին, երբ սկսվել է գիրթ գառիվերը, Մայրը միայն մի անգամ կանգնել, մեջքի խուրջինն ուղղել եւ նայել է գերեզմանոցի կողմը, որտեղ ամուսնու անշիրիմ մոռացումի դառնությունն էր, եւ հինգ վերստ ճանապարհի խեղդված լացը հորդացել է՝ անբառ, անա-

Նեժք՝ որպես զուտ քնքշանք եւ ներողամտություն՝ որ չպիտի այդպես լիներ, բայց որ եղել է՝ «Էն խեղճն ի՞նչ էր անելու», - եւ տարիների խոնավ մշուշներից նրա հայացքի դեմ բացվել է աղջկության զուսպ տազնապը՝ որ օտար գյուղ հարս են տանում՝ ձիավորված, հրացան կրակելով, եւ պատկերվել է Սուքիասանց Արտեմի խորոխտ պարը, հարսին նվիրած խորհրդային արծաթ ռուբլիանոցը, որովհետեւ դա եղել էր 1924 թվի ձմռանը՝ Լենինի մեռած տարում, եւ արծաթ ռուբլիանոց կամ առհասարակ՝ խորհրդային դրամ քիչ մարդու ձեռքի կար, իսկ Արտեմը ցարական օրոք եղել էր գյուղական տանուտեր եւ՝ դաշնակցական, բայց դեռ պահելիս է եղել հին ժամանակների շուքը. նա կապում էր հինգ մատ լայնքի արծաթ - գոտի եւ հագնում մետաքս շապիկ, «բուխարարա» գլխարկը կտրիճավարի թեք դրած՝ նա հարսանքի քավոր էր, բայց եւ՝ պարագլուխ. զառիվերին կարգադրել էր, որ հարսից բացի բոլորն իջնեն ձիերից եւ պարելով բարձրանան կտրուկ վեր նետվող դիքը՝ մինչեւ Ղուլունց Թեւոսի տուն, որ քերծի տակին ինքը չէր կառուցել, գնել էր ուրիշ մեկից՝ ով Բաքվի նավթահանքերի բանվորությունից ետ չէր եկել, թեեւ երկրորդ՝ լայն պատշգամբով ու երեսուն ոտնակ սանդուղքով հարկը բարձրացրել՝ տունը թիթեղապատել, պատուհաններն ապակի էր գցել՝ ինչպես որ տեսել էր քաղաքում. պարզկա, սառնամանիք աստղալույսի մեջ այնպես՝ որ քերծի դաժան ուրվագծերից շեղվում՝ տունը լուռ կանգնած էր, վառարանը ծուխ չէր անում:

Տեգրկինն իր բաժին սենյակը դեռ չէր քանդել: Քամին պատշգամբի բաց սրահ ձյուն էր լցրել: Երեխեքը քնել էին՝ կաղնեփայտե անմոմլաթ սեղանին թողել մի կտոր հաց ու անխեն լոբաճաշ, որ վաղուց սառել, երեսը մանրիկ փառապատված էր երեւի. չէ, կանաչ լուլիկի թթու էլ կար, թթվով լոբաճաշն ավելի հեշտ կուտվեր, բայց լուսաբացն արդեն մոտ էր, մի երկու մրսած քլոր թաղում դեռ մնացել էր՝ ծուղրուղու էին կանչում, եւ կոլխոզային անվերջ աշխատանքի օրն ահա - ահա սկսվելու էր որբեւայրիների՝ ռետինե տրեխ հագած ոտքերի ետսղոցով՝ սարի գոմերի ճանապարհին՝ խոտի շալակի տակ եւ չէր ավարտվելու. երկիրն՝ ինչքան մեծ, հոգսն այնքան շատ էր եւ տանն էլ՝ վառարանակրակի

պղտոր - կարմիր լույսի տակ գուլպա - թաթման էին գործում՝ ուղարկեն ճակատ, որպեսզի կռվող զինվորի ոտուձեռքն ռուսաստանների ճաքճքան սառնամանիքներում չսառչի, քայլը հաստատ լինի, գենքն ամուր բռնվի: Բուրդն իրենցից էր. պետության ոչխարի հոտերին կամ Յիտլերն էր տիրացել, կամ՝ աղքատ սովահարությունը սրբել-տարել՝ տվել էր մորթարանների բերանը, որ միսը սառեցվի - զմռսվի եռանկյուն կապտագույն կնիքներով, դառնա «էնգէ»՝ անձեռնմխելի պահուստ՝ գալիք արդար պատերազմների համար. այս մեկը կարելի էր հաղթել անհաց, ոտաբոբիկ, երբեմն՝ առանց գենքի, որպեսզի հետագայի զինվորներին շինել հագցվեր, ճաշ տրվեր ու՝ ծխախոտ,- կոլխոգի աշխատանքն, ահա, անվերջ էր, քանի որ ցերեկն ու երեկոները բանում էին մարմնով, կարճ գիշերներին՝ մտքով ու երազներով, երբ տեսնում էին ամռան լեցուն արտեր, թափվող թուփ, վարունգի խշրտան «խուզուկ»՝ դեղին ծաղիկը դեռ վրան, եւ հովն օրորում էր ծառերը, շոգը՝ նահանջում, գալիս էր իրիկնահացի ժամը, եւ տասանոց լամպի պայծառ լույսի տակ սեղանին թշուրմ էր պղնձե ինքնատեղ, եւ կապտին տալիս մաքուր գլուխ շաքարը, իսկ ծաղկավոր չթերի անկողինը կանչում էր՝ քնեն.

Մայրն արդեն հովացող բոքոնները դրել է սեղանին, փոխինձը՝ դատարկել կաթի բաղյա, որ Պետրեն չէր տարել, որովհետեւ պղնձե չէր, այլ՝ ծանր թուջե,- դրանից նրանց տանն էլ կգտնվեր՝ Բախտին ժամանակին պահած կլիներ՝ Ղուլունց Թեուսի տվածներից մեկը, խուրջինի հացը շարել է տաշտում, մեզարով ծածկել՝ դա պիտի շալակվեր - հասցվեր Շուշի՝ Լուսիկին, սեղանի իր բաժինը դրել է գոգնոցն ու ճաշից մի երկու բուռ լոբի էլ՝ վրան. սարի դժվար ճանապարհին խոտի բեռան տակ երբեմն կանգնում՝ կաճանը փակած թփուտից մասուր կամ ճյուղին մնացած,- երբ տերեւը թափվում է, պտուղը մերկանում - հրավիրում է,- զկեռ, մամուխ կամ ալոճ էին պոկում՝ ցամաքած բերանի համար էլ լավ էր, եւ քաղցն այդպես սպանվում էր, բայց, չէ, մի բան պիտի ուտվեր, քանզի ետդարձին շալակելու էին փայտուցախ՝ ով ինչ գտներ ու կարողանար մեջքին տուն հասցնել. բանող անասունն ոչ ոք ուներ՝ ձիերը՝ տղամարդկանց հավասար՝ ճակատ էին

քշվել, էշն ու շորին որը՝ սատկել, որը՝ Աղղամ փոխանակվել էր մի բեռ ցորնալյուրի հետ կամ թուրքի քոչում՝ մի մոթալ պանրի,- թե- եւ Ջումունց պառապն ասել էր. «Էս՝ մոթալ, հաց չպիտի՞՞ զիրավ ուտես», - «զիրավ»՝ այսինքն՝ հետը, պանիրն ուտում եմ, չէ՞, հացով,- շատ տարիներ առաջ նա Ղուլունց Թելուսի քավորն էր եղել եւ ուզեցել էր արհեստ սովորի՝ ձեռքն ուրագ էին տվել՝ տեսնեն փայտ տաշել կտվորի՞, անմիտ-պատահաբար խփել, ամոթ էլ է ասել՝ տղամարդու իր ունեցածը խագե՞լ, թե՞ լման կտրել էր, լավ է՝ արդեն կին-երեխա ունեցել էր, տանն այդպես նստած էր,- թուրքի ունեցածը պանիրն էր, իրենցը՝ էշ, շորի, եւ թուրքը գիտեր, որ եթե այստեղից անցնի՝ պանիրն իրենը չի լինի արդեն, ներքեւները կբռնեն-կբռնագանձեն «հօգուտ պաշտպանության ֆոնդի», իրենց համար էշնուշորին արդեն ավելորդ հոգս էր, որովհետեւ անասունը խոտ է ուտում, որ ծմռանը դռանդդ պիտի լինի, իսկ բոլոր խոտհարքները՝ պարապ կանգնած՝ հնձելու իրավունքն, այնինչ, կոխոզի նախագահ Բեկնազար Ղուլյանի լեզվին էր ու չէր տրվում ու չէր տրվում, քանի որ մենատնտեսությունը վաղուց վերացված, հանդերն՝ ընդհանուր - կոխոզային էին, եւ վարչությունը չէր որոշում, որ կարելի է հին ժամանակների Աստուծ խուրթ կամ հենց Բեկնազարի հոր՝ Աբիդունի բացած խամհատում գերանդի բանեցնել, եթե հնձածը չէր գնալու «համայնական դեզին», այլ կրվելու էր մասնավոր - անհատի դուռը, եւ նրանց աշխատանքը հաճույք չէր, այլ՝ ստրուկի ատելություն՝ դրա համար էլ որբեւայրիների, դպրոցից ետ ընկած լակոտ տղաների եւ ուժատ ծերերի գլխին իշխանություն էր կարգված՝ կոխոզի նախագահի հետ՝ գյուղխորհուրդը, կուսկոմիտեն, վերստուգիչ հանձնաժողովը, եւ բոլորի վրա՝ Ամալյա Կարաբեկյանը՝ որպես «էնկեվեդէ»-ի Սելումովի լիազոր-ներկայացուցիչ:

Պատերազմից առաջ նրա Գրիգոր ամուսինը դպրոցի տնօրեն էր նշանակվել՝ Հարությունյան Ավետիսից հետո, ում կուսբքիջի ձեռքն էր տվել կինը, թե՛ «աշակերտուհիներից մեկի հետ կապված է», - վերցրել՝ կուսակցությունից եւ պաշտոնից վտարել, բանտ էին նստեցրել, եւ ասող կար, որ դա ուսմասվար Գրիգոր Շեկյանն էր կազմակերպել, որպեսզի նրա տեղը նստի, բայց

մյուս կողմից էլ մտածում էին՝ «լավ, եղ Գրիգորը դրա կնոջը ո՞նց, ախր, հեղափոխեց, իր ջրերը գցեց, կինը, չէ՞, պիտի մտածեր, որ Ավետիսն իր վզին երեք որբի հոգս է թողնում», - Գրիգոր Շեկյանը Բաքու ուսում առած էր եւ բարձր դասարանցիներին պատմեց, որ «կնոջ խանդի կործանարարության մասին գիտեին դեռեւս հին հույները, առասպելն է պատմում. Յասոնից մերժված Մեդեան զավակներին չինայեց՝ բոլորին սպանեց, որ ամուսինը տանջվի», - եւ դա հավատալի էր, որովհետեւ ավետիսի կինը ոչ միայն չէր զղջում, այլեւ ամուսնուն անիծում էր. «Ոսկերքդ թող «դարդադուշերը» քրքրեն, Ավետիս», - իսկ աղջիկը, ում մասին ասվել էր՝ «դիրեկտորի տակ պառկել է», - թողեց, գնաց բաքուներում ֆաբրործուսումնարան մտավ՝ «Էնտեղ էլ փորի երեխան փչացրեց», - եւ էլ նրան ոչ ոք չհիշեց՝ ի՞նչ եղավ. Ամալյա Կարաբեկյանը պաշտոնապես կինխորհրդի նախագահ էր, բայց նրանից սարսափում էր նույնիսկ կոլխոզի նախագահ Բեկնազար Ղուլյանը, որովհետեւ ձեռքն ինչպես կրծքին կապած՝ ճակատից իբր թե վիրավոր եկել, այդպես էլ ամեն օր սպասում էր, որ զինկոմ Ղուկասովը կկանչի, թուքումուր կտա եւ ետ կուղարկի «Ստալինգրադի մատուցներ կամ Կուրսկի աղեղ, որտեղ բանվորագյուղացիական Կարմիր բանակը կենաց - մահու կռիվ էր տալիս ֆաշիստական հորդանների դեմ», - իսկ ինքը ձի է նստում եւ զոհված բանակայինների կանանց ուրիշ աչքով է նայում, քանի որ սեփական Մանիշակը վրան բան չունի՝ ուղղակի՝ «թոնրախառնի»՝ թոնրի երկարակոթ բահ, դրա համար էլ ունեցել էին միայն երկու երեխա՝ Կոլյան ու Լիդան, որ չսիրված էին թաղում եւ դպրոցում, որովհետեւ նրանց նախագահ հորն ատում էին որբերն ու առհասարակ աղքատ բոլորը. միայն ուսուցչուհիներից էին փառաբանվում, քանի որ Մանիշակը նրանց մեկ-մեկ կանչում՝ թաքուն հաց - մաց էր տալիս, որ Բեկնազարի գաղտնիքները պատմեն, որովհետեւ ինքը տնից դուրս չէր գալիս, ամուսնու գործերից տեղեկանում էր լսելով. եւ հետո՝ Աբիդոնի ու Շեկյունց, ում հարսն էր Ամալյա Կարաբեկյանը, - միջեւ հին, անիշխանության խառը ժամանակներից մլմլացող հակառակություն կար, որ՝ «Աբիդոնը եղել է դաշնակցական կոմիտեության անդամ եւ փոխգնդապետ

Մեսյանի աջ ձեռքը»,- իսկ Շեկունք՝ աղքատ տուն եւ իրենց համարել էին «Բաքվի օրիենտացիայի» պաշտպան, որովհետեւ նրանց Լազր տղան նավթահանքերում բանվոր էր եւ գյուղ էր վերադարձել 1919 թվի գարնանը եւ պատմել, որ «դաշնակցականներն են ընկեր Շահումյանի կառավարության տապալման պատճառը»։ Թուրքական կոտորածից, երբ թուրքերը գրավել էին Բաքուն, մի կերպ փրկված՝ նա հասել էր պարսկական Էնզելի, հետո պտտվել՝ Միջին Ասիայով, թե՞ ռուսաստաններով՝ գլուխը փրկել, կին -երեխա ու իրենց Թելլո մորն առած ետ էր եկել որպես ամեն ազգայինի երդվյալ թշնամի, իսկ Ղուլունց Աբիդոնն իր տանը հաց էր տալիս «արյունարբու մաուզերիստներին», նրանց հետ մասնակցում էր թուրքերի դեմ կռիվներին՝ Ալիադալու կամ Աղդամ։ Աբիդոնը կրակել՝ «Մոսինի» մի գնդակով երկու թուրք էր սպանել, եւ փոխգնդապետ Մեսյանն ասել էր. «Աբիդոնը պիտի Ղարսի ճակատում լիներ, այստեղ կռիվ չկա»,- եւ զարմանալի էր, թե Աբիդոնի տղա Բեկնազարն ինչպե՞ս է հաջողացրել եւ խցկվել կուսակցության շարքերը եւ դեռ ստույգ չէր էլ իմացվում՝ ճակատից իրո՞ք վիրավոր է եկել, թե՞ խաբել է,- բայց «հացը թշնամու դուռն էլ կտանի»,- Ամալյա Կարաբեկյանը Բեկնազարին դեռ հանդուրժում եւ նրա տղային ու աղջկան դպրոցում աշխարհագրությունից «գերազանց» էր նշանակում, քանի որ ոչ ոք գիտեր՝ նրա ամուսին Գրիգորը կռվից ողջ-առողջ կգա՞, թե՞ կսպանվի կամ, չտա աստված, գերի կհանձնվի՝ կհամալրի նրանց շարքերն, ում անունն իսկ բարձրաձայն չէր ասվում։ Եթե լաց է՝ թող մայրնուկի-նը հանգած վառարանի մոտ կուչուրած լացեն, նրանց երեխաները թող դասերին հայրենիքի մասին ոչինչ չասեն կամ, ավելի լավ է, դպրոց առհասարակ չգան,- գերվածի զավակն ի՞նչ օրինակ կարող է տալ,- Գեորգի Սեւումովն, ահա այդպես, Ամալյա Կարաբեկյանի ամենշաբաթյա զեկուցագրերի եւ Բեկնազար Ղուլյանի նախագահական շռայլության միջակայքերում կատարում էր ազնիվ վերահսկիչի, կուսակցության մշտարթուն աչքի իր նվիրական պարտականությունը, եւ ոչ մեկի պահանջն էր բավարարվում, որ՝ «դաշնակցական տականքի որդին իրավունք չունի կոլխոզ ղեկավարի», - ոչ՝ մյուսի, որ՝ «ասենք թե մարդը դպրոցի

վարիչ էր, բա կինն էդ պաշտոնը ո՞նց վերցրեց», - երկուսն էլ կային՝ կենտրոններում իրար թշնամի, գյուղում՝ հաշտ, մանավանդ որ Լազրն էլ բանակ չէր գնացել, մեկ կոլխոզում էր հաշվապահ, մեկ՝ արտելում, երբեմն էլ կարգում էին սպառնալի սախազահ, հետո նորից հանում, եւ նրանց տնից երկուսի մասին ճակատից լուր չկար՝ Լազրի տղա Բենիկի եւ եղբոր՝ Սամսոնի:

Փոթորիկը լինելու էր հաղթանակից հետո, բայց Մայրը չգիտեր, որ Լազրն ու Պետրեն Բեկնազարի դեմ «կյուրեր են պատրաստում»։ Նա գրագետ չէր, հարսնության առաջին տարում ուղարկել էին լիկկայան՝ գիր սովորի, թղթի վրա հագիվ ճանկատում էր «Յերսեյա»՝ իր անունը եւ գլխատառերը հեգելով՝ կարդում շրջանային թերթի անունը՝ «Սոցուդի», որ կատակասեր մեկի լեզվում հնչել էր «Սոտ- սուդի», այսինքն՝ որ «սոցիալիզմը սուտասան Սողոմոն է», - բայց թե այդ թերթում ի՞նչ էր ասում շրջկոմի քարտուղար Բոգդան Աբուլովը՝ չգիտեր։ Աբուլովը խոսում էր արագ - արագ՝ երբ պատահում՝ գյուղ էր գալիս, որպեսզի որբեայրիների աշխատավոր գումարտակին ոգեշնչի եւ բոլոր ասածներից տպավորիչն այն էր, որ՝ «քիչ է մնացել, հրես գարուն կգա, բանջար ու փիփերթ կլինի՝ կուշտ կուտեք», - եւ Թեւոնսց սեւուլիկ Մայա հարսը, որ «Չանգեզուրի կողմերից էր», - Վարդանը նրան սիրահարվել էր Բաքվում, այնտեղ էլ ապրում էին, բանակ կանչվելուց առաջ բերել՝ թողել էր գյուղում, - ասել էր. «Մի դրա վզին նայեք, բա էդ բանջար ուտելով է հաստացրել», - եւ խոսքը տեղ էին հասցրել՝ լավ է, - թեեւ դրա լավը ո՞րն է, - Վարդանի զոհվելու թուղթը կար, թե չէ գործկոմ Պետրեն երեք որբի մայր հարսին «հակա» էր հանելու։ Աբուլովն, այնինչ, ասում էին, աշխատավոր կոլտնտեսուհու սրամտության վրա ծիծաղել, Պետրեի երեսին էր նայել, որ տեսնող - լսողները բացատրել էին այնպես, թե՝ «շունշան տղա, մի բուրդա էլ դու ես», - որովհետեւ ամեն գորակոչի նա գլուխը փաթաթում էր բրդե շալով՝ «տրաքում ա, սա ինձ մի օր կսպանի», - բայց կասկած կար, որ նրա գլխացավը միշտ բռնում է բժիշկ Շահգեղյանի խելացի միջամտությամբ, որ տեղը-տեղին ի կատար էր ածում ֆելդշեր Յասմիկը՝ նախապես սրսկելով ինչ-որ դեղ կամ, ասում էին, խմեցնում էր իշու թանձր կաթ, որից, իբր,

մարդու հետ մի քանի օր տարօրինակ բաներ են կատարվում, բայց փորձել չէին կարող, քանզի գյուղում էջ չկար, եւ այդ կաթը Պետրեի համար, իբր թէ, Յասմիկը թաքուն բերել էր տալիս իրենց Ջանյաթաղ գյուղից, որի մարդիկ Պարսկաստանից են եկած եւ պահել են հեքիմութեամբ, թե՞ Չրադաշտից հիշվող սեւ մոգութեան գաղտնիքները. Պետրեն ճակատ չէր հասնում, ամեն անգամ զինվորաբժշկական հատուկ հանձնաժողովը երկարած-գում էր տարկետման իրավունքը. նա կար, գյուղգործկոմի նախագահ էր, եւ հանգած գյուղում նրա տանը տղա երեխայի ճիչ էր լսվել՝ «թող արժանի լինի ընկեր Բերիայի անունը կրելու պատվին», - արդէն մանկապարտեզ էին տանում, որ, ճիշտ է, բացել էին զոհվածների որբերին մի կտոր հաց տալու հատուկ նպատակով, բայց կինը՝ Վարդին, դաստիարակչուհի էր, տանն ուրիշ մեկը չկար՝ Բերիայի անվանակցին նայի, ուրեմն պիտի մոր հետ լինէր՝ առավոտից մինչեւ ուշ երեկո, քանզի որբեւայրիներն իրենց երեխաներին տուն կարող էին տանել միայն կոլխոզի օրվա գործն ավարտելուց հետո, օր - ցերեկով մանկապարտեզի մոտից անցնել չէր լինում. դա միհարկանի շինություն էր՝ ցարական օրոք՝ գավառակապետի նստավայր, եւ պատուհաններն ուղիղ նայում էին կոլխոզի գրասենյակի բակին, որտեղ այրի կանանց գումարտակն ամեն երեկո պահեստի դռանը հերթի էր կանգնում՝ «ավանսի» հույսով, եւ իրենց սենյակներից որբերը մայրերին տեսնում - դժժում, հատակը դոփում, լացում էին, եւ «ավանս» չէր լինում՝ գոնե գարի, կորեկ, որովհետեւ ցորենը՝ մինչեւ ամենավերջին հատիկը, սերմացուն չհաշված, վաղուց ջվալավորված, սայլերով կրված էր Եվլախ, - իսկ Բոգդան Աբուլովի գարունը գալիս - անցնում էր՝ թողնելով մի մուգ ավելուկ, բռան մեջ՝ կոլխոզի անվերջ գործի ճամփին թաքուն տրորած, անաղ կերված բանջարի դառնահամ հուշ. ամենալավն ամառ - աշունն էր. երեխեքը կշտանում էին գետում որսացած «վեսի» ձկնիկներով, թթով, մոշով, անտառի աճարով, «տզգան» ասվող՝ թթվաշ վայրի խնձորով, քուլատանձով, ինչից մայրերը նաեւ չիր էին կտրում՝ կտուրներին մեկնում՝ լինի ձմեռվա սրտուզելիք - պաշար՝ եթե արտելի բանվորությունից հասցնեին մի բան թռցնել, քանի որ անտառի տան-



ձուտը նրանց էր տրված՝ բանակի համար մրգից «պովիդլո» եփեն ու փափուկ չիր անեն. դրա համար հատուկ չորանոցներ էին կանգնեցրել,- բայց, չէ, աստված սովահար այդ բազմությունից երես չէր թեքել եւ մեկի տեղ երկու-երեքն էր տալիս՝ բնութունը, որ ինչքան էլ կոլխոզից ու արտելից պլոկված, միեւնույն է, թաքուն մի բան պահում էր, գոնե՝ սունկ կամ դառնտո կրմզուկ, ինչի տեղը «հայր» Ստալինը չգիտեր եւ մթերման չէր ցուցակագրել, իսկ գյուղի իշխանավորները երեւի կուզենային հուշել, որ իրենց հանդերում նաեւ շուշան է աճում, գինագոխ, ավելուկ, որ մարդուս առողջությանը շատ օգտակար են, բայց երկյուղ ունեին, որ ռուսաստաններում դրանց նշանակությունը չեն հասկանա, եւ իրենք կհամարվեն «վնասարար»:

...Որբեւայրիների անվարձ աշխատանքի գումարտակը պահեստի դռանը հերթի էր, բայց Զյուխանց Ներսեսի նախկին տան, որ կոլխոզի գրասենյակ ու պահեստ էին դարձրել,- երկրորդ հարկում նստում էր նախագահը, նկուղում՝ պահեստապետը,- ներքնահարկի դռներին մեծ կողպեք էր կախված, մանկապարտեզի պատուհաններից լսվում էր որբերի լացականչը, եւ Մայրն իրեն շարքից հանեց՝ այնտեղ էին տեգրոջ մեծն ու միջնեկը, նրանց մայրն օղակավար էր, մյուսների հետ «ավանսի» հույսը դարձյալ պահած՝ հասել էր պահեստի դռներին, իսկ ձմռան օրն արդեն մթնում էր, եւ նա գլխիկոր բռնեց տան ճանապարհը. իր երեխաներն արդեն մեծ էին, դիմանում էին, ինքն ուտեր - չուտեր՝ ոչ ոք էր լսել տրտնջոցը, եւ՝ որ ասվել էր՝ «միայն գոհվածների այրիներին կես փթից գարի են բաժանելու», - եւ ամոթ կլիներ, որ տեգրկինն ստիպված իր բաժինը կիսեր. «Ում որ հասնում է՝ թող արդար վայելում լինի», - չնայած կես փութ գարու եղածն ի՞նչ է, ջրադաց էլ չես տանի, իսկ երկանքով ալյուր չի լինի, միայն՝ ձավար. լայն, փութկոտ քայլերով գյուղխորհրդի գրասենյակից գալիս էր Պետրեն, հարցրեց. «Ախչի, Յերսելյա, եղ ինչի՞ հերթում չես», - եւ մի տեսակ կասկածավոր նայեց՝ Մոր սիրտը սառեց. «Զլինի՞ Լեւոնի մասին բան գիտի», - բայց ասաց. «Էդ մեզ համար չի, գոհվածների կանանց են ավանս բաժանում», - եւ ճամփան շարունակեց, քանի պինդ չի մթնել՝ տուն հասնի, որ ձորի այնկողմ՝ ոչ

արեւահայաց թաղում էր՝ քերծի տակ. որտեղ եկեղեցին էր՝ հին գյուղամեջն է եղել, ու՝ հարուստների տները՝ Դերունց, Զյուլխանց, Մարկոս Դոլուխանովի ամառանոցը. դա արեգունի թաղն էր, որ նոր ժամանակներում դարձյալ գյուղի կենտրոնն ու հավաքատեղի էր, քանզի եկեղեցին դարձրել էին ակումբ ու խրճիթ-ընթերցարան, Զյուլխանց տները՝ կոլխոզի, Դերունցը՝ խորհրդի գրասենյակ, իսկ Մարկոս Դոլուխանովն ինքը 1924 թվին ապարանքը կամավոր նվիրել էր համայնքին, դպրոցն այնտեղ էր տեղավորվել. դեռ կամուրջն ու ձորի ցուրտն էլ պիտի անցներ, փլքի ծայրի ավերակից, որ նախկինում Օհանջանանց գոմն էր եղել, լացի չէ՝ վնգստոցի ձայն լսեց. նա աղոթք չգիտեր, ոչ էլ սատանայից էր սարսափում, բայց լսածը ոչ մարդու ողբ էր, ոչ վիրավոր շան կաղկանձ, այլ՝ խառն - իրար մեջ մտած՝ լացուտնքոց:

Ձորի այնկողմից, ուր սկսվում էին ոչ արեգունի՝ իրենց թաղի տները՝ մեկը մյուսի ուսին նստած, տղա - երեխաների խումբը ձեռքով - ոտքով բա՞ն էր հասկացնում, թե՞ բղավելով գալիս էր ընդամաջ,- ձորի վրա ծանրացել էր ձմռան իրիկամուտի սառը մշուշ, եւ չոր ձյուն էր մաղում՝ վարագույրի պես կախվել էր, եւ ձայները խլացնում էր. Մայրը, որ մեծ ճանապարհից քայլ արած՝ իջնելու էր՝ տեսնի, թե ավերակում ո՞վ է վնգստում, հանկարծ հասկացավ, որ մի դժբախտություն եղել ու դեռ չի ավարտվել եւ իրեն հեռացրեց հանցանքի այդ վայրից, որովհետեւ գիտակցության մեջ առկայծեց Պետրեի մթնոած պատկերը, նրա փութկոտ քայլը հուշեց, որ այստեղ քիչ առաջ Մեկը դաժան ծեծվել ու հիմա ավերակներում կիսամեռ կոնգոռնում է, եւ՝ որ Պետրեի հարցումը՝ ավանսի հերթի մասին, ունեցել էր զգուշացման իմաստ՝ «ոչ տեսել ես, ոչ լսել, թե չէ գլխիդ սեւ կարկուտ կբերեմ», - եւ նա խլացավ, համրացավ, կուրացավ, իսկ տղա - երեխաների խումբը գալիս ու տեղ չէր հասնում, որովհետեւ ոչ թե քայլ էր անում, այլ տեղում ցատկոտում էր, քանի որ նրանք տեսել էին այն, ինչ Մայրը միայն ենթադրում էր, եւ երեխայական նրանց հայացքի մեջ այդ պատկերը՝ որ սապոզների տակ տված՝ Պետրեն կոխկրտել էր Նրան, որ կոլխոզի ճակնդեղից երկու հատ թեւատակին՝ տուն էր դառնում՝ մոխրում խորովի - ուտի, մնալու էր դեռ շատ երկար

եւ պատմվելու էր հետո, երբ Ստալինի մահով բոլոր մարդկանց, բայց ջահելների լեզուն՝ հատկապես, բացվելու էր, իսկ նա ոչինչ չէր տեսել. Մայրը ոչ էլ հավատացյալ էր, բայց այդ օրը կիսափուլ մատուռի, որ տան ճանապարհի վրա էր՝ ձյունների տակ կուլուրած, շեմքաքարին՝ սեւացած մեղրամոմի մի երկու կտոր,- մոտ մի քանի վայրկյան կանգնել, սրտի խորքում երկու խոսք է մրմնջացել ու անցել եւ նույնիսկ տղա - երեխաներին չի ասել՝ «գնացեք ձեր հանգած վառարանների հոգսը քաշեք», - միայն նայել եւ թաքուն ուրախացել է, որ իր Միակը նրանց հետ չէ,- ամեն օրվա պես գնացել՝ քերծն ի վեր միայն իր իմացած կածանով բարձրացել՝ մտել է նոսր անտառակ՝ կարճկոթ կացինը գոտու եւ մրսող փորի արանքից հանել, սառած մատներին փչելով՝ ջղախոթ փուտներից չորուկներ է կտրել - կապել, քերծի գլխից գլորել է ներքեւ, հետո մի անգամ էլ Շալունց աղբյուրի մոտ հավաքել է ցրված ցախերը, նորից շալակ կապել՝ տուն է իջեցրել, կոճղի վրա մանր կտրտել՝ գիրկ արած երեսուն ոտք սառած սանդուղքներով բարձրացրել ու վառարանը վառել, քրոջն ասել է՝ «ջուր տաքացրու», - հիմա թախտին պառկած է, Լիդա քույրը ոտքերը լվացել է, երեքով՝ Ինքը, Լիդան եւ Լյուբան կերել են նախորդ օրվա պինդ - թերխաշած լոբին, թթի դոշաբով մասրաթեյ են խմել, դռան ճռռոցին ականջ են պահում՝ «մաման գա, հաց ուտի», - աշխարհը լուռ - լուռ էր, ոչինչ չէր պատահել, միայն ձյուն էր՝ որ անվերջ գալիս էր՝ սառը, մանր, եւ մշուշներից այնկողմ՝ սարի ճանապարհին օրորվում էր ուշացած մեկի ստվերը, թե՞ դա տեսողության խաբկանք էր՝ որ սպասելիս լիներ, նայեր ՎՆ նայեր ճանապարհին, եւ սիրտը կարոտից նվաղեր,- տղա - երեխաների խումբը քանդվող մատուռի մոտ էր դեռ ու դարձյալ կամուրջը չէր անցնում՝ փլքի այս կողմից նայում էր Օհանջանանց ավերակներին, որտեղից մինչեւ այդքան հեռու ձայն չէր լսվի կամ՝ եղածն արդեն եղել էր. նրանց մատներում տաքություն չկար, եւ ձյունն էլ սառը-փշրկուն՝ գունդ չէր դառնա, նրանց ոտքերին կոշիկ չկար՝ սղային, ինչպես խմբով տեսել ու հասկացել էին՝ սարսափած մնացել եւ սպասում էին՝ մայրերը գային, բայց նրանք ավանսի հերթում էին, եւ պահեստի դռան կողպեքը ծանր կախված էր կես փութ գարու հույսի

վրա, եւ շրաղացները պարապ էին, քարերը՝ թերթած՝ զամպը կերված էր վաղուց՝ դեռ ամառնավերջից, երբ աշխօրին հասանելիք մի երկու բուռ ցորեն էր եղել ու այդպես էլ սպառվել. թխված հացի բույրը թաղի վրա մի անգամ՝ չվող ծիծեռնակի թեւաբախումի նման՝ թայտացել, աշնանամուտի մաքուր կապույտ երկինքներում մարել էր, բայց այդ ինչպե՞ս է պատահում, որ մի բան լինում ու այլեւս չի կրկնվում եւ եթե այդ է՝ որ ոչինչ ետ չի գալիս, ապա ձմեռն ինչու՞ ընդմիշտ է ասես նստել, եւ գործը վերջ չունի, բայց մանավանդ՝ սովը, եւ աստօծ ամեն օրն ինչու՞ նախորդի պարզ կրկնությունն է, ոչինչ չի բերում. լիներ մի պտղունց ուրախություն, հին օրերից մի ակնթարթ կամ, գոնե, իմացվեր, թե վաղն ի՞նչ է լինելու,- բուրթ ամայություն, որ սպանում է նույնիսկ հոգսի տառապանքը, քանի որ եթե չգիտես՝ ինչ ես անելու, որովհետեւ քո մտքի ու աշխատանքի տերն էլ չես, էլ ի՞նչ վաղվա տագնապ կամ սպասում,- եթե քեզ լծել են կոլխոզի սայլին, թող իրենք էլ կրեն հետագայի հոգսը,- բայց՝ ոչ, եւ այդօրվա, եւ հեռավոր գալիքների պատասխանատուն տղա-երեխաների խումբն էր, եւ՝ հասունացող աղջիկները, քանի որ մայրերին հավասար՝ նրանք նույնպես լծկան ու հերկվոր էին, հասկ հավաքող ու եզնարած, գերանդի քաշող, եւ հսկա երկիրն այդ հաղթանակ ասվածը ոչ թե կռում էր նրանց համար, այլ նրանք էին մոտեցնում ապագայի հույսը. թախտը վաղուց կոշտ էր՝ մթերման տուրքի դիմաց վերմակ - ներքևակ քանդել՝ բուրդը հանձնել էր Մանյայի պահեստ, բայց ամեն անգամ դարձյալ մի քիչ գտնվում էր՝ երեխեքին դպրոցից չհանեն, թեեւ, գուցե, ճիշտն այն էր, որ նրանք քնեին տաք տեղաշորում եւ դպրոց չգնային,- նավթ չկար, տասանոց լամպը Պետրեն տարել էր գրասենյակ, վառարանը գվվում եւ թույլ շողք էր անում, այդ կարմրավուն ցոլքերի տակ դասագրքի տառերը թրթռում էին, հատակին նստած՝ չէր կարդացվում, թանաքամանը վառարանագոգից ընկնում- կեղտոտում էր ծնկների տետրը, բայց նա դասերին չպիտի ոչ մեկից ամաչի,- տասնչորս տարեկան Տղան գրականության բերանացին հենց դպրոցում էլ սովորում էր, եւ բանավոր մյուսները՝ նույնպես, իսկ տնային աշխատանքները՝ գրում ցերեկվա լույսով. նա պառկած էր թախ-

տին, աղջիկները՝ փոքրի գլուխը՝ մեծի ուսին՝ վառարանի տաքության մեջ՝ հատակին նստած՝ ննջում - արթնանում, կիսաքուն ժպտում, թե՞ անտանելի սպասումից կնճռոտվում էին,- Մոր ոտքերին ռետինե տրեխները կոշտ սառած էին, գուլպաները՝ կոնգո-ռակալած, եւ թշնամի էր այդ վառարանը, տաքն՝ առհասարակ. նա պատշգամբի բազրիքներից ձյուն վերցրեց՝ բոբկացավ եւ շփեց ոտքերը, եւ ցավն սպանեց եւ որպեսզի երեխաներն արթնանան՝ իրեն այդպես չտեսնեն՝ ծալքատեղում միայն շոշափելով գտավ չոր, մաքուր գուլպա եւ մյուս հարկավոր շորերը, դարձյալ անշշուկ՝ ինչպես որ ներս էր մտել, անցավ կողքի ցուրտ սենյակն ու փոխվեց ու երբ ետ եկավ՝ Տղան թախտի վրա մանրիկ փռտա՞ց, թե՞ հագաց, եւ աղջիկներից կրտսերն ասաց. «Մաման եկել է»,- եւ մյուսն, ում ուսերին էր ծանրացած փոքրի գլուխը, ճմլկոտալով ելավ. սեւ, թուշի պես ծանր գարեհացի կտորը, որ տաքացրած - սառած՝ մի աման կես - խաշած լոբու կողքին էր, եւ պղնձե ջամով բազկաթերի թթու էլ կար, Տղան ասաց. «Մամա, հաց կեր»,- գոնե ճրագ լիներ, գոնե՝ մարխ կամ մեղրամոմ, որ իրար նայեին, միայն վառարանի կրակն էր կարմիր ցլքեր նետում. նա կտոր գարեհացը դարձյալ կիսեց եւ վառարանի վրա կրկին տաք տվեց եւ բուկը սեղմած լացի հետ կուլ տվեց մի երկու բուռ լոբու եւ թթվի հետ եւ վրա -վրա երկու սրսռոտ բաժակ տաք մասրաջուր խմեց, եւ Տղան հանկարծ հարցրեց, երբ ոտքերն արդեն իջեցրել էր լազան, եւ աղջիկներից մեծը տրորում էր թաթերը՝ «դու տեսա՞ր»,- Մայրն ասաց՝ «ի՞նչը»,- աղջիկներից փոքրը լաց եղավ. «Պետրեն Օհանջանանց Անդրուն թակեց-սպանեց », - Մայրը հարցրեց՝ «քու աչքով տեսե՞լ ես»,- Տղան «ծը» արեց,- «դե սուս կաց»,- նա լազանը տարավ՝ ջուրը բազրիքից շարտեց բակի ձյուների մեջ եւ արդեն չէր մրսում. թեեւ դարձյալ ձյունում էր, բայց՝ ոչ առաջվա պես, եւ, կարծես, նոսր ամպերի միջից լուսնալույս էր իջնում՝ ասղահատիկ ձյունի հետ, եւ թաղն անճրագ- լուռ էր. միայն, երբ հայացքը լարեց, տեսավ, որ մի քանի կտուրից թանձր ծուխ է բարձրանում. «կնանիք արդեն տուն են եկել»,- եւ մտածեց, որ դարձյալ ավանս չի եղել, որովհետեւ եթե այդքան շուտ են եկել՝ կնշանակի Բեկնազարը կարգադրել է ավանսը հե-

տաճճեն՝ «մինչեւ տեսնենք շրջանից ինչ ցուցում են անում», - որը, սակայն, կարող էին մի ամիս հետո «գրավոր ուղարկել» կամ ընդհանրապես մոռանալ, կամ, որ ավելի հավանական էր, հեռախոսագրով պահանջեին «վերջին ջվալ հատիկն ուղարկել պաշտպանության ֆոնդին», - եւ կանայք դեռ շատ օրեր անիմաստ կանգնելու էին պահեստի դռներին, եւ ոչ ոք նրանց չէր ասելու ոչինչ, չէր բացատրվելու, թե ինչպե՞ս է հնարավոր աշխատել, բայց փոխարենը չստանալ, եւ տղա - երեխաներն ու աղջիկներն այդպես մեծանալու էին՝ իրենց կամքի եւ բնության տվածի ուժով. նա լազանի ոտնաչրի հետ բակի ձևակույտերը ցայեց արցունքով, Յիտլերի հասցեին անեծքով եւ բոլորի ու աշխարհի հանդեպ ջահել կնոջ արհամարհանքով եւ դեռ կարողացավ հրճվել, որ ավանսի հերթում չի ստորացվել իր թանկ՝ խաղաղ օրերից անխառն պահած՝ շեն տուն հարս եկածի արժանապատվությունը, որ ամեն անգամ, պահուստ ոսկու նման, երբ աչքառ է հանվում, փայլ եւ լույս է արձակում այնպես մաքուր եւ ազնվական, որ նույնիսկ Պետրեն էր ստիպված աչքերը խոնարհում եւ մրթմրթում էր. «Էլի մեջքը գետնով չի տալիս, է՛», - եւ դա այդպես էր, եւ ուրիշ կերպը նրա համար չէր. մարդ մարդուն անեծք է տալիս, ասում է՝ «ցաք շալակես», - փշփշոտ ցաքը մեջք է ուտում, բայց, ոչինչ, մեջք է, կքրքրվի ու կլավանա, «շաքար չենք, քրտնքից չենք հալվի», - սարսափելին օտար Մեկի առաջ վիզ - ծռելը կլիներ, - նրա այգի - բանջարանոցը կլոր՝ պինդուպուճախ - բարձր չափարած էր՝ ցաքով. ցրտուց՝ դժվար փտող, բիհրերն ամուսինն էր խփել, կային, եւ դրանց շուրջ ու վրա՝ ցաքը դառնում էր խիտ ցանկապատ, նրա դռանը լատան-փայտ կար, եւ Տղան էլ ամեն օր ցախի չորուկներ էր հասցնում, որ կրակը հեշտ վառվի. շարում ես՝ ցախի մանրոնն սկզբից, բոխու լատանի ճղտածը՝ վրայից եւ լուցկու մի - հատիկով լինում է կրակ, նրա այգում քսան թթածառ կա, յոթ ընկուզենի, նրա լոբուտն առաջինն է ծաղիկ թափում, ու հենց այդ օրն էլ չափարի վրայով մեկնված՝ այստեղ - այնտեղ՝ մեծ տերեւների արանքից՝ գլուխ են հանում մատողաչ դոմիկները, եւ մեծահատիկ մոշենու առաջին ողկույզը՝ հազնում կարմիր. լոբին, թթի դոշաբն ու չամիչը, ընկույզը՝ սպի-

տակ, չոր - խշխշան՝ տռուզ, կարասաչափ դդումները, սարի ճամփից պռճոկած պնդուկը, քուլատանձի ու դամբուլի չրերը, շլորի լավաշան, հոնի «ախտան» եւ ավելուկի հյուսկեն շարանուկներն այնտեղ՝ ներքնահարկի ամեն մեկն իր տեղում է եւ գտնվում է փակ աչքերով՝ որը երբ պետք է գալիս. «Ես սովի բերանը երեխա չեմ տվել ու չեմ տա», - եւ ասաց՝ երկնքի հասցեին. «Ի՞նչ ես ուզում, այ անտեր», - եւ հին օրերի հուշը ծաղկեց. Շիրվանլուի թուրքը մի ուղտաբեռ ցորեն էր բերել՝ ուշ աշուն էր, թուրքը «սեփդ» էր՝ մորուքը հինայած, թեյ խմելիս ծոցից բաժակ հանեց՝ իր ձեռքով լցրեց, տոպրակում հաց ուներ՝ ցամաք կերավ. «սրանք հայի սեղանն անսուրբ են համարում», - ամուսինը պատվիրեց, որ հյուրի համար անկողին բացեն, իսկ գիշերն անսպասելի ձյուն եկավ - նստեց եւ հաջորդ օրն էլ դեռ ձյունում ու ձյունում էր՝ մեծափաթիլ՝ ճոթ-ճոթ, եւ ուղտը մռնկաց- գժվեց եւ ձյունամշուշի միջով գնաց՝ դեպի ներքեւի տափարակները, որտեղից տերը նրան քշել էր մինչեւ քերձատակի այդ տունն ու ստիպել, որ օտար դռներին չոքի, եւ «սեփդը» ձեռքերը կարկառել էր դեպի երկինք եւ ծնկասող աղերսում էր, որ Երկնայինը մեղմի ուղտի կատաղությունը. Մելիքսեթ տեգրը, դեռ ամուրի տղա էր, ծիծաղեց, եւ թուրքը բարկացավ ու խոսեց-խոսեց, թե՛ ի՞նչ՝ չէր հասկացվում, եւ կեսրայր Թելոսը հետո բացատրեց, որ «Ֆարսի լեզվով էր խոսում», - իսկ ուղտը գնացել՝ Քոչի ճանապարհին կանգնել՝ սպասել էր՝ մինչեւ տերը կգնար. «Ուղտն էդպես է, որ ձյուն տեսավ՝ գժվում է», - ասաց ամուսինը, երբ թուրքին ձիով տարել- ճանապարհել էր ու պատմում էր, որ ուղտը հասել է մինչեւ այնտեղ, ուր գետինը ձյուն չէր պահել ու կանգնել- սպասել է, - թուրքն էլ գնաց, նրա բերած ցորենն էլ. աղացվեց - եղավ «ձմեռնալյուր», կերվավ-պրծավ. «Թուրքի գլուխն էլ հողեմ, հո՞ ձրի չէր բերել», - եւ իջավ մառանատուն. ընկույզն ամբարի աջ աչքում էր՝ գոգնոցը լցրեց, գտավ եւ անկորիզ չրի տոպրակը՝ մի - երկու բուռ վերցրեց. սեւ դամբուլի չիրը՝ երբ լցունվում է ընկույզի միջուկով, անսման ուտելիք է, մանավանդ՝ խոր ձմռանը, - եւ նկուղի դռան սողնակը ետ դրեց՝ բարձրացավ՝ մի ձեռքով գոգնոցի տուտը պահած. այդ ընկույզը՝ սեւ դամբուլաչրի հետ, ուտվելու էր հաջորդ

օրը, երբ լույս կլիներ. աղջիկները կջարդեն՝ ընկույզի միջուկը կմաքրեն, չրերը կլցունեն եւ երեքով կուտեն՝ դպրոցում կամ դասերից հետո, երբ տուն եկած կլինեն, կամ՝ դպրոցի ճանապարհին. դա նրանց գալիք օրվա փոքրիկ ուրախությունն էր դառնալու՝ որ ունեն, ուրիշներն, այնինչ, դպրոց են բերում քուլատանձի չիր, քանի որ գյուղով մեկ՝ սեւ - երկարավուն եւ քաղցր դամբուլից ուրիշ ոչ մի այգի չունի. այդ տնկիները բերվել են Խաչենի մյուս ափի գյուղերից, թե այնտեղ որտեղի՞ց են տարվել՝ ոչ ոք գիտի, բայց ամեն աշուն գնում՝ կողովներով դամբուլ էին առնում - բերում, մինչեւ որ Թեւոս կեսրայրի մտքով անցել էր, որ «ամեն անգամ բերքից գնելու տեղակ բա կարելի չի՞, որ տնկի բերվի», - եւ Մելիքսեթ տղային ուղարկել է Սեյդիշեն՝ ճանաչ Ավանեսի այգուց դամբուլնու «ճուտ տվածներից» քանդի՝ հակեր անի, ձիու կողքերին կապի, ինքն էլ մեջտեղը նստի՝ բերի,- եւ թաղում կասկածել էին. «Մեր հողում դա չի բռնի», - քանի որ՝ «եթե եղպես չլիներ, մեր մեծերը հո անխելք չէ՞ին, կբերեին - կտնկեին, էլի», - իսկ Թեւոսն ասել է. «Մարդուս խելք է տրված, որ չհարչարվի, եղ ինչի՞ Քուլատակ, Թբլղու, Սեյդիշեն, Բալուջա եւ մնացած տեղերն էլ ծառը բռնում եւ լավ էլ բերք է տալիս, էստեղ չի լինի», - եւ մի վաղ գարնան այգու չափարատակերին փոս փորել է տվել, տնկիները կարգով - իրարից չորս ոտնաքայլ հեռու՝ դրել հողում, եւ ծառերը կանաչել են, հաջորդ տարիներին՝ ծաղիկ գցել ու տվել առաջին պտուղները՝ մի քիչ մանր, պինդ, բայց ծառերի ուժովանալու հետ՝ կամաց - կամաց միզող եկել է տեսքի՝ ասես բերված լինի Սեյդիշենից, եւ Թեւոս կեսրարն իր ձեռքով դամբուլը պճղել՝ բացատրել է «ախտա» չիր անելու, կտուրին՝ արեւի տակ, չորացնելու կարգը եւ՝ «որ հարկավոր է լցնել եռման ջուրն ու հետո նորից փռել՝ չորանա, էլ չի որդնոտի», - հին օրերի լավնուհեշտը, սրտաշարժ երեկոները, երբ տնովի «կրկենի» էին թխում, եւ հոնի կորիզը միշտ Մելիքսեթի կտոր գաթայից էր դուրս գալիս, մնացել էին անցած ծիծաղներում եւ տան մեծերի հանդեպ երկյուղածություններում. ողջն անցավ-գնաց, եւ կատակը՝ քավոր Ջումշուղն ասել էր. «Թեւոս, էս օճորքը խի՞ չես տախտակում, ամեն տեղ հիմի եղպես է, դու սեւ կոճերի տակ ես դեռ», - պատասխանել էր, թե՛

«դու քու կոնյակը խմիր»,- այսինքն՝ «թող տանս կոնյակ խմվի, օճորքի սեւութունը՝ հեչ»,- եւ այդպէս էլ առաստաղը մնացել է բաց՝ «լոփան» ինչպէս որ նախկին տանտերը շարել՝ Բաքվից ետ չէր եկել, որ մնացածն անի, եւ Թեւոսն առել էր տունը՝ կար, երբեմն հող էր թափում, բայց առհասարակ վարպետն իր գործը խղճով էր արել՝ պինդ կաղնե գերանակապ էր, երկար կղիմանար, մինչեւ տղերքն ինքնուրույն որոշում ընդունելու լինեին. պատերազմից երկու՞, թե՞ երեք տարի առաջ կինը մեռավ, վեց ամիս չանցած՝ ինքը. Խորենը Շուշի թառ նվագել էր սովորում, Մարգուշան մարդու գնացած էր, արդէն երկու տղա ուներ. նրանք՝ Մարգուշան ու Խորենը, ծնվել էին փոխնակ կնոջից. երբ հարս եկավ՝ փոքր էին, Խորենը դեռ ծիծ էր ուտում,- հետն այգի էր տարել՝ Մարգուշային, գետնամորի էր քաղել՝ «մի լիքը օշնակ», ինքը քաղում էր, երեխան՝ բուռ-բուռ ոտում, հետո սիրտը ետ տվեց, եւ ինքը վախեցավ, բայց ուրիշ ոչինչ չեղավ՝ կերածը գետնամորի էր, փսխեց, հետո ետ եկավ՝ նրան շալակած, ու ճամփին աղջիկը քնով էր անցել եւ պռոշը ծպպացնում էր՝ ոնց որ թե մորի ծծելիս լիներ,- մարդը ճակատից վիրավոր եկել՝ արտելում դարբնագործի է, տղերքը մեծանում են. «թող ապահով լինի»,- իր հոգսնուցավը միայն իրենն է. «Ասենք թե Աշոտը քոչի թուրքի ցաքատը կոթեց, նրա ձին նալեց՝ մի երկու կիլո պանրի դիմաց, նրա սկեսուր Գյուլին կթողնի՞, որ Մարգուշան ախպոր որբերին բան հասցնի. իրենց աշխատանքը՝ իրենց տունը, ես ոչ մեկի ձեռքին չեմ նայելու»,- օճորքի սեւն այդպէս էլ մնացել էր, եւ՝ սանդղագլխի դռան ճռնչոցը, որ ցուրտ պատշգամբում կարծես տրաքտրաքեց: Այդ, թե հաջորդ ամառ, տեգրկինը հորն առաջ գցած եկավ, թե՛ «իմ երեխեքին էլ մի բան հասնու՞մ է իրենց հոր աշխատանքից»,- թիթեղը քանդեցին՝ տարան, ձեղունի տախտակները դժվար էին պոկվում, բայց, ոչինչ, Սուքիասի կռներում դեռ ուժ կար՝ մեկ-մեկ մեխահան արեց, դարսեց, նմանապէս՝ գերանները. սենյակը մյուսից միջնորմով էր բաժանված՝ Մելիքսեթի ամուսնութեան տարում տախտակով էին դրել՝ վրայից կրասվաղ քաշել,- հիմնական պատն էլ քանդեցին, Սուքիասն ասաց. «Տունս կցան պիտի տամ, ձեր որբերի համար, քար է պետք»,- թողեցին երեք

պատ, կողքն էլ՝ խանդակ, երբ Տղան 16 տարեկան էր:

...1959 թվի դեկտեմբերի 7 - ի կեսօրահացին Մայրս սկեսրոջ հետ լոբաճաշ է կերել, վրայից՝ խաշած դդում, եւ երկունքի ցավերն սկսել են՝ այդ «երեքպատանի» տանը: Այդ տարի հայրս գերազանց ավարտել է Երեւանի համալսարանի բանասիրության բաժինը: «Որ մնար, պորֆեսոր կլիներ», - հետո պիտի նրա մասին ճանաչողներն ասեին, բայց ստույգը միջնակարգ դպրոցի ուսուցչությունն էր. տանը երեք աղջիկ ուներ, կին ու մայր: Մորս գյուղական ծննդատուն են տարել, որ հոր՝ Յովյաննես Մինասյանի տան մոտ էր: Եւ նույն երեկոյան ծնվել եմ ես: Հինգ օր անց ինձ բերել են տուն: Ու երբ զարմացած նայել եմ պատերին, չտախտակած առաստաղին, աղջիկներից երկրորդն ասել է. «Էդ ինչի՞ պլշեցիր, ձեր տունը սպիտակ է, հա՞», - ծննդատան՝ կրով ճերմակացրած պատերը նա տեսած էր եղել, երբ տատիս հետ մորս տեսության էր գնացել: Եւ նրան թվացել է, թե ես սպիտակ պատերով տան՝ ուրիշի երեխա եմ՝ «իրենցի» սեւությունից եմ զարմացել:

...Շոգ ամառ է, օգոստոս, քաղաքը՝ խարկված, տոչոր. բոլոր ծորակները ցամաք են, մայթերին տղա երեխեքը ջուր են ծախում՝ գոլ, անհամ, հազիվ ողողում ես կոկորդո եւ էլի ծարավում: Բաժակն արժե տասը կոպեկ, պաղպաղակ էլ կա, բայց վառոցին, երբ, թվում է, գոլորշանում - տարրալուծվում ես, պաղպաղակը՝ ինչպես մի գդալ սառը ջուր եման թեյնիկ լցնես. կուլ ես տալիս՝ լռվում, եւ փողոցը կանգ է առնում:

Մի հաղթ տղամարդ՝ բազուկները գործի դրած՝ ամբոխի միջով ճանապարհ է բացում դեպի մանկավարժական ինստիտուտի մուտքը, ուր բարձր՝ կարմիր պաստառի վրա՝ փայլփլում է «Գիտությամբ զինված մարդն անպարտելի է» ասույթը: Ավելի վեր, համարյա քիվին կպած, Քաղբյուրոյի կազմն է, Պողգոռնին չկա, լուսանկարն արդեն հանել են, գարնանը Խորհրդային Միության Գերագույն Խորհրդի նախագահության նախագահի նրա տեղն զբաղեցրել է Բրեժնեւը: Ես դա գիտեմ, պատմությունից քննություն պիտի հանձնեմ եւ հավատում եմ, որ «գիտությամբ զինված մարդն անպարտելի է», - թեեւ երեկ, երբ նոր էի դուրս եկել

քննությունից, աստիճանների վրա լսեցի.

-Յիմա խելքն ո՞վ է բանի տեղ դնում:


-Յա, եղ լոզունգը լավ կլիներ փոխելին,- մայրուաղջիկ էին երեւի:

Ծիծաղեցին ու թել-թելի իջան՝ հպարտ, որ արեւի տակ խաշ-վող մյուսների հետ կապ չունեն: Նրանց սպասող սել «Վոլգայի» վարորդը, թերթը թողած, որ հաստատ չէր կարդում, շտապեց բացել ետելի դուռը, եւ մեքենան տիրական ազդանշաններով գնաց: Այդ «Վոլգան» այսօր չկա: Ինչու՞ գա, եթե հարկավոր գնահատականն արդեն նշանակել եւ զանգել, տեղեկացրել են, իսկ ամբոխն սպասում է: Յաստաբազուկ մարդը հասավ մուտքին. հիմա պիտի հանի թաշկինակը՝ ճակատը սրբելու, իբր թե՛ մի կարելոր հաղթանակ արդեն նվաճել է: Նրա արեւահար քիթը խոշոր՝ ընդգծուն է, հագել է թեթել կոստյում եւ շատ նման է կոլ-խոզի նախագահի՝ նրանց, որ հեռուստեսության թղթակիցների առաջ դաշտում կանգնած՝ զեկուցում են ստանձնած պարտավորությունները ժամանակից շուտ կատարելու մասին, իսկ կադրի խորքում պարտադիր ցուցադրվում է «Ուազ» մեքենա՝ հեռուստատեսությամբ՝ առանց վարորդի, որպեսզի իմացվի, որ նախագահը դաշտ գնալիս ինքն է նստում ղեկին: Իբր՝ եւ ժամանակ է շահում, եւ՝ միջոցներ: Կամ, ով գիտի, վարորդն էլ գյուղացի է, չէ՞, բերքահավաքի եռուն շրջանում իր տան գործերին է մնացել, նախագահը, մինչդեռ, պարտավոր է հոգալ հանրային կարիքները, իսկ իրենը՝ հետո, երբ համայնական բերքն արդեն ամբարված, պարտավորությունների զեկուցագիրը գրված կլինի: Պակասում է լայնեզր ծղոտե գլխարկը, թե չէ կերպարն ավարտուն էր ստացվելու: Քամի չկա, նույնիսկ՝ թեթել հով, զեփյուռ, օդը անշարժ է, եւ աստիճանասանդղակի վերջին քայլը մարդը հաղթահարում է գրեթե օրորվելով: Կարմիր թելկապով տղան, որ, ասում են, բարձր կուրսի գերագանցիկներից է եւ «ապահովում է ընդունելության քննությունների նկատմամբ ուսանողական վերահսկողություն», նրա առջեւ բացեց դռները:

Ներսում երեւի դարձյալ զով է՝ երեկվա պես, իսկ այստեղ մարդիկ դժգոհում են: Մռայլ շենքն անհաղորդ է, բայց ոչ ոք հեռանալու միտք չունի: Մի քանիսը նույնիսկ այնպես ամուր են հիմնա-

վորվում, թվում է՝ ամբողջ պաշարած հրասակախումբ է, որ մտադիր է ներսիներին մատնել սովի, համաճարակի՝ մինչեւ կամ անձնատուր լինեն, կամ դռները խորտակվեն: Մոտերքում վաճառասեղան է հայտնվում՝ կարկանդակներ են բերել, ով՝ նստած, ով՝ ոտքի վրա՝ բացում են փաթեթներ, մեջտեղ հանում լիմոնադի, հանքային ջրի շշեր: Մի պառավ արեւծաղկի բոված սերմեր է ծախ հանել, մյուսը՝ խաշած, աղ արած եգիպտացորենի կողեր: Ուտում են, սրախոսում, բամբասում եւ մայթի մի ողջ հատված ծածկվում է թղթերով: Փողոցը միալար գվվում է մեղվափեթակի նման, կուտակ-կուտակ խմբերը հեռանում են, հետո իրար գալիս, տեղեկություններ են փոխանակում, քննարկում, վիճում: Մուտքի դռները բացվում են, կարմիր թեւկապով տղան հայացքը պտտեցնում է ամբոխի վրայով, մեկը բարձրացնում է ամառային լանեզր գլխարկը՝ տղան բացասաբար շարժում է ձեռքը, ահա՝ գտավ եւ ժպտում է ոսկեատամ բերանով: Աղջիկ է, որ զուր փորձում է ճեղքել դիմացի մարդկային պատը, իսկույն հարցեր են տեղում. «Ո՞ր բաժնից ես, ի՞նչ թեմա ես գրել, էդ ինչի՞ ես կանչում»:-

Աղջիկը չի պատասխանում, վախ կա աչքերում՝ որ շոգից եւ անզորությունից խենթացած ամբոխը վրա կտա՝ բզիկ-բզիկ կանի: Մեր խմբից է: Երեկ նրա ձեռքից ծածկաթերթիկը վերցրին՝ քննությունից հանեցին, բայց մեկը հետո եկավ, ինչ որ փսփսաց դասախոսի ականջին՝ աղջկան նոր թղթեր տվեցին՝ «Թեմաս փոխում եմ», - երբ ես դուրս էի գալիս՝ նա դեռ նստած էր: Ինձ համար մեկ է՝ ում հետ եմ սովորելու, բայց հիմա նրան խղճում եմ . սեւ մազերի ջրվեժն ուներին, պայուսակը՝ թեւի տակ սեղմած՝ նա անքթիթ նայում է կարմիր թեւկապով տղային, որ սառցահատի համառությամբ ճեղքում է հոծ զանգվածը, իսկ մարդիկ ըմբոստանում են. «Ու՞ր ես տանում, խի մենք էստեղ սոխի գլուխ ենք, ժողովուրդ, էդ աղջկա ձեռից թուղթը երեկ խլել են, հերը փողատեր է, տանում են՝ նոր գրավոր գրի, չթողեք, են մտնողը դրա հերն էր, օր ցերեկով ժողովուրդի աչքին թոզ են փչում»:- Ավելի եռանդուն բողոքում է մի տարիքով տղամարդ, որ սեւ կոստյում է հագել, բաճկոնին շարել շքանշաններ, մեղալներ. «Ես եմ, է՛, էս



երկրի համար արյուն թափել, ի՞նչ ես անում, այ ջահել, քեզ պոստ են վստահել, որ կարգ պահե՞ս, թե ծանոթների՞դ ծառայես, առավոտից հազար խնդրեցի, աղաչեցի՝ ասում էիր՝ մի խանգարի,- բա ես չի խանգարում, եղ Լորիս-Մելիքովի թո՞ռն է, թե՛ կնյազ Կուտուզովի՞»:-

Կարմիր թելկապով տղան քրտնում է, մի քանիսը պաշտպանում են նրան, տարիքով տղամարդը բաց է թողնում աղջկա թելը, հետո թաշկինակը հանում՝ փռում է աստիճանին. «Էլ տեղից վերկացողը չե՛մ, սրանց տեսեք՝ գլխիս քարոզ են կարդում, ես երրորդ տարին է՝ աղջկաս կտրում են, գրելու եմ Մասկվա՝ մինիստրու վարուժոննիխ սիլ՝ էսպես ու էսպես, ընկեր Ուստինով, Յայրենական մեծ պատերազմի հաշմանդամ մարդուս երեխուն ինստիտուտ չեն ընդունում, թե ինչ է՝ փող չեմ տալիս»:- Յետաքրքրասեր մի խումբ իսկույն օղակում է նրան: Մեկը խորհուրդ է տալիս. «Այ մարդ, լա՞վ չէր՝ աղջկադ պսակեիր՝ եղ ցավից պրծնեիր»:- Եւ մայթը հռհռում է: Կատաղի շոգ է: Քաղաքը, մոտիկ խանձված բլուրները կարծես իրար են գալիս, ճոճվում: Փողոցի խուլ բվվոցն ահագնանում է:

Փակում եմ աչքերս, եւ իմ դեմ դաշտ է, հետզհետե սաստկացող աղմուկ: Վարդանանց պատերազմն է, Ավարայրը: Լսում եմ ճակատամարտի կոկորդային, խզված մռնչյունը, հայտնվում են սրամերկ արշավող հեծյալներ: Մամիկոնյան այրուձին սմբակահարում է պարսից վահանափակ հետեւակը, ճայթյունով սուրում են նետեր: Ահա Վարդանը՝ բլրին՝ արծվենի հայացքով կլանում է ճակատամարտի ահագնությունը, հետո Չոհրակին են բերում, «Սպարապետ, իշխանիկին են բերում»:- Չի գալիս, բերում են. «Վարդանը թիկնոցը մի փոքր ետ տարավ, տեսածն ահավոր էր»:- Ընկավ իշխանիկը, ուրեմն օրհաս է, մահտարածամ: Ահա՛ Ատոմը՝ գեղուղեշ, պրկվել է ասպանդակների վրա, գլխից պոկել սաղավարտը. «Իմ հետեւից, գրո՛ր՛հ, ի մա՛ա՛րտ»:- Յետո արեւը թեքվում է Մասսյաց կողմը, խամրում են գույները, եւ արյունամած դաշտում մորմոքում է սեւազգեստ Եղիշեն. «Յազգեն Մամիկոնեից...»:

-Այ տղա, քեզ ի՞նչ եղավ,- սթափվում եմ: Նույն փողոցն է,

արելը, մարդիկ, մեքենաները, ջուր ծախող տղեկը, մայթերին՝ պաղպաղակի դատարկ արկղեր: Ճերմակ խալաթով մեկը գոռում է. բեռնատարը խրվել է ամբոխի մեջ: Գյուղի մեքենա է՝ հաստատ՝ քսան- երեսուն տարվա, հողմնապակու վրա այստեղ-այնտեղ ցուցում են դարմանի մանրիկ ծպեղներ՝ ինչպես պեպեններ՝ մարդու դեմքին:

Էստեղ կոլխոզի կա՞լ է, որ խցկվում ես, սելդ քչի գևա,- գոռում է պաղպաղակ վաճառողը:

Մեր նախագահին ճանաչող կա՞,- գլուխը խցկկից հանած՝ անորոշ հարցնում է վարորդը, որ պատերազմի իր չհաս պատանության տարիներին երեւի իրոք սայլապան է եղել, կոլխոզային բերքը՝ մինչեւ վերջին հատիկ, ամիսներ շարունակ կրել է երկաթուղու Եվլախ կայարան: Փողոցը քրքջում է. «Էդ ո՞ր մեկն է, տնաշեն, Ղարաբաղ Էնքան նախագահ կա՞ մեկը Դաշուշեն է խորովածի նստում, մյուսը՝ Սարսանգ, Էն երրորդն էլ վայ թե հիմա Արաքս լողանում է, հետո լոքո է բռնելու»:- Վարորդը դժգոհում է. «Ի՞նչ մարդիկ եք, կոմբայնն Էնտեղ պարապ, ես շոգին հասկը վաղանում - թափվում է, դուք հռիռում եք»:- Մեքենան փռշտում է, ծուխումուր անում. «Էն մեր շան տղա նախագահին որ տեսնեք, կասեք՝ կոմբայնը ջարդվել է, թող հոգս անի»,- վերջին պահին ասում է կողքի մարդկանց, որ գուցե իրենց, գուցե հարեւան գյուղից են եւ նախագահին դեմքով, անունով գիտեն, իսկ շենքի ճակատին լռում է խորհրդավոր բարձրախոսը, լռում է մինչեւ ուշ երեկո, մինչեւ կեսգիշեր:

Հայրս սպասում էր, որ գրականության գրավոր քննությունից գերազանց եմ ստանալու, Շիրվանզադեի «Պատվի համար» դրամայի իմ վերլուծությունը գուցե թե արժանի լիներ նրա ակնկալիքին, բայց մանկավարժականի ղեկավարությունը որոշել էր, որ՝ «բոլորն արտագրում են ծածկաթերթիկներից»:- Ես նրան՝ գրականության հոյակապ ուսուցչին թողել էի՝ գնահատականն իմանա, ինքս փախել գյուղ:

...1946 թվին հայրս միջնակարգն ավարտել՝ գնացել է Ռոստով՝ զինվորական ուսումնարան ընդունվի. տատս հին օրերի լավ ապրուստից խնայած՝ մի քիչ մաքուր քաթանի կտոր է ունե-

ցել՝ դարձել է զինվորական ուսապարկ, հավ է մորթել, գաթա թխել, դրել մի գույգ բրդե գուլպա, տանը նաեւ կոշիկ է գտնվել: Հավը կերվել է՝ Մարտակերտ չհասած, փշոկուն գաթան՝ երկաթուղու Եվլախ կայարանի բուֆետում, բայց ռուսաց լեզվի քննությունից իբր անբավարար էր ստացել, ինքն ու Անդրեասյան Աշոտը: Տատս ասում էր՝ «Նա վատ ստացողը չէր»:- Տատիս կարծիքով՝ զինվորական ուսումնարանի ապագա կուրսանտներին տարել էին ցույց տալու պատերազմի դեռ թարմ հետքերը, եւ հայրս ատել է զինվորական գործը: Մեր տոհմում զինվորական չի եղել, պապս՝ հորս հայրը, առաջին համաշխարհային պատերազմին մասնակցել է, զորակոչել՝ հասցրել են մինչեւ Ավստրիա, 1941 կամ 42 թվին պապիս նորից զինվորության են կանչել՝ 1897 թվի ծնված մարդուն, քանի որ մերոնք, իբր, հարուստ էին եղել կամ իրենց հարուստ էին ներկայացրել՝ կոլխոզարժման տարիներին նրանց «կուլակ» էին գրել, տարել էին մի երկու ձի, կով, սերմացու ցորեն, գորգ, ինքնաեռ՝ ինչ որ հարստություն էր հուշել, բայց կուլակացման իրական առիթը եղել է այնպես, որ Բողդանց Աթանեսը իմ հոր հորեղբայր Մելիքսեթին կանչել է՝ նամակ տանի շրջան, ասել է. «Ա, դու եդ ո՞ր օրվա կուսակցականը ու դեռ դեկավարն ես, որ հետս մեծ - մեծ խոսում ես: Երեկ Ցեխ ձոր, գլուխդ տոպրակ քաշած, ավազակ չէի՞ր»:-

Այդպես մերոնք համարվել են «անհարազատ», եւ Ասատուր Բաբայանը եկել՝ դռանը կանգնել՝ պահանջել է. «Ձեր ձին պիտի տաք՝ Ստեփանակերտ կոմսոմոլի ժողով եմ գնում»:- Տարել, մի շաբաթ հետո փորը ճողված ետ է բերել, ձին սպանել է՝ կուլակի ձի է եղել, պիտի սպաներ, եւ մեր Ղուլունց Թեոս պապը նոր իշխանության գործը հասկացել է, որ՝ «ուզում են լամպի շուշա սարքեն, վերջը դուրս է գալիս արաղի շիշ», - ինքը «պուրթուկա» է ասել, մինչեւ օրս հիշվում է. ասում են՝ խմող էր, խմիչքի թուլություն է ունենցել, գրի սենն ու սպիտակը գիտեր՝ Շուշի մի քանի տարի սովորել էր: Խորհրդային թերթերը կարդացել՝ մեծ տղային հարցրել է՝ «Աթանես, էս որ ասում են «պուռն, երկարատեւ ծափահարություններ», էդ ի՞նչ է, խի՞ են ծափահարում», - իսկ թերթերը ծափահարում էին հանուն կոլխոզարժման, այսինքն՝ որ

հարեւանի աղջիկը կոմսոմոլ է գրվում եւ ժողովներում հայտարարում, որ Խարտունք կուլակ են, շատ ցորեն ունեն, կարի մեքենա, եւ Խարտունք այդ աղջկա հորը մինչեւ նոր բերք ուտելու ցորեն էին տվել, ուրեմն կուլակ էին, ավելցուկ ունեին, ահա դրա համար էին ծափահարում խորհրդային թերթերը, որ՝ Ղուլունց Թեոսի աներանք, ուրեմն, Դերունք են, առաջ ասում էին՝ «Մեր էջը որ տանենք Դերունց գոմում կապենք՝ էլի գիր կսովորի», - բայց Դերունց Աննա աղջիկը նստել, տան գրքերը մեկ - մեկ պատառոտում՝ թղթերը կրակի էր տալիս, որովհետեւ «Էնտեղ Տաճկահայաստանի պատմությունն էր, Ռափու գրքերն էին»:-

Յետո Դերունց Ահարոն եւ Արեգ տղաները Երեւան ուսանող էին, նրանց պապ տեր Վարդանը չկար արդեն, ոչ էլ՝ հայր Վաղարշակ վարժապետը,- մեկը գրել էր կատակ-պոեմ՝ գյուղի քահանաների մասին՝ «Տեր Վարդանը՝ Եօից վախած, պառկած է յուր տանը», - առավոտ վաղ քահանան մտնում է եկեղեցի, բեմի վրա տեսնում է՝ պոչով- պոզով սատանան է, «չքվիր, սատանա», - բայց սատանա չէր, այժ էր, լեղաճաք քահանան մի քանի օր հետո մեռնում է, իսկ Վաղարշակ վարժապետի մահը տիֆից է եղել, տղաները Երեւան էին, գյուղ էին եկել՝ ամռան հանգստի, կոլխոզի նախագահից սայլ էին խնդրել, որ հասցնի Եվլախ՝ Բաքու-Թիֆլիս գնացքին, որ հետո Թիֆլիսով՝ Ալեքսանդրապոլ՝ Լենինականով հասնեն իրենց դասին, Աճառյանի, Մանանդյանի, Աբեղյանի դասին, նախագահը տղերքին՝ իրենց բեռուբանով դրել է «ղանթարին», մանրամասը կշռել, որպեսզի «ըստ համապատասխանի վարձը գանձվի», - դրա համար էին ծափահարում թերթերը: Պատերազմից հետո այդ նախագահին կալանքի էին վերցրել՝ չարաշահումների համար կամ ուղղակի մատնության զոհ էր, մութ պատմություն է, ասում են՝ սիրո պես մի արկած է ունեցել, ինքը բանտում էր, աղջիկն ավարտել էր դպրոցը, դարձյալ՝ Եվլախ- Թիֆլիս - Լենինական- Երեւան ճանապարհով հասցրել էին համալսարան, մորական իմ պապ Յովհաննես Մինասյանն էր տարել՝ իմ մորաքույր Վեներայի հետ, քանի որ դասուկերներ էին: Երեւան գտել է Դերունց Ահարոնի տունը՝ Այգեստան, ասել է՝ «Ահարոն, աղջկերքը պիտի համալսարան ընդուն-

վեն»:

Մոլոտովի անվան Երեւանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի դեկանի տեղակալ եւ գիտությունների կատարյալ թեկնածու՝ որ Գուրգեն Սեւակին անունով էր դիմում, Ղերունց Ահարոնը չի հարցրել. «Ընկեր Մինասյան, բա էս երկրորդն ո՞վ է», - Մինասյանն ինքն է ասել, որ երկրորդը Բեկնազարի աղջիկ Լիդան է, երկուսով էլ ընդունվել են ժուռնալիստիկայի բաժին, եւ գյուղի հաշորդ այցելության ամռանը մեկը Ահարոն Գրիգորյանին հիշեցրել է Բեկնազար Ղուլյանի վատությունը՝ որ իրեն եւ Արեգ եղբորը դրել է «ղանթարին», գրամ առ գրամ կշռել, ասել են. «Ահարոն, բա դու դրա աղջկան ո՞նց օգնեցիր»:- Թուրքի առակով է պատասխանել, թուրքի խոսքով. «Վատությունը վատություն անես՝ ամեն մարդու գործ է, բայց որ վատությանը լավություն անես՝ էդ արդեն մեծ մարդու գործ է»:- Չի ամաչել, թուրքերեն էլ ասել է՝ «Փիլ ադամըն իշի դըր»:-

...Ռոստով գոհվածների ցուցակում հայրս երեւի կարդացել է հորեղբայր Մելիքսեթ Ղուլյանի անունը, այդ մասին ինքը ոչինչ չէր ասում, ոչ էլ՝ որ Երեւանի համալսարանի երկրաբանության բաժին է ընդունվել, հացպակաս այդ տարիների Երեւանում նրա միակ հույսը դարձյալ Ահարոն Գրիգորյանի հեռավոր բարեկամությունն է եղել, նրա Անահիտ կնոջ գյուղական սրտացավությունը, բայց մի օր մարդուկին նրան խորհորդ տալու պես հասկացրել են, որ գյուղում հացի տեսակետից ավելի հեշտ է, թողել՝ ետ է եկել: Այդ տան ներքնահարկում, որին ասում էին «մաղազա», ինչ-որ տեղ հոր կացինը եւ ուրազը պիտի լիներ, ուրազը գտնվել է, կացինը՝ չէ: Տատս ասում էր. «Աթանեսին որ բանակ կանչեցին, ինքը չուլում էր, գործի էր, Էստեղից են տարել, կացինը Ղըշխանց Թեւոսը չտվեց, մենակ ուրազը բերեց»:- Խորեն հորեղբայրը գերությունից եկել էր՝ կացին գտավ, ուրազը՝ գոտու տակ, կացինը՝ ձախ թելը զցած՝ տասնութ տարեկան տղան Խաչենագետի բարակաջուրը անցել՝ Գառնաքար Սամսոն քեռու դուռը բացել ու կանգնել է. «Եկա՞ր, բա սովորե՞լի», - եւ քեռակին Փիրուզան, որ նաեւ հորաքույր էր, եղբոր որբի համար լաց է կապել: Տաշել են սայլի անվացու, տնի, ճաղեր, տախտակ են քաշել,

գերան: Ահա այդ՝ արտելում աշխատելու, բանակային պարտադիր ծառայություն անցնելու, որ մոտիկ՝ Էջմիածին էր, ամուսնության եւ երեխաներ ունենալու պատճառով հայրս համալսարան ավարտել է ուշ՝ 1959 թվին, եւ նույն տարու դեկտեմբերի 7-ին ծնվել եմ ես՝ հինգի մեջ միակ տղա երեխաս, որին նա Երեւանի համալսարան չուղարկեց, քանի որ բուլորից շատ ինձ էր սիրում:

...Լիդա Ղուլյանը եղավ Ադր. ԿԿ Մարտակերտի շրջկոմի քարտուղար՝ գաղափարական գծով եւ խորհրդակցությանը հայտարարեց. «Շրջկոմը Յովհաննես Մինասյանին չի վստահում՝ քաղպարապմունքներ անցկացնի»:- Մինասյանի ճակատին դեռ պատերազմից առաջ դրվել էր «լրտեսի» խարան: Որք էր, Լենինականի պոլիգոնում մանկավարժական դասընթացներ էր անցել, որքանոցը ամերիկյան էր, ուրեմն՝ լրտես էր, օտար հացով մեծացած, իրենք հարազատ էին, Մինասյանը՝ ոչ, չէին վստահում: Իմ պապը գրեց. «Անխոհեմ աղջիկ, ինչպե՞ս մոռացար, որ ես եմ քեզ համալսարան տարել», - այս բովանդակությամբ նամակ՝ շրջկոմի քարտուղարին, բայց Պարույր Սեւակն արդեն տպել էր «Յայոց լեզուն որբի գլուխ չէ» հոդվածը՝ հայերենի դպրոցական դասագրքի մասին, եւ Ահարոն Գրիգորյանի վարկը Երեւան քաղաքում այն չէր, հետո էլ. «Ընկեր Մինասյան, այդ ինչպե՞ս եղավ, որ դուր՝ դու եւ քո փեսա Սերգեյ Ղուլյանը Ահարոն Գրիգորյանի խելքով ընկած՝ գնացիք Աշտարակի Ուջան գյուղ եւ լուսանկարվեցիք Անդրանիկի արձանի մոտ, չէի՞ք ասի, թե այդ ինչ ձայնասկավառակներ եք բերում Երեւանից, այդ ինչ երգեր եք լսում, ոնց թե՛ «Էն հայը որ ազգն ուրանա եւ այլ ազգ դառնա, մահվան օրին հայ արցունքի թող չարժանանա», - դա ինչ նացիոնալիզմ է, այն էլ մեր օրերում, բարի չէի՞ք լինի՝ պատմել, թե ձեր քենակալ Տոնական Գալստյանը այդ ի՞նչ նամակ էր գրել Ստալինին՝ 1939 թվին, երբ բանակ էին գորակոչել, որ կատարի իր սուրբ պարտքը հայրենիքի առաջ, այն հայրենիքի, որ նրան որբությունից հասցրել էր Երեւանի համալսարանի դասախոսի աստիճանի, ինչու՞ չէր ուզում ծառայել եւ դեռ չգիտենք էլ՝ նա զոհվե՞լ է, թե որպես հայրենիքի դավաճանի բռնել՝ շարքի առաջ գնդակահարել են, որովհետեւ ոչ մի «սեւ թուղթ» էլ չի ստացվել, ահա դրա հա-

մար է, որ չենք վստահում, նրա համար, որ 1936 թվին Ձեզ ազատել են Նուխի քաղաքի հայկական միջնակարգ դպրոցի դիրեկտորի պաշտոնից՝ որպես նացիոնալիստի, չհիշեցնեք, մենք լավ գիտենք, որ ձեզ փրկել է Միր - Ջաֆար Բաղիրովի միջամտությունը, ոչ, մենք պարզել ենք, որ Նահիրի Չարյանի, Սարմենի, Սերոբ Դեմիրճյանի հետ որբանոցում դուք միասին չեք սովորել, կուսակցությանը խաբել եք՝ ձեզ փրկել է Բաղիրովը, իսկ ո՞վ էր Բաղիրովը՝ ժողովրդի թշնամի Բերիայի գործակալը, հասկացա՞ք, դեռ ուրախ եղեք, որ չենք հարցնում, թե ի՞նչ կապ եք ունեցել նացիոնալիզմի համար դատված Ղեւոնդ վարժապետի հետ, ում տանը լինում էիք ամեն շաբաթ, այո, դա մենք հրաշալի գիտենք՝ Ղեւոնդ վարժապետի տղան այսօր հայտնի գիտնական է՝ Անդրանիկ Իոսիֆյանը, բայց հորը դատել են, չէ՞, մենք հոր մասին ենք խոսում, ոչ թե՛ որդու, թեեւ կարող էինք նաեւ հարցնել, թե ու՞մ թելադրանքով է, որ Անդրանիկ Իոսիֆյանը, երբ իր 60-ամյակն էր նշվում, ներս չմտավ գյուղի ակումբ, կարծում եք չգիտե՞նք, որ դա բողոք էր, ակումբը եղել է Իոսիֆյանի մորական պապի տունը, հետո պետությունը սեփականացրել է, քանի որ այդ տունը կառուցված էր մարդկանց արդար քրտինքի հաշվին եւ պիտի վերադարձվեր իսկական տիրոջը՝ ժողովրդին, իսկ ակադեմիկոս Իոսիֆյանը փող է հավաքել՝ ուղարկել Իսրայել, նրա կինը ջիուդ է, ինստիտուտի աշխատողների մեծ մասը՝ նույնպես, ահա թե ինչու ձեզ չենք վստահում, մենք ամեն ինչ գիտենք եւ պիտի շնորհակալ լինեք, որ կուսակցությունը ներողամիտ է, այլ ժամանակներում Ձեր տեղը բանտն էր լինելու, գնացեք եւ հետեւություններ արեք»:-

Ուսուցիչների շրջանային հավաքին Մահեռամովը թուրքերեն ասել էր. «Մինասյանը քանդուքար է անում դպրոցը, Մինասյանը որտեղի՞ց անգլերեն գիտի, ընկերներ»,- կողքի նստածին պապս հարցրել էր. «Շեկյան, էս թուրքը որ անունս սովեց, էն ի՞նչ էր հաչում»,- Մահեռամովի ասածը պապիս համար թարգմանել էին, ասել էր. «Մահեռամով՝ թուրքի մեկը թուրք, էս քու հերն եմ անիծել, դու էիր պակաս»,- հետո պատմում, ծիծաղից կոտորվում էին: Տատս, նրան ասում էին «Մինասյանի կին», շատ տարիներ անց,

երբ արդեն մշտապես ապրում էին Երեւան, կեսբերան ասաց. «Գիտե՞ք, որ ձեր պապի հերը տերտեր է եղել», - եւ ոչ ոք չհավատաց. որբի, խորհրդային իշխանության կողմից միայն փրկվածի, թեեւ տասը տարի ամերիկյան որբանոցների հացն էր կերել, հետո՝ զուտ ուսուցչական իր վաստակը, կոմսոմոլ եւ կոմունիստի բացառիկ նվիրվածությամբ այդ մարդը հիշողությունից ջնջել էր ամեն ինչ, որ եղել կամ եղած պիտի լիներ Կովկասի խորհրդայնացումից առաջ եւ բոլոր ինքնակենսագրականներում «սոցիալական ծագման» դիմաց գրում էր՝ «չքավոր գյուղացի», բայց ջախել կնոջ հետ առանձնության, սիրո եւ քնքշության մի պահի երեւի խոստովանել եւ խոստովանեցրել էր, որ կինը ուրիշի չի ասի՝ իր հայրը Վանի Աղբակ գյուղում քահան էր, եղբայր ուներ՝ Եսային՝ ավարտել էր Վանի Արամյան դպրոցը, հետո՝ Էջմիածնի Գեւորգյան ճեմարան էր ուղարկվել, բայց պատերազմը, գաղթը ամեն ինչ իրար խառնեց: Եղբորը տեսել է Թիֆլիս՝ Կրծանիսի որբանոցում, իրեն եղբայրը գտել է շատ որբերի մեջ, սեղմել է կրծքին, ինչ են շնչացրել, ինչ են հիշել՝ չէր ասում, մոռացել էր, մոռացության էր մատնել օտարության բոլոր տարիներին եւ էլ չէր գտնում, միայն. «Մի օր մայրապետը եկավ, գրկեց, գլուխս շոյեց, թե՛ «Արիացիր զավակս, քո եղբայրը մեռավ»»: - Գնացել էր Վան՝ գործի հետ, վարակվել էր տիֆից, Արամյանցի հիվանդանոցում մեռել էր՝ Եսայի եղբայրը: 1924 թվականի օգոստոսին պապս Ղարաբաղ է եկել՝ ուսուցչության եւ 16-17 տարեկան երեխա է եղել:

«Ի պատասխան Ձեր նամակի հայտնում ենք, որ Դուք կարող եք դասատվի պաշտոն ստանալ Ինքնավար Լեռնային Ղարաբաղի առաջին աստիճանի դպրոցներից մեկում՝ ամիսը 65 ռ. ռոճիկով: Համաձայն լինելու դեպքում խնդրում ենք մինչեւ ս. թ. օգոստոսի 15-ը համապատասխան փաստաթղթերով ներկայանալ ԻԼՂ մարզի լուսժողկոմատ. ԻԼՂ մարզի լուսժողկոմ՝ Արշավիր Զամալյան»:- Մեքենագիր այդ ծանուցումը մինչեւ վերջին ժամանակներս կար, պապիս թղթերում պահվում էր: Ստեփանակերտ հանդիպել է Թադե Թեյանին: Ուղարկել է Առաջածոր, որ իր գյուղն էր: Պատմում էր, որ բարբառը չէին հասկանում՝ ինքը եւ Վարդան անունով ընկերը: Գյուղխորհուրդը որոշել է, որ երկու

որքի համար ամենալավը կլինի Բագունց Աննայի տունը: Տարել, իբր թե տեղավորել ու մոռացել են: Ամերիկյան շորտերը հագնե-
րին, որքանոցային կարճ խուզած գլուխները կախ՝ նստել, սպա-
սել են, թե ուտելու բան երբ են տալու: Աննան բուխարիկի կրա-
կին կաթսա է դրել, մեջը սել հաց փրթել: Վարդանն հարցրել է՝
«Էդ շան լափ է եփում»:- Ասել է՝ «Չէ, այ տղա, մեզ համար է»: -

Ճաշը չեն կերել, գյուղխորհուրդ բողոքել են, աղմուկը հասել է
մոտիկ Ծմակահող՝ Ղեւոնդ վարժապետին, մարդ է ուղարկել,
կանչել: Ասում էր. «Մաքուր սփռոց էր, դանակ- պատառաքաղ
էին դրել, արծաթե գդալ, բաժակ էին մատուցում, հացը կտրտած
էր»:- Որտեղի՞ց էր Ղեւոնդ վարժապետը ստեղծել քաղաքավար
այդ կենցաղը: Երեւի՝ Թիֆլիսից կամ Բաքվից: Հետո ուղարկել են
Վարդունց Սաթենիկի տուն, եւ այդ տանը նույնպես եղել է սե-
ղան, սփռոց, ափսե, գդալ, նույնիսկ՝ դանակ- պատառաքաղ, քա-
նի որ Սաթենիկի Երեմ ամուսինը Բաքու բանվոր էր եղել հանքե-
րում, Բաքվից էր բերել: Ինքը մեռել էր բարակացավից, ամանե-
ղենը մնացել էր, եւ Սաթենիկը շնորհքով կին էր, հետո էլ՝ Սամար-
դանդ Արշակ անունով տեգրը կար, հարուստ առետրական էր,
Վարշավա էր գնում, Բոժենա անունով սիրուհի է ունեցել Վարշա-
վա եւ եղբոր մահից հետո նրա որբեւայրու անունով Սամարդան-
դից Կասպից ծովով՝ մինչեւ Եվլախ ուղարկել էր լրիվ վագոն բեռ,
որ գյուղի բոլոր սայլերը մի ամիս կրել են: Այդ ապրուստից հետո
մնացել էր կարի «Չինգեր» մեքենան: Այդ տանը եղել է սիրուն-
փարթամ մի աղջիկ՝ Լուսիկը, ով հետո պապիս կին է դարձել՝
1927 թվին: Կնոջը վերցրել՝ ամուսնական ճանապարհորդության
է գնացել Թիֆլիս, ապրել է հյուրանոցում, ասում էր. «Ունեի ոս-
կով 1000 ռուբլի»:-

Ջահել կինը Թիֆլիս մեծ քաղաքի ինչ-որ խանութում մոլորվել
է, հարցրել է. «Լուսիկ ջան, քեզ համար ի՞նչ առնեմ»:- Նայել է վա-
ճառասեղանների ծանրությանը, կախարանների գույներին, ուսը
թորթվել է, հետո ասել է. «Ուզում եմ հրեն՝ Էն շլապան»:- Չէ, ըն-
դամենը ասել է՝ «Շլաբա ըմ օգում»:- Թիֆլիսից անցել է Դիլիջան,
որտեղ հորեղբայրը պիտի լիներ՝ չի գտել, Աղստաֆա- Եվլախ
գծով հասել է Աղդամ, ֆայտոն է վարձել՝ զանգակներով, փա-

փուկ դողերով՝ չորս ձի լծած՝ քշել է գյուղ:Դա չէր պատմվում, փախարենը՝ որ իբր Լուսիկին սիրահարված էր նաեւ Վարդանը, Վարդան վարժապետը, իբր Վարդանին ասել է. «Սալկուտի Էն սառույց ջրերում կլողանա՞ս»:- Գրագ են բռնել, Վարդանը սառույցը կտորել՝ լողացել է, մրսել՝ հիվանդացել, պիտի Ստեփանակերտ տանեին, ձի էին բերել, ոտը պահ չէր տալիս՝ նստի, Վարդունց Սաթենիկը պապիս՝ իր ապագա փեսային ասել է. «Ուհանես, օգնիր, թող նստի, մեղք է», - իսկ Վարդան վարժապետը ասել է. «Մեղքը դու ես եւ քո հերը», - եւ բարձրացել՝ ձի է նստել, ու էլ նրան չեն տեսել. «Ստեփանակերտ մեռավ, Էնտեղ էլ թաղեցին»:- Ստեփանակերտ Կարո Դավթյանն էր՝ էլի որբերից, կինը՝ Սալաթը, Թալիշ Գեւորգ Աբրահամյանն էր, Մոխրաթաղ՝ Եղիազարյան Յարությունը, մի ուրիշ տեղ՝ Մուշեղ Տերյանը: Բոլորը՝ որբ, բոլորը՝ քամուց քշված, որ «Խորհրդային Յայաստան» թերթում կարդացել էին ԻԼՂ լուսժողկոմ Արշավիր Քամալյանի կոչը եւ հավատացել, որ գնում են հանգած Ղարաբաղ՝ վառելու դպրության ջահը:

...Քննությունից հետո հայրս պատահաբար հանդիպել էր Լեւոն Յարությունյանին եւ իմացել, որ ընկերը կանչվել է՝ ստուգելու մեր գրավորները, ասել էր. «Լեւոն, իմ տղայի շարադրությունը դու ճանաչելու ես»:- Ճանաչել էր, դուրս էր եկել՝ ուշ երեկոյան, հայրս դեռ սպասելիս է եղել: Լեւոն Յարությունյանը հանգստացրել է. «Սերգեյ, ոչ մեկին գերագանց չենք նշանակել, տղադ «4» է ստացել»:- Իր կարծիքով՝ կատարվածը անարդարություն էր, բայց հին ընկերոջ հետ չի վիճել, քանի որ իրեն էլ երբեմն կանչում էին եւ գիտեր՝ այնտեղ ստուգողից շատ քիչ բան է կախված: Սոկրատ Խանյանը խորհուրդ էր տվել՝ որպեսզի ինքը շատ գրավորների միջից իմը գտնի՝ պարտադիր մի քնաբան գրեմ՝ ինչ թեմա էլ որ ընտրեմ. «Մի աստղագարդ երկնակամար է հայ գրականությունը, որտեղ որպես առաջին մեծության աստղ փայլատակում է...», - սա, գուցե, բանաստեղծի մասին ասվեր, բայց Շիրվանզադեի համար՝ հազիվ թե: Չէի գրել, հորս մտերիմի, ծանոթի,- քանի որ երկու- երեք տարի միասին քննություն էին ընդունել,- իր պարտականությունից Սոկրատ Խանյանն, ուրեմն, ազատ էր իմ

անփութության կամ մեծամտության պատճառով, բայց բանավոր քննությանը տիրություն, իրոք, արեց: Նա կարող էր ոչ էլ հանձնաժողովի նախագահ Գուրգեն Անտոնյանին լսարան հրավիրել՝ լրացուցիչ հարցեր տալու: Շատ հանգիստ կնշանակեր «4» եւ դեռ կհամարեր, որ լավություն է անում, բայց որոշեց. «Տղա ջան, հիմա որ պորֆեսոր Անտոնյանը գա ու քեզ հարցեր տա, պատրաստ ես», - նաեւ մի թեթեւ զգուշացրեց, որ Անտոնյանը երբեմն իջեցնում է քննող դասախոսի գնահատականը: Անտոնյանը եկավ՝ գլուխը լրիվ ածիլած, ձայնը՝ խռպոտ, ծխախոտը՝ մատների արանքում դողդողացնելով. «Սոկրատ, էս ո՞վ է»:-

Ասաց. «Գուրգեն Գերասիմովիչ, էս որ գրավորը «4» ենք նշանակել՝ բողոքել է, էս տղան է, հիմա բոլոր երեք հարցերին գերազանց պատասխանել է, ուզում ենք, որ Դուք էլ ստուգեք»:-

Շոգ էր, Անտոնյանը նստեց կողքիս, եւ նրանից թթու գարեջրահոտ էր տարածվում: Վերցրեց թերթիկը, տնտղեց առաջին հարցի շարադրանքը, թուղթը պահեց, թե՛ «Ո՞ր թվին է լույս տեսել Չարենցի առաջին ժողովածուն», - պատասխանը հստակ էր, նորից հարցրեց՝ «Իսկ ինչպե՞ս է կոչվում Չարենցի վերջին ժողովածուն», - դա էլ լրացուցիչ հարց էր, պատասխանից գոհ մնաց: Ասաց՝ «Սոկրատ, գերազանց նշանակիր, հերիք է ինչքան ոչ-խարներին լսեցինք», - եւ ինձ էլ հորդորեց, որ պատմության քննությանը լավ պատրաստվեմ. «Մեղք ես, այ տղա, հանկարծ չկտրվես»:-

Թե ինչու պիտի մեղք լինեի՝ հետո իմացա, քանի որ 1977 թվի սեպտեմբերի 1-ին Ստեփանակերտի ինտերնացիոնալ մանկավարժական ինստիտուտի լեզվագրական բաժնի առաջին կուրսի ուսանողի տոմսը՝ հայերեն, ռուսերեն, թուրքերեն մանրամասը լրացված, կնքված՝ դեկանի եւ ռեկտորի ստորագրություններով, ինձ ոչինչ չէր ասում. եթե ընդունելության չորս քննությունների արդյունքներով հավաքել եմ տասնյոթ միավոր, գումարած՝ «ատեստատի միջինը», որ կլոր հինգ էր, եւ քսանհինգ հոգու ցուցակում երրորդն եմ, ուրեմն պիտի մտածեի, որ ինձնից խելոք երկուսը կա: Չէ, նրանք արտադրության առաջավոր էին, կուսակցական եւ չպիտի զարմանայի. «Այդ ինչպե՞ս հասցրին եւ առա-

ջավոր ու կուսակցական դառնալ, եւ քննությունների պատրաստվել կամ՝ առաջավոր, կուսակցական մարդու ինչի՞ն է պետք մանկավարժական ինստիտուտը, թող գնա, սովորի կուսակցական բարձրագույն դպրոցում»:-

Հայ գրականության բանավոր քննությանը այդ առաջավորներից մեկը խոսում էր Վարդանանց պատերազմի մասին, կուսակցական ներկայացուցիչը, որ երեւի միայն այդ գիտեր, հարցրեց. «Իսկ ի՞նչ տարբերություն կա դասական եւ խորհրդային պատմավեպի միջեւ», - եւ պիտի հետեւեր դասագրքային պատասխան, թե՛ «դասական պատմավեպում ժողովրդական զանգվածների դերը ըստ արժանվույն գնահատված է, իսկ խորհրդային պատմավեպում նրանք դիտված են իբրեւ իրադարձությունների գլխավոր շարժիչ ուժ», - քննող դասախոսը շատ հանգիստ կտրեց կուսմարզկոմի գաղափարական բաժնի իրահանգչի գիտական զեղումը եւ աղջկան հորդորեց. «Շարունակիր, դպրոցում այդ հարցի պատասխանը չեն սովորեցնում, դրա համար էլ պիտի ընդունվի ինստիտուտ, որ իմանա», - եւ «4» նշանակեց, բայց հետո, միեւնույն է, անհնար էր կուսպատմության դասախոսին չհարցնել. «Խնդրում եմ բացատրեք, թե ի՞նչ տրամաբանությամբ է, որ հիմնականում ադրբեջանցիներով բնակեցված Նախիջեւանի հանրապետությունը նույն Ադրբեջանի կազմում ինքնավարություն է»:-

Մարդը երկու տարի առաջ Բաքվի բարձրագույն կուսդպրոցից ուղարկվել էր Ղարաբաղ՝ քարոզելու եղբայրություն եւ ինտերնացիոնալիզմ, քանի որ 1975թ. մարտին եղել էր կուսակցական ժողով եւ որոշվել՝ որ Ղարաբաղում «կրկին գլուխ է բարձրացնում նեղ ազգայնականությունը», - նա ծեր, ավարտված, բարի էր եւ գերադասեց հարցս անպատասխան թողնել, իսկ դասից դուրս խորհուրդ տվեց «խոր-խոր տեղեր չմտնել»:- Կուսակցության պատմության հոսքային, երբ բոլոր բաժինների ուսանողները միասին են՝ դա կոչվում էր հոսքային, դասախոսությունները նա անցկացնում էր ընթերցասրահ մեծ լսարանում, որտեղ կար ամբողջ աշխարհի պրոլետարիատի առաջնորդ Լենինի գիպսե կիսանդրին: Իոնիսյանն ինքը կարճլիկ, նիհար, ճաղատ էր, հագ-

նում էր զոլավոր կտորից կոստյում՝ ժլետով, ընտիր փաղկապ էր կապում եւ, ձախ ձեռքի բթամատը ժլետի գրպանում, բաճկոնի քղանցքը մի փոքր ետ տարած՝ նա իրեն շատ նման էր տեսնում Լենինին եւ սիրում էր հանկարծակի աջ ձեռքը մեկնել մեզ՝ լսարանի անգետներին, որ այդպես շատ դժվար էինք ըմբռնում, թե «մենշեւիկ» եւ «բոլշեւիկ» բաժանումը կուսակցության ո՞ր համագումարում եղավ հատկապես, չէ՞ որ մինչ այդ բոլորն առհասարակ սոցիալ- դեմոկրատ էին՝ Պլեխանովը, Մարտովը, Ուլյանով ՎՆ Լենինը, Ստալինի անունը նա չէր տալիս, խոսում էր Կուսակցության մասին, Շահումյանի մասին՝ բոլշեւիկյան առաջին բջիջները Կովկասում ինչպես են ստեղծվել, ինչու են ստեղծվել, ծորուն այդ խոսքը բառի աղքատություն եւ մտքի կաղապարվածություն էր մաղում հարյուր- հարյուր քսանհինգ մեր բոլորի՝ ապագա պատմաբանների, բանասերների, ֆիզիկոսների, մաթեմատիկոսների եւ կենսաբան- քիմիկոսների վրա: Բոլորով մենք պարտավոր էին իմանալ, որ եթե 1917 թվականի նոյեմբերի 7-ին «Ավրորա» հաժանավի թնդանոթները չկրակեին Ձմեռային պալատի վրա, եթե Ռուսաստանում չհաղթանակեր սոցիալիստական հեղափոխությունը, ապա չէին ծնվի մեր հայրերն ու մայրերը, չէինք ծնվի մենք եւ չէինք տեսնի, թե որքան ազատ է մեր հայրենիքը, որքան լավ է ապրում աշխատանքի մարդը:

...Բորիս Բալուդյանը դասի գալիս էր «Ժիգուլի 06»- ով, նրա հայրը Շուշիի բանտապետն էր, մանկավարժական ինստիտուտի ամբողջ ուսանողության երազանքն այդ մեքենան էր: Մեքենայով աշխատանքի էր գալիս պրոֆեսոր Ախունդովը, եւ այդ երկու՝ նույն գույնի, նույն «06 ժիգուլին» մինչեւ դասերի վերջ կողք - կողքի կանգնած էին մնում, եթե Բորիսը բոլոր դասախոսություններին մնար: Չէ, մեքենա Դանիել Գրիգորյանն էլ ուներ՝ հին «Ֆորդ», բայց նրա տունը ինստիտուտից երկու քայլի վրա՝ քառահարկ շենքի ամենավերելի միսենյականոցն էր, մեքենան նրան հարկավոր էր գալիս, եթե Երեւան էր գնալու կամ՝ Սեւան, Վարդենիս, որտեղից երբեմն սիգ էր բերում, անունը դրել էին Պեպո՝ «Դամբը ձեռիս ջուրն եմ մտնում»:- Իհարկե, ինքը չէր մտնում, ձուկ բռնում էին ուրիշները, ինքը ուտելու, բաժանելու,

ավելցուկը մեջ - մեջ՝ ծանոթ - ընկերոջ միջոցով փող շինելու գործին էր, արանքներում գրում էր «Ողբ ավերակված քաղաքի եւ մորս մասին»:

Այդ ավերակված քաղաքը Շուշին էր, նյութը՝ Շուշի քաղաքի կոտորածը՝ 1920 թվականի մարտի 23-ին, իրենց գյուղի մարդիկ Բերդաձորից են, Բերդաձորը՝ Շուշի, իր մոր եւ ավերակված քաղաքի մասին պոեմը նա արտասանում էր պաթետիկ եւ սրտառուչ առոգանությամբ: Նա ասում էր «Էկզիստենց», Ֆրեյդին՝ Ֆրոյդ եւ Պարույր Սեւակին՝ աստվածացնում, աղջիկների համար կարդում էր «Երգ երգոց» պոեմը եւ բացատրում, որ Սուլամիթան Յրեաստանի Սողոմոն՝ իմաստուն ասված արքայի շատ հարճերից է, «Երգ երգոցը»՝ Աստվածաշնչից, եւ աղջիկներից մեկը գուցե գայթակղությունից, գուցե՝ զուտ հետաքրքրությունից՝ երբեմն միամտանում, բացում էր նրա այդ խորհրդավոր տան դուռը. «Աղջիկ ջան, հիմա ի՞նչ՝ լու՞յսն ենք մարում, թե հու՞յսդ», - ասե՞լ էր, չէ՞ր ասել՝ ինչ կարելու է:

Տարածված էր, որ Գրիգորյանը հենց այնպես չի նշանակում, քանի որ հոգեբանություն էր կարդում, եւ ոչ մի ուսանող այդ Պետրովսկի կոչվածի դասագիրքը չէր բացում: Հանրակացարանի սենյակում Ռազմիկ Աղասարյանը գյուղից նոր եկածներին սառնասրտորեն բացատրում էր, որ հոգեբանությունը շատ բարդ առարկա է, ինչքան էլ ձգտեն՝ սովորել չի լինի: Նա լեզվագրականի վերջին դասընթացի ուսանող էր, սիրում էր ճամփորդել, հագնում էր ջինսից տաբատ եւ սեկե բաճկոն, որ Ռիգայից էր բերել: Նրանք՝ Ռազմիկը եւ Արթուրը անբաժան ընկերներ էին՝ Արթուր Բեգլարյանը, որ արմատներով Խանաբաղից էր, բայց ապրում էր Էջմիածին եւ լավ նվագում էր հարվածային գործիքներ: Կարճլիկ, մկանուտ Ռազմիկը եւ չորուկ, բարձրահասակ Արթուրը զարմանալի ներդաշնակություն էին ստեղծել. նրանց օրվա սեղանին միշտ երեւանյան բաստուրմա կար, ձիթապտուղ, լավաշ, որ Արթուրի մայրն էր շաբաթը մեկ ուղարկում Երեւան-Ստեփանակերտ ավտոբուսի վարորդների հետ, իսկ Գրիգորյանը ոչ թե դասախոսում, այլ գավառային քաղաքում Երեւան էր ներկայացնում. գնա՝ ճանաչիր դերասան Հրաչյա Ներսիսյանին, Վահրամ

Փափագյանին, Հրաչյայի Լեւոն տղային, որ Երեւանի համալսարանում, ասում էր, արտասահմանյան գրականություն է ներկայացնում, բայց նրան լսելու են գնում նույնիսկ պոլիտեխնիկի ուսանողները: Այսքանից, այդ հեռու - եթերային եւ երազային Երեւան քաղաքի մտավորական, գրողական, արտիստական բոհեմից եթե հնարավոր էր հոգեբանության հարյուր կամ իննսուն հարցերից գոնե երեքի պատասխանը սովորել՝ Գրգորյանն ի՞նչ պիտի ասեր, որպեսզի չնշանակեր, բայց չէ, չէր ստացվում, Ռազմիկ Աղասարյանից լսել՝ հերթափոխով նորեկներին պարտադիր ասվում էր, որ Գրգորյանը «վերաբերմունքի մարդ է»:-

Եւ քննությանը չէր ասվի՝ «Ախր, ընկեր Գրիգորյան, մենք մի կիսամյակ չէ՞ որ Հրանտ Մաթեոսյան ենք կարդացել, եկեք ես խոսեմ «Կայարան» պատմվածքից, չէ՞՞ շատ լավ տղա է այդ Հրանտ Զառյանը, համալսարանն ավարտել՝ գյուղ է գալիս, Երեւան- Մոսկվա ճեպընթացի կուպեում մի գիշեր փափուկ քնել է, հասել Զոլագիրան կայարան, պիտի իրենց Ծմակուտ գնա. «Երեկ երեկոյան եղ կողմերի վրա մեքենա կար», - մինչեւ Ծմակուտ քսան- քսանհինգ կիլոմետր է, մեքենա դժվար է անցնում, կարելոր մարդու՝ համալսարանավարտի, Չեխոսլովակիայից հեռախոսով թղթակցություններ հաղորդողի ինքնավստահությամբ այդ Հրանտը մոտենում է կայարանի հեռախոսավարուհուն, ասում է՝ «Ծմակուտ միացրու», - որպես թե՛ Ծմակուտը իրենով՝ Հրանտ Զառյանով արդեն այնքան կարելոր գյուղ է, որ նույն պահին բոլոր խոսակցությունները պիտի դադարեցվեն, քանի որ Հրանտ Զառյանը, հասկանում էք, ինքը՝ Հրանտ Զառյանն, ահա, գանգում է ծննդավայր, որպեսզի գյուղից իր համար ձի ուղարկվի՝ Զոլագիրան կայարան, եւ հեռախոսավարուհու կասկածը՝ «Արա, դու մեր շիլ Եղըշի տղեն չէ՞ս», - ամեն ինչ ցնդում է՝ Չեխոսլովակիա, աղջիկներ, - պատմե՞մ, շարունակե՞մ, իսկ գուցե Անդրոյի մասի՞ն՝ որ սայլի առեղ էր տաշում, փայտը պինդ էր, կացինը՝ մաշված, ստանալիքը՝ կոխոզային չեղած աշխօր, վատ էր տաշում, Աշխենը սար էր գնացել, Ալիս բեռնաձին կապած էր ձորում, տանձը կաթուկ էր տալիս, մեղուները՝ ձագ, կաթուկ տանձը պիտի տակառ լցվի՝ արաղ քաշելու, մեղուն նոր փեթակ է ու-

զում, վերնահարկի շրջանակներ, բայց Անդրոն գլուխ չունի՝ իր համար սայլ է տաշում, հետո սարից խոտ շալակած գալիս է այրի Մարիամը, գալիս՝ Անդրոյի բակում բռնան տակ նստում եւ ցամաք շուրթերով ջուր է խնդրում, հետո՝ «Ախչի, էս շոգին եղ տաք բաները ո՞նց ես հագնում», հետո՝ «թախտը չոր էր», - ինչն՞վ հոգեբանությունն չէ՞ պատմե՞մ»:- Այդպես չէր ասվի եւ, ուրեմն, այդ քննությունը պիտի հանձնվեր զուտ այնպես, ինչպես Գրիգորյանը կորոշեր: «Ճիտդ պոկիլ դեմ», - դաշքեսանցի մայրը աղջկան սաստել էր, նստել էր Կիրովաբադ - Ստեփանակերտ ավտոբուս, մնացածը Գրիգորյանը պատմում էր մեծ քիթը քնքշորեն շոյելով:

Նա արիստոկրատիզմ էր խաղում, որովհետեւ քաղաքը չնչին էր, ինքը մագնիտաֆոն ուներ, նվագարկիչ, նա Շոպեն էր լսում, «Բիթըլզ», եւ այդ ասածը մի քիչ գեղարվեստական էր, բայց միայն այնքան, որ մենակյաց տղամարդու օրվա մեջ կնոջ հայտնության՝ զուտ Ֆրոյդով բացատրվող՝ հաճույքի համը չկորչի: Ուրեմն՝ աղջկան ֆիզիոլոգիայի ստուգարք չի նշանակել, երկրորդ անգամ՝ էլի: Աղջիկն ասել է. «Ընկեր Գրիգորյան, ի՞նչ եք ուզում ինձնից», - նայել է, թե՛ «Ինձ թվում է՝ դու տերյանական քնքուշ եակ ես, եղ կոպտությունը քեզ չի սագում»:- Եւ աղջիկը գանգել է տուն՝ մորը, մորը հասկացրել՝ «Չի ստացվում, չի նշանակում, ուզում եմ մոտը գնամ»:- Մայրը Դաշքեսանի մոլոր հեռվից, քանի որ աղջկա հայրը «Յրագդանմաշ» գործարանում էր աշխատում արդեն եւ բնակարանի էլ հերթագրված էր, ահա՝ մենակ կնոջ գիշերվա տարտամությունից եւ ամիսը մեկ անգամ տղամարդ տեսնելու սարսուռից հասկացել՝ հեռախոսով ծղրտացել է. «Ճիտդ պոկիլ դեմ», - սպառնացել է, որ իրեն գետը կգցի, ժայռից կգլորվի, Բանանց իրենց գյուղի ճոպանուղու տակ կկանգնի՝ գուցե երկաթախանքի, որ ճոպանուղով իջեցվում էր երկաթուղու կայարան, հետո տարվում Մառնեուլի՝ այդ գիշեր- ցերեկ ուղեղ սղոցող հոսքից մի կտոր կընկնի գլխին, կսրբի ամոթը, որ Ղարաբաղ աղջիկ ունի՝ գիշերով դասախոսի տուն է մտնում, եւ ինքն է եկել:

Կիրովաբադ խնդրել՝ Քռի օձածուկ է գտել, տանու արաղը հետը վերցրած է եղել, Ղազախի նուռ է գնել շուկայից, ծանր ուղեբեռը չորս հարկ քարշ է տվել, ձեռքի փոքրիկ պայուսակում

առանձին- առանձին դրել է մի քսանհինգանոց եւ հիսուննոց՝ նա-
յած էդ Գրիգորյանի տրամադրությանը, սանդղահարթակին
կանգ է առել՝ շունչը տեղը բերի, ձեռքերն ազատել՝ փեշը ուղղել
է՝ փոթ չլինի, մազերը մի թեթեւ սղալել եւ գանգի կոճակը սեղմել
է. «Դուռը բացեմ՝ տեսնեմ մի հրաշք կին է, ասի՝ ներս եկեք»:-Գ-
րիգորյանը այդ ոչ ավելի, քան երեսունվեց տարեկան կնոջը
սուրճ է հյուրասիրել, կոնյակ են խմել: «Ազատամիտ կին էր, դե
Կիրովաբաղը կարգին քաղաք է, նրանք էնտեղ շուտ-շուտ են
գնում»:- Այդ կինն աչքերի խոնարհումով, կոնյակ խմելիս որ շուր-
թերը կլորացրել է, հետո որ ասել է՝ «շոգեցի» եւ բլուզի վերին եր-
կու կոճակը արձակել է, հետո՝ ոտքը ոտքին զցելու ձեւով, բազ-
մոցին ազատ տեղավորվելու՝ մի տեսակ փիսիկի քնքշությամբ՝
ուղղակի ասել է. «Այ մարդ, կի՞ն ես ուզում՝ հրես եկել եմ, էն մա-
քուր աղջկա բախտին խի՞ ես քար գցում», - եւ հոգեբան Գրիգոր-
յանը հասկացել եւ ներել է կնոջ այդ թուլությունը, նվիրումը, ճի-
չը, հոգոցները, ամեն ինչը: Յետո նա աղջկա հանրակացարանա-
յին սենյակում մի երկար գիշեր լռել է, իսկ վաղ առավոտի ձմեռա-
յին կեղտակուր լռության միջով՝ Գրիգորյանը չորրորդ հարկի իր
պատուհանից, որ ավտոկայանի ուղղության է, վարագույրի ճեց-
քից տեսել է Ստեփանակերտ- Կիրովաբաղ ավտոբուսի մոտ՝ աղ-
ջիկը ճանապարհում է մորը, չէ, այն հրաշք կնոջը եւ Շոպեն է լսել,
եւ սուրճը գազօջախի վրա թափվել է.

Դանիել Գրիգորյանը Ստեփանակերտ տեղափոխվել էր Գորի-
սի մանկավարժականից, ասելով՝ որպես թե իշխանությունը Յա-
յաստանի մտավորականներից զգուշանալու, նրանց մուտքը
Ղարաբաղ արգելելու խնդիր չունի, բայց խորհրդավորության
ինչ-որ շղարշ, այնուամենայնիվ, կար: Արտաշես Յովսեփյանը
հրավիրվել էր թատրոն՝ որպես գլխավոր ռեժիսոր, ուսանողնե-
րիս կարդում էր էսթետիկա, նրա կինը հրեա էր՝ տիկին Ռաքելը,
«Կազբեկ» էր ծխում: Գեղագիտության դասերին Յովսեփյանն
արտասանում էր Չարենց, պատմում էր Վահրամ Փափագյանից,
Երեւանից, ինքը ծեր մարդ էր՝ ձայնը խզված, հիվանդոտ: Յետո
ինչ որ քամի էր անցել՝ ոչ Սերո Խանգանդյանի հեղինակությունը,
ոչ ուրիշ մի բան չէր օգնելու, անվտանգության ծառայությունը

քաղաքային բաղնիքի ընդհանուր լողարանում գտել էր բացբերան մեկին եւ հասկացրել, որ Դանիել Գրիգորյանը «ամորալ բաներ է կարդում ուսանողներին», - քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածը, սակայն, կաշառակերությունն էր՝ ութ տարի, ուղարկեցին Ուդմուրտիա՝ խելքը գլուխը հավաքի, այնտեղ թող մոռանա ավերակված քաղաքն էլ, մոր հիաշատակն էլ, ամեն ինչ թող մոռանա, բռնագրավեցին մեքենան, տունը:

Բանասիրության դոկտոր եւ պրոֆեսոր Գուրգեն Անտոնյանի ղեկավարությամբ «20-րդ դարասկզբի արեւմտահայ պոեզիան» թեմայով գիտական աշխատանքը չկարդացվեց, պրոռեկտոր Նաջաֆ Կուլիեւը ֆշշաց. «Շթոն գա գլուփոսթի, Գուրգեն Գերասիմովիչ», - եւ Կազա՞ն, թե՞՞ Ուլյանովսկ ուղարկվեց «Լենինի կերպարը խորհրդահայ պոեզիայում» աշխատանքը, շահեց երրորդ կարգի մրցանակ, մրցանակակիրը սեւ-ջրվեզ մագերով այն աղջիկն էր՝ թող այդ էլ այդպես լինի. մրցանակ, ի վերջո, ստանում են արժանավորները, իսկ մեզ գալիս, առավոտվա քաղցր քնից հանում են կոմսոմոլի քարտուղարը, արհկոմի նախագահը, քշում են փետրվարի սառը փողոց՝ ավտոկայանից մինչեւ հրապարակ՝ մեկ-մեկուկես կիլոմետրի վրա շարում են ինտերնացիոնալ մանկավարժական ինստիտուտի ամբողջ ոչ քաղաքաբնակ ուսանողությունը, որովհետեւ մյուսներին անհնար է տներից բերել, թե ինչ է՝ այդ Կիրովի անունը կրող, բայց Ստեփան Շահումյանի արձանով հայտնի փողոցով անցնելու է Ինքը:

Ինքը՝ ո՞վ, դե էլ ո՞վ, հո Բրեժնեւը չէր գալու, Ադրբեջանի կուսակցական ղեկավար Յեյդար Ալիեւն էր, առիթը՝ Ստեփանակերտի երկաթուղային կայարանի բացումը: Քաղաքի միջով անցնելու՝ գնալու էր՝ Շուշի մի կտոր հաց ուտելու, գովելու էր Կեւորկովի ջանքը, կանգնեցնելու էր Վագիֆի դամբարանը, իսկ Ստեփանակերտում՝ Մուրացանի կիսանդրին, - մինչ այդ եկել էր մարշալ Բաղրամյանը. մարզի շքախումբը կանգնել էր՝ դիմավորելու հերոս գորավարին, ծանոթանալու համար ձեռք էին մեկնել՝ «Կեւորկով... Ասլանով... Մուրադով... Սամվելով», - մարշալը ճերմակած բեղի տակ քմծիծաղել էր. «Էս դեռ Ղարաբաղ չէնք հասել».- պատմության դասախոս Սերգեյ Սայիյանն ասաց. «Ոչ ոք չգիտի,

թե որտեղ է ծնվել մուլլա Վազիֆը, միայն հայտնի է, որ եղել է Շուշիի խանի քարտուղարը, ինչու՞ Վազիֆի դամբարանը պիտի լինի Շուշի, իսկ Մուրացանը, որ ծնվել, ապրել է այդ քաղաքում՝ իր հանգրվանը գտնի Ստեփանակերտ», - ասաց. «Չիա Բունիաթովը գիտնական չէ, այլ՝ կեղծարար»:- Նա արհկոմի նախագահի իրավունքով կամ պարտականությամբ հանրակացարան էր գալիս, մեզ հետ խմում էր ու երկար խոսում հայոց պատմությունից, իսկ Յուրի Ասրյանը դասախոսում էր Ադրբեջանի պատմություն. առաջին ժամին թելադրեց դասընթացի գրականությունը՝ գրքերի մեծ մասը՝ թուրքերեն, հարցրինք. «Ընկեր Ասրյան, դասախոսություն ի՞նչ լեզվով եք կարդալու», - խեղճացավ: Նա հնագիտության մասնագետ էր, իրեն ներշնչել էր, որ տեղյակ է հին դամբարանաբլուրների գաղտնիքներին՝ չէին հավատացել եւ խորհուրդ էին տվել առայժմ բավարարվի եղածով, իսկ Սերգեյ Սայիյանն ասում էր. «Ադրբեջանը պատմություն չունի», - եւ օրինակ էր բերում Չիա Բունիաթովի «Ադրբեջանի աթաբեկների իշխանությունը» գիրքը՝ «Արաբ զավթիչներն արշավեցին Ադրբեջան եւ գրավեցին Դվինը», - Դվինի մոտ հայոց խոսրով Արշակունի թագավորը հիմնել էր արքայական որսատեղի, մինչեւ հիմա էլ անվանվում է խոսրովի անտառ, Բունիաթովի ասելով՝ չէր եղել խոսրով, Տիրան, Արշակ, Պապ, եւ Վաչագան Յարությունյանը դրա համար հանրակացարանի մեր սենյակի պատին կախել էր զորավար Անդրանիկի լուսանկարը, քսանհինգ ռուբլի էր տվել, մեծացրել՝ գլխավերելում կախել էր, կուսքարտուղար Բաշիր Ֆարաջեւը եկավ.

-Ու՞մ նկարն է,- Վաչոն պառկած էր, կեսօրին մենք խմել էինք տնաքաշ արաղ, թմրած, կիսանիրիի մեջ չհասկացավ՝ ի՞նչ են ուզում, մոթմոթաց՝ «պապիս», - Ֆարաջեւը տակը չմնաց՝ «Պապը դաչա՞ղ էր», - Վաչոն ասաց՝ «Չէ, դաչաղը Նաբին էր, պապս լավ մարդ էր»:- Նրա պապը 1918 կամ 20 թվին իրենց Սեյսուլան գյուղում զենքը ձեռքին տղամարդ էր եղել՝ Շամիրը, Վաչոն Մակար եպիսկոպոս Բարխուտարյանցի «Արցախ» գրքի իսկությունը կասկածի տակ էր առել, քանի որ այնտեղ սեյսուլանցիների մասին ասված էր՝ «բնիկ ուտիացի, թրքախոս»:- Մենք առարկում

Էինք, որ գուցե Բարխուտարյանցի ժամանակ գյուղն իրոք թրքախոս էր, Վաչոն չէր հավատում. Եղ, ախր, ո՞նց կլինի, ինքը Շամիր պապին տեսել է, «Արցախը» տպվել է 1895 թվին՝ Բաքվում, Բարխուտարյանցի եւ պապի միջեւ ժամանակն այնքան էլ հեռու չպիտի լիներ, իսկ եթե այդպես չէ, ստացվում է, որ իր Շամիր պապի Յարություն հայրը թրքախոս էր: «Չէ, Մակար եպիսկոպոսը մեր գյուղում չի եղել»:- Ֆարաջեւը ձեռքը պարզեց՝ լուսանկարը պոկի, Վաչոն չթողեց եւ ստացվեց, որ մանկավարժական ինստիտուտի ղեկավարության ներկայացուցիչը ծեծվել է: Եւ մենք՝ մի սենյակի չորս ուսանող՝ որոշեցինք դիմել ինստիտուտի ռեկտոր Սերգեյ Խալատրյանին եւ հատուկ մեջբերեցինք՝ «ժողովրդական հերոս Անդրանիկին.

Ձեր հեռագիրն ստացա, լրիվ տեքստը հաղորդված է Մոսկվա, կենտրոնական իշխանությանը», - Ստեփան Շահումյանի հեռագիրը եւ պարզաբանեցինք, որ պատմության բաժնի ուսանողն իրավունք ունի սիրել ժողովրդական հերոս Անդրանիկին:

Խալատրյանը Բաքու եղել էր գիշերօթիկի տնօրեն, ուսանողների հետ խոսում էր այդ ժամանակների լեզվով: Մեր փաստարկումներին նա հակադարձեց շատ սառը. «Բայց կենտրոնական իշխանությունը չի արձագանքել, չէ՞ Անդրանիկի հեռագրին, ուրեմն էլ ի՞նչ ժողովրդական հերոս»:- Շամքորեցի Պետիկը, որ պատմաբան Ծատուր Աղայանի համագյուղացին էր եւ սիրում էր մեծ երկրացու անունը հիշել ամեն առիթով, ռեկտորի ճառը կտրեց շատ տրամաբանական հարցով.

-Բայց չէ՞ որ կենտրոնական իշխանությունը չի արձագանքել նաեւ Շահումյանի խնդրանքին,- եւ դա ընկալվեց այնպես, որ մենք կասկածում ենք Բաքվի կոմունայի ղեկավարի կուսակցական անադարտությանը, քանի որ հակառակ ուղղությամբ Պետիկի հարցի պատասխանն այն էր, որ Մոսկվայի կենտրոնական իշխանությունների աչքում Անդրանիկն ու Շահումյանը նույն վարկն ունեին, այսինքն՝ վարկաբեկված էին նույն չափով:

Ռեկտորը խորհուրդ տվեց մոռանալ անիծյալ անցյալը եւ ապագայի պայծառ հավատով նախապատրաստվել քննաշրջանին, եւ Վաչոն հասկացավ, որ իրեն հաստատ մի-երկու քննու-

թյուն չեն նշանակի: Նա հրապուրված էր ֆրանսիական հեղափոխության ասպետներով, ասում էր՝ «կոնվենտ», էլի շատ հնչեղ բառեր՝ «ռեստավրացիա», «ռոյալիստներ», «թերմիդոր», վիճում էր Մակար Բարխուտարյանցի հետ, թե ինչու՞ իրենց Սեյսուլան գյուղի բնակիչներին ուտիացի է համարել, իսկ նույն սենյակում Պետիկը երբեմն հառաչում էր. «Վախ, իմ հերը տեսնես հիմա ու՞ր է»:- Մանավանդ՝ ձմռան ցուրտ օրերին:

Հայրը վարորդ էր կոլխոզի հին մեքենայի վրա, իսկ ճանապարհը՝ երկար՝ գյուղից մինչեւ Ջեյրանչուլի ձմեռոցներն ու՝ ետ: Պետիկը տնից փող գրեթե չէր ստանում, չէինք տեսնում, ուսանողական ճաշարանի երկրորդ՝ սառը, լղարիկ ուտեստն արժեր 50-55 կոպեկ, անմիս ջրիկ ճաշը՝ 20-25, եւ Պետիկը գերադասում էր բորջ ուտել: Մահճակալի տակ թաքցված՝ նրա փայտե ճամպրուկի մի ինչ-ոչ խուլ գրպանիկում երեւի թե փող, այնուամենայնիվ, կար, որովհետեւ նա երբեք պարտք չէր խնդրում, ստացածը 45 ռուբլի թոշակ էր, եւ ծախսի մեկ ռուբլի հիսուն կոպեկ միշտ ուներ՝ անկախ ամսվա սկզբի՞, թե՞ վերջին օրն էր: Քաղաքում նրա խնամակալ տերը մորաքույր Մարուսյա Բաղրամյանն էր՝ հայոց լեզվի դասախոս, որ երբեմն գալիս՝ հարցնում էր զարմիկի որպիսությունը կամ մի բանկա մուրաբա, տաք ճաշ էր բերում: Երբ Հեյդար Ալիեւն անցավ Կիրովի փողոցով եւ դիմավորելու քշված ուսանողներին վրա, բնականաբար հայացք անգամ չձգեց, Պետիկն ականջիս փսփսաց. «Սուլթան Աբդուլ Համիդին տեսա՞ր»:-

Մյուսը՝ էլի շամքորեցի՝ Կամոն, սաստեց. «Ա լակոտ, ձենդ», - բայց սառած, կապտած՝ այդ ո՞ր մեկի խելքին կպառնկեր, որ քաղաքի կենտրոնական փողոցի վրա երեք ուսանող տղա ինչ-որ հիմար բաներից ենք խոսում: Մենք համարյա վազքով ետ՝ հանրակացարան հասանք, Վաչոն տնից ծանրոց էր ստացել՝ խաշած հավ, թթու, լիտրանոց շշով՝ արաղ, խմեցինք եւ էլ դասի չգնացինք, քանի որ մանկավարժականի ողջ մտավորականությունը տարվել էր չգիտեինք՝ ու՞ր, բայց հաստատ՝ լսելու Հեյդար Ալիեւի ճառը եղբայրության եւ բարեկամության մասին, որից հետո մերոնցից մեկը նրան հասկանալի մի լեզվով պարտադիր պիտի բացականչեր. «Կեցցե խորհրդային Ադրբեջանը, որի կազմում

փթթում է Լեռնային Ղարաբաղը»:- Իհարկե՝ նախընտրելին թուրքերենն էր, բայց ոչինչ, Ալիեյն ինտերնացիոնալիստ էր, նրա ներկայությամբ դեռ կարելի էր արտահայտվել նաեւ ռուսերեն, իսկ «հայերեն» իրավունք ուներ խոսել միայն Ինքը. «Գեսսե սավյիթաքան Գարաբաղը», - որպեսզի հաջորդ օրը լույս տեսած բոլոր թերթերը փակագծերի մեջ ընդգծեն. «Ընկ. Ալիեյն այս բառերն արտասանում է հայերեն», - եւ ավելացնեն. «Դահլիճը արձագանքում է հոտնկայս, օվացիաններով», - իսկ պատմության ֆակուլտետի դեկան Սուլեյման Մամեդովը մերոնցից մեկին կանչում եւ խիստ պատվիրում է. «Էնփես անես՝ Էն լաթոթ թյուս մնա, հա՞». - եւ նախապետական քննությունից Վաչոն ստանում է անբավարար: Նրա դիպլոմային աշխատանքի ղեկավարն այսպիսի մի կարծիք էր գրել. «Վաչագան Հարությունյանը տառապում է սոդացող նացիոնալիզմի հիվանդությամբ եւ չի կարողացել լիովին ըմբռնել թեման»:- Դիպլոմայինի ղեկավարին հետաքրքիր չէր՝ նյութը ֆրանսիական հեղափոխությունն է, թե՞ ազգերի ինքնորոշման լենինյան տեսությունը, երկու դեպքում էլ «Էն լաթոթ թյուս» պիտի մնար՝ հեռացվեր վերջին կուրսից, դասախոսն իր կարծիքը գրել էր ուղղագրական ահավոր սխալներով, օգտագործել «պարտիա», «կոմսոմոլ» եւ նման բառեր՝ ուղղեցինք, նա մեզ պես ապրում էր հանրակացարանում:

Երեւան ի՞նչ արկած էր ունեցել՝ չէր իմացվում, իր մասին ասում էր. «Ընկ. Ալիեյը գանգել է ընկ. Դեմիրճյանին, թե՛ Նախիջեւանը տալիս եմ քեզ, մենակ դու թող՝ Սարգիսջանյանը գա Ղարաբաղ», - խեղված մարդ էր: «Սեր, ամուսնություն, ընտանիք» թեմայով էթիկայի ձեռնարկ էր գրում, հազնում էր կանաչ գույնի կոստյում, եւ աղջիկներից մեկ-երկուսը երեկոյան ժամերին մտնում էին նրա սենյակը՝ լսելու բարոյախրատական դասախոսություն, բայց հետո իմացվեց, որ նա մեկին ուզեցել էր հայրաբար համբուրի, մյուսին խորհուրդ էր տվել, թե ինչպես պաշտպանվի անցանկալի հղիությունից: Նա մեզնից մի հարկ ներքեւ էր ապրում ու երբ խմում, աղմկում էինք, երբեմն շատ զգույշ ծեծում էր ջեռուցման խողովակը, եւ մենք հասկանում էինք, որ հարգելի դասախոսը նույնպես կարգին ուտելու կարիք ունի: Հանրակա-

ցարանային գինարբուքի մի երեկո նա խմեց եւ խոստովանեց, որ կյանքում անհաջողակ է, կնոջից բաժանվել է, քանի որ «երեխաներն ինչքան մեծացան՝ տեսա՝ ոչ մեկն ինձ նման չէ»,- եւ լաց եղավ:- Տարանք, ցույց տվինք իր մտքի եւ գրչի սայթաքումները եւ հայտարարեցինք, որ եթե կարծիքը չփոխի՝ այդ տառասխալներով կարմրացրած էջերն ուղարկելու ենք պատկան տեղ: Չեինք սպասում՝ կազդի, բայց խոստացավ՝ ում հետ պետք է՝ հարցը կկարգավորի:

Վաչոն այդպես ավարտեց, Պետիկն էլ, Կամոն՝ ոչ, խելքին փչել էր՝ պիտի աշխատի, մի ինչ - որ պահեստում պահակ էր ձեռակերպվել, գլխին խփել՝ պահեստը թալանել էին՝ կամ գողերը, կամ հենց՝ պահեստապետը, ընկել էր գժանոց, եւ այդ արանքներում մենք Վաչոյի նամակներն ստանում էինք Դաշքեսանից. «Երեկ աշակերտներին տարել էի Սահակ Սեւադայի բերդը, շատ հետաքրքիր տեղ է, մեր գյուղը շրջկենտրոնից մի քսան կլինումետր է հեռու, բայց մեքենա չի բարձրանում, միայն մի «Վիլիս» կա, որ ձյուն եկավ՝ լրիվ կտրվելու ենք աշխարհից»,- եւ հատուկ շեշտում էր. «Կենտրոնը կոչվում է Դաշքեսան, կողքի գյուղը՝ Վերին Զարհատ»,- ինքը Չագլիկ էր գործուղվել: Պատմում էր, որ ժողկրթաժվարն առաջին օրը հայ տեսչի միջոցով հասկացրել էր՝ «500 մանեթ տա՝ գրեմ՝ տեղ չունենք, ետ գնա Ղարաբաղ»,- Վաչոն մերժել էր: Մենք նրան անվանեցինք «Պետրոս Կամսարյան» եւ պատասխանեցինք, որ մեկ է, երկար չի դիմանա, կամ կզգվի, կամ կզգվեցնեն, իսկ նա ամուսնացավ եւ տղային էլ Անդրանիկ անվանեց: Ճիշտ է՝ այդ ժամանակ ուսանողական մեր ընկերությունն արդեն ցրվել էր, եւ մի երկու տարի անց Վաչոն նամակ էր գրում Շեւչենկո քաղաքից, որ Ղազախստանի Մանգիշլակի մարզի կենտրոնն է կարծես, հանքային պարարտանյութերի գործարանում բանվոր էր, խոստացել էին բնակարան տալ հերթից դուրս: 1995 թվի մի օր Վաչոն հայտնվեց Ստեփանակերտում, թե ինչու էր եկել՝ չհասկացվեց, ասում էր՝ գործ է սկսում, բայց հետո կորավ, չկա, գնչուական փոստի տվյալներով՝ Վաչոն Շեւչենկո մեծ ցավի մեջ է ընկել, թղթախաղում տանուլ է տվել փող, տուն, ամեն ինչ, եւ կինը լքել է նրան: Պետիկը բռնագաղթ-

վել է Շամբորի իրենց Մարտունաշեն գյուղից, Կամոն՝ Բաղայից, Պետիկը Շիրազլու՞, թե՞ Խալիսա գյուղում է հիմա, մյուսներից տեղեկություն չկա՝ կիրովաբադցի Վարդանով Միշայից, ուտի Գրիշայից, չարդախլուեցի Անդրոյից, Ռաֆիկից, Վահրամից, սեյ-սուլանցի Զարությունյան Սամոյից՝ չկան, ցրվել են:

...Վարդանով Միշան հարբած գալիս էր մեր սենյակ եւ անխտիր բոլորիս հրավիրում Կիրովաբադ. «Տանեմ՝ պատիվ տամ՝ աղջկերքով - բանով»:- Այնքան էր գլուխ տարել՝ մի անգամ Վաչոն գնաց, եկավ, թե՛ «Տղերք, Միշիկը մի հուրի-փերի բերեց, ոչ ուտես, ոչ խմես՝ մենակ դրա ռեխին նայես, ատամ չունի»:- Միշիկը հետո փառավորապես հերքեց Վաչոյի կարծիքը եւ ասաց, որ կնկա ջահելի շառը շատ է, օգուտը՝ չնչին եւ փիլիսոփայեց, որ նրանք տարբերվում են միայն պարանոցից վերելով, մնացած ամեն ինչում պառավ, թե նորահաս՝ տարբերություն չկա, եւ նրա այդ կարծիքը կիսեց Բոնդը, այսօրվա Իշխան Փառավունիչը, որ բանակ ծառայած, Բառնաուլ կամ Բիրոբիջան ապրած տղա էր, արդեն կին - երեխա ուներ, բայց աղջիկներին անխտիր անվանում էր «լավագույնս», իսկ պատմականի Մարտինը սիրահարվեց մի թրքուհու, եւ դա այն տարին էր, որ ուսանողական մեր համարյա ձրի աշխատուժը քշվեց Զուսանլի, իսկ եղած բամբակն արդեն հավաքվել, պետությանն էր հանձնվել: Արդեն նոյեմբեր էր, դաշտերը՝ տկլոր:

Նախաճաշին մեզ տալիս էին կծովի թեյ, ճաշին՝ քաղցրով կաթնապուր, ընթրիքին՝ ցամաք հաց: Մեծ այդ գյուղի խանութներում վաճառվում էր հաց՝ հատը ութսուն կոպեկ, ձկան «Կիլկի» պահածո, պրյանիկ, հինգ ռուբլով մենք որսորդներից գնում էինք նապաստակ, իրենք չէին ուտում, հատուկ մեզ համար էին կրակում: Մենք մի օր որոշեցինք կարգին հացի նստել, բեռնատարի մեր վարորդն ասաց՝ «Լավ ոչխար ունեմ»:- Գնացինք գին խոսելու, եւ տան կինը մեզ նայեց կասկածանքով: Թուրքը բացատրեց՝ «Զայ է, ձերոնցից»:- Այդ կինը մի երեսուն տարի մոռացած բառեր գտավ, կցմցեց՝ հարցնելու՝ որտեղի՞ց ենք, աղջիկը սաստեց. «Մարդու լեզու չգիտե՞ս, մարդու լեզվով խոսիր»:- Եւ մայրը լռեց: Տանտերը ծուռ ժպտաց՝ «Երեխա է, ոչինչ. վերջինս է, երես եմ

տվել, չնեղանաք, որձը հավանեցի՞ք, հարյուր հիսուն արժե, տվեք հարյուր՝ ձեզ փեշքեշ, հիսունը կնոջս խաթեր փեշքեշ եմ անում, հալալ լինի»:-

Կինը սեղանին չոր, խշխշան ընկույզ էր դրել, միրգ - բան՝ ձեռք չտվեցինք: Ասաց՝ «Լավ չեք անում, պատահել է, ես մեղք չունեմ, ջահել աղջիկ եմ եղել՝ փախցրել, բերել եմ ես գյուղը, մարդս մարդ է, էլի, ի՞նչ տարբերություն», - եւ ասաց, որ վեց երեխայի մայր է՝ մեծերից բաժանվեցին, ունեցան իրենց տունը, մեծերը արդեն չկան: Մի կերպ կապկպեցինք, ասացինք՝ «Աստված ողորմի իրենց», - իրենց մեղքը, քանի որ թուրքը նրան աղջիկ փախցրել՝ տղային կին էր տվել: Մազը թուրքավարի մեջտեղից կիսած՝ հինայած էր, ծաղկավոր գլխաշորը ուսերին՝ նա տան կին եւ խանում էր, եւ՝ օտար: Որձ ասածը մի տարու գառ էր, եղավ քսան շամփուր միս, խմեցինք, քանի որ ազատ դաշտ էր, օտար գյուղի ոչ մի դարպաս կերուխումի մեր խնդրանքին չէր բացվի. իրենց արաղը նրանք թաքուն էին խմում՝ Աղղամ- Աղջաբեդի մայրուղու ինչ-որ խորտկարանում, տանը նրանք հարգելուր զավակ եւ հավատավոր մուսուլման էին, մեզ ամենահարազատը արձակ՝ աշնան մառախլապատ դաշտն էր, նռնենու վայրենացած այգին, ուր փայտ էլ գտանք, շամփուրացու էլ, թուրքի նման ծալապատիկ նստեցինք: Դեկանի տեղակալ Խասայ Մամեդովը հետո վրա պրծավ, Գուրգեն Բաղդասարյանին մեղադրեց, որ «աշխատանքը տապալում, ուսանողներին բարոյալքում է»: Բաղդասարյանը պինդ խմած էր՝ մեզ հավասար, քեֆի սեղանին նա եւ Պարույր Սեւակ էր արտասանել, եւ ոչ մի բաժակ բաց չէր թողել, նրան թափով հրեց. «Խասայ, ռադո քաշիր, ինչ արել՝ լավ եմ արել, բա հո սոված չե՞նք մեռնելու», - եւ դա ձեւակերպվեց «անհարգալի վերաբերմունք եղբայրական ադրբեջանցիների սեղանի, աղուհացի հանդեպ»: Իբր՝ նրանց հացը համարել ենք անմաքուր եւ անցել ինքնավար կենցաղի, իբր՝ տղա ուսանողներս գիշերով խուժել ենք դպրոցական շենքի ձեղուն եւ ոչնչացրել այնտեղ ապաստանած վայրի աղավանհներին եւ բարբարոսաբար կերել սուրբ թռչունների միսը, որով «անարգվել է մուսուլման հավատացյալ հասարակությունը»: Դաշտ տանում եւ բերում էին բեռնամեքենայի

թափքում, քամու պոռթկումների միջով խումբը երգեց ի՞նչ եւ ու՞մ
ականջին հասավ, որ դա եղել է «նացիոնալիստական»: Ֆիզմա-
թի աղջիկներից մեկին ակումբի բակում թուրք խուժանը փորձեց
փախցնի՝ ահագին տուրուղմփոց եղավ, ֆիզմաթի տղերքին գիշ-
երով թաքուն հասցրին Բաքու - Ստեփանակերտ գնացքին, խո-
թեցին վագոն՝ տուն ուղարկեցին:

Այդ գիշեր Իշխան Փառավոնիչը կարգադրեց, որ դռները պինդ
փակենք, անձամբ քարշ տվեց,- մեզ տեղավորել էին հին դպրո-
ցական շենքի մի քանի դասասենյակներում,- դռան դեմ իրար գլ-
խի երեք - չորս նստարան շարեց, կոլովվեց վերմակի տակ, ասաց՝
«Իսկ հիմա, տղաներ, քնենք, գուցե սա մեր վերջին խաղաղ գիշ-
երն է»:- Աղջիկներից մեկի ատամը ցավում էր, գյուղում դեղա-
տուն կար, մեր կուրսի աղջիկ էր, մենք՝ երկու տղա, գնացինք, որ
անզգայացնող հաբ բերենք, ուշ էր, դեղատունը փակ էր, չափար-
ներին կպած՝ չնկատվենք, ետ եկանք եւ ճարահատ՝ խեղճ աղջի-
կը խեղդվելով վրա-վրա ծիսեց երկու գլանակ դառը «Շիպկա»՝
ատամի ցավը թմրի, իսկ հաջորդ օրը դաշտ եկավ մանկավար-
ժական ինստիտուտի մեր հայ ղեկավարության պատվիրակու-
թյունը՝ թուքումուր տալու, սպառնալու:

Մարքսիզմ-լենինիզմի երդվյալ դասախոս՝ Աբրահամ Շահյա-
նը բաց դաշտում ուսանողներին շարք կանգնեցրեց, լայնեզր գլ-
խարկը ձախ ձեռքին բռնած՝ մակենտոշի փեշերը քամուց ծածա-
նելով՝ անցավ՝ նայեց եւ ոչ մեկիս չտեսավ, գնաց մինչեւ շարքի
ծայրը, ետ եկավ, աջով սղալեց ճաղատը, կանգ առավ, խորը շն-
չեց եւ սպառնալի հարցրեց. «Ձեր մեջ կոմունիստ կա՞», - գիտեր՝
որ կան, իր հետ միասին կուսակցական ժողովի էին նստում, իրեն
հավասար ձայն ունեին՝ կանոնադրությամբ, իրականում ուսա-
նող էին, նորից հարցրեց՝ «Ձեր մեջ կոմունիստ կա»:-

Մեկը առաջ եկավ՝ ինչպես կիսոյում, երբ գերմանացիները գե-
րիներին կանգնեցնում, ասում էին՝ «Կոմունիստներն ու հրեանե-
րը՝ շարքից դուրս», - հետո՝ մյուսները: Ունեինք նաեւ մարգ-
խորհրդի դեպուտատ, նա էլ դուրս եկավ, Աբրահամ Շահյանը
թքեց՝ «Թյուն՛ուն՛, բա դուք կոմունիստ եք, կոմունիստ չեք,
օպորտունիստ եք, թյուն՛ուն՛, բա դուք ո՞նց եք հացը ոտի տակ

տալիս՝ ես մարդկանց հացը», - ասաց՝ «Ձեր մեջ կոմերիտական կա՞», - եւ բոլորս, իհարկեւ, կոմերիտական էինք, դարձյալ թքեց՝ «թյուն՝ ու՛ն՝», - եւ ստացվեց, որ մենք, իբր, տված հացին թքել ենք, ասաց. «Ես էլ թքում եմ ձեր ճակատին», - սպառնաց, որ կազմակերպիչներին կգտնեն, կհեռացնեն ինստիտուտից Արստ Մարտիրոսյանը բրիգադի հետ պայման էր դրել՝ որ տղերքով փող ենք հավաքում՝ ամեն մեկս՝ օրական երեք ռուբլի, իսկ բրիգադի զրում է 30 կիլո բամբակ՝ յուրաքանչյուրիս, որի դիմաց պիտի ստանայինք 4 ռուբլի հիսուն կոպեկ, քանի որ բամբակաքաղի վերջում կիլոյին վարձատրում էին 15 կ.: Մանր այդ խարդախությունը մեզ փրկեց, թե չէ գործալքության, պորտաբուծության մեղադրանքով կարող էին հեռացնել, եթե նացիոնալիզմը չէր կաշոււմ տղայական մեր խակությանը, հետո էլ կարգին փող եղավ: Ստիպված պատվիրեցին, որ Ստեփանակերտից ավտոբուսները քշեն Յուսանլու՝ ուսանողներին ետ դասի տանեն, եւ Յեյրար Ալիեւը հեղափոխության տարեդարձի օրը գեկուցեց, որ հարյուր քսան տոկոսով կատարված են բոլոր պարտավորությունները:

...Մինչ այդ տարել էին խաղողաքաղի՝ Մարաղա, դատարկել էին գրադարանի եւ ակումբի շենքերը, քնում էինք գետնատարած, ոտում աջաբսանդալ եւ մի բաժակ մածուն: Դարսեիչ Պողոսյանը պետական այդ մեծ տնտեսության տնօրեն եւ նախկին ուսուցիչ էր, բողոքել էին՝ դասախոսները, թե՛ «ընկեր Պողոսյան, ախր մսի կարոտ ենք», - շատ տարիներ հետո թվաց՝ նրան Տարսայիճ պիտի ասեին՝ պատմական անձնանունը, որ կուսակցականի խելքով կամ գյուղական գրագրի անփութությամբ դարձվել էր ռուսավարի՝ Դարսեիչ, - ուսը թոթվել էր. «Ի՞նչ անեմ՝ հավերս ձու եմ ածում, ոչխարս դեռ սարից չեմ բերել, կովերս էլ կթու եմ, խոզ չունեմ, ի՞նչ մորթեմ»:- Մոտիկ ռուսի՝ մալականի գյուղ կար՝ Լեւոնարիս, լավ սագեր էին պահում, սագի երկու որձակը լինում էր մի տասը-տասնհինգ շամփուր խորոված: Գյուղում գտնվում էր նաեւ ոչխար, Գուրգեն Բաղդասարյանը կարգ էր դրել՝ աղջիկներին մեկ-մեկ կամ՝ խմբով տուն էր թողնում, պայմանը՝ «Պիտի բերեք ամեն մեկդ մի խաշած, փորը սարքած հավ, մի շիշ արաղ», - եւ արաղը կախովի կողպեքով պահարան էր դրել: Յա-

տուկ առիթով բացում, մի շիշ հանում էր, որպեսզի չհարբեիք: Չին այգի կար, ասում էին՝ մնացել է Յուզբաշեի ժամանակներից, ավագանի պես մի տեղ այդ այգու հեռավոր ծայրերում դեռ ջուր ուներ, աշնան տափաստանի արելը ջերմացնում էր, եւ Գուրգեն Բաղդասարյանը սիրում էր լողանալ. դա եւ լողափ էր, եւ բաղնիք: Ասում էր՝ Իշխան Փառավոնովիչին՝ «Յամլետ, ջուր լցրու», - եւ լողանում էր, շոր էր փոխում: Մեզ՝ երեխա ուսանողներին քշում էր, իսկ Յամլետը արդեն հասուն տղամարդ էր, զվարթ ճղրտում էր՝ «Յամլետ, ջուրը լավ լցրու, բաղնիքի համարի փողը տալու եմ», - կատակում էր: Խաղող քիչ էր քաղվում, չէինք քաղում, Դարսեիչ Պողոսյանը մի աղջկա հարցրել էր՝ «բալիկ, ոտեղացի՞ ես», - ասել էր՝ «Ճարտարից», - անաստվածը մի ճուրթ կտրել, երկուսը ցած էր թափել, Պողոսյանը զարմացել էր՝ «բա հիմա որ ձեր Ադամյանը լիներ, ի՞նչ կաներ քեզ»:- Ի՞նչ պիտի աներ. Ադամյանին ուսանող պետք չէր, ինչքան աշխատող ձեռք ուներ՝ այնքան էլ այգի, վատը այդ միացյալ՝ մեծ գյուղի կամ ավանի՝ քաղաքատիպ, պետտնտեսության գործերն էին, որ աշխատող չուներ, արդեն գնում էին Ռուսաստան, գործ գտնում էին մոտիկ Միրբաշիր, Բարդա, դարձել էին ատամ շապկող, խառատ, եռակցող, ապրում էին բանվոր- գյուղացու իրենց անհոգ կյանքը: Փողը ստանում էին Միրբաշիր, բայց տան- դռանը ունեին սեփական այգի, նաեւ պահում էին մանրապճեղ անասուն, հավուճիվ, կառուցում էին բաղնիք - խոհանոցով տուն, քշում ավտո, մոտոցիկլետ, մոտոռուլեր, ամեն ինչ՝ որ հռնդում, ծուխումուր է անում:

Նրանցից մեկը մեր ընկերուհի աղջիկներին հրավիրում էր՝ մեքենա քշել սովորեցնի, Յուզբաշեի այգու լողափ- լողարանի մոտերքում մեքենան կանգնեցնում՝ աղջիկների խմբի մեջ փնտրում էր նրան, ով հետը կգնար եւ չէ՞ր գտնում, թե այդ մենք էինք հավատում, որ չի գտնում: Ֆիզկուլտի դասատու Սենիկ Գրիգորյանը խաղողայգու մոտ շարք էր կանգնեցրել, ցուցափայտի պես մի բան էր գտել եւ հողին գծում էր՝ «Էս առաջին շարքն է, ես՝ երկրորդը, այ եսպես՝ հերթականորեն ամեն մեկիդ մի շարք եմ տալիս»:- Ասացինք՝ «Ընկեր Գրոգորյան, հրես չի՞ այգին», - ձեռքը թափ տվեց՝ «Տավար եղել եք, տավար էլ կմնաք, բա դիդակտի-

կա՞ն», - իր խելքով՝ դիդակտիկան դա էր, ասաց՝ «Ես աղջկերքը մի տեսակ են, շուտ-շուտ են հիվանդանում», - կարելուրը խաղողն էր, ոչ թե՛ աղջիկների առողջությունը, հիգիենան: Եւ այդ տարի ասվեց՝ «Լայն քայլերով է ընթանում Ադրբեջանը», - մենք ավելացրել էինք՝ «Հայաստանի խանութներով», - քանի որ Ադդամ «Մասիս» ֆիրմայի կոշիկ էինք գտնում, Երեւանի կարագ, «Ախթամար» ծխախոտ, անանուխի ծամոն, Շուշի ուտում էինք «խանգյալ», Ստեփանակերտ՝ «քիտկի»՝ մակարոնով, եւ ոչ մի գրադարանում չէր գտնվում ոչ «Արցախ», ոչ՝ «Գաղտնիք Ղարաբաղի»: Րաֆֆու «Սամվելը» կար, «Խամսայի մելիքությունները»՝ ոչ:

Տումի հեռավոր գյուղում աղբյուր կա՝ Թագավորի աղբյուր, - Հմայակ Խաչատրյանը ինչպե՞ս էր ընդունելության մսաղացը հաղթահարել. երեւի՝ իր ուսուցիչ Խորեն Բաղդասարյանի միջամտությամբ, - գյուղ էր հրավիրել: Տումին՝ լեռների մեջ կորած, անճանապարհ: Նստեցինք Ադդամ- Ֆիզուլի ավտոբուսը, Ֆիզուլի՝ շուկայի մոտ իջանք եւ սպասեցինք համընթաց մեքենայի, որ չկար, ոտքով գնացինք: Կոլխոզի բեռնատարը Հողերից էր գալիս՝ վերցրին, թափքում ահագին ժողովուրդ կար, գինի ունեին, հարսանքի գինի էր՝ տակառիկներով, խմեցինք, կեսգիշերին հասանք, մի օր պտտվեցինք, տեսանք Թագավորի աղբյուրը, հիացանք Քիրսի վեհությամբ, իսկ առավոտյան մինչեւ Տող մեր ճանապարհը անտառով էր:

Աշուն էր, գլեռ ուտելով իջանք Տող, որպեսզի ժամը 8-ին հասնենք Տող - Բաքու ավտոբուսին, որ շքեղ «Իկարուս» էր, մինչեւ Ադդամ բերեց, կեսօրին հանրակացարանի մեր սենյակում էինք, եւ Հմայակը աչքերը խոնարհած էր գյուղի իրենց խեղճությունից, որ Հրայր Եղբայրը Ստեփանակերտ պրոֆտեխուսումնարանը թողել՝ ետ տուն է գնացել, որ քաղաքում հարս եկած քրոջ տուն գնալ չի լինում, կեսրայրը փնփնթում է ամեն անգամ, փեսան՝ ոչինչ, լավ աշխատող տղա է, բայց չի հասկանում, որ աներորդին էլ տաք ճաշի, հագուստ - կոշիկի կարիք կունենա:

Քաղաքի ոչ կենտրոնական, այլ՝ երկրորդ՝ «Օկոյաբը» կինոթատրոնում Հրաչյա Քոչարի «Նահապետը» վիպակի սյուժեով նկարահանված ֆիլմն էր գնում, պատկերը ցնցող էր՝ անթիվ-ան-

համար կարմիր խնձորներն իրենք իրենց թափվում եւ թեք գլորվում են ջուրը, բայց դահլիճում համարյա մարդ չկար, մի քանի ուսանող տղա, մեկ էլ՝ մոտիկ գորամասի գինվորներ, ում տրվել էր կարճաժամկետ արձակման թուղթ, եւ ավագը նրանց կինոյի էր բերել «Օկտյաբր», քանի որ «Ռոսիա»-ում ազատ տոմս չէր գտել. այնտեղ ցուցադրվում էր հնդկական ֆիլմ, դահլիճն արեւածաղկի սերմ էր թքում, գռեհիկ կատակում էր, սուլում, ոտքերը դոփում, երբ էկրանին հերոս- հերոսուհի պիտի համբուրվերվեին, բայց խորհրդային գրաքննությունը խուզել էր, եւ կինոյից հետո գնում էր գրոսայգու թփերի տակ լրբանալու:

Երեւանից դասախոս էր եկել՝ Դմիտրի Նազարյան, դեմքով, հագուկապով հիշեցնում էր Վարդգես Պետրոսյանին՝ նրա նման կարճահասակ, գեղեցիկ, ճերմակող մազերը՝ ետ սանրած, ծխում էր սեւ ֆիլտրով «Ախթամար», եւ բոլոր աղջիկները սիրահարված էին նրան: Նրան չէ, Երեւանին էին սիրահարված: Եկել՝ ռուս դասական գրկանության դասընթաց էր կարդում Վերա Ավագյանը՝ փարթամ, բայց արդեն տարիքն առած կին: Խոսում էր խռպոտ ձայնով, հետո, երբ «Ղարաբաղ» ռեստորան էինք հրավիրել, իմացանք՝ ծխող է, հայոց լեզվի եւ գրականության մեր, մյուս ամբիոնների տղամարդ դասախոսները, պրոֆեսոր Անտոնյանը՝ հատկապես, նոր կոստյում էին հագնում, կապում ընտիր փողկապ եւ քայլում էին ձիգ: Հրաժեշտի երեկոյին նրանք Վերա Ավագյանի հետ տանգո պարեցին, Դմիտրի Նազարյանը անքեն ժպիտով նայում եւ ծխում էր իր սեւ ֆիլտրով «Ախթամարը»: Հետո Վարդգես Պետրոսյանն էր գրողների խառը խմբի հետ Ստեփանակերտ եկել, թատրոնի դահլիճում նա իր ելույթի առաջին մասը խոսեց ռուսերեն, հետո հայերեն ասաց, որ գրականության խնդիրը կյանքի ճշմարտությունն է, եւ դահլիճը նրան հոտնկայս ծափահարեց: Ընդմիջմանը նա օրվա հրավիրատոմսի վրա իքնագիր էր տալիս ուսանողներին՝ հիմա էլ կա. «Եթե անգամ դու գնաս Ղարաբաղից, Ղարաբաղը չի գնա քեզսից», - քանի որ այդ բոլոր անիմաստ զեղումների մեջ հարցրվել էր՝ «Հայկական էսքիզների շարքում Ղարաբաղից այդ ինչու՞ միայն մի տխուր կտոր ունեք Ամարասի վանքի մասին», - իսկ պատմությունն այն էր, որ

չորրորդ դարի վանքը դարձրել էին կոլխոզի ցախանոց:

...Պատմիչն արձանագրել է, որ՝ «Ջալալ-Յասան՝ Վախթանգ Գ-ի որդին էլ Յասանի թոռը, եղավ մեծ էլ երեւելի իշխան՝ հայոց ՌԴԲ թվին, որ Տիրոջ 1243 թվականն է էլ կնության առավ Մամքանին՝ Սյունյաց Սենեքերիմ թագավորի թոռանը, որ դուստրն էր Սյունյաց Գրիգոր իշխանի: Ջալալ-Յասանը ծնեց Աթաբեկին էլ Իվանեին էլ երեք դուստր՝ Ռուզան, Նանա էլ Մինա- Խաթուն: Ռուզանը եղավ թաթարների Չարմաղան խանի Բուղա որդու կինը, Նանան եղավ Ումեկ Տփխիսեցի հայ իշխանի կինը էլ ծնեց Վախթանգին, Վախթանգը ծնեց Արղութին, Արղութը ծնեց Մեհրաբին, Մեհրաբը ծնեց Շահնշեհին: Ել Յասան-Ջալալի մահվանից հետո Մինա-Խաթունը եղավ Սյունյաց Տարսայիճ իշխանի կինը էլ ծնեց Ջալալ որդուն էլ Ափսա դստերը հայոց Չխ թվին էլ Տիրոջ 1276 թվականին,, Վելիջան բեկ Գ-ն ծնեց Եսայի կաթողիկոսին էլ Յովհաննեսին,, Եսայի կաթողիկոսը վախճանվեց հայոց ՌԾՅԵ թվին, որ Տիրոջ 1726 թվականն է»:-

Իսկ Եսայի Յասան Ջալալյանը մեծ քոչի դեղին տափաստանն ի վեր ծանր-ծանր սողացող՝ ամեն գարնան հետ աչքը մեր կանաչ աշխարհին տևած՝ բյուրձնոտ, հազարկճղակ սել զանգվածի հանդեպ ահը սրտում՝ շինական էր, քարգործ վարպետ, զորական, դիվանագետ, ծաղկող, պատմիչ-մատենագիր, վերցրին, եպիսկոպոսապետի խույրը դրեցին գլխին, ձեռքը գավազան տվեցին. «Եղիր աչալուրջ հովիվ ու պահապան քրիստոսասեր հոտին այս՝ Կողմանց Արեւելից Յայոց Աշխարհի, որ ասվի նաեւ Աղուանք -Առան»:-

-Խիղճ ունեցեք, անաստվածներ, իշխանազուն եմ, կարգ չէ ինձ հագնել սքեմ,- պաղատեց Եսային, բայց նրան լռեցրին. «Քեզ հետ է զորությունը Տիրոջ էլ կարենաս պիտի, թե չէ կրկնովի, զազանակուր կլինի հավատավոր հոտն այս»:- Փեշերը մամխի, ալոճենու փշերին տված՝ բոբիկ, ճաքճքած կրունկներով՝ Եսային էլի հազար տարի գնաց բյուրձնոտ - հազարկճղակ սել զանգվածի դեմ՝ փրկելու էլ փրկվելու, բայց ամեն անգամ մի քիչ կորսվեց մշակը, դիվանագետն ու զորականը:

Եսային զարկեց, եպիսկոպոսապետական գավազանը փշրեց

արևածոր ծնկի վրա ու հոգևած մեջքը թիկն տվեց ժայռերի ամբողջանը: Սեւ գանգվածն արդեն բռնել էր Կուր- Արաքսի միջակայքն ու դեռ գալիս էր՝ մի թեւն Ատրպատական, մյուսը՝ Դարբանդ: Մատը մանգաղի պես ճակատին կեռած՝ Եսային սրբելու էր երկու հազար տարվա մոռացած քրտիկները, բայց Յոննուսի ավերից մեկը կանչեց. «Դեպի հյուսիս նայիր, դեպի հյուսիս՝ ի՛նչ»:- Աշխարհի չորս ծագերից երեքն արդեն սեւ հեղեղի հայրենիք էր, իսկ հյուսիսը՝ անծանոթ, եւ Եսային աղաչեց. «Մի քիչ տեղ տուր, քար, հո չե՞նք կոտորվելու», - կամ ասաց ինքն իրեն, եւ կողքից դարձյալ մեկը հուշեց. «Դու թուրքից ազատ ես, նաեւ՝ պարսիկից, քո էդ քարաստանում երկու-երեք բյուր գորական ունես, եւ Վիրքի Վախթանգ թագավորը Յյուսիսի հետ բանագնաց է փոխանակում, գրիր նաեւ ինքդ, զի քրիստոնեասեր է հյուսիսի Կայսրը մեծ եւ հույժ նպատակամետ ազատությանը թորգումատան»:-

-Է՛՛Է՛, ի՞նչ գրեմ, ախր, Կայսերն հյուսիսի, գրով երկիր կպահվի՞,- թոնթորաց Եսային, բայց պահն օրհասի էր, եւ հույսը՝ փրկություն:

Ռուսաց ինքնակալ Պետրոս կայսրը ոտքը դրեց Կավկավ լեռների ձյունոտ մեջքին, իջավ մինչեւ Դարբանդ՝ Տփիսիսից Վախթանգն ու մեզանից՝ Եսայի կաթողիկոսը, չորս-հինգ կամ ընդամենը մեկ բյուր գորականով, սեւ հեղեղի միջով արանք գտած՝ Գանձակ էին հասել, Գանձակի մոտ՝ Չուլակ անվանված դաշտը, որ գուցե պատմական հաղխաղն էր, գուցե՝ ոչ, բայց Պետրոսը Պարսկաստանի եւ Կուր - Արաքսի դաշտը բռնած անծանոթ հոտերից փռշտաց. «Առողջություն, Ձերդ կայսերական մեծություն», - ինքնակալ կայսեր միտքն, այնինչ, ուրիշ տեղ էր, հարցրեց. «Ո՞րն է հայերի աշխարհը, հեռու՞ է դեռ»:- Խոնարհվեցին. «Մի սակավ մնաց, թագավոր տեր», - եւ Պետրոսը թիկունքին դաշույնի սառնություն զգաց՝ ծովից շվեդները կհարձակվեն, կավերակեն նորանիստ մայրաքաղաքը, ձախից սառնություն զգաց՝ Բուխարայի էմիրը, աջից սառնություն զգաց՝ Ղրիմի թուրքերը, կասպատակեն. ի՞նչ կշահի, ի՞նչ կկորցնի: Չորքը՝ տենդահար, արևալուծ, պարենը՝ նվազ, շոգը խեղդում է, եւ դեմը՝ թշնամի

անապատ:

Պետրոսը ոտքը կախ գցեց, խորհեց իր անելիքն ու ասաց. «Մեր կայսերական գթասրտությունը տարեք հայերին եւ հորդորեցեք, որ հավատքով ամուր մնան իրենց լեռներում, ավելացրեք, որ մենք հանապազ աղոթում ենք իրենց համար, թող սպասեն եւ տոկան»:-

Ոտնակոխ՝ Կուր-Արաքսի հովիտը սեւ էր: Ստամբուլում ռուսաց եւ թուրքաց պատվիրակները ճաշն ավարտել՝ անուշեղենի վրայից սառը շերբեթ էին խմում՝ արանքներում որոշելու, որ Խազարաց ծովից արեւմուտք ընկած բոլոր տարածքների վրա Ինքնակալ կայսրը ճանաչում է Փադիշահ սուլթանի իրավունքը, իսկ փոխարենն ստանում մերձկասպյան տափաստաններում հայ վերաբնակիչների գաղութներ հիմնելու արտոնություն. «Եթե այդքան շատ են ուզում արժանի լինել մեր կայսերական գթասրտությանը, թող աղիտով, ինչքով, քահանայով - աշխարհականով գան եւ բնակվեն մեր նոր երկրներում»:- Ասա՞ց, թե՞ ընդամենը մտածեց ռուսաց դեսպանը, բայց Բարձր Դուռը հասկացավ,- եւ Եսային հառաչեց. «Վախ, մերիկ, ինձ ինչու՞ աշխարհ բերիր»:- Տոհմական գերեզմանոցում Եսայի Յասան Ջալալյանը՝ կաթողիկոս Աղուանից, իր ձեռքով շիրմափոս փորեց, ճերմակ կտավ գտավ՝ պատանքվեց եւ աղերսեց՝ «Ծածկիր ինձ, որդեակս, ցուրտ է», - իսկ քրիստոսասեր հոտը սեւ հեղեղի միջով քաշվում էր վրաց կողմերը, որ մի ժամանակ աշխարհներն էին Յայոց՝ Գուգարք, Տավուշ:

Անցավ էլի հարյուր տարի, սեւ հեղեղը նստել էր Առանա դաշտում եւ ձգվում - ձգվում էր՝ գետահովիտները բռնած, Դարբանդից մինչեւ Ատրպատական դղրդում էին թշնամի բանակները, եւ աղմուկի վրա Եսային արթնացավ, կամացուկ ձայնեց՝ «Յը, ի՞նչ կա - չկա Կողմանք Արեւելից Յայոց աշխարհում, Յյուսիսից Եկա՞ն», - եւ լսեց անզուսպ հեկեկոցը Աղուանից Սարգիս վերջին կաթողիկոսի: «Դու՞ էլ հուսախաբ եղար»:- Սարգիսն ի՞նչ պատասխաներ, եւ ազագուն մատներով Եսային սրբեց նրա արցունքները, հանեց եպիսկոպոսապետական հանդերձները, պատանեց՝ «Ինչ դառնաշունչ քամի է փչում, ծածկեցեք տապանն

այս, Զրիստոսի գավակներ»:- Ռուսաց փոխարքայանիստ Թիֆլիս քաղաքից վիպասան-պատմագետ Ռաֆֆի Յակոբ Մելիք - Յակոբյանը Փանձակով, Գյուլիստանով գալիս էր: Փոստային իջեւանատներում թուրք ծառայողների հետ վիճելով,- գրողի իր նիհար դրամապանակից տալու մի բան եթե մնացել էր, պիտի այստեղ ու այնտեղ ցրված վավերաթղթեր առներ,- «Ղափիթ բեկ» վեպի տպագրությունն ընդհատել, ազատական «Մշակ» թերթում հայտարարություն էր արել՝ «Գնում եմ Ղարաբաղ՝ հավաքելու անհրաժեշտ պատմական նյութեր», -որպեսզի հետո դառնանար ռուսացող կամ թուրքացող հայրենակիցներից, Մակար եպիսկոպոս Բարխուտարյանցի հետ վիճել կամ Յայկունու, դուրս էր կորզելու հարյուր - երկու հարյուր տարվա պատմությունն ու առասպելը հատուկենտ ծերերի կարծրացող հիշողության գաղտնարաններից՝ չհավատացին. «Այ պարոն Ռափի, Խամսայի մելիքություններս ո՞րն է, հրես ապրում ենք էլի՞ Ելիսավետապոլսկայա գուբեռնիա, Ջիվանշիրսկի ուեզդ, մեր ուզածն էլ բա էդ էր, չէ՞ որ ռուսի թագավորը գա, եկել, տիրություն է անում, ու էս քանի տարի է՝ կռիվ չկա, ապրում ենք, չէ, ախպեր, մեր էս կողմերը իշխան - միշխան, թագավոր - մագավոր լսած չկանք, եղածը մի քանի բեկ ասվող՝ մեզ նման մարդիկ են, էս էլ էգուց վայ թե չլինեն, պրծնեն՝ գնան, ապրում ենք, վարուցանք ենք անում, կով ենք պահում, ոչխար, ամառը սար ենք գնում, հա, քոլանի թուրքի հետ, հացն էլ իրենցից ենք բերում, ներքեւները լավ հողեր ունեինք, սարերն էլ՝ կիսովի, կռիվ չկա, թշնամություն չկա»:-

Սեւ հեղեղը խառնվել էր մեր կանաչ անտառների աշխարհին, վիպասան Ռաֆֆին երեւի դժգոհ էր գնացել, հեղձուկը բռնել էր կոկորդը, շատ էր ծխում, Արծրունու հետ ընդհարվել՝ «Մշակը» կորցնում էր հազար հավատավոր ընթերցող, բայց այս սեւ հեղեղի ու կանաչ մրտոց անտառների աշխարհում Ռաֆֆին նիհար, ակնոցավոր մարդ էր, ասենք թե՛ հայոց պատմության գիտակ, իսկ Եսային՝ վաղուցվա մեռել՝ տապանաքարի տակ լռված,- «Զոբաժին թագավորությունը դա է, եթե չի հերիքում, կարող էս շալակել համայն աշխարհի բոլոր գերեզմանաքարերն ու լինել ավերակների միահեծան արքա, էս է՛ Ելիսավետապոլսկայա գուբեռնի-

ա, Զիվանշիրսկի ուեզդ, չե՞ս ուզում՝ գնա մեռիր ու թաղվիր Կողմանք Արեւելից Յայոց Աշխարհում, մի տեսնեսք եղ ու՞ր է»:- Վիպասան Րաֆֆին գրեց «Խամսայի մելիքությունները», «Երկու ամիս Աղվանից եւ Սյունյաց աշխարհներում» ճամփորդական նոթերը, Թիֆլիս կարդացին ու զարմացան. «Էս ինչ հրաշք պատմություն ենք ունեցել»,- բայց Ալեքսանդր Մանթաշյանը Օրթաճալա քեֆից ուղիղ մեկնելու էր կայարան, որ հասնի Բաքվի գնացքին, Ադիլխանյանը գործարանի հարցերով Եվրոպա էր ուղևորվել ամիսներ առաջ ու Չվիցերիա դեռ հանգիստ էր առնում, եւ Րաֆֆին մեռավ ու թաղվեց Խոջիվանքում, իսկ Թիֆլիսի օտարներն այդ սգո թափորից միայն հասկացան, որ՝ «Յայերն իրենց մեծերին կենդանության օրոք հալածում են, որպեսզի հետո պատիվներով թաղեն»:- Եւ դա լինելու էր նաեւ մյուս անունավորների ճանապարհը: Կամ հավերժորեն կարոտելու էին Արարատին, կամ գնալու էին մեռնեն Մշո Առաքելոց վանքի պատերի տակ եւ դեռ երագելու, հավատալու էին՝ «Ռուսը հարվածել, հարվածում եւ հարվածելու է թուրքին, որպեսզի Յարգրադի դարպասներին մեխի իր հաղթական վահանը»,- թեեւ դրա համար ռուսաց փոխարքայի գիտությամբ ձերբակալվում, նետվում էին Մետեխ, մեղապարտի փակ վագոնով քշվում նորին կայսերական մեծության Պետերբուրգ մայրաքաղաքը՝ պատասխան տալու, թե հայ բանաստեղծի իրենց ուզածով ինչու՞ են վտանգում Կովկասյան ընդհանուր տան ժողովուրդների անդորրը, եւ իրենք ճարահատ արդարանալու էին, թե հեղափոխության հետ գլուխ չունեն, բայց փափագում են Վանի միջնաբերդին տեսնել կայսերական երկգլխանի արծվի ճախրը՝ որպես նաեւ Արծիվ Վասպուրականի, իսկ թագավորական ատյանը դժվարանալու էր հստակել՝ սրանք մոլեռանդ հեղափոխակա՞ն են, թե՞՝ ցնորամիտ բանաստեղծ եւ համենայնդեպս բաց էր թողնելու՝ գնան, գուցե մի օր իրոք պետք եղան:

Սեւ հեղեղն այդ արանքներում դառնում էր բանկիր, նավթարդյունաբերող, ծնում Թոփչիբաշեւ, որ ուղարկի Մոսկվայի, Պետերբուրգի, Կոստանդնուպոլսի համալսարանները, իսկ հայոց բանաստեղծ - մատենագիրների նոր սերունդը՝ հասցնում հի-

ասթափվել Ռաֆֆու «Կայծեր»-ից, որպեսզի դառնա սոցիալ-դեմոկրատ եւ թարգմանի «Կապիտալը»:

Գավթի ծանր, կաղնեփայտից դուռը շրիկաց, եւ Եսային բութեց կողքի մեռելներին՝ «Եկա՛ա՛ա՛ն»:- Աղուանից Հովհաննես Բ կաթողիկոսը՝ վախճանեալ ի ՌՀ թուին հայոց եւ ի 1621 ամի տեառն, խշրտացրեց ոսկորները, հեծեծաց՝ «Թուրքի ոտնափոխ եմ լսում», -Աղվանից Սարգիս վերջին կաթողիկոսն առարկեց՝ «Թուրքի քայլքը կատվի զգույշ է, հոտն էլ՝ հազար ազգի մեջ ջուկովի, թուրք չի»:-

-Է՛է՛, աշխարհում բա հայ կա՞:

Ոնց չէ, կլինի:

Եսային հիշեց, որ իր ժամանակ Այրարատյան , Գուգարաց եւ Աղուանից աշխարհներից գատ հայեր ապրում էին Դավրեժ, Սպահան, Շամախի, Գանձակ, Թիֆլիս, Հաշտարխան, Դարբանդ, ասաց. «Կլինեն, բայց սա հայ չի, հայն աստվածավախ ծնունդ է, սուրբ տաճարում ծունկ կցոքեր, չէ՞ք լսում՝ թրիկացնում է», - Աղվանից Սարգիս՝ վերջին կաթողիկոսը փորձեց մտաբերել, թե ուսաց գալստյան տարում ո՞ր սարիջալու, քլանի, ջիւլի, քենգերլի, համշարի մեկն էր բեկական տիրույթ գնել այս կողմերում՝ մեջքին քլունգով խփեցին՝ օրհաս էր, Եսային կողկողաց. «Տարան Սարգսին»:-

Վերելից հռհռացին՝ «Տեղդ վեր ընկիր, կրոնական էլեմենտ, քու հերթն էլ կգա, մի թող տեսնենք սա ի՞նչ է դուրս տալիս», - եւ զմուռսադրոշմով կնքեցին դուռը: Աստիճանների վրա Բաշլուղավորը կանգ առավ՝ մի անգամ էլ տնտղելու չորս կողմը. պաղ լուսնալույսի տակ՝ իրար մեջք հեծած՝ պսպղացին գյուղի ձյունակոխ կտուրները, անտառի մերկ գանգվածը գվվաց, քամին ձյունափոշի ցայեց, կաղկանձեց իջեանատան դատարկ օթեաններում, բլուրն ի վար թավալվեց ձորը, բու կռնչաց, հետո պայթեց շների հեռավոր լուսնահաչը, եւ Բաշլուղավորը սարսռաց՝ մի՞թե մոտերքում դարանակալ մեկը կա: Չէ, ցուրտ է, ճաքճան սառնամանիք, ո՞վ է գլխից ձեռք առել՝ կանգնի զինված ջուկատի դեմ: Շտապում էր, ահագին ճամփա ուներ, դեռ վարդապետն էլ՝ հետները: Ասել էին՝ «Վանքում գենք է պահում»:- Բանդեցին սալահա-

տակը, քրքրեցին բոլոր ծակուծուկները՝ չգտան, եղածը գրքեր էր, տոպրակ լցրել՝ շալակել էր եւ չարացած էր՝ որ քառասուն վերստ պիտի հետը քարշ տա, հետո էլ բա որ պարզվի՝ անշառ, տերտերի բանե՞ր են:

Վարդապետն, ախր, նրանց հետ, որ Պարսկաստանից անցել՝ Կարյագինո՞, թե Զադրութ են՝ ի՞նչ կապ կունենա, Կարյագինոյի թուրքերը բողոքել են Բաքու. «Մաուզերիստների ձեռքից օր ու արեւ չկա», - իրենց քշել են ձորերը՝ «Դասակարգային թշնամին գլուխ է բարձրացնում, ժողովուրդների հեղափոխական բարեկամությունը վտանգի տակ է», - բայց էս կողմերում վաղուց խելքը գլխին մարդ չկա: Ներսես բեկը թուրքի կնկա շորերով քոչի հետ փախավ, ասում են՝ հասել է Սամըրղանդ, Աբրահամ բեկը վախից սիրտը ճաքեց՝ մեռավ, իրեն՝ Մարկոս Դոլուխանովի մեծ տունը դպրոց են արել, ոչխարը՝ մորթոտել, կերել, մնացել էր մի Մուշեղ, նրան էլ աշնանը Սեյդիշեն բռնեցին: Չէ, հանգիստ բռնել տվեց, քեֆի էր, որ տունը շրջապատեցին, ասաց՝ «Էս սուրբ օջախում արյուն չեմ թափի», - դանակը քաշեց՝ սպասում էին, որ սիրտն է կոխելու, նա գոտի-ուսափոկ խառը կտրտեց, մաուզերը շրխկաց աստիճանաքարերին, խնդրեց. «Թողեք հացս ուտեմ», - հետո, երբ արդեն տանում էին ասաց. «20 թվին Շուշի կոտորածներից աղջիկ եմ փրկել, կինս է, գյուղում երեք երեխա ունեմ, դուք ու ձեր աստվածը՝ ձեռք չտաք», - ու հիմա կան, ապրում են:

Բաշլուղավորը թքեց թուփունի կրճոնը, ճտքակոշիկների տակ տրորեց, իսկ վանքը կանգնած էր անխռով, մեկուսի. թվաց՝ քարեղեն զանգված չէ, այլ թռիչքից հոգնած վիթխարի կարմրագորշ արծիվ՝ իջել է հանգստի: Մի քիչ կննջի, հետո կբացի թելերը, շառաչով կպոկվի տեղից, եւ ձորերը կլցվեն բարկության շանթերով: Տեսիլքն ահարկու էր, Բաշլուղավորը յափնջու տակ շոշափեց մաուզերի սառը կոթը՝ չկրակի՞ ու փախցնի էդ կեռկտուց անտերը, հետո բեղի տակ ծիծաղեց իր անմիտ վախի ու սպառնալիքի վրա եւ արագացրեց քայլը՝ ներքելից կամացուկ սուլեցին: «Եկա, եկա», - համարյա վազում էր, եւ ծանր էր գրքերի պարկը՝ շալակին:

Պետքադվարչության ավագ լեյտենանտ Օգանովի առանձնասենյակում, մախորկայի դառնածխից ծերունական աչքերը կկոցած՝ Գանձասարի Սուրբ Հովհաննես Մկրտչի վանքի վանահայր Վրթանես վարդապետ Սերեյդերյանը նախաքննական առաջին եւ միակ ցուցմունքի ժամանակ լիովին հերքեց իրեն առաջադրված մեղադրանքը. հակահեղափոխական պայքարի հետ որեւէ կապ չունի, չի ճանաչել Գարեգին Նժդեհին եւ Թեւան Ստեփանյանին, 11-րդ Կարմիր Բանակի, խորհրդային իշխանության դեմ հավատացյալներին չի դավադրագել, գեւք չի ունեցել երբեք եւ չունի ներկայումս,- եւ ավագ լեյտենանտ Օգանովը գիտեր՝ վարդապետը չի ստում, - բայց վանքն, այնուամենայնիվ, պիտի փակվեր՝ Բաքվից կարգադրել էին կալանավորել վարդապետին, իսկ մեղադրանք առաջադրելիս արդեն պիտի տեղական մարմինները մտածեին՝ այնպես անել, որ խելքին մոտ մի բան գտնվի, եւ ավագ լեյտենանտ Օգանովը փորփրում էր հիշողության ծալքերը՝ դուրս քաշելու մի թել, որով վարդապետին հնարավոր լիներ կապել հակահեղափոխության հետ:

Միտքը գործում էր տենդորեն՝ վարդապետն այստեղ է եկել Թուրքիայից՝ 1913 թվի աշնանը, պատերազմից մի քանի ամիս առաջ, հետաքրքիր է՝ Էջմիածինն ի՞նչ նկատառումներով է նրան Կովկաս հրավիրել: Այդ մտասուեռումից ավագ լեյտենանտ Օգանովը պայծառացավ՝ կարել է հենց դրանից էլ սկսել,- վարդապետին Կովկաս են հրավիրել, որպեսզի...,- Օգանովը քրտնեց, չէ, չի կպչում, վարդապետը կամավորական շարժման հետ հազիվ թե կապ ունենար: Ավագ լեյտենանտը հասկացավ, որ տանուլ է տալիս, իսկ դա կարժենար առնվազը պաշտոնի իջեցում, վատագույն դեքպում՝ օպերացիան տապալելու մեղադրանք եւ կալանք, եւ Վրթանես վարդապետ Սերեյդերյանը մի պահ նույնիսկ խղճաց նրան, բայց ի՞նչ կարող էր անել, եթե իրոք մաքուր էր խիղճը: Օգանովը երեւի զգաց վարդապետի հայացքը՝ շջրվեց. «Գուցե բա՞ն էիր ուզում ասել», - եւ նայեց ակնդետ, բայց դիմացինն արագորեն մտավ նախկին անվորդով կեղեւի մեջ. «Ոչ, ավելացնելու ոչինչ չունեմ»:-

Հինգ օր հետո Պետքաղվարչության ավագ լեյտենանտ Օգանովը կազմեց եւ Բաքու հղեց սույն բովանդակությամբ զեկուցագիր. «Յայտնում եմ, որ Գանձասարի Սուրբ Յովհաննես Մկրտչի վանքի վանահայր Վրթանես վարդապետ Սերեյդերյանը, ծնված 1863 թվականին, Թուրքիայի Վանի նահանգի Աղբակ գյուղում, նախկին թուրքահպատակ, մեղադրվում էր հակահեղափոխական գինված խռովությանն աջակցելու մեջ, սույն թվականի փետրվարի 17-ին Ստափանակերտ - Եվլախ խճուղու վրա, Բաքու էտապ ուղարկելու ժամանակ, Ասկերան գյուղի տարածքում հսկիչների ուշադրությունից դուրս մնալով, անսպասելի ցած է նետվել կառքից եւ տեղում մահացել ստացած վերքերից:

Մեղադրյալը հարազատներ չունի, դիակը հողին է հանձնվել դեպքի վայրում, մահվան մասին արձանագրությունը կցվում է: Ուղեկցող հսկիչները ձերբակալված են»:-

Յոթ տուն թուրքին ասել էին՝ Ղըրանք, այդպես իրենց համար կային ու չէր իմացվում՝ որտեղի՞ց են, ե՞րբ եկան: Գիտեին, որ 18 կամ 20 թվին, երբ օսմանլու թուրքը Ղարաբաղ էր մտել, ու գնդապետ Մեսյանը գյուղում շտաբ ուներ, դրանց վայ թե՛ դուրս էին քշել ներքեւները՝ Ալիաղալու՞, թե՞՝ Աղղամ, հետո խորհրդայինը որ եկավ՝ էլի կային:

Սպանություն - բան չէր խոսվում, չէր եղել կամ չէին հիշում խավար ժամանակներում կորած մանր-մուկ պատմությունները, որովհետեւ կուսակցական առանձին՝ դռնփակ, թե՛ համազրուղական ժողովների նախագահությունում Շահմար Յուսեյնովն իր պատվավոր տեղն ուներ՝ որպես «եղբայրական ազգային փոքրամասնության ներկայացուցիչ», եւ յոթ տուն թուրքը լիովին բավարարված էր այդ զգայացունց վերաբերմունքից:

Նրանց երեխաները դպրոցական մեր դասընկերներն էին, մեզ հետ սովորում էին բազմապատկման աղյուսակը եւ տոնական հավաքությունների ժամանակ մեզ հավասար արտասանում «Շունն ու կատուն», կամ՝ «Մեզ չի հասկանա օտարերկրացին, մեզ չի հասկանա սառն օտարուհին», - երբեմն նաեւ գերազանց էին

ստանում, ոչ պակաս հուզմունքով պատմում, որ 1915 թվականի ապրիլի 24-ին թուրք ջարդարարները Կոստանդնուպոլսում ձերբակալեցին Մեծատաղանդ գրող Գրիգոր Չոհրապին, իսկ նա մինչ այդ Թուրքիայի ներքին գործոց նախարար Թալեաթ բեյին ասել էր՝ «Ես պիտի օր մը ձեզմե հաշիվ պահանջեմ», - Եւ պարտադիր ավելացնում էին հուշագրողի վերջին բառերը՝ «Այդ վայրկյանին իսկ վճռված էր իր մահը», - Եւ դա ամենեւին էլ արտառոց չէր, որ գրականության ուսուցիչն ասում էր՝ Բաբուշե Սաբիր, արի դասդ պատմիր:-

Դպրոցում նրանք մեզնից մեկն էին, դասերից դուրս՝ Ղըրանց թաղի երեխա, որին պապը թուրքերեն ասում էր՝ գնա ոչխարը հանդից տուն քշի,- իսկ ինքը հայերեն ուսը ծուլ էր անում՝ «Պա, չէչմին», - սա մի քիչ զավեշտական էր Եւ տարօրինակ, որ Ղըրանց աղջիկներն ութերորդ դասարանից հետո մարդու էին գնում Սրխավենդ, Աղդամ, Գիյասլի, Եւ նրանց հասուն տղերքը նույն տեղերից հարս էին բերում անաղմուկ հարսանիքով, որպեսզի հետո դժգոհեն՝ «Շան քածդ հայերեն չգիտի էլ, որ մարդամեջ հանես», - Եւ այդ հարսները կամաց - կամաց, մի քիչ ծիծաղելի, սովորում էին գյուղի լեզուն՝ թուրքերենի հետ խառը:

Նավրուզ տոնի երեկոյին նրանցից մեկը խարույկ էր վառել, վրայից ցատկում էր, հարեւանը կանչեց՝ «Ախչի, կամաց, կիսանձվի», - կատակ էր, բայց էդ քյոսալարեցի Մալեյքյան, որ հարս գալուց առաջ Ստեփանակերտ մետաքսկոմբինատի բանվորուհի էր եղել Եւ հայի մի թեթեւ շնորհք ուներ, տարավ բերեց, թե՛ «Պէնս օտիս», - ստեփանակերտցու լեզվով ասաց, իսկ նրա Ջըհանգիր ամուսինը թողել, գնացել էր Ռուսաստան, Եւ հարեւանը հասկացավ՝ դրա ուզածն ինչ է: Շրջվեց, մտավ տուն:

Ղըրանց մեկը բանակից ռուս հարս էր բերել, Եւ Շահմար Յուսեյնովի օջախում խեղճը չէր իմանում՝ սրանց ո՞ր լեզուն սովորի, հարցրել էր տեգրոջը. «Ֆարման, չտո՞ տակոյե կոչ».- քոչի մասին էր հարցրել, հանդապահ Ֆարմանը դժվար հարցի տակ կուչ էր եկել, մտածել-մտածել՝ իր իմացածով թարգմանել էր. «Կլավա, նապրիմեր՝ յա բարան, Տելման,- դա Կլավայի ամուսինն էր,- բարան, տը բարան,-հետո անհարմար էր զգացել՝ ավելացրել էր

նաեւ մորը,- Խաթուն տոժե բարան, Էսո վմեստե նազըվայետոյա կոչ», - ու հաջորդ օրն էլ պատմել էր, բայց ռուսը դժբախտ էր, երեխա չէր ունենում, ուղարկեցին հորանց, եւ Թելմանը գնաց Շահբուլաղի քարհանքերում աշխատելու, այնտեղ էլ մոտիկ Գիյասլուից աղջիկ առավ ու մնաց: Տուն էր շինում, Խաչենից ավագ էր բարձում, քարհանքի բուլդոզերը թափոնները հրել էր ձորը՝ մեքենա ու Թելման թողել տակը: Գյուղում ասում էին՝ Աղդամի թուրքերն են սպանել, Ղըրանց Թելմանին թուրքերը սպանել են , - իբր Թելմանը Շահբուլաղի հայ կալանավորների հետ լավ է եղել՝ դրա համար: Իրենք՝ Ղըրա՞նք էին հորինել այդ պատմությունը, թե մեջն իրական բան կար՝ չպարզվեց, բայց դաշտի թուրքերը Ղըրանց այնքան էլ թուրք չէին ճանաչում, իսկ մեզ համար նրանք թուրք էին, ճիշտ է՝ ոչ ավարառու կամ ասպատակ, բայց իրենց թաղի մոտից անցնում էինք զգույշ, եւ արդեն թոշակառու, ղեկավար պաշտոններից պատվավոր հեռացած՝ Շահմար Զուսեյնովը շրջանի առաջ հարց էր բարձրացրել. «Էդ ինչի՞ մերոնք միայն տավարած ու հանդապահ պիտի դառնան, իսկ ուրիշները՝ ղեկավար, խորհրդայինը հավասար է նայում», - ու գտել էր նաեւ պատասխանը. «Էդ նրանից է, որ մեր երեխեքը հայերեն են ավարտում, Բաքու նրանց չեն ընդունում, ասում են՝ հայ եք, Երեւան էլ՝ թե թուրք եք՝ գնացեք Ադրբեջան,- ուրեմն ճիշտն էն կլինի, որ Ադր. ՍՍՌ-ում ծնված, Ազարբայջանի հացով մեծացող մեր երեխեքը սովորեն ազարբայջաներեն»:-

Մեկ՝ չանցավ, երկու՝ ավելացրին, որ գոնե սարերում ոչխարած ու նախրապահ թուրքի երեխեքը թուրքերեն սովորելու իրավունք ունենան:- Ղեկավարությանը սա տրամաբանական թվաց, հարցրին՝ «Քանի երեխա կա սարում»:- Պատասխանը թուրքի՝ դաժան էր. «Մենք մեր երեխեքին չենք հաշվում, ոչխարն ենք հաշվում, ինչքան ուզենք՝ կա, կգտնվի»:- Տնօրենը քրտնեց ժողկոթբաժվարի մոտ, հազար անգամ ծամծմեց նախօրոք անգիր արած խոսքը, բայց վերջում ստացվեց այսպես. «Դրանք մի դասարանկոմպլեկտ են դառնում, հաստիք-բան պահելու խնդիր կա, մինչեւ չորրորդ թող սովորեն», - եւ ժողկոթբաժվարը ձեռքը թափ տվեց. «Տիրումերն էլ, ձեր գյուղն է, ոնց որոշեք՝ ես համաձայն եմ»:-

Եւ օգոստոսին գրությունն առաքվեց Բաքու առ այն, որ եղբայրական ադրբեջանցի փոքրամասնության մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության գործն արդյունավետ կազմակերպելու նպատակով հարմար է, որ Հացուտից մինչեւ Գիժ սար՝ բոլոր հովիվների, նախրապանների, հաշվառք-հաշվետարների եւ կոլխոզային արտադրության այլ առաջավոր կազմակերպիչների դպրոցահասակ երեխաները հավաքվեն: Այնքան արագ կազմակերպվեց, որ Շահմար Հուսեյնովի Ֆարման տղան գյուղամիջում հռչակեց. «Այ հիմի հավատս գալիս է, որ թուրքի համար Մեսրոպ Մաշտոցը տամեր ստեղծած կլի», - բայց Նորաբաց այդ դասարան Ղըրանք երեխա չուղարկեցին. «Եդ էր պակաս», - եւ չհասկացվեց՝ նրանց քառամյա կրթությունն անպատվաբեր թվաց, թե՞ որ իրենց երեխեքը քուլանի սարեցու հետ մի նստարանի էին նստելու, բայց տնօրենի հոգսն ուսուցիչն էր՝ թուրքերենի, որ չկար, հարցրեց. «Ո՞վ գիտի թուրքերեն»:- Ծիծաղեցին՝ «Թուրքերեն մենակ ընկեր Միսնասյան Հովհաննեսը չգիտեր, քանի որ Հայաստանցի ու որբ էր, զոքանչն ասել էր՝ որ Աղդամ ցորեն անելու ես գնում, կիլոն չորս մանեթից թանկ եղավ՝ պետք չի, թուրքը չորսին ասում է «դորդ», - Միսնասյանը աղդամեցուն հարցնում է՝ կիլոն ի՞նչ արժե, - թուրքը, թե՞ «ուչ մանաթ», - այսինքն՝ իրեք մանեթ, չի հասկանում, ասում է՝ «ուչ-մուչ չգիտեմ, կիլոն դորդ մանեթով կծախե՞ս», - եղպես բարիչում է թուրքի հետ, հետո որ բացատրում են՝ խաբվել է, հայ մարդ, էլի, արդարանում է՝ «Բա որ ծակ մեշոկս թողել եմ մոտը», - խեղճին էնքան ծաղրեցինք՝ գնաց, բոլորս էլ գիտենք»:- Ասաց՝ «Ալըշ-վերիշի լեզու չէ, գրական թուրքերեն ո՞վ գիտի»:- Չարմացան՝ «Թուրքի գրականս ո՞րն է,»:- Վերջը մեկին գտան, որ Շուշի մանկավարժական ուսումնարանում թուրքերեն մի քանի ժամ դասի էր նստել, վստահեցրեց, որ գիտի, հատուկ գրական թուրքերեն է ուսումնասիրել եւ որպես ապացույց արտասանեց Վազիֆի բանաստեղծություններից մեկը՝ «Դուռնալար», այսինքն՝ «Կուռնկներ» եւ բացատրեց նաեւ, որ Վազիֆը եղել է Փանահ խանի քարտուղարը, տնօրենը հարցրեց. «Որ ուղարկեմ որակավորման ինստիտուտ ու քեզ ստուգեն՝ կլինի», - ծիծաղեց՝ «Խի չի լինի, ստուգողը թուրք է», - ասաց՝ «Հա,

բա հո հայ չի»- Էլի խնդաց՝ «Թուրքի քննության ձեւը ես լավ գիտեմ, բայց Էդ դասարան կոմպլեկտը լրիվ պիտի ինձ տրվի, հետո Էլ՝ ջոկատավարությունը, քանի որ Շուշի երեք տարի ճամբարի դաստիարակ եմ աշխատել»,- Եւ ընկեր Սերգեյ Ավետիսյանը եղավ թուրքերենի դասատու, քանի որ Բաքվի հեռակա մանկավարժականի չորրորդ կուրսի ուսանող էր, գումարած՝ ընտանիքի հոգսը Եւ, ուրեմն, երկու հաստիքը հազիվ թե հերիքեր աճող ծախսերին, իսկ հանդապահ Ֆարմանը հայտնագործեց, որ թուրքաց լեզվի տառերն ստեղծելիս Մեսրոպ Մաշտոցը մի քիչ արդեն ջղայնացած է եղել, անհասկացող մեկի գլխին բամփել է, Եւ դրանից է, որ թուրքերեն լեզվի որոշ հնչյուններ քմայնացած են՝ իրենց տոհմի նախնին սովորելու հարցում գլուխ չունեն, ուսուցիչը խփել, նրա լեզուն թվատել է, ավելացրեց՝ «Մաշտոցը որ Մաշտոց էր, Էլի բան չի հասկացել թուրքից, մեր Եւ Սերգոն քուլանի լակոտին ի՞նչ պիտի սովորեցնի»:-

Առաջին քառորդի ստուգողական դասալուսմներին պարզվեց, որ երեխեքի իմացածը մի կենտ երգ է.

-Ծափիկ-ծափիկ ծիրանի,
Ոսկե խնտր նմանի,
Ոսկեկանկուր մազերը

Յովը թել-թել կտանի,- Եւ ընկեր Ավետիսյանը շատ հանգիստ պատճառաբանեց, որ երեխեքը թուրքերենից մահու չափ ձանձրանում են, ասաց՝ «Չե՞ք հավատում՝ իրենց հարցրեք»,- Եւ նրանք խմբով հայտարարեցին, որ «Ծափիկ-ծափիկը» շատ լավ երգ է, հինգեր Ավրթըսյանը՝ հրաշալի դասատու, ու եթե հանկարծ ուրիշը գա՝ իրենք դպրոցից կհեռանան, կգնան սար: Տևորենը մի քիչ վրդովվեց, Սերգոն ասաց. «Սրանց ո՞վ է ստուգելու, թուրքի շատ պե՞տքն է՝ երեխան սովորում է, չի սովորում, խերից փախած հո չես, ամեն դասաբաշխման գլուխ ես կտորում, հրես՝ պատրաստի հաստիք, դասաժամ, ռոճիկ, Էսոր ես եմ, վաղը կտաս ուրիշի, եկամուտ է, Էլի, հացին չեն թքի»:- Տևորենը համաձայն էր, բայց որ հանկարծ մեկը գրե՞ց:-

-Չեն գրի,- վստահեցրեց Սերգոն,- քանի ես եմ՝ չեն գրի, հետո Էլ կմոռանան: Արի քեզ մի բան պատմեմ. ուրեմն, Ես մեր Մինաս-

յանը որ գնում է Հայաստան, մտածում են՝ «Մարդը վաստակավոր ուսուցիչ է, ճիշտ է՝ Ադրբեջանի, բայց որ թուրքը մեր որբին էդքան պատիվ է արել՝ վաստակավորի կոչում տվել, մենք թուրքից պակաս ենք»,- վերցնում՝ նշանակում են Բջնի մեծ գյուղի միջնակարգի դիրեկտոր: Դե, գիտես՝ մեծ դպրոց, եկվոր դիրեկտոր, չեն սիրում չէ՞, մտածում են՝ գլխին մի խաղ խաղան, ուսմասվարն աշակերտներին ասում է՝ «Երեխեք, վաղը որ հավաքվեք առավոտյան մարզանքի, ընկեր Մինասյանի ներկայությամբ ես ձեզ հարցնելու եմ՝ «թուրքը մեռնու՞մ է, թե՞ սատկում», - կասեք՝ «Թուրքը սատ-կու-մէ, լավ»,- էսպես պայմանավորվում է, հաջորդ օրը՝ փորձում, երեխեքն էլ խմբովի գոռում են՝ «Թուրքը սատ-կու-մէ», - Մինասյանը ջղայնանում է, ուսմասվարին հայտարարում գրավոր նկատողություն, սա դիմում է ժողկրթբաժվարին, կանչում են Մինասյանին՝ «Բա ամոթ չի՞, բա չգիտե՞ք, որ թուրքը չի մեռնում, թուրքը սատկում է», - խեղճը գժված մտնում է ռայկոմ, թե՛ «Ընկեր քարտուղար, սա ի՞նչ ամոթ է, ժողկրթբաժվարն ասում է՝ թուրքը սատկում է», - էս քարտուղարը տեսնում է՝ չէ, սա թեկուզ հայ, վանեցի որբ, բայց մեջը հայություն չկա, դիտողություն է անում. «Ընկեր Մինասյան, մենք ձեզ դպրոց ենք վստահել, որ երեխա կրթեք, այլ ոչ թե անիմաստ վեճի բռնվեք ուսուցիչների հետ, Ձեր ի՞նչ հոգսն է՝ թուրքը կմեռնի՞, թե՞ կսատկի»:- Մի տարի համբերում են, հետո Բջնիից հանում՝ ուղարկում են Գյումուշ՝ ութամյակի դիրեկտոր: Էդպես է, սրանք էլ թուրք են, չէ՞, թող իմ թշնամությունն էլ են լինի, որ թուրքին հայերեն եմ սովորեցնում, 20 թվին Շուշի 30 000 հայ են սպանել, տների ավերակները մինչեւ հիմա կան»:

Բայց տնօրենը Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտն ավարտել՝ ուղարկվել էր Նախիջեւան, ընդհատեց՝ «Լավ, լավ», - եւ մի երկու տարի թուրքաց դասարանն իրոք լրացուցիչ դասաժամ էր, աշխատավարձ, մինչեւ Բաքվից որոշեցին, որ երիտասարդ ուսուցիչ Իլյա Բախշալիեւը պիտի անպայման իր վրա վերցնի քուլանի երեխաների կրթության եւ դաստիարակության գործի բեռը:

Իլյան եկավ, բայց դասի հետ գլուխ չդրեց: Հայրը Նարեշտար

նախագահ էր, ոչխարի վարի՞չ, կարգին ապրուստ կար, բանակի խնդիր չլիներ՝ դասատվությունն ինչի՞ն էր պետք: Ասաց՝ «Կլինեմ կոմսոմուլի աշխատող»:- Եղավ, իհարկե՝ բանակի զորակոչից ազատվելու գնով: Իլյայից մնաց այն, որ հարցրել էին՝ Սամեդ Վուրդունին գիտե՞ս, ասել էր՝ «Յա, մեծ բանաստեղծ է», - ուզեցել էին ճշտել՝ ինչ գիտի, Իլյան դժգոհել էր, «Ախր ո՞ր մեկը հիշեմ, տնաշենի տղեն էնքան երկար բաներ է գրել»:- Թարգմանված Վուրդուն դպրոցական գրադարանն, իհարկե, ուներ, ցույց էին տվել «Դարի դրոշակակիրը» պոեմը, Իլյան զարմացել էր՝ «Բահ, սաղոլ Վուրդուն, Էրմանիջա յազըբ, Է՞»:- Ուսուցչանոցը պիսկուկում ծիծաղել էր եւ գլխով արել. «Այո, Սամեդ Վուրդունը մեծ, ինտերնացիոնալիստ բանաստեղծ է, թուրքերենին հավասար հայերեն էլ է գրել»:

Դա էր, հետո հետո եղավ Բաբու-Վանք երթուղային ավտոբուսը, հեռուստացույցի անընդմեջ թուրքերենը, Բաքուն, ուր պատերազմից հետո նավթահանքեր քշված տղաների սերունդը վերջապես դուրս էր գալիս բարաքներից, ժողովրդի թշնամի ասված եւ Շուշիի բանտում անդատուդատաստան մորթված՝ Մուշեղ Աղաբաբյանի Սերյոժան մետրոպոլիտենի հայտնի թունելագործ շինարար էր, Յեյդար Ալիեւի ձեռքից Լենինի շքանշան եւ չորս սենյականոց բնակարանի բանալիներ էր ստացել, եւ ամռան դպրոցական արձակուրդներին նրա երեխաները գյուղ էին գալիս հատուկ մեքենայով՝ ուրախացնելու իրենց տատին, որ Ղայբալի շենի փրկվածներից էր: 1920 թվի կորորածների ժամանակ Մուշեղն այդ աղջկան գտել էր ավերակներում եւ կին առել, իսկ գյուղի նրա Անուշավան տղան Ֆարման Մուստաֆաեւի հետ խմում էր տնաքաշ արաղ եւ հայիոյում բուլորին, որովհետեւ պատերազմի տարին կոլխոզի ձիապանն էր եղել, Բեկնազար Ղուլյանի նախագահական հովատակը քացով տվել՝ թափել էր աչքը, իսկ այդ միջակայքում շիլ Ալըշան Գարաեւի խրճիթից տղաները երեք տուն էին ստեղծել՝ մեկը մեկից շքեղ:

Սաբիր Բաբուշեւը Ստեփանակերտի ինտերնացիոնալ մանկավարժական ինստիտուտի ուսանող էր: Կավարտի՝ դպրոցը մաթեմատիկայի նոր ուսուցիչ կունենա, բայց Բաքվի նախարա-

րական հանձնաժողովը բաշխել՝ մաթեմատիկայի բաժնի բոլոր տղա շրջանավարտներին նշանակում էր տվել Ղազբեսան, Շամխոր, Խանլար՝ գևան հայկական դպրոցներում ուսուցիչ աշխատեն: Նրա պապ Շահմար Զուսեյնովը կար, նամակ գրելու չափ գրագետ չէր, բայց գյուղում ինչու՞ չափտի գտնվեր սրտացավ մեկը եւ նրա անունից հեռագիր չուղարկվեր հենց ուղիղ լուսավորության նախարար Էլմիրա Գաֆարովային առ այն, որ Ղարաբաղի թուրք ազգային փոքրամասնության ներկայացուցիչն էր ինչու՞ պիտի Ազարբայջանի հայ փոքրամասնության երեխեքին մաթեմատիկա սովորեցնի, չի՞ կարելի, որ գա Ղարաբաղ աշխատի, իսկ Ղարաբաղի հայ տղերքն Էլ թող իրենց հայ երեխեքին Ղազբեսան Է, թե Շամխոր՝ դասավանդեն:

Ժողկրթաժնում հարցրին՝ «Որտե՞ղ ես աշխատելու»:- Սաբիրը մտածեց, թե՛ «Մանիքլու»:-

-Դու, ախր, հայերեն ես ավարտել, Մանիքլուն ադրբեջանական գյուղ է, - եւ Սաբիր Բաբուշեւը գիտեր դա, բայց ՝ եղած- չեղած՝ մաթեմատիկա է, թուրքերեն Էլ կարելի է բացատրել, էդքան թուրքերեն Ստեփանակերտի ինտերնացիոնալ մանկավարժականում նրան մաթեմատիկայի ամբիոնի վարիչ Նարիման Մամեդովը սովորեցրել էր, հետո Էլ՝ էդ ո՞վ մտածեց, թե Սաբիրն ամբողջ կյանքում դասատու է աշխատելու, երիտասարդ տղա է, անբիծ կենսագրությամբ՝ ժողովուրդների բարեկամության մարմնացում:

Երկու, թե երեք տարի գնում, շաբաթավերջին գալիս էր, հետո կոմերիտմիության շրջկոմի քարտուղար Սաբիր Բաբուշեւն արդեն խորհուրդ էր տալիս գրականության դասերին ավելի շատ խոսել ոչ թե պատմական անցյալի, այլ՝ Աֆղանստանում իրենց ինտերնացիոնալ պարքը կատարող խորհրդային զինվորների մասին, եւ դժվար էր: Աֆղանստանից նամակներ ստանում էինք, տղերքից մեկը գրում էր, որ իրենց արգելված է տեղի ջրերից խմել, տալիս են շշով «Բորժոմի», - եւ՝ ոչ մի սխրագործություն, մնացածը զինվորական գրաքննությունը երեւի արգելում էր: Ավելի շատ գրում էր գյուղի իր հիշողություններից, այդ նամակներում Աֆղանստան չկար, պահում էր՝ գա, պատմի, իսկ Ղը-

րանց երեխաներն արդեն դասագրքի «թուրք ջարդարար», «հայոց եղեռն» ձեւակերպումները ծամծամում էին գրականության դասը հայիոյելու պես եւ ութերորդն ավարտելուց հետո գնում էին Աղդամ՝ գյուղատնտեսական տեխնիկում, պրոֆտեխուսումնարան ընդունվում, բայց նրանցից մեկը, հանդում երբ կեսօրահացի էին, լեզվից թռցրել էր, որ Ղարաբաղից բանակ տանում են ամենավատ տեղեր, դրա համար են տղա երեխեքին Աղդամ հաշվառման դրել՝ «Մեր էս Լենքորանի - բանի գնդերում ծառայեն՝ գան»:- Եւ մահու չափ վիրավորական էր, որ Արտուշ Միրզոյանի Մելսիկ տղան Աֆղանստան է, ուրիշները՝ Սախալին կամ Բուրյաթիա, իսկ Ղըրանք՝ էս մոտիկ տեղերը:

Խորթացման այդ տարիների մեջ զրնգում էր Շոֆեր Գարաբեդ՝ Բաքու-Վանք երթուղու վրա, եւ շատ գեղեցիկ էր, վայելուչ, որպեսզի ինչ-որ մեկը հանկարծ կասկածեր, թե նա է պատճառը, եւ սարերը, ֆերման, այդ Խլոքոքմասվող գողի հանկարծական ասպատակությունները՝ Գիժ սարից մինչեւ Հացուտ՝ դեպի Աղդամի մորթարանները, ուր քշվում էր անասունը մեկ-մեկ, կամ՝ որքան կպատահի, ինչքան տերն անփույթ, անտարբեր կգտնվեր, եւ Յադուբ նրա եղբայրը՝ լքված գոմերի ծածկի տակ՝ երկու կանանցով, որ ասում էին՝ քույրեր են, եւ նրանց բոլորի զուսպ համերաշխությունը, եւ ցմփոր Մայիլ Ալլահվերդիեւր, եւ ճանապարհաշինարար Գանիմեթը՝ Գյանջա - Աղդամ- Մանիքլու-Սրխավենդ - Նարեշտար գծի վրա, որով երկու հազար տարի անընդմեջ նահանջել էր Եսային՝ բոբիկ, արնածոր կրունկներով՝ հայացքը Կուր-Արաքսի միջակայքի իր Առանա կորսվող դաշտի մշուշներին:

...Խանութը Մեծ քոչի ճանապարհի վրա էր: Եթե մեկնումեկը թերթած լիներ պատմության մատյանները, կիմանար, որ երեւի հենց այդպես, բայց՝ հակառակ ուղղությամբ, դեպի արեւելք, ապա հյուսիս է ձին վարել Խաչենի ինքնակալ իշխան Հասան-Ջալալ Դոլան՝ գտնելու մոնղոլների Մանգու խանի նստավայր Ղարաղորումը, որպեսզի միջնորդ դառնա աշխարհակալի եւ Կիլիկիայի լեռներում երկիր հռչակած՝ իրեն արյունակից «թագավորի» միջեւ, մինչեւ «կխաղաղվեր բանս աշխարհի», - կամ թե՛՝ նույն փոշոտ-քարկեծ անող երթով են նրան կառափելու տարել Բաղ-

դա՞դ, թե՞՞ Երուսաղեմ,- ոչ ոք չէր կարդացել, եւ ոչինչ չէր իմացվում: Աշխարհն ստույգ է մարդկանցով, մնացածն ամայութիւն է՝ նման օվկիանոսի դատարկ անսահմանությանը, որ գոնէ տրվում է ծովագնացության գիտելիքներին, մինչդեռ անցյալը տիեզերքի անստույգության պէս է: Միակ հաստատունը Մեծ քոչի երթն էր՝ տարին երկու անգամ՝ Մուխանքից՝ Գիժ սար եւ՝ հակառակ ուղղությամբ: Եւ եթէ հեռավոր անցյալում եղել՝ մի անգամ էլ Յասան-Ջալալ Դուլա իշխանն էր տափաստան իջել, ապա շատ դարեր հետո արդեն գնացողն էլ էր քոչը, վերադարձողն էլ: Նրա ճանապարհի վրա մի քանի սակավաբնակ գյուղ դեռ համառորէն կար, իրենց համարում էին բնիկ: Այնքան, որ Մեծ քոչի հետ երբեմն մահակակռիվ էին տալիս, երբ նրանք ոչխարը գիշերով արտերն էին քշում՝ արածացնելու, իսկ ավելի հաճախ՝ երբ հարկ էր լինում մեկի ձին պայտել, որովհետեւ Մեծ քոչը նման անհեղինակավոր հոգսը թողել էր նստակյացներին, որպէսզի սրանք ձմեռն ուտելու պանիր-բան ունենային: Ոչ ոք չգիտեր, թէ Մեծ քոչը ե՞րբ էր հայտնվել իրենց կողմերում, եւ Մեծ քոչն էլ չգիտեր, բայց ստույգ էր, որ մեկը պիտի տարին երկու անգամ՝ գարնանն ու աշնանը, արտուարոտ կլպելով բարձրանա-իջնի, մյուսը թոնթորալով, անիծելով, սպասի,- դա հաստատ էր, ինչպէս՝ որ ձմռան ցրտերին հաջորդելու է աղվամագոտ գարնանասկիզբը, հետո մարգագետինները ծփալու են կապույտ ՎՆկարմիր առվույտածաղիկներով, ապա ձորն ի վեր բարձրանալու է աշնան առաջին մառախուղը, եւ սարերում Ուղտը շլինքը դեպի Մուխանք ծռած՝ մռլնգալու է, եւ դա միակ ստույգ նշանն է լինելու, որ Մեծ քոչը պիտի իջնի դեղին տափաստանները, որտեղ ձյուն երբեք չի նստում, եւ երկիրը վերստին կանաչում է՝ հենց որ սկսվում է մանրահատիկ անձրեւի ժամանակը:

Խանութն այդ ճանապարհի վրա էր, եւ անցյալի մասնավոր դարբին-ատաղձագործները կային՝ մի ընդհանուր տանիքի տակ, որ նախ «արտել» էր, հետո՝ «կենցաղսպասարկման կոմբինատ», եւ նախկին սայլ կապողն իրեն «կահույքագործ» էր ասում, տաք երկաթ կռնակով՝ «եռակցող-գողող»: Չէ, վերջին պայտամը դեռ մնում էր: Փուքսն էլեկտրական հովհար էր, մյուս

ամեն ինչն՝ իսկական, որովհետեւ, ճիշտ է, Մեծ քոչն արդեն գնում-գալիս էր հիմնականում բեռնավտոններով, բայց նրանց մեջ ձի խաղացնողն էլ դեռ կար, եւ շահել մեկի խելագար վարձից ենթադրվում էր, որ նա «կլինի շիրվանլուեցի Ջաֆարի թոռը»:- Իսկ եթե ոչ՝ ուրեմն Ջաֆարն ունեցած է եղել էլի մի կին: Կամ, գուցե, Մեծ քոչի բոլոր կանայք իրենն էին՝ բնիկներն անտեղյա՞կ էին: Հին ճանապարհի վրա ցից քարեր էին հանդիպում. «Տակը թուրք է թաղած»,- քանի որ Մեծ քոչը երբեք սման մանրուքների վրա ժամանակ եւ, մանավանդ, արցունք չէր ծախսել՝ մեռնողը հողին էր հանձնել՝ որտեղ որ մահը գտել էր իր հունձքը, վրան մի շրջած՝ սուր կողմը դեպի երկինք, քար էր դրել եւ գնացել ոչխարի, ավարառության եւ ավազակության իր գործին: Շատ տարիներ հետո սովորել՝ գրկանոց երեխեքին արդեն թողնում էին տափաստանի իրենց տներում, բայց այդ ամիս տեւող երթում, մեկ է, չնախատեսված պատահարներ լինում էին երեւի, բայց Մեծ քոչն արձակ-տեսանելի էր միայն դրսից: Խորքում ի՞նչ կապ ու հարաբերություններ ուներ, ով ու՞մ թշնամին կամ բարեկամն էր, վրանի տակ որ Ղառին գիշերն ի՞նչ էր անելու՝ մութ էր՝ ինչպես պայծառ արեւից ընդգծված սեւ էր երեւում հովվի ոչխարենին որ, գուցե, կարված էր եղել շեկ գառան մորթուց:

Ձորահովիտն ի վեր կամ վար՝ Մեծ քոչը շաբաթներ շարունակ ձգձգվում-տարածվում էր, բռնում արոտները, միլիոնավոր կճղակներ դոփում էին ճանապարհի սուր խճերն, ու տաղտկալիորեն հոսում էր հոտը՝ միաձուլյ, միատեսակ, որ զարհուրելիորեն գեղեցիկ էր, գեղեցկորեն՝ սարսափազդու՝ մանավանդ եթե երեխա էիր եւ գյուղից իջել՝ արհեստանոցների մետաղացանցե չափարի ետեւից էիր նայում: Բայց ճամփամերձ գյուղերում եթե դպրոցական երեխա՝ մենք կայինք, ուրեմն բնիկներն ունեին նաեւ մի քիչ իշխանություն, ավելի շատ՝ Մեծ քոչի հանդեպ հարգանքախառն ատելություն, նրա հաստատուն ընթացքի վրա՝ թաքուն նախանձ, որ հանդապահի ու հովվի մահակակռվի հետ սրվում, «արյան ու վնասի գնի» փոխուտորսի հետ դարձյալ մարում էր՝ մինչեւ հաջորդ գարուն-աշուն, եւ ոչ մի օրենքով չսահմանված, միայն իրար հանդուրժող կենցաղի չգրված կարգով պահպան-

վող՝ այդ փոփոխական վարքը կարգավորվում էր Տիրուհու խա-
նութի հետևախորշերում, ուր ընդմիշտ թշնամի կողմերին ժամա-
նակավոր զինադադարի էր բերում լիազոր Յաջի Վելիեւը:
Հին՝բաղիրովաբերիական ժամանակներում միլիցիայի լիազո-
րին ասել էին «խուդիեւ», եւ անունը դարձել էր հասարակ. ով մի
քիչ հրամայական էր՝ «խուդիեւ» էր՝ կոլխոզի բրիգադավար լի-
ներ, թե Փերմայի վարիչ կամ էլ՝ տան խստաբարո տղամարդ:
Յաջին, չէ, «խուդիեւ» չէր, եւ ավագ լեյտենանտի ուսադիրները
նրա վրա ծիծաղելիորեն անհամապատասխան էին, համազգես-
տը՝ միշտ կեղտոտ, սապոզները՝ փոշոտ, եթե ամառ էր, իսկ աշ-
ուն-ձմեռ-գարնանը՝ ցեխակուլով: Որտեղի՞ց էր սկսվում լիազորի
կենսագրությունը՝ տարբեր բաներ էին ասում: Միայն ճիշտ էր, որ
Յաջին տեղացի չէ, բնիկ չէ, ոչ էլ՝ Մեծ Քոչի ճանապարհի վրա
հարյուրամյակների հետ մշտաբնակ դարձածներից: Նա միայն
միլիցիայի տեղամասային լիազոր էր եւ դեռ երբեմն էլ շռայլու-
թյունը բռնում՝ բնիկների լեզվով էր խոսում. «Ըստեղ գիրի վերջի-
ագետ, գիրագի օրէն էգուցը կիգաս Մարդագերդ»,- երբ պատա-
հում՝ որեւէ մեկից ինչ-որ դեպքի առթիվ նախնական բացատրու-
թյուն էր վերցնում, որ բնիկը հասկանում էր այսպես. «Գրածդ քոռ
գրոշ չարժե, երկուշաբթի կգաս՝ շրջկենտրոնում կարգին կբա-
ցատրես»,- որովհետեւ չէր կարող կարդալ, թե ցուցմունք տվողն
ինչ է «հանգամանալի շարադրել»: Կամ թե՛ ի՞նչ նշանակություն
պիտի ունենար կոլխոզի հանդապահ Շալիկո Անդրեասյանի բա-
ցատրությունն առ այն, որ «Պուշկինոյի շրջանի Աշաղը Սեյիդահ-
մեդլի գյուղի ոչխարի հոտը ս.թ. հունիսի 5-ին...» եւ այլն, որովհե-
տեւ հազար տարվա կարգով Մեծ քոչը, ուզում ես՝ ճանապարհին
հարյուր Յաջի Վելիեւ կանգնեցրու կամ անձամբ ՆԳ շրջբաժնի
պետ, միլիցիայի փոխգնադպետ Գրիգորի Օսիպովին, միեւնույն
է, Մուխանքից՝ Գիժ սար տասնյակ ու տասնյակ վերստերով ճա-
նապարհը չի անցել եւ չի անցնելու անարածել, քանի որ մարդ
եթե տնից հաց է վերցնում կամ ալյուր, եւ կանայք սաջի վրա
«էծամորի» են թխում- ուտում են, ապա ոչխարը քարուփոշի կամ
ցեխ հո չի՞ ծամելու. ոչխարը պետական կարելոր գոյություն է,
երկրին տալիս է բուրդ, կաթուպանիր, միս, կաշի, ոսկոր, եւ աշա-

ղըահմեղուեցին իր հոժար կամքով չի, որ տուն-տեղ անտեր թո-
ղած՝ երեք ամիս սարերում շան տանջանք է քաշում, թե ինչ է՝ իր
հեռավոր նախնիք ոչխարապահ, բնիկները՝ փայտ տաշող կամ
երկաթ ծեծող են եղել: «Եթե կարող ես՝ քո ոչխարն ունեցիր, այ
ախպեր, ինձնից ի՞նչ ես ուզում, առնելիքդ ասա՝ տամ, ու՞ր ես
անմեղ տեղը մարդուն արյուն քսում»:- Ինչ որ ժամանակ, գուցե,
Մեծ քոչը բնիկների հետ վեճերը լուծել է «երկկողմ համաձայնու-
թյամբ՝ դու իմ ոչխարին տալիս ես էսքան արոտ, ստանում էսքան
պանիր, միս, բուրդ, ցորեն, ինչ զահուրմար որ չունես»,- բայց դա
եղել էր վաղու՛ց՝ նախախուղիեական հեռուներում՝ մինչեւ
կհայտնվեր համազգեստավորված միջնորդը, որի պաշտոնա-
կան անունը «միլիցիայի տեղամասային լիազոր» էր, գործնա-
կան իրականության մեջ՝ Յաջի Վելիել՝ «ածուխից մի քիչ սեւ»,
ցմփոր, ֆսֆսան քթով, ուղտի պես բարձրահասակ եւ կռնատա-
կին կաշվե պլանշետ- թղթապանակ ունի, աջ թուլակողի վրա՝
պատյանավորած «նագան»:

Մեծ քոչի եւ բնիկների՝ օտար աչքից հեռու, ականջից ծածուկ
հանդիպատեղին Տիրուհու խանութն էր, որ տեղական սպառնո-
պը հատուկ ճանապարհի վրա էր բացել՝ «ապահովելու աշխա-
տավոր անասնապահների կարիքները» եւ այդ գործի վրա
առանձին մատակարար կարգել Մայիլ Ալլահվերդիելին: Մեծ քո-
չը, չէ, բնիկների «անհավատ ձեռքից» արդեն չէր զզվում: Իր շա-
քարն ու թեյը նա առնում էր տոպրակ- արկղերով, բայց ապրան-
քը հո տեղում չէ՞ր պահեստավորվում: Ծանր գնացքաշարերը
ճննչոցով կանգնում էին ինչ-որ տեղ՝ Եվլախ- Բարդա- Աղդամ գծի
վրա, եւ մատակարարի անունը Մայիլ Ալլահվերդիել էր լինելու,
որպեսզի այնտեղ վստահանային, թե մինչեւ վերջին ծխախոտը՝
ինչ որ դուրս է գրվում բնիկների հնարած սպառնոպի անունով,
մտնելու է Տիրուհու խանութ, որպեսզի ճամփից հոգնած շիրվան-
լուեցին առնի՝ հետը Գիժ սար հասցնի երեք դժվար ամսվա իր
լրիվ պաշարը՝ այլուրը՝ զուտ առաջին տեսակի, շաքարը՝ բերված
Ուկրաինայից, թեյը՝ հնդկական, քաղցեղենը՝ Կիրովաբադի, ծխե-
լիքը՝ բուլղարական ու մնացած բոլորը՝ կանանց ծաղկանկար գլ-
խաշորն էլ՝ վրադիր, եթե մեկնումեկի սրտից բխի՝ հարսներին

նվեր անի: Խանութն այդպես տարին մեկ-երկու ամիս մեղվափեթակի պես բզզում էր: Մյուս բոլոր օրերին Տիրուհին երեւար՝ չերեւար, սպառնոտի համար կարելու չէր, տարվա ողջ առետուրն արվում էր Մեծ քոչի երթուղարձի հետ: Իսկ ձմռանը սպառնոտի «ավտոխանութը» շաբաթը մեկ պարբերականությամբ ակոսում էր Մուխանքի ոչխարանոցների ճանապարհները, որպեսզի աշխատավոր անասնապահները հիմա էլ ձմեռանոցներում ապահով լինեն թեյ-շաքարի ու հարկավոր ուրիշ բաների հոգսից: Թե ինչու՞ էր բնիկների սպառնոտն սպասարկելու Մուխանքի ոչխարապահական ձմեռանոցների չարքաշ աշխատավորությանը, տեղում հնարավոր չէր Ժղանովի շրջսպառնոտի միջոցով առետուր կազմակերպել,- դա հանելուկ էր, որ օրերից մի օր փորձեց լուծել Մանվել Չայրապետյանը եւ քիչ էր մնում կուստոմսից գրկվեր: «Դու էդ ո՞նց ես համարձակվում կասկածել ժողովուրդների բարեկամությանը, հը՞», - ասացին, եւ մարդը մնաց շվարած. «Այսինքն, եթե ասում եմ՝ չի՞ կարելի կազմակերպել, որ աշխատավոր ոչխարապահներն իրենց ապրանքն իրենց խանութներից գնեն, տեղիս սպառնոտն էլ մեզ սպասարկի, ստացվում է նացիոնալիզմ», - պատասխանեցին, թե՛ «գրածիդ մեջ անձնական շահագրգռվածությունը բացահայտ է. մտքինդ էն է, որ աշխատավոր ոչխարապահների սպասարկումը Տիրուհու խանութից վերցվի՝ կնոջդ տրվի, հա՞, Դոյչ»:- Իսկ «Դոյչ» ասացին, քանի որ դպրոցում գերմաներեն էր դասավանդում, եւ լակոտները փոթ անուն էին կացրել: Դա բնիկների միակ ընդվզումն էր, որ «տեղում խեղդվեց», - բայց ինչ էլ անեն, ինչքան էլ Տիրուհին հրապուրեր՝ Մեծ քոչը Եվախ- Բարդա- Աղդամ՝ մեծածախ առետուրի պահեստներից Մայիլ Ալլահվերդիեւի հասցրածից հաճախ գլուխ չէր հանում: «Թե ու՞մ է պետք էդ գիզի-բիզին», - հովիվը մոլորվում էր, երբ ցույց էին տալիս շինսումիսը, լեհական օձանելիքն ու «միայն առաջավոր անասնապահների հասցեով» դուրս գրված մյուս անպետքությունները՝ մինչեւ բնիկները գլխի ընկան կամ Տիրուհին հուշեց, որ «ի՞նչ եք դռնեդուռ ընկնում, հրես՝ էստեղ ունեմ՝ ինչի համար որ Աղդամ երեքտակ գին են ուզում», - խվլոցն սկսվեց, եւ Չաջի Վելիեւի համար «հս-

կոզուլթյան նոր ճակատ բացվեց»:

Դեռ այնքան լկտի չէին կամ բնիկների մարդավարություն վրա էին կասկածավոր՝ որպեսզի տեղում փողը հաշվեին- տային Մայիլ Ալլահվերդիեւի բուռն, ու ապրանքը մնար Աղդամի վաճառանոցներին՝ միայն Տիրուհու հասցեով բաց էին թողնում, թեև Մեծ քոչը կարծես թե անտարբեր էր այդ թաքուն գործարքներին. Տիրուհին նրա համար ճանապարհի հանգրվան էր, երբ կարգավորվում էին բնիկների հետ զուտ արոտա-փողային հարաբերությունները: Երբեմն շնորհ անում՝ Մեծ քոչը նաեւ գառ էր մորթում, մի -երկու ժամով Տիրուհին դառնում էր սեղան դնող, սպասարկող-հավաքող կին, եւ նրա նայվածքը քնքշանում էր այնքան, որ բնիկներից մեկնումեկի խճճված գիտակցությունը հանկարծ առկայծում էր թաքուն հույսով, բայց՝ չէ. իր ծեքծեքուն մտերը Տիրուհին շատ թանկ էր գնահատում, որպեսզի ինչ-որ կոլխոզային հիմար- անփող հանդապահի կան նույնիսկ բրիգադավար- անասնաբույծ- անասնաբույժի առաջ մերկացներ: Նա Մեծ քոչի մարդկանց ներկայությամբ լռում էր, որպեսզի հետո շան լափ թափի բնիկ անպատկառի գլխին, եթե սա մյուս օրը համարձակվեր՝ ծխելիքի խնդրով մտներ խանութ: «Ախչի, դեն ձենդ կտրիր»,- կարողանում էր ասել մեղսալի բնիկը, իսկ Տիրուհին դեռ երկար օրեր ու շաբաթներ պատմում էր, թե «Էն կոտած էշն» իրեն ինչ ակնարկեց, ու ինչ պատասխան եղավ: Նրա մեղավոր գիշերներն արթնացնում էր Մեկը, որ բնիկներից էր, եւ Յաջի Վելիեւը, երբ Մեծ քոչն անցած էր լինում, ու հոգսը՝ պակաս, երբեմն-երբեմն զարմանում էր, թե Տիրուհին հայացքի արժանի ի՞նչ է գտել Մեկի պատկերում, որ քիչ է ասել՝ տխեղծ էր: Նրա համեմատ քնքշության արժանի էր անգամ տեղամասային լիագորը, որ, սակայն, գիշերները լուսացնում էր արհեստանոցների պահակատան մի պուճախում՝ բուշլատը վրան քաշած, եթե ցուրտ էր, իսկ ընդհանրապես՝ շավար-կիտելով, եւ նրա սապոգների կաշվեխառը քրտնահոտը այդ խցից փչում էր անգամ տարիներ հետո, երբ Մեծ քոչի ճանապարհի փակվել, նրա տեղ ՆԳ մարզային վարչությունը նշանակել էր կապիտան Սեյրան Արզումանյանին:

...Վանքը դեռ մեկուսի կար, Միշա Ասրյանը կիրակի օրով այնտեղ մատաղի աքլոր էր մորթում, պահակ էին նշանակել, Միշա

Ասրյանը հարբում, հայիոյում էր 20 - 30 թվերի նախագահներին, որ իբր վանքի հարստությունները ծախել են Բաքվին, գնացել հասել էր Էջմիածին՝ Վազգեն վեհափառի ոտքը: 1963 կամ 62 թվին, երբ Նիկիտա Խրուշչևը Թիֆլիսից Բաքու էր գնում, երկաթուղու Եվլախ կայարանում Միշա Ասրյանը նրան դիմավորողների մեջ էր, ուզեցել էր ասի՝ «Ընկեր Նիկիտա Սերգեյևիչ, Արփա - Սեւան թունելի համար աստծու չափ շնորհակալ ենք, բայց որ մեր Ես Ղարաբաղի հարցն էլ Ղրիմի պես լուծեիր...», - Եւ նրա իբր թաքուն հետքերով անվտանգության ծառայությունը կայարանի բուֆետում գտել էր թափուր սեղան, հարբեցրել, ետ գյուղ էին ուղարկել, Եւ վանքի փլվող պարսպին ցուցանակը հուշում էր, որ «Պահպանվում է Ադր. ՍՍԴ կուլտուրայի միևնույնության կողմից»:- Ճիշտն այն էր, սակայն, որ քանդելու ձեւ չկար, Եւ Ֆարիդա Մամեդովային հանձնարարել էին՝ դիսերտացիա գրի, որ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի քրստոնեական բոլոր հնություններն ալբանական մշակույթի կոթողներ են: Ուզում էին ասել՝ «Սպասում ենք՝ վերջին հայը գետնի տակն անցնի, մեր սրբավայրերը շենացնենք», - խանգարում էր խորհրդային կոչվող երկրի ընդհանուր անհավատությունը, իսկ իրենք առ ի դեպ բավարարվում էին Աղդամի մզկիթի օրհնությամբ Եւ հույսով՝ որ հայերս կենցաղի հարցերում շատ պահանջկոտ ժողովուրդ ենք Եւ մի օր իրոք կթողնենք - կգնանք:

1965 թվի ամռանը Անդրանիկ Իոսիֆյանը գյուղ էր եկել՝ 60-ամյակը նշելու էին կառավարական բարձր մակարդակով, եկել էին ակադեմիկոս Վիկտոր Յամբարձումյանը, Սերգեյ Սերգեյևանը, գուցե՝ ուրիշներ նույնպես կային, տպավորվել էին Յամբարձումյանով: Իոսիֆյանը Խաչենի մեծ ջրամբարի մոտ դիմավորել է ակադեմիկոս Յամբարձումյանին, ձեռքը մեկնել է հյուսիս, ասել՝ «Վիկտոր Յամագասպովիչ, Եստեղից միևնույն Գյանջա՝ Էդ դաշտային Ղարաբաղն է», - հետո շրջվել է արեւմուտք, ավելացրել՝ «Իսկ Լեռնային Ղարաբաղը՝ Եստեղից միևնույն Բասարգեչար», - Իոսիֆյանը եկել էր, որպեսզի հիշեին, որ 1925 կամ 26 թվերին, երբ նա սովորելիս է եղել Բաքվի պոլիտեխնիկ ինստիտուտում, հորը՝ Ղեւոնդ վարժապետին, որ Զյուխանց Ներսես բեկի փեսան էր, նրա Օլինկա աղջկա ամուսինը, որպես ժողովուրդների բարեկա-

մության թշնամի ձերբակալել, տարել էին Գյանջա ու Էստեղ տանջամահ արել, եւ դա քիչ էր թվացել՝ գյուղից գրել էին Բաքու. «Դուք այդ ինչպե՞ս եք բարձրագույն կրթություն տալիս թշնամու զավակին», - հեռացրել էին: Ասել էր, որ ինքը հավատարիմ է խորհրդային իշխանությանը, դաշաղների դեմ պայքարի մասնակից է՝ իբրեւ կոմսոմոլ, պատասխանել էին. «Մենք քեզ հավատում ենք, բայց եթե կարողանաս եւ կոմսոմոլի ձեր շրջկոմից մի երաշխավորագիր բերես՝ հարցը կհամարենք լրիվ փակված»:-

Եկել, հասել է շրջան, կոմսոմոլի քարտուղարը հարցրել է՝ «Բաքու ի՞նչ ես սովորում», - ասել է՝ «Էլեկտականության գործ», - եւ քարտուղարը նստած է եղել մութ սենյակում, կենտրոնից ուղարկած դիզելը խափանված էր, հարցրել է՝ «Էդ բանից գլուխ կհանե՞ս», - Իոսիֆյանը թեւքերը քշտել, դարձակ-պտուտակահան, բանալի վերցրել՝ փորփրել, փորփրել է, վերջը դիզելը փռտացել՝ գործարկվել է, քարտուղարի լույսերը, էդ Մարտակերտ գյուղի լույսերը վառվել են, եւ երաշխավորագիրը տրվել է «Առ այն մասին, որ Անդրոնիկ Իոսիֆյանը 17 տարեկանում ընդունվել է կոմսոմոլի շարքերը եւ աքտիվորեն մասնաքցել հակակրոնական եւ հակաբանդիտական պայքարին, կատարել է իրեն տրված բոլոր հազնարարությունները, որի ճշտության համար ստորագրում ենք...»:-

Շատ տարիներ հետո Իոսիֆյանը պատմել էր, որ շարժիչը ոչ մի թերություն էլ չի ունեցել, պարզապես տեղահան էր, վառելիքի բաքը թեքվել՝ չէր գործարկվում, իր արածն այն էր, որ փայտից երկու սեպ է տաշել՝ դիրքը ուղղել, որ վառելիքը հասնի շարժիչին, եւ այդքանը բացատրվել էր այն ժամանակ, երբ գյուղի համար կայան էր շինում՝ ինքը, Սարուխանսանեսց հին ջրաղացի առուն մաքրել էր տվել, ջուրը հասցրել էր մի փոքրիկ բարձունքի, հետո՝ նեղ խողովակով բաց էր թողել, իսկ գետերատորը ներքեւում աշխատել եւ գյուղին լույս էր տվել՝ 1946 կամ թե 47 թվականի աղքատ տարում, ասել էին՝ «Անդրանիկ Ղեւոնդովիչ, բա էս մեր ավտոպարկի հարցը ո՞նց կլինի, ախր մեքենա չեն տալիս»:- Ունեցածը մի «պալտուրկա» էր իսկ բեռները բերվում էին Աղդամից, Եվլախ կայարանից, Ուջարից, չէին հասցնում, գնացել՝ կոլխոզի նախագահ Գուրգեն Գաբրիելյանը եւ մեխանիկ Միշա Յա-

կոբյանը հասել էին Մոսկվա, գտել էին Անդրանիկ Իոսիֆյանին, տարել էր տուն, կոնյակ էր հյուրասիրել՝ մատնոց բաժակներով, սուրճ էր դրել, շոկոլադ:

Գուրգենն ասել էր՝ «Անդրանիկ Ղեւոնդովիչ, ձեր տանը կարգին բաժակ չկա՞», - ծիծաղել էր, թե՛ «Քեռեկինդ սիրեմ, Բինաձոր չես Է՛, Մոսկվա ես, Մոսկվա», - հյուրանոց էր պատվիրել, տարել էր ռեստորան, իր տնօրինության ինստիտուտից դուրս էր գրել հինգ բեռնամեքենա, մետաղահատ հաստոցներ, եռակցման ապարատ, մի երկու երկաթուղային վագոն այդ ապրանքը ինստիտուտի հաշվին առաքել էր՝ Եվլախ, հասցեատերը՝ «Պրավդա» կոլխոզ: Կոլխոզը ընդհանուր- միացյալ էր, գյուղերը՝ առանձին, հիմա ինքը ի՞նչ անի, որ լեզու չեն գտնում, վերցրին՝ բաժանվեցին եւ ստացվեց, որ աղքատությունը միացնում է, հարստությունը՝ բաժանում: Աղքատ չէին եւ հարուստ չէին, ուզում էին իրար մեջ բաժանել Անդրանիկ Իոսիֆյան ունենալու իրավունքը, պատիվը, այսինքն՝ որ մի գյուղի ծնունդ է, մյուսի դպրոցում սովորել է: Մարգային թերթը գրեց՝ Ամերիկո Յովհաննիսյանի ստորագրությամբ. «Այս նստարաններից մեկի վրա ապագա ակադեմիկոս կա գուցե», - դպրոցը լավագույնն էր ճանաչվել ամբողջ Ադր. ԽՍՀ-ում, արժանացել էր հուշադրոշի, թեեւ համբավավոր ուսուցիչներն արդեն չկային՝ Արամ Ալեքսանյանը, Գուրգեն Շեկյանը, Յովհաննես Մինասյանը, բայց այդ ո՞վ է ասել, որ հաղթող ճանաչվելու եւ հուշադրոշ շահելու համար մի փոքր խորամանկություն պետք չէր խաղալ՝ քուլանի սարեցու համար քառամյա դասարան- կոմպլեկտ չի կարելի բացել, որպեսզի ինքը՝ Ադր. ԽՍՀ լուսավորության նախարարը իր ոտքով գա եւ տեսնի, որ դրոշակակիր դպրոցը դեռ Մարկոս Դոլուխանովից 1924 թվականին խլված, ասում էին՝ «համայնացված» տան մի քանի սենյակներում է ծվարում, շենք է պետք:

Նախարարը եկավ, տեսավ եւ զեկուցեց, որ նոր շենք իրոք պետք է, կոլխոզային այգու մի երկու- երեք հեկտարը բուլդոզերների տակ տվեցին, հիմքեր փորեցին եւ կառուցեցին երկհարկանի դպրոցական շենք՝ 350 աշակերտի հաշվով. «Եսքան մեծ ու՞մ էր պետք», - եւ կասկածեցին, որ քուլանի սարեցու քառամյան սրանք մի օր կդարձնեն երկու կոմպլեկտ դասարան, հետո...

«Յա, Էլի, ինտերնացիոնալ դպրոց՝ ոնց որ Չափար կա, ես, օրինակ, ինստիտուտի Նարիման Մամեդովի հետ Էդ դպրոցում աշխատել եմ, վատ չէր»:-

Պապիս տունը դատարկ չլինելու համար շատ գեղեցիկ էր, կար՝ ինչպես փակել, բանալիները տվել էին մորս՝ գյուղի իրենց միակ աղջկան, եւ մենք այնտեղ դեղնած թերթերով գրքեր էինք գտնում, խուսացած թղթեր, որպես թե՛ «Ինքնավար Լեռնային Ղարաբաղի Ջրաբերդի շրջանի լուսաշխատողների արհկոմը տեղեկացնում է, որ Դուք ընտրված եք լուսաշխատողների մարզային խորհրդակցության դելեգատ, որի համար պարտավոր եք ս. թ. օգոստոսի 25-ին ներկայանալ ք. Ստեփանակերտ. օրապահիկ եւ գործուղման վճար կստանաք տեղում», - պապս դրանք ինչու՞ հետը չէր տարել, բայց այդպես անվերջ չէր լինի, բարեկամ ՎՆ ծանոթներից մեկն անպայման կուզենար ապրել, եւ մի քանի ջախել ընտանիք երկու կամ երեք տարով մտավ այդ տան խորհրդավոր գոյության մեջ ու գնաց՝ կառուցելու իր սեփական հարկը:

Այնտեղ բակում ծաղկում էին եղրեւանին, վարդը, հսկա լորենին հով էր անում: Ամռանը մենք թթի ծառերից կապում էինք ճոճացանց, որ Երեւանից էին բերել, բաղմենտոն էինք խաղում, լորենին ծաղկում էր, լորենին բուրում էր. այդ ծառը 1935 թվին տնկել էր մորս քեռին եւ գնացել Շուշի՝ մանկավարժական ուսումնարան, որ ուսուցիչ դառնա, բայց 1939 թվին գորակոչվել էր պարտադիր զինվորական ծառայության, եւ նրանից մնացել էր միայն լուսանկարը: Եղել էր այնպես, որ պատերազմի 1942 թվին գյուղխորհրդի նախագահը մտել էր այդ տունը. «Ախչի, Սաթի, վիրավորները բերել են, Եվլախ պլատֆորմների վրա չոր հողին պառկած են, վերմակ են ուզում, գորգ են ուզում», - պատից պոկել՝ տարել էր գորգը, եւ Վարդունց Սաթին աղջկան՝ իմ տատ Լուսիկին սաստել էր. «Թող տանի, գուցե թե իմ տղեն էլ Էդ վիրավորների մեջ է»:-

Սուտ էր, գորգը կար, գյուղխորհրդի նախկին նախագահի տան պատին լռում էր, եւ տատս՝ հորս մայրը, երբ մայրս խոսում էր գորգի այդ պատմությունը, հիշում էր, որ գյուղխորհրդի այդ նախագահը մի օր էլ իր դեմն է կտրել, ուսից պոկել ջրի պղնձե կուժը, մատից հանել պսակի ոսկե մատանին, ասել էր՝ «Պաշտ-

պանության փոնդի համար պղինձ ենք հավաքում, ոսկի»,- եւ տակվերոց էր արել պապիս զինվորական թղթերը: Պապս բանակում հիվանդացել՝ ետ տուն էին ուղարկել՝ համապատասխան փաստաթղթերով, հասել է Եվլախ, պատահական բեռնամեքենայով՝ Ասկերան եւ արտելի արհեստանոցի պատի տակ՝ հենց փողոցում փլվել եւ նրան այդպես՝ ամռան շոգ կեսօրվա մեջ անգիտակից գտել, քրտինքն ու կեղտը մաքրել, սայլի մեջ են դրել արտելի այն վարպետները, ում պետությունը զինվորական ծառայությունից տարկետում էր տվել, որպեսզի թիկունքում ռազմաճակատի համար ֆուրգոնի ակ ու սննի կոփեն երկաթից, սայլ կապեն՝ ուղարկել էին գյուղ. «Սիրտն էր, սիրտը»,- ասում էր տատս, մի ամիս տանը անուժ պառկել ու հանգել է քառասունհինգ տարեկան մարդը եւ համարվել ոչ զոհ, անհարազատ:

Ապրանքագետ Չաքիրը Քելբաջարի թուրքացածներից էր: Պապս նրա խորամանկության առաջ շփոթված՝ չիմացած թուրքերենով աղաչում էր ազատել սեփական իր տունը, բացատրում էր՝ «Այ յուրաշ, այ տավարիշչ, ես վաղը գնում եմ իմ երեխաներին Ստեփանակերտ դիմավորեմ, բերեմ իմ տունը, դուրս արի,- իսկ Չաքիրը մեզ հարցնում էր՝ «Էս հալիվորը ի՞նչ է ասում»,- եւ չէինք կարող վզին տալ - չարտել, որովհետեւ կին ու փոքր երեխա ուներ: Մի կերպ համոզեցինք, որ գնա՝ Մարկոս Դուլուխանովից 1924 թվին խլած՝ նախկին դպրոցական շերքի երկու սենյակներում ապրի, պապս հարցրեց. «Գյուղում մեքենա ո՞վ ունի»:- Յաշվեցինք, եւ եղածից երեքը շիլ Ալըշանի տղաներինս էր: Պապս զարմացավ՝ «Երեկ դրանք իմ չափարի համար շալակով ցաք էին բերում»:- Այդպես եղել էր իրոք, բայց եղել էր նաեւ, որ պապիս այգու խնձորն են թալանել, մեղուն փեթակով գողացել, եւ նա Ստեփանակերտ գնաց Ալըշանի Էլխան թոռան մեքենայով եւ շատ գոհ էր: Մերոնցից մեկին խոսցրել, սա երեսուն ռուբլու հաշիվ էր ակնարկել, Էլխանը վերցրեց կես գինը, եւ դրանից պապս եզրակացրեց, որ «Խորհրդայինը Ղըրանց մարդ շինեց»,- Էնքան, որ Երեւանի ինքնաթիռը վատ եղանակի կամ այլ մի պատճառաբանությամբ վայրէջքի ուղարկվել էր Աղդամ, եւ Էլխանը, որ ոչ Մինասյան Յովհաննես գիտեր, ոչ նրա ուսուցչական փայլուն անցյալը, սուսուփուս քշել էր Աղդամ, օդակայանում հարցրել,

իմացել էր Երեւանից ժամանածների տեղը, մի խոսքով՝ մատուցել էր լրացուցիչ ծառայություն, բենզինի ավելորդ ծախսը՝ հետը, բայց կտրցրած գնից մի կոպեկ ավելի չէր վերցրել:

Իհարկե, գող չէն, աշխատում են, մեքենա են առնում, կարելու-կարելուր գնում են Աղղամ, Գյանջա, եթե պետք է՝ հենց Բաքու, հարթում են Եվլախ - Մարտակերտ մայրուղու վրա մեր վարորդ տղաների չհասության պատճառով ծագած վեճերն ավտոտեսուչների հետ, Բաքվից թառափածուկ են բերում՝ հյուրասիրում են, հենց մեկը՝ Շոֆեր Գարաբեւը, երթուղուց ազատ օրերին նոփ - նոր «Նիվան» քշում է մինչեւ Դալի դաղ՝ տղերքը որս են ուզում՝ քշում է:

Որս, իհարկե, չի պատահում, թուրքի մոտիկ ուրթից Շոֆերը սեւ գառ է առնում, արաղը հանում բեռնապահոցից, ուտում խմում, գալիս են, հետո ՆԳ մարզային վարչությունից գյուղխորհուրդն ահազանգ է ստանում, թե՛ Եսինչն ու Էնինչը չհաշվառած որսորդական հրացան է պահում, ձեր զգոնությունն ու՞ր է, բա,- եւ դիմումը, ցույց են տալիս, գրած են լինում Քելբաջարի շրջանի առաջավոր ոչխարապահ Հասանովն ու Մամեդյարովը կամ Չըրաղլու գյուղի բնակիչները՝ կոլեկտիվ բողոք, հաջորդ անգամ որսի են գնում Շոֆեր Գարաբեւի տասներկու տրամաչափի որսորդական կարաբինը հետները եւ սովորած են լինում, որ դրան ասում են «բեշաթլան», հայերեն կլինի «հինգնոց», որ Բաքվի Կուբինկայում արժե «Եսպես Էլի, մի վեց-յոթ հարյուր մանեթ», - բայց ամեն մարդու չեն ծախում, մանավանդ՝ հայի ինչի՞ն է պետք զենքը, հայը գրչի մարդ է, բահի, փոցխի, եղանի, թող քաշի ռանդան՝ խըրըզ-խըրըրզ, լավ փող են տալիս դաշտի թուրքերը, որ ոչ անտառ ունեն, ոչ ռանդա քաշող վարպետ:

Հին ժամանակների Ստալինի՞, թե՞ Մոլոտովի անվան արիեստագործական արտելն անվանվել էր կենցղսպասարկման կոմբինատ, 40 - 50 թվերին արտելը սայլ էր ծախում դաշտի թուրքերին, ռազմաճակատի համար՝ կապում ֆուրգոն, սարի քրդերին՝ ճախարակ, սանդերք՝ բուրդը գզեն, բուրդը մանեն, կթվոր կանանց համար՝ կարճոտ աթոռակ, սաջ, գրտնակ, պայտում էր նրանց ձիերը, եզները, սրում կացինը, ցաքատը կոթում:

Քոչը գալիս էր մայիս- հունիս ամիսներին, տորոում էր արտ,

արոտ, փոշի էր հանում, մաքրում էր խանութները՝ մինչև վերջին լամպը, սապոնը, շաքարի պարկը, հանդապահը ճորտում էր, քոչը՝ տափակում ցանքսերը, խուժում գետահովտի խոտհարքերը, փող էր տալիս՝ կոլխոզի արտը կուշտ ուտում, կոլխոզի եգիպտացորենը՝ կլպում. մինչև որ ժամանակը կրիայի իր պատյանից դուրս եկավ եւ ով սայլի սմնի էր տաշել՝ համարվեց կահույքագործ, դարբինը՝ եռակցող, եւ կենցաղսպասարկման կոմբինատի բեռնամեքենաներն սկսեցին ակոսել դաշտի թուրք գյուղերի փոշոտ ճանապարհները, որպեսզի իրացվեն լաքապատ կողափայտերով մահճակալները, մահճակներն ու մետաղակուռ դարպասները եւ առօրյա խոսակցական լեզվում շատ ամուր նստեց Կիրովաբադի մետաղբազան, Ուջար երկաթուղու կայարանը:

Բանվոր վարպետների նոր սերունդը գործի գնում - գալիս էր մոտոցիկլետ նստած, սեփական մարդատար գնելու հերթի կանգնեցին, վիճեցին՝ ո՞վ արտոնություն կունենա եւ համարեցին, որ պետությունը շատ անարդար է վարվում, եթե 1925թ. ծնվածներին, որ բանակ զորակոչվեցին վերջում եւ ուղարկվեցին Իրան, չի համարում պատերազմի մասնակից, քանի որ ի՞նչ տարբերություն՝ ծառայությունը մնում է ծառայություն, իսկ սպառնալույս, ահա, վարկով մեքենա վաճառում է պատերազմի մասնակիցներին. թե ինչի՞ն է պետք էդ «Մոսկվիչը»՝ եթե հաշմանդամ է, հաշմանդամ չէ՝ բա փաստաթուղթ ո՞վ է տվել:

Սուրխայ Մամեդովը «Չապորոժեց» ստացավ՝ որպես պատերազմի հաշմանդամ: Ուսուցիչներից մեկը հիշեց, որ 1961 թ. ընկեր Խրուշչեւը նմանների մասին է ասել՝ «Ցուլի պոչից բռնեն՝ ցուլը գետնից կկտրեն, բայց հաշմանդամության թոշակ են ստանում», - առարկեցին, որ Խրուշչեւն իսկի էլ պատերազմ չի տեսել, այ Ստալինը չէր ասի, քանի որ ամբողջ պատերազմի ընթացքում ոչ մի օր ու գիշեր Կրեմլից դուրս չի եկել, իսկ երբ Հիտլերն ասել է՝ «Արի դու ինձ տուր ֆելդմարշալ Պաուլյուսին, իսկ ես կազատեմ քո տղային», - Իոսիֆ Վիսարիոնովիչը Մոլոտովին հանձնարարել է, որ պատասխանեն են ցնդած եֆրեյտորին. «Մարշալ Ստալինը ֆելդմարշալին չի փոխում շարքային զինվորի հետ»:- Պատերազմից երեսուն տարի անց խորհրդային բանակում խաղաղ ծառայությունն ավարտած եւ արհեստի կպած ջահելները

լսում՝ հավատում կամ չէին հավատում:

Մեծ քոչի ճանապարհին խմելու տեղ կար՝ ճաշարան: Ասկերանից գարեջուր բերում էր սպառնալու մեքենան, եւ վարորդն ով էլ լինէր՝ պարտադիր պիտի հարցնէին՝ «Արա, գետից ինչքա՞ն ջուր ես խառնել», - որովհետեւ չէին հավատում, որ տակառն ինչպէս Ասկերան լցվել՝ այդպէս էլ տեղ էր հասել, մի բան հաստատ եղած պիտի լինէր, իսկ սպառնալու վարորդն ով էլ լինէր՝ անպայման փոխադարձում էր՝ «Խի էդ ձեր ացետո՞նն է, որ գողանում եք» , - քանի որ կահույքի արհեստանոցի ացետոնն ու մյուս նյութերն իրոք տակով արվում էին՝ մի ձեռք էլ տանն աշխատեն, կյանքը դժվարանում է, հոգսերը՝ շատանում, երեխան ինստիտուտ ընդունվելու համար 5-10 000 են ուզում: Երեւան չէ, Ես մոտիկ Ստեփանակերտ:

Յնգնոց կարաբինն ու՞մ է պետք, 60 կամ 65 թվին մի թուրք Սաւալան էր մեռել, ծեծե՞լ էին, խմած ընկել՝ գլուխը շարդե՞լ էր, ահագին աղմուկ եղավ, հացի էլ պակաս տարի էր՝ որ Խրուշչեւին հանեցին դրա համար, Աղղամ հայերին ցորեն չէին ծախում, - և որերն ասում էին՝ «Ի՞նչ ցորեն, Աղղամ հիմա ատոմային ռումբ էլ կծախեն, դու փողը տուր»:- Բանակից կոնտուզիայով ետ եկած՝ Արամ Աբրահամյանը եղբոր կնոջը մեռած էր տեսել, տունը՝ աղքատ, որբերը՝ սոված, եղբայրը՝ որպէս գերի՝ քշված Սիբիր, հետն էլ՝ որ հարսն, իբր, կոլխոզի նախագահի հետ կապված էր, նրա հայրը եւ կինը կազմակերպել՝ խեղճին սպանել էին տվել. «Հա, էլի, Սուրենին մի փութ գարի են տվել՝ նա էլ հարսի հետը պահել՝ Չլդրան գնացած է եղել, որ երկու որբը ուտելու բան ունենան՝ սարում կացնով խփել, դիակը թաքցրել է, բայց մի անձրեւ եկավ, մի հեղեղ՝ դիակը գետը քշել էր», - 1945 թվի հաղթական գարնանը Արամը թուրքի գյուղերը հնձավարձի էր գնացել, մի ուղտաբեռ գարի էր բերել, տատս ասում էր. «Ինչքան գորգ ու կարպետ կար տանը՝ Աղղամ ցորենի հետ փոխել եմ», - եւ ճիշտը Շոֆեր Գարաբեն էր, հային գենը չէին վաճառի, հայի բաժինը խոսքն էր, որ «Աղղամ ասա՛ թուխսն իր ճտերով առնում եմ, «Մակարը» հանեն՝ ցույց տան, 1000 մանեթ հաշվիր, ապրանքիդ տերն ես»:-

Դա միայն ասվում էր, քոռ աշուղն, այնինչ, ամեն քոչի հետ գնում՝ աշնանը սարից իջնում էր, ամառ - աշուն՝ աշուղը Մեծ քո-

չի ճանապարհին երգում էր Զյոռօղի, գովում Ղարաբաղի օղը, անտառները, ջուրը՝ «Այ Թարթառ, նաչի Թարթառ, երկու հազար ջրառվի մայր, Թարթառ»:- Ուսուցչական վերապատրաստման դասընթացների ավարտին խնջույքի էինք, մեկն արտասանեց «Ղարաբաղի ողբը», մեկ ուրիշը երգեց՝ «Տեսեմ Անին ու նոր մեռնեմ», «Երեւան դարձած իմ Երեբունի»: Դե, հայ գրականության 20 - 25 ուսուցիչ որ մի տեղ հավաքվեն ու քեֆ անեն, չե՞ն երգի, չե՞ն արտասանի, թեկուզ՝ Ստեփանակերտ, բայց պետանվտանգության բաժնում ինչպե՞ս կասվեր՝ «Ընկեր պետ, ազնիվ կոմերիտական խոսք, էդ բոլոր երգերն, ախր, տպագրված են, դասագրքային բաներ են»,- չէր հասկացվի:

Պետն ինքն էլ գիտեր՝ դա այդպես է, բայց զգուշացնել պարտավոր է, իսկ եթե համառեի՝ ուղարկելու էր Աֆղանստան. «Խելքդ թող էնտեղ գլուխդ գա, աշուղի հետ պետանվտանգությունը գործ չունի, անշառ քոռ է, իր մի կտոր հացն էդպես է վաստակում, եւ, ի վերջո, մենք աշուղ չենք, ուսուցիչ ենք, սերունդ ենք կրթում եւ դաստիարակում, Մասիս-Մասիս գոռալուց օգուտ չկա»: - Սա քեզ որպես հորդ ընկերոջ խոսք է ասվում՝ ժողկրթբաժնում, ուսուցչի տոհմ ենք՝ պապով, հորով, քույր-եղբայրով. «Ձախել տղա ես, հորդ տեղ ուսուցիչ ես, հորդ տունը քեզ է նայում, մերդ բա մեղք չի՞, հորդ կորցրեց, բա որ քեզ էլ մի բան եղավ՝ ի՞նչ անի են խեղճը»:-

-Ես երգել եմ:

Ասաց՝ «Գիտեմ, գիտեմ, գնա մեկը կեր՝ տասը մատաղ արա, որ քարտուղարը կարգադրել է՝ քեզ հանգիստ թողնեն, ես էլ հորդ հին ընկերն եմ, ձեր տանը հաց եմ կտրել»:-

Տնօրենը նախ զարմացավ, որ ետ եմ եկել, ապա՝ որ դարձյալ աշխատելու եմ, կպավ հեռախոսի ընկալուչին՝ այնկողմից հաստատվեց, որ ճիշտ եմ ասել: Նրա հայրը պատերազմի տարիներին գյուղխորհրդի նախագահ էր եղել, մեկին ուղարկել էր իրենց տուն՝ ինչ-որ գործի, տղան շիտակ ասել էր՝ «Հրես բանակ եմ գնալու», - հաջորդ օրը կանչել էր՝ «Ես նամակը հասցրու շրջան»:- Պատերազմից մի քսան տարի անց այդ տղան Սիբիրի ինչ-որ քաղաքից իմաց էր արել, որ կա եւ այլեւս գյուղ չի գալու:

Տնօրենը երեւի այդ պատմությունը հիշեց եւ ասաց՝ «Կուսակ-

ցությունը ներողամիտ է»,- կուսակցութիւնը ինքն էր, կարող էր ավելի լուրջ տեսք տալ այդ պատմությանը, բայց ներեց, որ հետո Ֆարման Մուստաֆաեւը բողոքի, թե իր երեխային ծեծում, ստիպում են՝ գրականության դասերին թուրքի տնազ խաղա, «Իմ խոխան մայմուն չի»,- բայց նրա Վալեհ տղան վկայեց, որ ոչ ոք իրեն չի նեղացնում, իր միջակ գնահատականը ստանում է, քանի որ մայրը հայերեն մի տառ չգիտի, տանը թուրքերեն են խոսում, դասին՝ գրական հայերեն, չի հասցնում, չի հասկանում, չի ուզում կարդալ այդ «Սամվել»-ը, «Պեպոն»:

Երեխայի նրա ընդունակությունն այն էր, որ թուրքերեն էլ լինէր՝ մեկ է՝ գիրք կարդացող չէր: Նա ժամերով տրակտորի խցիկում նստած՝ ուսումնական դասարանի՝ իրեն կարծում էր հերկվոր, անտառից գերան քաշող, ճամփա բացող, տղայի նրա խակ ուղեղում ոչ հայ կար, ոչ թուրք, այլ հազիվ՝ կյանք մտնողի թրթիռ: Յետո Ղըրանք կապականեհի՞ն նրա ճամփան՝ հայտնի չէր, տնօրենի կուսակցական վարքն, այնինչ, կար՝ շրջկոմի անդամի նրա իրավունքի եւ պարտավորվածության միջակայքում: Լեոնիդ Յուրունցի «Իմ գյուղի կտուրից» գիրքն ռուսերեն էր, իմ պապ Յովհաննես Մինասյանն էր ուղարկել՝ կարդամ, ասաց. «Յուրունցը նացիոնալիստ է»,- ֆիզիկայի ուսուցիչ Արամ Շեկյանն առարկեց՝ «Նացիոնալիզմս ո՞րն է, մարդը ճիշտ բաներ է գրել»:-

Իսկ այդ արանքներում ապրանքագետ Չաքիրն ունենում էր երրորդ երեխան, եւ Մարկոս Դոլուխանովի տունը նեղ էր գալիս, դիմել էր գյուղխորհուրդ, որ տնամերձ տարածք հատկացնեն՝ տուն կառուցի: Գող Յաղուբն անասնապահի իրավունքով պայմանագիր էր կնքում շինգրասենյակի հետ՝ տուն կառուցեն, շրջկոմի քարտուղար Վահան Գաբրիելյանը գյուղ էր եկել՝ առաջին անգամ, նոր մարդ էր: Տնտեսության տնօրենը քրտնած զեկուցեց, որ աշխատավորների ինտերնացիոնալ կապերի ամրապնդման նպատակով միջնորդել, իսկ գյուղխորհուրդը բավարարել է անասնապահ Յաղուբի խնդրանքը, եւ նա կունենա իր առանձնատունը: Գաբրիելյանը հարցրեց. «Որտե՞ղ է մշտապես գրանցված այդ անասնապահը»,- ոչ ոք չիմացավ:

Գյուղխորհրդի ծխամատյանում Յաղուբ չկար, քարտուղարը կարգադրեց՝ չեղյալ հայտարարել հողահատկացման որոշումը,

լուծարել շինարարության պայմանագիրը, իսկ այդ Յաղուբին ազատել աշխատանքից եւ 24 ժամ ժամանակ տալ՝ մինչեւ հավաքի ունեցած-չունեցածը եւ մեկնի այնտեղ, ուր մշտապես գրնացված է: Դարձյալ մերոնցից մեկը նստել՝ տանելի ռուսերեն լեզվով գողի անունից մի կայծակ- հեռագիր էր ձեւակերպել՝

«Ադր. ԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար ընկ. Զ. Մ. Բաղիրովին.

Չայտնում եմ Ձեզ, որ Ադր. ԿԿ Մարտակերտի շրջկոմի առաջին քարտուղար Վ. Գաբրիելյանի անմիջական կարգադրությամբ ազատվել եմ աշխատանքից ինձ տրվել է 24 ժամ որպեսզի ընտանիքս եւ ունեցվածքս վերցնեմ եւ հեռանամ շրջանի տարածքից որտեղ աշխատել եմ վերջին հինգ տարում ունեմ 11 երեխա ծեր մայր իսկ հիմա ձմեռ է եւ կրանք ներկայումս գտնվում են բաց երկնքի տակ խնդրում եմ միջամտեք որ ինձ իմ հարազատ հանրապետությունում չհալածեն սպասում եմ Ձեր օգնությանը», - բայց պարզվեց, որ Յաղուբը ՆԳ Լաչինի շրջբաժնի կողմից հետախուզվող հայտնի անասնագող եւ կրկնահանցագործ է, պարզեց Վահան Գաբրիելյանը եւ հայտարարեց, որ եթե տնտեսությունների ղեկավարները շահ չունենան, գողերին աշխատանքի չեն ընդունի:

Եւ ինչ-որ բան, կարծես, հասունանում էր՝ դանդաղ, բայց համառ, եւ հեռուստացույցի թուրքերենից վրեժխնդիր լինելու պես՝ սկսեցին հնարել ամեն տեսակի անտենա՝ գոնե Մոսկվան տեսնեն, մի ամբողջ օր հազար կտոր ալյումինից հատուկ գծագրի օգնությամբ սանտիմ առ սանտիմ այդ անտենան հավաքվեց, դրվեց հենասյան վրա, բարձրացվեց կտուր, Մոսկվան պատկերվեց, պտտվեց, պտտվեց, Երեւանի ձայնը որսաց, կադրը թրթռում էր՝ սեւ-սպիտակ՝ «Ռեկորդ» խորհրդային հեռուստացույցի Էկրանին, բայց խոսքը պարզ էր, հայերեն էր, երգ էր՝ «Դռները բացեք, գարուն է գալիս», - Չամո Սահյան էր եւ՝ Ռուբեն Մաթեոսյան:

«Երեւանն է խոսում»՝ գիտեինք, երբեմն որսում էինք նաեւ Ամերիկայի ձայնը, բայց հեռուստացույցի ազդեցությունն ուրիշ էր, ՝ ասես կենդանի կապ. դե գնա՝ որքան կուզես «Ղարաբաղ շիքեստեսի» երգիր, քեզ արդեն լսող չկա եւ չկա նաեւ ալիք փոխե-

լու անհնարինությունը, այսինքն՝ եթե 4 - 500 ռուբլի փող ես տվել՝ հեռուստացույց գնել, պիտի աշխատցնես, թեկուզ լսածդ թուրքերեն է, տեսածդ՝ թուրք, ուրիշ ավիք չես բռնում: Չէ, աշխարհում ոչինչ անհնար չէ, ասացին՝ Գորիս նոր հաղորդակ կա, տարածում է՝ անտենան՝ հատուկ Գորիսի հաղորդակի համար՝ հնարվեց, ասացին՝ այլումիսե ձողը վատ է ընդունում ազդանշանը, պղինձն ավելի լավ է, գտնվեց պղնձե ձող, եւ Երեւանի պատկերն ավելի հստակվեց, ուզում ես՝ ֆուտբոլ նայիր:

Ղըրանք զարմանք խաղացին՝ «Իրավանն էն ի՞նչ է խոսում», - ասացինք՝ «Յե՛, ինչ որ՝ Բաքուն, մենակ թե հայերեն է խոսում էլի, ես երկրի ամեն ինչն է ընհանուր՝ կուսակցությունը, փողը»: «Յա՞, բա էլ խի սարուձոր եք ընկնում, թե գլխի չեք Բաքվի ասածից՝ զանք թարգմանենք», - չէ, Բաքվի խոսքը օրվա մեր մանուկն էլ գիտի, կարիք չկա. «Լավ է, դե լավն էն է էլի, որ ամեն մարդ իր հողում ապրի», - բազմանշանակ եզրափակեցին եւ գնացին իրենց ոչխարի, կովի, գոմեշի հոգսին եւ սպասեցին՝ կամ Շոֆերը Բաքվից գա, կամ Սաբիրը՝ շրջանից՝ բան հասկանան:

Եղածը բազմաճաղ անտենա էր, Գորիսի հաղորդակ, բայց սպառնկոպի գրախանութ էին բացել՝ «Ազգեթաբ» միավորման ենթակա, Դաուդ Ախունդովի «Յին եւ վաղ միջնադարյան Ադրբեջանի ճարտարապետությունը» ռուսերեն շքեղ հրատարակությամբ ուղարկում էին՝ կարդանք, քանի որ «Յայն չի կարող գիրք չկարդալ՝ լինի թուրքի գրած, թե ջիուդի»: - Դաուդ Ախունդովն, ահա, մեզ պատմում էր, որ «Անհիշելի ժամանակներից ի վեր Ադրբեջանի տարածքում գոյություն է ունեցել Ալբանիա պետությունը՝ իր բարձր մշակույթով», - եւ վկայությունը Գանձասարն էր, Դադիվանքը, Ամարասը, որպես թե ասեր՝ «Ի՞նչ եք անում եստեղ»: - Երկրում ձնհալ էր, վերակառուցում, հավատ՝ որ Մոսկվա կա, «Լիտերատուրնայա գազետա»-ի նամակների բաժնի վարիչ Գազիզովան, սակայն, դժգոհության մեր նամակին հատուկ մուկովյան քաղաքավարությամբ պատասխանեց, որ «Նման հարցերը կարող են քննարկել երկու հանրապետությունների՝ ՅԽՍՀ եւ Ադր. ԽՍՀ գիտնականները», - եւ՝

*«Ադր, ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ
Էլմիրա խանում Գաֆարովային*

Մենք, ի ներքո ստորագրողներս, դիմում ենք Ձեզ եւ թախան-
ձագին խնդրում, որ ի կատարումն Ադր. ԽՍՀ Սահմանադրու-
թյան, որով ԼՂԻՄ-ը Ադր. ԽՍՀ անբաժանելի մասն է, հանուն
պատմական արդարության եւ մեր՝ տասնամյակներով ոտնա-
հարված իրավունքների վերականգնման, համապատասխան
որոշում կայացնեք առ այն, որ մենք կարող ենք առանձնանալ
Ադր. ԽՍՀ ԼՂԻՄ Մարտակերտի շրջանի Առաջածորի գյուղական
խորհրդից եւ մեր պապենական հողերի մի չնչին մասի վրա,- քա-
նի որ մնացածը հայ դաշնակ մաուզերիստները զավթել են 1918
- 20 թվականների խառնաշփոթության տարիներին,- հիմնադ-
րենք նոր գյուղ՝ Ենի Գարալար անունով:

Հավատում ենք, որ կլսեք մեր ձայնը եւ կկայացնեք արդար
որոշում:

Յոթ տուն ադրբեջանցիների անունից՝

Մուստաֆաեւ, Շիրինով, Բաբուշեւ, Մամեդով, Գարաեւ

3 նոյեմբերի, 1989 թվական»:

Բաքվից հատուկ այդ նպատակով հետը օպերատոր էր բերել,
սա խոշոր պլանով վավերացրեց պատմական փաստաթուղթն ու
դրա հեղինակ՝ Ղըրանց թաղից գրի սեւն ու սպիտակը մեզնից ջո-
կել սովորած՝ Սաբիր Բաբուշեւին, հետո հարեւանները լսեցին,
որ Շոֆեր Գարաեւի պարսպապատ բակում նրանք կերուխումի
են նստել, անծանոթ մի ձայն գոռգոռում է՝ «Աղդամից մի հարյուր
ջահել բերենք, սրանց քշենք, ի՞նչ են մեր ճամփի վրա նստել»:-

Հին «ավագակ» Մուշեղ Աղաբաբյանի Անուշավան տղան
գյուղխորհրդի նախագահի օձիքը բռնեց՝ «Ուզում ես, որ մեզ էլ
Սումգայիթի օրը օգտե՞ն, դրանց էսօր որ չքշենք, վաղը Աղդամից
տասը ավտոբուս մարդ են բերելու»:- Նախագահը վերցրեց հե-
ռախոսի ընկալուչը՝ շրջանին զեկուցելու, որ իրավիճակը վտան-
գավոր է դառնում, գծի հեռավոր այնկողմում շրջկոմի ջահել հրա-
հանգիչը քրտնեց, ճարահատ մտավ բաժնի վարիչի մոտ, սա
քարտուղարի համար զեկուցման վրա էր աշխատում, կարճ կա-
պեց՝ «Գլուխ չունեմ», - բայց հետո, այնուամենայնիվ, մտածեց,
որ իրեն կարող են պատասխանատվության կանչել «հանցավոր
անտարբերության համար», զգույշ ծեծեց Առաջինի դուռը. «Այն-
տեղ վիճակն ապակայունանում է, խորհրդի նախագահը հենց

նոր տեղեկացրեց», - իսկ Վահան Գաբրիելյանը գիտեր, զինվորական պարետը զանգել, սպառնացել էր. «Յոկոտեմբերյան Սոցիալիստական Մեծ Յեղափոխության 72-րդ տարելիցի նախօրյակին թույլ չեմ տա, որ ադրբեջանցի փոքրամասնության նկատմամբ բռնություն կիրառվի», - իսկ այնտեղ Սուրխայ Մամեդովի միլիցիոներ որդին՝ Սիլյան կոչվածը, որ Աղդամ էր ծառայում, արդեն հսկա դեզի տակ էր խոթում կաչանը, որ կրակը բռնկվի միանգամից, իսկ առավոտյան Շոֆեր Գարաբեյը բացեց գյուղխորհրդի նախագահի դուռը.

-Ավտոյիս տակը դինամիտ են դրել:

-Երեխեքին դպրոցից քշել են:

-Անգործ եմ , մի բան մտածիր,- ասաց, դուրս եկավ:

Ուզածն Աղդամ ավտոբուս քշելու թույլտվություն էր, բակում հավաքվածների կողքից անցավ հպարտ՝ հասավ տուն, դարպասը փակեց երկաթե նիզերով: Իրենց պատշգամբից Չավեն Առուշանյանը ծղրտաց՝ «Ժողովուրդ, իմ ախպեր Վալոդին ու մեր հարս Ռազմելային դա է Սումգայիթ սպանել, էդ թուրքի գլուխը խի՞ չեք փշրում»:-

Վալոդի մանկահասակ տղան, ասում էին, իրենց տուն մտած շատ թուրքերի մեջ ճանաչել էր Շոֆերին, բայց երեխայի պատմածը գուցե թե երեւակայություն էր՝ չէին ուզում հավատալ: Յետո էլ՝ եթե գիտես, որ քո եղբորը նա է սպանել , ուրեմն առաջին քարն ինքդ նետիր, ուրիշն, ախր, քո վրեժի տակ ո՞նց կմտնի: Բայց այդ էր ու՝ պատշգամբի փեղկը կրկին փակվեց: Սպասեցին՝ գուցե դուրս է գալիս, մտածեցին՝ տանը հրացան- բան կունենա. տղան Ստեփանակերտ աչքի ընկած է, ղեկավարության հետ է նստում , - գնաց՝ հրացանը վերցնի գա, եւ ոչինչ չեղավ:

Գյուղկոռպի դռանը հավաքված՝ հիշեցին, որ էն հեռավոր 20 թվի գարնանը մի Շրհբարանց Եփրեմ է եղել էս գյուղում, սրանց քշել է, մտաբերեցին, որ սար գնալիս Շոֆերը երբեմն հենց այնպես հիշեցնելու նման ասում էր՝ «Մեր հին տան գերանը մինչեւ հիմա էլ մեկի օճորքում կա»:- Յետո խորհրդային օրոք Եփրեմը թուրքի գյուղեր հնձավարձի է գնացել, խեղճ, մանգաղը գոտու տակ, դողերոցքը բռնած՝ ծառի շվաքում պառկած է եղել, մի ձիավոր թուրք քշվել է հնձվորների վրա, գոռացել է՝ «հա՞նը Եփրում

, օնուն գանը իջմալի ամ»:-Այսինքն՝ ձեր մեջ Եփրեմն ո՞վ է, եկել եմ արյունը խմեմ,- պատմեցին, որ հնձվորները վախից քարացել են, նայել ծառի ուղղությամբ, կյանքը թանկ բան է, ու եղ հլգած Եփրեմը մանգաղը գոտուց հանել, կանգնել է՝ «Եփրեմը ես եմ, ուզածդ ի՞նչ է»,- եւ ձիավոր թուրքն եղ դիվային հայացքից երեսը շրջել, բղավել է. «Բու ադամ դեյիլ, բու շեյթան դը»՝ սա մարդ չի, սատանա է,- եւ հնձի տասներորդ բաժինն առած՝ սայլերը քշել են Խաչենի հոսանքն ի վեր՝ դեպի գյուղ: Ղազանչու բաղերում եզներն արձակել, ուզեցել են նուբար կեռաս ուտեն՝ հեռվից մի կենտ կրակոց է եղել՝ Քրդանց Սերգի տղան սպանվել է: Աշխատածը՝ արնախառն մի ջվալ ցորեն,- գուցե ուրիշ բան էլ եղել էր՝ չհիշեցին:

Ժորա Շահբարյանը Ստեփանակերտ գյուղտեխնիկումի ուսանող էր, հայտնի Արշադ Մամեդովի դատից հետո, որ ժողովուրդը գժված բռնել, բենզին էր լցրել ու վառել էր ավազակին, ու խորհրդային զորքը կրակել էր մարդկանց վրա, մի գնդակ էլ նրան էր բաժին հասել՝ վիրավոր ձերբակալել, յոթ տարվա տաժանքի էին դատապարտել: Ժորան հավաքվածների մեջ էր, նայեցին, թե՛ «Ձեր Շըհբարանց Եփրեմին տեսած կա՞ս, քեզ նման բարակ մարդ էր, բայց մեջը պողվատ կար»:- Ժորան ծանրությունը ետ մղեց. «Իմ բաժինը ես ստացել եմ անձամբ Յեյդար Ալիեւից, դուք ձեզ տեսեք»:-

Մի տղա երեխա՝ Արասխանանց Շիրինի թոռ Աշոտը լուռ սպասում էր՝ մեծերն ինչ են որոշելու: Նրանց տոհմում մեկը նախապատերազմական ժամանակներում եղել էր ըմբոստ աշակերտ կամ դառնալու էր լավ բանաստեղծ. «Նացիոնալիստական գրող Ակսել Բակունցի ստեղծագործությունները պրոպագանդելու, շքանշանակիր բանաստեղծ Գեղամ Սարյանին վարկաբեկելու համար դպրոցիս 10-րդ դասարանի աշակերտ Արամ Ալավերդյանին հեռացնում եմ դպրոցիցս:

Դպրոցի դիրեկտոր Ա. Յարությունյան

11-ը մայիսի, 1940 թ.»:- Այդ տղան մի երկու ամիս անց գորակոչվել էր Կարմիր բանակ՝ «ժողովրդի թշնամի» խարանը ջահել ճակատին ու չէր եկել, անհայտության մեջ խփվել էր, բայց եղել էր այնպես, որ դպրոցի տնօրենը սիրահարվել է աշակերտուհի-

ներից ամենաաչքաբաց մեկին, եւ այդ պատմությունը նրա կնոջ դիմում - բողոքով ընկել էր շրջանի ղեկավարության տեսադատը, կուսակցությունից հեռացրել, դատի էին տվել, ուզենար՝ բանտում մնալու էր, բայց կամավոր զինվորագրվել է սոցիալիստական հայրենիքի պաշտպանության սրբազան գործին՝ ուղարկել են պատժագումարտակ, եւ հնարավոր է՝ նախկին աշակերտ Արամ Ալավերդյանը նախկին տնօրեն Ավետիս Չարությունյանի հետ նույն վաշտում կողք-կողքի կռվել են ու արդեն չեն վիճել՝ Ակսել Բակունցն է լավ գրող, թե՞՝ Գեղամ Սարյանը, -սա համարենք երեւակայություն, բայց պատերազմում զոհվածների հուշարձանին նրանց անուններն իրար մոտ են, երկուսն էլ, ի վերջո, նույն դաժան ժամանկների զոհ են: *Իսկ ժամանակների մասին հորս թղթերում վերջերս գտա այս թատերգություն-վիպակը, որի գոյության մասին չէր ասել.*

Բայց մահվան օրը հայտնի չէր

*Քրտամբք երեսաց քոյ կերիցես
զհաց քոյ, մինչեւ դարձցիս յերկիր,
ուստի առար, զի հող էիր եւ ի հող դարձցիս....
Աստվածաշունչ*

Գործող անձինք
Արամ Ղարախանյան՝ ծեր, միայնակ մարդ
Մի Չայն
Երկրող Չայն
Օտարական
Չեկուցագիր, Նամակ, Բացատրություն, Ինքնակենսագրություն
Քննիչ
Երիտասարդ Արամ Ղարախանյան
Գեւորգ Միսաքյան
Չինվոր
Լուսարձակ
Գեւորգ Միսաքյանի ձայնը. *Մարդիկ սարսափում են մահից, բայց բոլորի վախճանն անխուսափելի է: Ոմանք ապրում են երկար, որպեսզի հիշեն մեռածներին, ոմանք՝ որպեսզի հպարտանան: Նրանք թույլ մարդիկ են, քանի որ ճակատագրի պարզելը սեփական առավելություն են տեսնում: Բայց լինում է նաեւ ամե-*

Նաահավորը. նրանք երբեմն մոռանում են, որ պարտական են մեռածներին:

Կիսամութ սենյակ: Գրասեղանի վրա խառնիխուռն թափված են հին լրագրեր, մաշված թղթապանակներ: Արամ Ղարախանյանը նստած է: Ծխում է, թերթում խուճացած թղթեր, երբեմն մեկուսի ժպտում: Գուրգուրանքով դասդասում է դեղնած լրագրերը: Ապա հանկարծ ելնում է աթոռից, ասես ինչ-որ տեղ է շտապում, բայց կրկին նստում է, տենդոտ քրքրում գրասեղանի գգրոցը: Երկար որոնում է, ապա տրորում ճակատը: Շուրթերին միում է ծխախոտը, մոխիրը թափվում է թղթերին: Ակնդետ նայում է իր դիմաց: Հանկարծ ընդոստ ելնում է: Լուսարձակը գրասեղանից աջ տեսանելի է անում պատ՝ կախովի գրապահարաններով: Արամ Ղարախանյանը մոտենում, վերջին գրադարակից վերցնում է մի հաստափոր գիրք, արագ-արագ թերթատում: Հատակին ինչ-որ թուղթ է ընկնում: Նա կռանում է, վերցնում եւ մոտենում գրասեղանին: Նստում է նույն դիրքով: Ձեռքով իրենից վանում է ծուխը, ապա հանկարծ սկսում է հազալ: Փորձում է աթոռից բարձրանալ, բայց անսպասելի ցավը նրան գամում է տեղում: Արամ Ղարախանյանը բռնում է ձախ կուրծքը:

Արամ Ղարախանյան - խոսում է նվաղուն - Անիծյալն էլի սկսեց: - Մոխրամանում հազիվ ճգմում է ծխախոտը:- Ու՞ր է դեղս: Այստեղ պիտի լիներ: - Խառնշտում է գրասեղանի թղթերը, դողդոջուն ձեռքերով գտնում մի սրվակ: Տանջալիորեն երկար հանում է փոքրիկ հաբը, դնում լեզվի տակ: - Ինչ զզվելի է... - Դողում է, ցնցվում եւ գլուխը հակում գրասեղանին:

Մի Ձայն- Ուրիշի դժբախտության համար ես մեղավոր չեմ: Ո՞վ է հիշում: Այդ նամակը ես չեմ ստացել: Պետք էր ապրել եւ ապրեցի:

Երկրորդ Ձայն - **Մենք հանդիպեցինք գաղթի ճանապարհներին, եւ մահվան սարսափը մեզ ընկերացրեց եւ երդվեցինք, որ միասին կլինենք ընդմիշտ: Իսկ հետո... Ինչու՞ եղավ այդ ամենը:**

Մի Ձայն- *ես ապրեցի, տեսա մահեր, պարտություն եւ հաղթանակներ: Շատերը կործանվեցին, ես մնացի:*

Արամ Ղարախանյանը դանդաղ ուշքի է գալիս: Ծանրորեն ելնում է աթոռից, մոտենում գրադարակներով պատին: Լուսարձա-

կը ցոլացնում է կնոջ լուսանկար՝ սեւ շրջանակի մեջ:

Արամ Ղարախանյան- Գոնե դու խոսիր, Հասմիկ:- Լուսարձակը հեռանում է, պատը՝ խավարում:- Դու՞ էլ ես ինձ մեղադրում:

Մի Ձայն - *Ես ամեն ինչ գիտեի: Ինձ ասել էին, որ Հասմիկը Գեւորգին բանտ՝ երկտող է ուղարկել:*

Արամ Ղարախանյանն ընդոստ շրջվում է: Աչքերն անբնական չռված են, կզակը դողում է:

Արամ Ղարախանյան- Ո՞վ է այստեղ խոսում:

Մի Ձայն - *Այստեղ ոչ ոք չկա: Բոլորը քեզ վաղուց լքել են:*

Երկրորդ Ձայն - **Դու քեզ մոռացե՞լ ես:**

Արամ Ղարախանյան- Ո՞վ է հարցնում:- Ամբողջ մարմնով դողում է: Պատասխան չի լսվում: Լուսարձակը կրկին ընկնում է գրադարակներով պատին:- Դու՞ ես, Հասմիկ:- Լուսարձակը հեռանում է: - Ախ... - Արամ Ղարախանյանը սորից բռնում է ձախ կուրծքը, ձեռքը մեկնում գրասեղանին, որպեսզի դեղասրվակը վերցնի, բայց չի հասցնում:- Օդ չկա:- Պատռում է վերնաշապիկը: - Հասմի՛ի՛կ՛: - Լուսարձակը մոտենում է Արամ Ղարախանյանին: Նա ճգնում է ծածկել դեմքը: Լուսարձակն ավելի է մոտենում: Արամ Ղարախանյանը փլվում է հատակին:

Օտարականը ներս է մտնում: Լուսարձակը նրա հետ շարժվում է դեպի գրասեղանը: Օտարականը նստում է Արամ Ղարախանյանի աթոռին, տուփից ծխախոտ է հանում, վառում: Լուսարձակը կախվում է գրասեղանի վրա:

Նամակ- **Արամ, կարդալուց անմիջապես կվառես: Նորից են կանչել: Գիտեմ, որ այս անգամ ետ չեմ գա: Գրքերս թաղել եմ բակի լորենու տակ: Կհանես, երբ ժամանակը լրանա: Երկրով չար խորշակներ են անցնում, հսկաներ են տապալվում: Ես փոքր ոստ եմ: Ափսոս, չհասցրի ավարտել գործս: Ներիր, եթե իմ պատճառով կարող են կասկածել քեզ: Մինչեւ վերջին շունչս հավատարիմ եմ մնալու երկրին: Ես անմեղ եմ:**

Գեւորգ

Օտարականը ինամքով ծալում, թուղթը դնում է ֆրենչի կրծքագրպանը, ապա բարձրանում՝ մոտենում է հատակին փլված Արամ Ղարախանյանին: Ձեռքերը գալիֆեի գրպաններում, նա ճտքակոշիկի քթով թեթեւակի սեղմում է Արամ Ղարախանյանի

կուրծքը եւ սպասում: Լուսարձակն ընկնում է Օտարականի դեմ-
քին: Սառը փայլատակում են ականցի կլոր ապակիները, դեմքին
խաղում է ջղային մի մկան՝ քունքից մինչեւ սուր ծնոտը: Մի քա-
նի վայրկյան Օտարականն ականդետ նայում է Արամ Ղարախան-
յանին, ապա հատու քայլերով շրջանցում նրան: Լուսարձակը հե-
ռանում է: Օտարականը խոսում է մութից:

Օտարական- ժամանակը ծնում է մարդուն, ժամանակը սպա-
նում է մարդուն: Այստեղ շատերն ինձ դեռ հիշում են: Նրանք բո-
լորի հետ անիծում են ինձ, բայց առանձնության մեջ սպասում են
իմ հայտնությանը: Եւ ես գալիս եմ: Ես կամ: Ինձ ոչ ոք չի սպա-
նել, թեեւ աշխարհով մեկ վաղուց հայտարարել են մահս: Ժամա-
նակն է պահանջում մարդուն: Իմ ժամանակը հավերժ է: Նա չու-
նի սկիզբ, ուրեմն եւ՝ վախճան: Նա հին է այնքան, որքան՝ մար-
դը: Եւ միշտ նորանում է, որովհետեւ մարդ ինքնին անգոր է կազ-
մակերպվել: Նրան պետք է մեկը, որ որոշումներ ընդունի: Ինչ
անուն ուզում եք՝ տվեք՝ Քրիստոս կամ Մովսես մարգարե, կամ
Մակեդոնացի... Բոլոր ժամանակներում մարդ ենթակա է կառա-
վարման, քանի որ ինքնակառավարվել չի կարող: Մարդ հասկա-
նում է, որ ինքնակառավարումը քաոս է, բռնություն՝ երբ բոլորը
բոլորին դեմ են, ուստի ստեղծում է կուռք եւ ենթարկվում: Մարդ
ի բնե կռապաշտ է: Հպատակությունը նրա գերագույն հաճույքն
է՝ երբ ինքը չի որոշում, ուրեմն եւ ոչնչի համար պատասխանա-
տու չէ: Նույնիսկ՝ սեփական գոյության: Այս մարդը,- Օտարակա-
նը շրջվում է դեպի Արամ Ղարախանյանը, լուսարձակը նրա հետ
շրջվում է,- որ քիչ առաջ ընկավ, չի մեռել: Ես նրան այդ իրավուն-
քը չեմ տվել: Ահա կմոտենամ, ականջին կփսփսամ ընդամենը
երկու բառ... Ոչ, կարիք չկա, որ դուք իմանաք, դրանք ձեզ ոչինչ
չեն ասի, ես կփսփսամ երկու բառ, եւ նա կելնի: - Մոտենում է
Արամ Ղարախանյանին, կռանում, բռնում ուսերից եւ բարձրաց-
նելիս ականջին ինչ-որ շշնջում:

Արամ Ղարախանյանը ցնցվում է՝ ինչպես ուշագնացությունից
սթափվողը:

Արամ Ղարախանյան- Ո՞վ է , ի՞նչ է պատահել:- Լուսարձակը
մոտենում է նրան:

Օտարական,- մութի միջից,- Տեսնու՞մ եք:

Արամ Ղարախանյանն ավերով ծածկում է դեմքը- Սա ի՞նչ լույս է, հեռու տարեք:- Փութկոտ մոտենում է գրասեղանին: Օտարականն ստվերի պես հետեւում է նրան, կանգնում թիկունքին: Լուսարձակը մութից գատում է նրանց: Արամ Ղարախանյանը մոլեգին քրքրում է թղթերը, ձեռքն է ընկնում դեղասրվակը, կատաղի շարտում է հատակին:- Այստեղ էր, քիչ առաջ կարդում էի, ու՞ր կորավ: Ախ, ինչ հիմարն եմ եղել, ինչի՞ս էր պետք թղթի այդ կտորը: Պիտի վառեի, մոխիրը խառնեի հողին: Օձն ուզում էր հետը քարշ գայի մինչեւ Սիրի՞ր: Չէ, ժողովրդի թշնամու հետ ես գործ չունեմ, հասկացա՞ք: Ասում են՝ իբր պատերազմին է մասնակցել: Սուտ է: Մեռել է անհայտության մեջ: Գերեզման էլ չունի: Չի եղել Գեւորգ Միսաքյան անունով մարդ, չի եղել... Բայց ու՞ր մնաց այդ անիծյալ թուղթը:- դարձյալ խառնչտում է գրասեղանը: Ընկնում է ջղագարության մեջ եւ թղթերը մեկ- մեկ շարտում:- Հիմա կգնտնեմ ու կվառեմ:- Թռցնում է թղթապանակները, որ բացվում են:- Ահա՛ տեսեք՝ սրանք պատվորգեր են, թերթերն իմ մասին գրել են, ես պետական պարգեւներ ունեմ, վաստակավոր ուսուցիչ եմ:- Արամ Ղարախանյանը թափով բարձրանում է աթոռից: Օտարականը ճարպկորեն ետ է քաշվում՝ միշտ մնալով թիկունքում: Արամ Ղարախանյանը հատակից հավաքում է թղթերը, նետում դեպի դահլիճ:- Վերցրեք, կարդացեք:- Հանկարծ կանգ է առնում: Ծնկները կարծես ծալվում են, նա գայթում է, բայց կարողանում է պահել հավասարակշռությունը: Լուռ կանգնում է: Լուսարձակը շարժվում է նրա հասակն ի վեր եւ մեխվում աչքերին: Արամ Ղարախանյանը չի դիմադրում: Նա տարածում է թեւերն ու աղերսում:- Ետ տվեք թղթերս, կյանքս ինձ տվեք, խնդրում եմ: Չավակներս, ինայեցեք ծեր մարդուս, մի կործանեք ինձ:- Դանդաղ ծնկի է գալիս, խոնարհվում հատակին: Ուտերը ցնցվում են: Լուսարձակը թողնում է Արամ Ղարախանյանին, եւ երեւում է Օտարականը:

Օտարական- Ես նրան ուշքի կբերեմ, որպեսզի ապրի եւ տառապի: Մահը փրկություն է, իսկ նա դրան արժանի չէ: - Ոտքը բարձրացնում՝ սեղմում է Արամ Ղարախանյանի ձախ ուսը: Ծուրթերին դիվային մի ժպիտ է թրթռում: Ավելի է սեղմում, մի փոքր էլ, եւ Արամ Ղարախանյանը շրխկոցով փռվում է հատակին:

Օտարականը չար, մետաղաձայն ծիծաղում է:

Արամ Ղարախանյան,- անդրշիրիմյան ձայնով,- Ո՞վ է այստեղ:

Օտարական- Ես եմ:- Լուսարձակը հեռանում է նրանից եւ մոտենում Արամ Ղարախանյանին: Օտարականը մուրթի մեջ է:

Արամ Ղարախանյան- Դու ո՞վ ես, ես քեզ չեմ տեսնում: Դուրս եկ, որ տեսնեմ եւ ճանաչեմ:

Օտարական- *Ոտքի, թշվառական: Մոռացել է,- ծիծաղում է,- Ինչպե՞ս ես համարձակվում:* - Չատվում է մուրթից եւ կանգնում լույսի շրջագծում, եւ հանդիսատեսն առաջին անգամ նրան տեսնում է ամբողջ հասակով՝ ատրճանակը գոտուց կախ: Օտարականը ճոքակոշիկի թեթեւակի հրումով Արամ Ղարախանյանին կրկին տապալում է գետնին:

Արամ Ղարախանյան- Ի՞նչ ես անում, ես ծեր, միայնակ մարդ եմ: Հիմա կգոռամ, կկանչեմ հարեւաններիս...- Օտարականը ոտքը դնում է նրա կրծքին եւ սեղմում: Արամ Ղարախանյանն ափ նետած ձկան պես թպրտում է: Օտարականը, մի դաժան քրքիջով բռնված, ցնցվում է:

Օտարական- *Ողորմելի ճիճու, տակակնք:* - Չզվանքով է նայում Արամ Ղաչախանյանին, որ կապտած շուրթերով ճգնում է օգնություն կանչել:- *Չես սատկի:* - Հետ է քաշում ոտքը, կռանում Արամ Ղարախանյանի դեմքին: *-Ոտքի կանգնիր եւ հիշիր տիրոջդ, թե չէ...*- Պատյանից հանում է ատրճանակը, իջեցնում պահպանակը եւ փողը սեղմում Արամ Ղարախանյանի քունքին:- *Ոտքի, թշվառական, ու՞մ եմ հրամայում:*- Արամ Ղարախանյանը դողահար կանգնում է: Օտարականն ընդհուպ մոտենում է նրան, դիմահար նայում աչքերին:

Արամ Ղարախանյան- Աստված իմ... Դու՞ք... Այստե՞ղ... Իմ տա՞նը... Ինչպե՞ս եկաք... Հարեւաններս... Բոլորը...- Ետ- ետ է քայլում: Լուսարձակը ցոլացնում է դռնախորշ: Օտարականը, միշտ ատրճանակի փողն Արամ Ղարախանյանի քունքին պահած, հետեւում է նրան: Մոտենում են դռանը: Արամ Ղարախանյանը ձեռքը մեկնում է բռնակին, դուռն անաղմուկ բացվում է, եւ լուսարձակն ընկնում է միջանցք: Երեւում է բարձրահասակ, թիկնեղ Չինվորը՝ հրացանի սվինը Արամ Ղարախանյանի կրծքին ուղղած: Օտարականի դեմքին խաղում է չարախինդ ժպիտը:

Արամ Ղարախանյան- Սա ի՞նչ է նշանակում:- Ահով նայում է Օտարականին:

Օտարական- *Ողորմելի, դու մոռացել էս, որ մենք դավաճաններին չենք ներում: Այս շենքում ոչ ոք չկա: Իմ մարդիկ հսկում են մուտքերը, մայթը, փողոցը, ողջ քաղաքը, երկիրը... Իմ անունը դարձյալ սարսափեցնում է միլիոնավոր մարդկանց: Ես կամ: Վերադարձել եմ:-* Դիվային ծիծաղում է:

Արամ Ղարախանյան- Ոչ, սա երազ է: Չէ՞ որ Դուք.. Ես հիմա կզանգեմ...

Օտարական- *Մի թպրտա, ամեն ինչ մտածված է վաղորդք: Ես քեզ հիմա կալանքի եմ վերցնում:- Դիմում է միջանցքի Չինվորին:- Տար սրան:-* Չինվորը մոտենում, Արամ Ղարախանյանին ձեռնաշղթաներ է հագցնում:

Օտարական- *Դու չե՞ս մոռացել:*

Չինվորը լուռ գլխով է անում:

Օտարական- *Եթե այնտեղ թպրտա, ասա, որ հանգստացնող դեղեր տան:*

Չինվորը ձգտվում, պատվի է առնում՝ զրնգացնելով կոշկախթանները:

Օտարական- *Իմ մեքենան թող կես ժամից մուտքի մոտ լինի:*

Չինվորը դարձյալ պատվի է առնում: Արամ Ղարախանյանն ապշահար նայում է մերթ նրան, մերթ՝ Օտարականին: Չինվորն Արամ Ղարախանյանին կոպտորեն հրում է միջանցք: Լուսարձակն Օտարականի հետ գալիս է դեպի Արամ Ղարախանյանի գրասեղանը:

Օտարականը նստում է: Վերստին քրքրում է գրասեղանի թղթերը, խառնշտում թղթապանակները: Ըստ երեւույթին, որոնաձը չի գտնում: Ֆրենչի ծոցագրպանից հանում է մի խուրձ բանալիներ, մեկ առ մեկ փորձում: Բավական ժամանակ նա տքնում է: Լսվում է Օտարականի խռպոտ շնչառությունը: Նա հուզմունքից սկսում է հեւալ: Վերջապես բացում է աջակողմյան դարակը: Գրպանի լապտերիկով լուսավորում է ներսը, հանում մի կաշեկազմ թղթապանակ: Բացում է, սկսում անշտապ թերթատել: Լուսարձակը ընկնում է նրա ձեռքերին: Նա կաշվե նուրբ ձեռնոցներով է: Օտարականի դեմքին խաղում է նույն ջղային մկանը՝ քունքից

մինչև ծնոտ: Սառը փայլում են ակնոցների կլոր ապակիները: Ճակատին պսպղում է քրտիկքը: Նրա դեմքը հանկարծ լարվում է, հայացքը՝ դաժանանում:

Ինքնակենսագրություն- **Ես՝ Արամ Թադեոսի Ղարախանյանս, ծնվել եմ 1906թ. հունվարի 18-ին Վան քաղաքում (Թուրքիա), չքավոր արհեստավորի ընտանիքում: Համաշխարհային պատերազմի ժամանակ ծնողներիս հետ ապավինել եմ փրկարար ռուսական բանակին եւ տեղափոխվել Ռուսաստան: 1916թ. ամռանը, ինձ հանձնելով որբանոց, ծնողներս տեղափոխվել են Հյուսիսային Կովկաս, ուր եւ բնակվում են՝ Ստավրոպոլ քաղաքում, Լենինի փողոց, տ. 7 հասցեում: Հայրս մասնակցել է Հյուսիսային Կովկասում խորհրդային իշխանության հաստատման համար պայքարին:**

Հայաստանում խորհրդային իշխանության հաղթանակից հետո սովորել եմ Լենինականի միջնակարգ- մանկավարժական ուսումնարանում, ընդունվել կոմերիտմիության շարքերը: Ապա ավարտել եմ Երեւանի պետական համալսարանի պատմալեզվագրական բաժինը: Ներկայումս աշխատում եմ որպես յոթնամյա դպրոցի վարիչ: Կոմերիտական տույժ չեմ ստացել, թեքումների մեջ չեմ մեղադրվել: ԽՍՀՄ-ից դուրս ապրող հարազատներ, բարեկամներ եւ ծանոթներ չունեմ: ՀամԿ(բ)Կ անդամության թեկնածու եմ: Ամուսնացած չեմ: Պահեստի զինապատ եմ:

**Ինքնակենսագրող՝ Ա. Թ. Ղարախանյան
2. 11. 1933թ.**

Օտարականը փակում է կաշեկազմ թղթապանակը: Լուսարձակն ընկնում է գրադարակներով պատին: Կնոջ լուսանկար՝ սեւ շրջանակի մեջ: Օտարականը մութից ելնում, մտնում է լուսաշրջագծի մեջ: Նայում է կնոջ լուսանկարին:

Մի Ձայն- **Ավելացնելու ոչինչ չունեմ:**

Երկրորդ Ձայն- **Հայրս Հյուսիսային Կովկաս տեղափոխվեց, որովհետեւ չէր ուզում ծանոթների հանդիպել: Վանում նա ծխական քահանա էր:**

Մի Ձայն- **Ամեն ինչ գրել եմ ազնվորեն:**

Երկրորդ Ձայն- **Որտե՞ղ մնաց Հայկը: Նա ինձնից տաս տարով մեծ էր: Հայրս նրան ուսման էր ուղարկել Էջմիածին, բայց պատե-**

րազմ սկսվեց, եւ Հայկը մտավ կամավորական ջոկատ: Մենք նրան վերջին անգամ տեսանք 20թ. աշնանը: Թուրքերը գրավել էին Ալեքսանդրապոլը: Նա տխուր էր: Հայկական զորքը պարտվել էր: Մայրս լալիս էր: Հայրս չէր խոսում: Հայկը հրաժեշտին ասաց. «Երկիր պիտի գնամ, մեր տունը չեմ թողնի»:

Մի Ձայն- Փոքր էի, ուրիշ ոչինչ չեմ հիշում:

Երկրորդ Ձայն- **Հայկը գնա՞ց: Չգիտեմ, բայց մենք նրան այլևս չտեսանք:**

Օտարական- Ես դա վաղուց գիտեի, բայց նա ինձ պետք էր: Այդպիսի մարդիկ պատրաստ են ամեն ինչ եւ բոլորին ուրանալ, միայն թե սեփական կաշին փրկեն, իսկ մեր գործում կարելորդ ոգու նվաճումն է: Դու կարող ես սպանել մարդուն, բայց եթե չես հաղթում հոգով, պարտվում ես:

Մի Ձայն- Ես գինվոր էի, գինվորը հրաման է կատարում:

Երկրորդ Ձայն- **Ի՞նչ կփոխվեր, եթե գնայի Քեւորգի հետ: Ոչինչ: Չոհերի թիվը մեկով կավելանար:**

Մի Ձայն- Երբ թշնամին չի հանձնվում, նրան ոչնչացնում են:

Երկրորդ Ձայն- **Ո՞վ էր թշնամի:**

Օտարական- Մարդ բարբարոս է: Եթե չգսպես՝ նա կկործանի աշխարհը:

Մի Ձայն- Ինձ էլ ոչինչ մի հարցնեք: Ամեն ինչ ասված է:

Երկրորդ Ձայն- **Միշտ երազել եմ հեռանալ մի անծանոթ քաղաք, ապրել աննկատ:**

Օտարական- Որեւէ մեղադրյալի համար ես հատուկ գործ չեմ ստեղծել: Ինձ միշտ գեկուցել են փաստեր, վկայություններ: Բայց ինչու՞ եմ ուզում արդարանալ:- Օտարականը ելնում է տեղից: Լուսարձակը նրա հետ առաջ է շարժվում:- Ումի՞ց եմ վախենում: Ձեզնի՞ց: Հիմա բոլորդ սարսափահար եք:- Ձեռքը պարզում է դահլիճին:- Եթե հրամայեմ՝ ծնկի կգաք եւ կիզեք ոտքերս, միայն թե չսատկացնեմ: Չզվում եմ ամբոխից:- Եղկելիորեն ծամաժուլում է դեմքը: Ծանր լռություն: Հետո լսվում է մեքենայի ընդմիջվող ազդանշան: Օտարականն սթափվում է:- Տղերքը կեցցեն: Այս գիշեր լավ աշխատեցին: Հիմա հեռանալու ժամանակն է:- Օտարականն արագ, բայց անաղմուկ քայլերով հեռանում է: Լուսարձակը նրա հետ շարժվում է դեպի գրադարակներով պատը եւ

աստիճանաբար թուլանալով, մարում, երբ Օտարականը փակում է դուռը: Փողոցում շուն է կաղկանձում: Լսվում է մեքենայի հռնդոց՝ ատրճանակի չոր կրակոցի հետ խառը: Շունը սորից է կաղկանձում: Կրակոցը կրկնվում է: Օտարականի դիվային քրքիջը խլացնում է փողոցի ձայները:

Բանտաախուց: Մութ է: Լույսի մի խուրձ մերթընդմերթ բռնկվում- հանգչում է: Լսվում է զինվորական հատու քայլերի ձայն: Լուսարձակը վառվում է: Բանտախցում միայն մեկ կալանավոր է: Նա երիտասարդ է, նիհար: Դեմքը մորուսած է:

Գեւորգ- *Արամ, Նամակս անմիջապես կվառես: Գրքերս թաղել եմ, կհանես, երբ ժամանակը լրանա: Երկրով չար խորշակներ են սուրում: Տապալվում են կաղնիներ, իսկ ես փոքր ոստ եմ... Ես փոքր ոստ եմ... Ես փոքր ոստ եմ... Ինչու՞ է այսքան երկարածգվում ողբերգությունը: Ժամանակը չէ՞, որ իջնի վերջին գործողության վարագույրը: Ես Արամին չեմ դավաճանի Զիմա նա պիտի ապրի երկու մարդու կյանք:*

Ճռնչոցով բացվում է մի դուռ: Շրջանակում ուրվագծվում է հսկիչի դեմքը: Լսվում է ցավալի ճիչ, հետո՝ աղմուկ: Քիչ հետո ամեն ինչ հանդարտվում է: Հսկիչն անխոս մոտ է կանչում Գեւորգին: Գեւորգը կարկամած մոտենում է: Հսկիչը նրան է մեկնում քառածալ մի թուղթ եւ արագ փակում ակնատը:

Նամակ - **Գեւորգ, մի վստահելի մարդ հանձն առավ, որ կհասցնի քեզ, վերջին հնարավորությունս է, որ օգտագործում եմ, երկյուղ չունեմ, ինչ ուզում է՝ թող լինի, թող ինձ էլ ձերբակալեն, դու պիտի իմանաս ճշմարտությունը. Արամը մատնել է քեզ:**

Յ.

Գեւորգը ցնցվում է:- Մի՞թե ծուղակ է: Ոչ, սա իրոք Հասմիկի ձեռագիրն է: Ի՞նչ է նշանակում՝ «Արամը մատնել է քեզ»: Գեւորգը նետվում է դեպի դուռը եւ կատաղի ծեծում:- *Ինձ տարեք քննիչի մոտ, հենց հիմա, բացեք դուռը, ես կարեւոր հայտարարություն ունեմ, որ կանեմ միայն դատախազի ներկայությամբ:* Միջանցքում նույն համառ հաճախականությամբ լսվում է հսկիչի ոտնածայնը: Գեւորգը ուժասպառ նստում է խցի հատակին:

Առանձնասենյակ: Երկար սեղան: Պատուհանագոգին՝ ծաղկաման: Պատին՝ Ձերժինսկու հայտնի լուսանկարը: Քննիչը

մտազբաղ ծխում է: Նրա դիմաց՝ երիտասարդ Արամ Ղարախանյանը:

Ձեկուցագիր- Մենք՝ ի ներքո ստոագրողներս, մեր պարտքն ենք համարում հայտնել, որ Գեւորգ Միսաքյանը վարակված է հայկական մարտնչող նացիոնալիզմի գաղափարախոսությամբ: Նա վարկաբեկում է հանճարեղ առաջնորդ Ստալինին եւ ասում, որ, իբր, ընկեր Ստալինի ղեկավարությամբ մենք ոչ թե դեպի կոմունիզմ ենք գնում, այլ հայտնվել ենք խոր միջնադարում: Նա մատաղ սերնդին կարդում է հայկական նացիոնալիզմի գաղափարախոսներ Գամառ Զաթիպայի, Րաֆֆու ստեղծագործությունները, որոնց միջոցով զարգացնում է ատելություն դեպի թյուրք աշխատավոր ժողովուրդը:

Իբր թե ասպիրանտական քննություններ հանձնելու, բայց իրականում բուրժուական երկրներին ծառայելու նպատակով Միսաքյանը սովորել է գերմաներեն եւ անգլերեն եւ այդ լեզուներով կարդում է արգելված գրքեր:

Խնդրում ենք անհապաղ միջոցներ ձեռք առնել, որպեսզի Միսաքյանը մեկուսացվի հասարակությունից եւ պատասխան տա իր հակախորհրդային արարքների համար:

Այդ ընթացքում Քենիչն ակնդետ նայում է Արամ Ղարախանյանին:

Արամ Ղարախանյան- Կարելի՞ է ձեռագիրը տեսնել:

Քենիչ- Դուք մեզ կասկածու՞մ եք: Մենք ամեն ինչ ստուգել ենք, ստորագրությունները վավերական են: Ձեզ այստեղ ենք հրավիրել, քանի որ Դուք եք դպրոցի տնօրենը: Մեզ համար Ձեր վկայությունը կամ, իհարկե դա Ձեր իրավունքն է, հերքումը մեծ նշանակություն ունի:- Սեղանին է դնում ծխախոտի տուփ:- Ծխու՞մ եք:- Արամ Ղարախանյանը գլխով դրական պատասխան է տալիս:- Դա լավ է, տալիս եմ երեք րոպե ժամանակ, ծխեք, հավաքեք Ձեր մտքերը:- Արամ Ղարախանյանը ծխախոտ է վերցնում, վառում: Լուցկու հատիկը բավական երկար պահում է, ապա կտրուկ շարժումով հանգցնում եւ շատ զգույշ նետում մոխրաման: Ծխում է նաեւ Քենիչը: Լսվում է ժամացույցի վայրկենաչափի տկտկոց, որ գնալով ուժեղանում է: Արամ Ղարախանյանը լուռ է: Վայրկենաչափի տկտկոցը թուլանում, ապա մեկեն կտրվում է: Ժամանակն

սպառվում է:

Քննիչ- Վկա Ղարախանյան, զգուշացնում եմ, որ մեղադրյալ Միսաքյանին պաշտպանելու, նրա մեղքը կոծկելու ամեն մի փորձ օրենքով համարվում է հանցակցություն, հանցագործություն է նաեւ իմանալ՝ չհայտնելը, որը նշանակում է, որ դու, որպես պաշտոնատար անձ, փաստորեն պարտակել ես Միսաքյանի հանցանքը: Դու հասկանում ես, թե ինչ վտանգի տակ ես դնում քեզ: Մենք այստեղ չենք կատակում:

Արամ Ղարախանյան- Այո, հասկանում եմ, պատրաստ եմ ասել միայն ճշմարտությունը:

Քննիչ- Դու, Արամ Թադեւոսի Ղարախանյան, հաստատում ես, որ Գեւորգ Ալեքսանի Միսաքյանը,- մատը դնում է Չեկուցագրի ընդգծված տողերին,- ընկեր Ստալինին համարել է բռնապետ:

Արամ Ղարախանյան- Միսաքյանը... Գիտե՞ք... Դե, ինչպե՞ս ասեմ, Գեւորգը մի քիչ անկայուն է, անզուսպ, այնպես որ...

Քննիչը խոսում է չոր, համարյա սպառնալի, բայց նրա դեմքն առաջվա պես անհույզ է- Հարցը, կարծեմ, դրված է կոնկրետ՝ մեղադրյալն ընկեր Ստալինին ընդունում է որպես հանճարեղ Առաջնորդի՞, թե նրան բռնապետ է համարում:

Արամ Ղարախանյան- Նա... Ներեցեք, կարելի՞ է ծխել:- Քննիչն անխոս թույլատրում է: Արամ Ղարախանյանը նոր ծխախոտ է վառում:- Ես չեմ լսել, որ Գեւորգը, ներողություն, մեղադրյալ Միսաքյանից ես ընկեր Ստալինի հասցեին նման բառեր չեմ լսել, բայց նա երբեմն ասում է մտքեր, որ ընդունված չեն...

Քննիչ- Ի՞նչ մտքեր, կարո՞ղ ես հիշել:

Արամ Ղարախանյան- Մեղադրյալ Միսաքյանն, օրինակ, գտնում է, որ սոցիալիզմի հաջողություններին զուգահեռ երկրում չի կարող սրվել դասակարգային պայքարը, քանի որ եթե սոցիալիզմը զարգանում է, շարք են մտնում նոր գործարաններ, կառուցվում քաղաքներ, ջրանցքներ, եթե կոլեկտիվ գյուղատնտեսությունն ապահովում է մթերքների ավելի մեծ արտադրություն, քան մասնավոր գյուղացիական տնտեսությունների ժամանակ էր, ապա ինչպե՞ս կարող է սրվել դասակարգային պայքարը...

Քննիչ- Ահա թե ինչեր է ասում...- Նա շտապ թուղթ է վերցնում, գրիչը թաթախում թանաքամանում եւ սկսում գրել՝ բարձրաձայն

վանկարկելով:- Մի-սաք-յանը գըտ-նում է, որ երկ-րում դա-սա-կար-գա-յին թըշ-նա-մի չը-կա: Ուրեմն՝ սխալ է ընկեր Ստալինի այն թեզը, որ դասակարգային թշնամին սոցիալիզմի հաջողու-թյունների հետ ավելի է ուժեղանում...

Արամ Ղարախանյան- Միսաքյանն ընկեր Ստալինի անունը չի տալիս, նա խոսում է որպես տեսաբան...

Քննիչ- Ի՞նչ... Միսաքյանն ինչպե՞ս կարող է տեսաբան լինել.. Մենք ունենք սոցիալիզմի մի տեսաբան՝ ընկեր Իոսիֆ Վիսարիո-նովիչ Ստալին: Նրա գրքերով էլ պարտավոր ենք սովորել եւ ու-սուցանել: Եւ քիչ փիլիսոփայիր, քեզ տալիս են հարցեր՝ պարտա-վոր ես պատասխանել: Հասկանալի՞ է:

Արամ Ղարախանյան- Ես ամեն ինչ հասկացա:- Քանդում է փողկապի հանգույցը, թուլացնում:- Ինձ թուղթ կտա՞ք: Ես կարող եմ ամեն ինչ գրել:

Քննիչ- Միայն՝ ճշմարտությունը:

Արամ Ղարախանյան- Միայն ճշմարտությունը:

Քննիչը նրան թուղթ եւ մատիտ է տալիս: Արամ Ղարախանյա-նը կենտրոնանում է: Քննիչն ակնդետ նայում է նրան: Ծխախոտ է առաջարկում: Արամ Ղարախանյանը նոր գլանակ է վառում: Ծխում է նաեւ Քննիչը: Որոշ ժամանակ նրանք նայում են միմ-յանց: Քննիչը ժպտում է: Արամ Ղարախանյանը խոնարհում է գլուխը, շտկում է թղթերը: Հակվում է գրասեղանին եւ սկսում:

Բացատրություն- Ես՝ Արամ Թադեոսի Ղարախանյանս... Տա-լիս եմ սույն բացատրությունն այն մասին, որ Գեորգ Ալեքսանի Միսաքյանը վարակված է նացիոնալիստական եւ հակապետա-կան գաղափարներով: Նա վարկաբեկիչ մտքեր է արտահայտում ընկեր Ստալինի հասցեին:

Բացատրությունը տալիս եմ՝ հաշվի առնելով, որ ես պարտա-վոր եմ այդ մասին տեղեկացնել ներքին գործերի ժողովմատի բաժնին:

Արամ Ղարախանյանն ավարտում է, թուղթը մեկնում Քննի-չին:

Քննիչ- Սկզբի համար վատ չէ: Թեեւ, ճիշտն ասած, այդ ոչ թե դու ես մեզ տեղեկացրել, այլ՝ քո դպրոցի երեք ուսուցիչներն են գրել: Վկա Ղարախանյան, ուզու՞մ ես կաշիդ փրկել:

Արամ Ղարախանյանը ցնցվում է: Նա գունատվում է: Շնչառությունն արագանում է: Դեմքը քրտնում է: Քննիչը կարծես հաճույք է ստանում, ժպտում է:

Քննիչ- Արամ Ղարախանյան, այս գործով դու անցնում ես որպես վկա: Այս պահին դու վկա ես: Վկան երբեմն դառնում է մեղադրյալ: Հասկանու՞մ ես:- Արամ Ղարախանյանը չի պատասխանում: Ուժ չունի:- Ի՞նչ կա այստեղ չհասկանալու: Դու լսել ես, որ Միսաքյանն ընկեր Ստալինին բռնապետ է ասել, բայց ոչինչ չես ձեռնարկել, ճի՞շտ է: Ճիշտ է, վկա Ղարախանյան, քիչ առաջ դու ինքդ ես գրել այդ մասին: Դու գիտես, որ սրիկա ես, թաքցրել ես Միսաքյանին՝ քո ընկերոջը, բայց հիմա, երբ նեղն ես ընկել, ուզում ես մեզ հետ գործարքի մեջ մտնել:- Քննիչը սեղանից վերցնում է Արամ Ղարախանյանի Բացատրությունը, նորից է կարդում:- *«Բացատրությունը տալիս եմ՝ հաշվի առնելով, որ պարտավոր եմ այդ մասին տեղեկացնել ներքին գործերի ժողովատի բաժնին»*: Սա, Արամ Ղարախանյան, սրիկայություն է: Դու սրանով ուզում ես կաշիդ փրկել: Այդպե՞ս է: Իհարկե, այդպես է: Ես քեզ հասկանում եմ: Կարող եմ ներել, եթե մի փոքր էլ դու ինձ հասկանաս: Միսաքյանը ոչ մի մեղադրանք չի ընդունում: Ես, իհարկե, կարող էի այստեղ կանչել քո այն երեք ուսուցիչներին, որ Ձեկուցագիր են ուղարկել մեզ, բայց դա ճիշտ չէր լինի: Նրանք շահագրգիռ կողմ են, նրանց վկայությունը գրոշ չարժե: Իսկ քո ասածը կմերկացնի Միսաքյանին: Դրա համար ես որոշել եմ ամերեսում կազմակերպել: Ես քեզ հնարավորություն եմ տալիս լիովին քավել մեղքդ:- Արամ Ղարախանյանը լուռ է:

Քննիչ- Համաձայն ես:

Արամ Ղարախանյան- Ինչպես կարող եմ չհամաձայնել:

Քննիչ- Կաշիդ փրկում ես:

Արամ Ղարախանյան- Ես կատարում եմ իմ պարտքը:

Քննիչ- Դու խելոք սրիկա ես, Արամ Ղարախանյան:

Արամ Ղարախանյան- Պարտավոր եմ, ընկեր Քննիչ:

Քննիչ-Ո՞վ է Հասմիկը:

Արամ Ղարախանյան- Ուսուցչուհի է:

Քննիչ- Ուրի՞շ:

Արամ Ղարախանյան- Միսաքյանը նրան սիրում է:

Քննիչ- Իսկ դու՞:

Արամ Ղարախանյան- Նա ինձ չի սիրում:

Քննիչ- Միսաքյանը շուտով կդատվի:

Արամ Ղարախանյան- Ի՞նչ եք ուզում ասել:

Քննիչ- Դու խելոք սրիկա ես եւ կուզենայիր այդ աղջկա հետ ամուսնանալ:

Արամ Ղարախանյան - Ոչ:

Քննիչ- Այո, կուզենայիր: Ես քեզ կօգնեմ: Այդ աղջիկը երկտող է ուղարկել բանտ՝ Միսաքյանին: Մենք հսկիչին բացահայտել եւ կալանավորել ենք: Նա արդեն խոստովանել է...

Արամ Ղարախանյան- Խնդրում եմ, ընկեր Քննիչ...

Քննիչ- Ի՞նչ ես խնդրում:

Արամ Ղարախանյան- Խնայել Հասմիկին:

Քննիչ- Դա կախված է քեզնից: Դու պատրա՞ստ ես Միսաքյանի ներկայությամբ բառ առ բառ կրկնել այն, ինչ գրել ես:

Արամ Ղարախանյան- Այո:

Քննիչ- Հանուն Հասմիկի՞:

Արամ Ղարախանյան- Հանուն ճշմարտության:

Քննիչ- Խելոք սրիկա ես, Արամ Ղարախանյան, եւ ես հնավորություն կտամ, որ պարտքդ մինչեւ վերջ հատուցես:- Քննիչը թողնում է Արամ Ղարախանյանին: Նստում է իր պաշտոնական աթոռին եւ ներքին հեռախոսով կարգադրում: - Ինձ մոտ բերեք մեղադրյալ Գեւորգ Միսաքյանին:

Արամ Ղարախանյանը նստած է լուռ:

Մթնում է:

Լսվում է դռան բացվելու ձայն: Դանդաղ լուսավորվում է: Քննիչը եւ Արամ Ղարախանյանը նույն դիրքում են: Գեւորգը կանգնած է:

Քննիչ- Մեղադրյալ Միսաքյան, նստեք:- Ձեռքով ցույց է տալիս սեղանի հակառակ կողմը՝ Արամ Ղարախանյանի դիմաց: Գեւորգը նստում է: Լուռ դիմախաղ՝ երեքի միջեւ: Քննիչի դեմքին խաղում է դաժան քմծիծաղը:

Քննիչ- Ըստ օրենքի, կազմակերպվում է ամբերեսում: Մեղադրյալ Միսաքյան, վկա Արամ Թադեւոսի Ղարախանյանին ճանաչում եք:

Գեւորգ- Մենք միասին ենք մեծաացել:
 Զննիչ- Վկա Ղարախանյան, մեղադրյալը ճի՞շտ է ներկայաց-
 նում:
 Արամ Ղարախանյան- Այո:
 Զննիչ- Վկա Ղարախանյան, Դուք հաստատում եք, որ մե-
 ղադրյալ Գեւորգ Ալեքսանի Միսաքյանի հետ միասին եք մեծա-
 ցել:
 Արամ Ղարախանյան- Դա չի նշանակում, թե մենք գաղափա-
 րակից ենք: Մեղադրյալը հարուստ ընտանիքի զավակ էր: Իմ
 հայրը նրանց տանը բատրակ էր:
 Զննիչ- Մեղադրյալ, վկան չի՞ ստում:
 Գեւորգ- Վկան ճիշտ է ասում, մենք միշտ էլ գաղափարական
 հակասություններ ունեցել ենք:
 Զննիչ- Եւ հիմա էլ ունե՞ք:
 Արամ Ղարախանյան- Նման բաները չեն մոռացվում:
 Գեւորգ- Որոշ հանգամանքներ ես էլ հիշում եմ:
 Զննիչ- Ի՞նչ նկատի ունեք, մեղադրյալ:
 Գեւորգ - Դա վերաբերում է միայն մեր երկուսին:
 Արամ Ղարախանյան - Ես ընկեր Զննիչից գաղտնիք չունեմ:
 Գեւորգ- Իսկ ես ուզում եմ ունենալ:
 Զննիչ- Մեղադրյալ, Դուք հասկանո՞ւմ եք, թե ինչ եք ասում:
 Գեւորգ- Իմ վիճակում դա այլեւս եական չէ, այդպես չէ՞:
 Զննիչ- Այստեղ հարցեր տալիս եմ ես, բայց եթե Դուք ուզում եք
 վկային ինչ-որ բան հարցնել՝ կարող եմ թույլատրել:
 Գեւորգ- Ոչ, չեմ ուզում:
 Զննիչ- Այդ դեպքում, ահա՝ վկա Արամ Թադեւոսի Ղարախան-
 յանը, ծնված 1906թ....
 Գեւորգ - Վկայի կենսագրությունը ես գիտեմ...
 Զննիչ- Լռելի:- Զննիչը մի ոչնչացնող հայացք է ձգում Արամ Ղա-
 րախանյանի վրա, որ այդ երկխոսության ամբողջ ընթացքում
 խաղում է լուցկու տուփի հետ:- Վկա Արամ Թադեւոսի Ղարա-
 խանյանը, ծնված 1906թ. ՅամԿ(ք)Կ անդամ, նախկինում չղատ-
 ված, բարձրագույն կրթությամբ, ԽՍՀՄ-ից դուրս հարազատներ,
 բարեկամներ եւ ծանոթներ չունի,- Զննիչը կարողում է ընդգծված,
 Արամ Ղարախանյանը ցնցվում է՝ զգալով, որ Զննիչը հիշեցնում

Ե իր սխալը,- ԽՍՀՄ-ից դուրս հարազատներ, բարեկամներ եւ ծանոթներ չունի,- Քննիչն ընդհատում է,- մեղադրյալ Միսաքյան, վկայի կենսագրական տվյալների դեմ առարկություն ունե՞ք, ևս ճի՞շտ է ներկայացրել իր կենսագրությունը:

Գեւորգ- Վկայի կենսագրական տվյալները շարադրված են ճիշտ, առարկություններ եւ լրացումներ չունեմ:- Արամ Ղարախանյանը խոր շնչում է, Քննիչը ոչնչացնող հայացք է նետում նրան, ապա շարունակում:

Քննիչ- Վկա Արամ Թադեւոսի Ղարախանյանը տալիս է սույն բացատրությունն այն մասին, որ...- Քննիչը դանդաղ կարդում է Արամ Ղարախանյանի բացատրությունը: Գեւորգը հայացքը հանել է հատակին: Արամ Ղարախանյանը շարունակում է խաղալ լուցկու տուփով: Քննիչն ավարտում է ընթերցումը:

Քննիչ - Ի՞նչ կասեք, մեղադրյալ:

Գեւորգ- Ամեն ինչ շարադրված է ճշտորեն: Եւ միայն մոռացել է ասել, որ մի քանի անգամ փորձել է ինձ ուղղել:

Քննիչ- Ունե՞ք որեւէ խնդրանք վկային:

Գեւորգ- Վկային՝ ոչ, բայց Ձեզ խնդրում եմ, եթե հնարավոր է, մեզ մի բոլորով մենակ թողնեք:

Քննիչ- Որտե՞ղ: Այստե՞ղ, թե՞ այնտեղ՝ Ձեզ մոտ:- Քննիչի դեմքը ծամածռվում է դիվային ժպիտից: Արամ Ղարախանյանը ցնցվում է, լուցկու տուփն ընկնում է նրա ձեռքից: Քննիչը թունոտ ծիծաղում է:-

Քննիչ- Չի կարելի, մեղադրյալ, վկայի անվտանգության համար մենք պատասխանատու ենք օրենքով:

Գեւորգ- Եթե կարգն է այդպես...

Քննիչ- Վկա Ղարախանյան, ունե՞ք ավելացնելու որեւէ փաստ, հանգամանք, մանրուք, որ կուզենայիք լրացուցիչ ներկայացնել նախաքննությանը:

Արամ Ղարախանյան- Մեղադրյալը, կարծես, ոչինչ չժխտեց:

Քննիչ- Առերեսումս, ուրեմն, ավարտված է: Արձանագրությունը կազմված է: Մեղադրյալ, Դուք համաձայն եք ստորագրել ամերեսման արձանագրությունը:

Գեւորգ- Այո:- Քննիչը նրան է մեկնում ամերեսման արձանագրությունը: Գեւորգն ստորագրում է:

Քննիչ- Վկա Ղարախանյան, Դուք համաձայն եք ստորագրել առերեսման արձանագրությունը:

Արամ Ղարախանյան- Այո:- Նույն արարողակարգը: Արամ Ղարախանյանը մի փոքր հապաղումով ստորագրում է առերեսման արձանագրությունը: Քննիչը բացում է գրասեղանի աջակողմյան դարակը, հանում մի թղթապանակ, բացում է եւ առերեսման արձանագրությունը տեղավորում այնտեղ: Ապա, հայացքն Արամ Ղարախանյանից չկտրելով, փակում է թղթապանակը եւ կրկին կողպում գրասեղանի աջակողմյան դարակում: Քննիչը գրնգացնում է բանալիների խուրճը:

Քննիչ- Վկա Ղարախանյան, Դուք արդարացրիք մեր վստահությունը, կարող եք գնալ տուն եւ հանգիստ խղճով վերստին անցնել Ձեր պաարտականությունների կատարմանը:- Արամ Ղարախանյանը դանդաղ բարձրանում է աթոռից: Մոտենում է դռանը: Ձեռքը մեկնում է բռնակին: Դուռն անսպասելի բացվում է հակառակ կողմի հրումով եւ Քննիչի առանձնասենյակ է մտնում հրացանակիր Չինվորը: Նա ձգվում եւ պատվի է բռնում: Արամ Ղարախանյանը ետ - ետ է գալիս մինչեւ սենյակի կենտրոն, որտեղ, երկար սեղանի մոտ դեռ նստած է Գեւորգը: Քննիչը ոտքի է կանգնում: Նրա դեմքից չի իջնում դիվային ժպիտը: Գեւորգը նայում է ուղիղ իր ոտքերին: Չինվորը ձիգ սպասում է Քննիչի հրամանին:

Քննիչ- Ուղեկցել...

Չինվորն ավելի է ձգվում: Արամ Ղարախանյանը եւս մի քայլ ետ է դնում եւ բախվում աթոռին անշարժ նստած Գեւորգին: Քննիչը բարձր ծիծաղում է:

Քննիչ- Բանտախուց տանել մեղադրյալին: Մեղադրյալ, ոտքի:- Գեւորգը ոտքի է ելնում: Արամ Ղարախանյանը շրջվում է: Նա եւ Գեւորգը կանգնած են դեմ-դիմաց:

Գեւորգ- Մնաս բարով, Արամ:

Արամ Ղարախանյան- Ժողովրդի թշնամու հետ ես գործ չունեմ:

Չինվորը մոտենում եւ հրում է Գեւորգին դեպի դուռը:

Արամ Ղարախանյանը ձեռքով բռնում է ձախ կուրծքը, հենվում սեղանին: Քննիչը շտապ մոտենում եւ օգնում է , որ նստի:

Քննիչ- Ի՞նչ պատահեց:

Արամ Ղարախանյան- Ոչինչ, արդեն անցավ, սիրտս էր երեւի:

Քննիչ- Ծակու՞մ է:

Արամ Ղարախանյան- Անցավ: Ես կարող եմ գնալ:

Քննիչ- Կարող ես, բայց դու այստեղից գնալու տեղ չունես:

Արամ Ղարախանյանը Քննիչին է նայում աղերսանքով:

Քննիչ- Այսօր չէ, ընդհանրապես դու մեզնից գնալու տեղ արդեն չունես:

Մուրթ է: Լույսի մի խուրձ խաղում է: Երբեմն երեւում է մերկ պատ: Լսվում են գինվորական հատու քայլեր, որ մերթ ահագնանում, մերթ խլանում են: Քայլերը վերջապես կանգ են առնում: Ճռնչում է մի դուռ: Տանջալիորեն երկար՝ տարածվում է ճիչ: Յետո՛ւ՝ աղմուկ, շխկոց-թխկոց: Բանտախուց է: Լույսն ընկնում է մերկ թախտին: Գեւորգը նստած է նախկին դիրքով: Յանկարծ հնչում է Արամ Ղարախանյանի ձայնը. *«Ժողովրդի թշնամու հետ ես գործ չունեմ»*: Գեւորգը փակում է ականջները: Արամ Ղարախանյանի ձայնը հնչում է ավելի ու ավելի բարձր: Գեւորգը նետվում է դեպի դուռը, որ այդ պահին բացվում է: Ներս է մտնում Քննիչը: Այս անգամ նա քաղաքացիական հագուստով է: Թելի տակ՝ հաստ, կաշեկազմ թղթապանակ: Նա լուռ տեղավորվում է տախտակամած մահճակի ծայրին եւ հայացքով հրավիրում Գեւորգին: Գեւորգը ենթարկվում է: Քննիչը հանում, երկուսի մեջտեղ է դնում մի տուփ ծխախոտ, երկար, ջանադրաբար տրորում է գլանակը, ծխախոտ է վերցնում նաեւ Գեւորգը: Քննիչը չրթացնում է լուցկին, նախ վառում Գեւորգի, ապա՝ իր ծխախոտը: Նորից լսվում է Արամ Ղարախանյանի ձայնը. *«Ժողովրդի թշնամու հետ ես գործ չունեմ»*:- Գեւորգը ցնցվում է, իսկ Քննիչի դեմքին խաղում է նույն դիվային ժպիտը: Արամ Ղարախանյանի ձայնն աստիճանաբար փոխվում է փսփսոցի, ապա մարում:

Քննիչ- Մեր համբերությունն էլ սահման ունի:

Գեւորգ- Ես ամեն ինչ արդեն ասել եմ. այո, վարկաբեկել եմ Ստալինին, խորհրդային իշխանության թշնամի եմ, ի՞նչ եք ուզում ինձնից: Եթե դա չի բավարարում, կարող եք գրել, որ ուզում էի պայթեցնել Կրեմլը, կատարում էի Յիտլերի հանձնարարությունները, անձամբ եմ ճանաչել Տրոցկուն, Բուխարին, ատում

եմ Բերիային, դա բավական չէ՞...

Քննիչ- Ոչ, բավական չէ: Մենք ուզում ենք մաքուր աշխատել: Այն, ինչ ասացիք, վաղը չեք կրկնի դատարանում, եւ հարվածի տակ կընկնի իմ հեղինակությունը, ինձ դուրս կշարտեն հնացած քրջի պես:

Գեւորգ- Ավելի լավ Ձեզ համար, կապրեք մարդավարի:

Քննիչ- Չեմ ապրի, ինձ չեն ների:

Գեւորգ- Ո՞վ:

Քննիչ- Դա կարելու չէ:

Գեւորգ- Ընդհանուր մեղք եւ մեղադրող չի կարող լինել, մեղքը գործում է մեկը, դատվում են բոլորը:

Քննիչ- Փիլիսոփայելու տեղ չէ:

Գեւորգ- Ինչպես եմ խղճում:

Քննիչ- Ու՞մ:

Գեւորգ- Ձեզ եմ խղճում, քաղաքացի Քննիչ:

Քննիչ- Այսօր ներում եմ:

Գեւորգ- Ես Ձեզ խղճում եմ հենց դրա համար: Վաղը Դուք ոչինչ չեք ունենա՝ արդարանալու: Ի՞նչ եք անելու վաղը:

Քննիչ- Նույնը՝ ինչ այսօր:

Գեւորգ - Իսկ եթե դրա անհրաժեշտությունը չլինի՞:

Քննիչ- Ինչպե՞ս թե...

Գեւորգ- Վաղը այսօրվա անհրաժեշտությունը չի լինի: Դուք կձերբակալեք, կդատեք նրանց, ում թշնամի եք կարծում, հետո՞:

Քննիչ- Ի՞նչ հետո...

Գեւորգ- Մի օր այդ թշնամիները կվերանա՞ն, նրանց վերջը կգա՞:

Քննիչ- Իհարկե:

Գեւորգ- Իսկ ի՞նչ եք անելու Դուք, եթե այլևս թշնամիներ չլինեն:

Քննիչ- Կլինեն:

Գեւորգ- Որտեղի՞ց:

Քննիչ- Կստեղծենք, որպեսզի դատենք:

Գեւորգ- Եւ մի օր էլ կդատեն ձեզ:

Քննիչ- Ի՞նձ:

Գեւորգ- Բոլորիդ, որ այսօր դատում եք: Ես նաեւ մեր երկրին

եմ խղճում, միլիոնավոր մարդկանց, ում դուք ջանադրաբար խաբում եք, սեփական անկատարության համար վրեժխնդիր լինում նրանցից, ովքեր կարողանում են մտածել:- Գեւորգը նայում է ուղիղ Զենիչի աչքերին:- Դուք ու՞մ եք հավատում: Դուք երիտասարդ մարդ եք, քիչ հետո կավարտվի աշխատանքային օրը, ոչ, մի ընդհատեք, կավարտվի աշխատանքային օրը, կգնաք տուն: Ի՞նչ եք ասելու Ձեր կնոջը, երեխաներին, նրանք գիտե՞ն, թե ինչպես եք վաստակում իրենց օրվա ապրուստը: Դուք ի՞նչ բառերով եք սիրում Ձեր կնոջը, ինչպե՞ս եք գրկում նրան, երեխաներին: Ո՞ր իրավունքով, ասացեք...

Զենիչ- Մենք զգացմունքների չենք տրվում:

Գեւորգ- Բայց կյանքն եք սպանում, կյանքը...

Զենիչ- Աշխարհը մեզնով չի սկսվել, մեզնով չի ավարտվի...

Գեւորգ- Ավելի վատ...

Զենիչ-Ի՞նչ եք ակնարկում:

Գեւորգ- Այն, ինչ հասկացաք, բայց չեք կարող բարձրաձայն ասել, մեզ լսու՞մ են:

Զենիչ- Դու չափն անցնում ես, մեղադրյալ:

Գեւորգ- Երբ ջղայնանում եք, Դուք ավելի մարդու նման եք:

Զենիչ- Լռել, թե չէ...

Գեւորգ- Թե չէ հսկիչներին կկանչե՞ք:

Զենիչ- Վերջ տվեք, մեղադրյալ: Այսօր իմ տրամադրությունը բարձր է: Ես եկել եմ, թեև սա ընդունված չէ, բայց եկել եմ, որպեսզի ավարտենք այս պատմությունը:- Զենիչը բացում է թղթապանակը:-

Ինքնակենսագրություն- Ես՝ Գեւորգ Ալեքսանի Միսաքյանս, ծնվել եմ 1908թ. մարտի 5-ին Արեւմտյան Հայաստանի Վան քաղաքում, ուսուցչի ընտանիքում: 1916թ., երբ թուրք ջարդարաներից հալածված, ռուսական նահանջող բանակի հետ անցնում էինք Կովկաս, գաղթի ճանապարհին կորցրել եմ ծնողներիս և մյուս հարազատներին: Մինչեւ 1924թ. ապրել եմ տարբեր որբանոցներում: Ավարտել եմ Երեւանի պետական համալսարանի պատմալեզվագրական բաժինը: Գրական մամուլում «Գ. Մ.» ստորագրությամբ տպագրել եմ հոդվածներ: Ուսումնասիրում եմ ազգային- ազատագրական պայքարի թեմայով Րաֆֆու վեպե-

ըը: Հայերենից բացի տիրապետում եմ ռուսերեն, թուրքերեն, անգլերեն, գերմաներեն լեզուներին: Ունեցել եմ գաղափարական տատանումներ, որոնք ուղղել եմ կուսակցության անդամության թեկնածու ընդունվելիս: Դատված չեմ: Ըստ որոշ տեղեկությունների, քույրս՝ Վարդուհի Ալեքսանի Միսաքյանը (ամուսնական ազգանվամբ՝ Շալջյան) բնակվում է Ֆրանսիայի Մարսել քաղաքում:

Ինքնակենսագրող՝ Գ. Ա. Միսաքյան
17 օգոստոսի, 1935թ.

Այդ ընթացքում Գեւորգը եւ Քենիչը լուռ են:

Քենիչ- Դուք, մեղադրյալ Միսաքյան, չգիտե՞ք, որ Արեւմտյան Հայաստան չկա, որ դա նացիոնալիստական, դաշնակցական գառանցանք է:

Գեւորգ- 1908թ. Արեւմտյան Հայաստանը դեռ կար:

Քենիչ - ՉԿար, մեղադրյալ, կար եւ կա Թուրքիա, որի հետ...

Գեւորգ - Ռուսաստանը միշտ էլ պատերազմել է:

Քենիչ - Թուրքիայի հետ մենք բարեկամ ենք, մեղադրյալ:

Գեւորգ- Դա պարտադրված բարեկամություն է:

Քենիչ- Մենք քաղաքականությամբ չենք զբաղվում: Անցնենք առաջ. Դուք գրում եք, որ ապրել եք որբանոցներում: Ասացեք, 1924թ. Հայաստանում խորհրդային իշխանություն կա՞ր:

Գեւորգ- Կար, բայց ես ապրել եմ որբանոցում...

Քենիչ- Իսկ ի՞նչ էր անում խորհրդային իշխանությունը:

Գեւորգ- Կառուցում էր Շիրակի ջրանցքը, Լենինականի տեքստիլ ֆաբրիկան, դպրոցներ էր բացում...

Քենիչ- Իսկ ինչու՞ այդ մասին ոչինչ չեք գրել Ձեր ինքնակենսագրականում:

Գեւորգ- Բայց ես որբանոցում էի ապրում:

Քենիչ- Իչու՞ չեք գրել, որ բարձրագույն կրթություն եք ստացել խորհրդային իշխանության շնորհիվ:

Գեւորգ- Ես որբանոցից դուրս եմ եկել 1924թ., ուսուցիչ եմ աշխատել, հետո ընդունվել համալսարան, ասպիրանտուրա...

Քենիչ- Դուք մամուլում անստորագիր հոդվածներ եք տպագրել:

Գեւորգ- Անստորագիր չէ, դա ընդունված է գրական աշխար-

հում:

Քննիչ- Ասենք թե ընդունված է, իսկ ի՞նչ կասեք այս վերնագրերի մասին՝ «Րաֆֆի՝ ազգային զարթոնքի պատգամախոսը», «Ազգային պայքարի կայծերը եւ մարող հրդեհը», «Խենթի երագը. կորուսյալ եզերքի ողբերգությունը», մեր կյանքում լավ ոչինչ չկա՞:

Գեորգ- Րաֆֆին վախճանվել է 1888թ. թաղված է Թիֆլիսի Խոջիվանքի գերազմանոցում:

Քննիչ- Ի՞նչ անենք, ողբա՞նք:

Գեորգ- Ոչ, եկեք ծիծաղենք:

Քննիչ- Մի լկտիացեք, մեղադրյալ, եթե իմ տրամադրությունն այսօր բարձր է, դա չի նշանակում, թե չեմ ուզում հիմա հսկիչին կանչել եւ...

Գեորգ- Դա էլ եմ տեսել:

Քննիչ- Լռել... Դուք որտեղի՞ց գիտեք, որ Ֆրանսիայում քույր ունեք:

Գեորգ- Լսել եմ:

Քննիչ- Ումի՞ց:

Գեորգ- Չեմ հիշում:

Քննիչ- Ասպիրանտուրայում սովորելու տարիներին երկու անգամ մեկ ամսով եղե՞լ եք Մոսկվայում:

Գեորգ- Եղել եմ:

Քննիչ- Ու՞մ եք այնտեղ հանդիպել:

Գեորգ- Մաքսիմ Գորկուն:

Քննիչ- Հիմարություններին վերջ տվեք:

Գեորգ- Իսկ ու՞մ կուզենայիք հանդիպած լինեի:

Քննիչ- Տեղեկություններ կան, որ կապ եք ունեցել իմպերիալիստական երկրներից մեկի հետախուզական գործակալի հետ:

Գեորգ- Ո՞ր երկրի:

Քննիչ- Այդ Դուք պիտի ասեք:

Գեորգ- Մոսկվայում ես իմպերիալիստական երկրների հետախուզական գործակալի չեմ հանդիպել:

Քննիչ- Իսկ ի՞նչ նպատակով եք անգլերեն եւ գերմաներեն սովորել:

Գեորգ- Ասպիրանտական քննություններ հանձնելու եւ մաս-

նագիտական գրականություն ուսումնասիրելու:

Քննիչ- Ռուսերեն լեզվով մասնագիտական գրականություն չկա՞:

Գեւորգ- Կա, բայց՝ քիչ:

Քննիչ- Ու՞մ եք տեղեկություններ փոխանցել կոլեկտիվ շարժման մասին:

Գեւորգ- Ոչ ոքի:

Քննիչ- Ինչու՞ եք համառում:

Գեւորգ- Իսկ Դուք գրեք՝ ինչ ուզում եք, ես կստորագրեմ:

Քննիչ- Կստորագրե՞ք:

Գեւորգ- Իհարկե, չէ որ նշնակություն չունի՝ ինչ եմ ասում, մի-եւնույն է՝ Դուք գրում եք այն, ինչ ուզում եք, որ ես ասած լինեմ: Միեւնույն է, դատարանում Դուք կպնդեք, որ ես ամեն ինչ խոստովանել եմ:

Քննիչը կարկամում է: Չի հավատում, որ Գեւորգը պատրաստ է ստորագրել նախօրոք պատրաստած արձանագրությունը, բայց, համեմայնդեպս, թղթապանակից հանում է ինչ- որ թղթեր: Գեւորգը պարզում է ձեռքը: Քննիչը նրան է տալիս արձանագրությունը: Յետո՞ գրիչը: Գեւորգը չի կարողում: Միայն ստորագրում է: Քննիչն արագորեն ետ է վերցնում թղթերը, ծալում, դնում կաշեկազմ թղթապանակում: Որոշ ժամանակ լռություն է:

Քննիչ- Ոչինչ չունե՞ք հարցնելու:

Գեւորգ- Դատը ե՞րբ կլինի:

Քննիչ- Դա չեմ կարող ասել, ուրի՞շ:

Գեւորգ- Ոչ մի բան:

Քննիչ- Նույնիսկ Ձեր ընկերոջ մասի՞ն:

Գեւորգ- Փուչ կրակոց էր, քաղաքացի Քննիչ:

Քննիչ- Յետաքրքիր մարդ եք, մեղադրյալ:

Գեւորգ- Շնորհակալություն, զգացված եմ:

Քննիչ- Թեևս ընդունված չէ, բայց այսօր տրամադրությունս բարձր է, ցտեսություն, մեղադրյալ Միսաքյան:- Քննիչը ելնում է տեղից:

Գեւորգ- Նոր հանդիպում չի լինի:- Քննիչը, որ արդեն ձեռքբեր մեկնել է դռան բռնակին, կանգ է առնում, շրջվում:

Քննիչ- Մի՞թե, իրոք, ոչինչ չունեք ասելու:

Գեւորգ- Ունեմ, քաղաքացի Քննիչ, երկու խոսք:
Քննիչ- Ի՞նչ:- Գեւորգն ընդոստ ելնում, մոտենում է Քննիչին:
Գեւորգ- Աշխատեք Ձեր երեխաներին չհամբուրել եւ այլեւս
սման առերեսում չանել: Կարո՞ղ եք:
Քննիչ- Չեմ կարող:- Քննիչն ակնհայտորեն հիասթափված է:
Դուրս է գալիս:

Գեւորգ- Այդ դեպքում ես Ձեզ ավելի եմ խղճում:
Մթնում է: Լսվում է բացվող- փակվող դռան ճռնչոց: Յնչում է
Արամ Ղարախանյանի ձայնը. *«Ժողովրդի թշնամու հետ ես գործ
չունեմ»:*

...Այս պատմությունը, սակայն, Ղըրանց հետ չէր կապվում, Արասխանանց թոռը Շոֆեր Գարաբեւի Վիդադի տղայի դասընկերն էր, դպրոցում նրան ասում էր «Վիծյա» եւ միասին կեռաս գողացած կլինեին, նրա հայրը Շոֆերի հասակակից ու հարեւան էլ էին , բայց հանկարծ ասաց. «Ես կկանչեմ», - եւ իրոք էլ գնաց, ծեծեց դարպասը. «Շոֆեր քեռի, հէէէ Շոֆեր քեռի», - դուրս եկավ, սանդղագլխին կանգնեց՝ «Աշոտ, բա՞ն ես ասում», - եւ իջավ, դարպասը բացեց ու այդպես շատ տարօրինակ էր՝ այդ մի մատ երեխան ու ահագին ցմփոր թուրքը՝ նոյեմբերի մառախլապատ իրիկնամուտի մեջ, եւ գյուղկոռպի մոտ հավաքվածները թեւքաշ մոտեցան՝ տեսնեն ի՞նչ են խոսում: Ասաց՝ «Շոֆեր քեռի, Սումգա-յիթ հայ չկա, Գյանջա չկա, Բաքու չեք պահելու, Ադրբեջան հայ չի մնա , ես գյուղից դուք պիտի գնաք», - Շոֆեր Գարաբեւը լուռ մնաց, սանդղագլխից նրա հայ կինը անհասցե անիծեց՝ «Ձեր ազիզը թաղեմ, որ ես մարդու հացը ձեզ չի քոռացնում», - ոչ ոք նրան չպատասխանեց: Շոֆերն ասաց. «Գնալը գնում եմ, բայց վերջը վատ է լինելու»:-Գործկոմի նախագահն այնտեղ հավաքել էր քարտուղարուհուն, ակումբի վարիչին, գեղմասվարին, մանկապարտեզի ջահել դաստիարակչուհուն, հավաքարարին, գալիս էր տնտեսության գրասենյակ՝ ասելու, որ «ստանձնում է առաջին ԿԱՖ-ի շեֆությունը եւ խոստանում կիթն ավարտել սեղմ ժամկետներում եւ անկորուստ», - գրասենյակի պատշգամբից այդ ԿԱՖ կոչվածի վարիչը, տնտեսության գլխավոր հաշվապահը, տնտեսագետն ու կուսկոմիտեի քարտուղարը զուսպ փոթկացրին, խորքի իր առանձնասենյակում տնտեսության ղեկավարը

նարդու տախտակի տակից վերցրեց, ծալեց - գրպանը դրեց պանրագործարանի վարիչից շահած քսանհինգանոցն ու հայտարարեց. «Հայից տավարած չի լինի»:- Դեղին-կապույտ՝ շերտավոր «Ուազը» գյուղ էր մտնում:

Հին ժամանակներում ֆիզիկայի համբավավոր ուսուցիչ՝ Արամ Շեկյանը 1935 թվի Բաքվի բանֆակի ռուսերենով ամբիոնի մոտ ԼՂԻՄ Հատուկ կառավարման կոմիտեի անդամ, նախկինում՝ Համ. ԼԿԵՄ Կենտկոմի առաջին քարտուղար Վիկտոր Միշինին ուզում էր բացատրել, որ հայերիս համար մեկ էլ Ալեքսանդր Գրիբոյեդովն է այդքան սիրելի եղել, բայց Ստեփանակերտի ընդհատակը խիստ պատվիրել էր քվեարկել միայն Բորիս Դադամյանի օգտին, պատգամավորության թեկնածու Վիկտոր Միշինի հանդիպումն ընտրողների հետ ուղղակի հապշտապ կարած վարագույր էր: Դահլիճի հեռավոր խորքից Բահման Մուստաֆաեւը ձայն խնդրեց, «ես հինգեր Կափրիեյանին բան եմ ուզում հարցնել», - եւ եղավ այս երխոսությունը.

Բահման Մուստաֆաեւ- Հինգեր քարթուխար, մեր խոխեքը մինչեւ ե՞րբ են հայերեն դպրոց գնալու:

Վահան Գաբրեյան- Որքան որ դուք այս գյուղում կապրեք:

Բահման Մուստաֆաեւ- Ուրեմս քոչե՞նք...

Վահան Գաբրիեյան- Ոչ, մնացեք:-

Թուրքը հարցնում էր հայերեն, քարտուղարի պատասխանը, որովհետեւ նաեւ Միշինի համար էր՝ հնչում անթերի ռուսերեն: Միշինի աչքերը ատելությունից կլորացան, եւ նա արդեն Ալեքսանդր Գրիբոյեդով չէր, այլ գուցե՝ փոխարքա Գուլիցին, բայց ավելի մոտ գեներալ Սաֆոնովն էր:

Երեւան հայրենակցական միությունն էին ստեղծել, ուղղաթիռ վարձել՝ գյուղի համար շաքար, ալյուր, կարագ, սապոն-բան՝ ինչ որ պատահել էր՝ խանութներից առել էին կամ՝ Խաչիկ Ստամբուլցյանից խնդրել, ուղարկում էին ամիսը երկու, երեք անգամ: Նախկինում գյուղական ուսուցիչ էւ Արարատ Ղարիբյանի մեծահոգի առաջին համահեղինակությամբ՝ «Դպրոցական ուղղագրական բառարանի» հեղինակ Գուրգեն Շեկյանը գործկոմի նախագահի անունով մի խիստ նամակ էր գրել. «Ամոթ է, եղ մեր Ղըրանց զրկում եք օգնությունից, բա նրանք էլ Հայրենական մեծ

պատերազմում զոհ են տվել», - եւ պատվիրել էր, որ ուղարկվող կարագից անպայման Ղըրանց էլ բաժանվի: Շահմար Յուսէյնովի Յումայում աղջիկը կանգնեց, թե՛ «Յողեմ ձեր սոված գլուխը, որ սպասում եք՝ Իրավանից ձեզ քաջ ուղարկեն՝ էստեղ լափեք, Էս է գնացեք Էնտեղ կերեք էլի», - նրանց փեսա Մայիլ Ալլահվերդիեւը սպառնկոոպի մատակարարն էր, ԼՂԻՄ «հատուկ շրջանի» հասցեով բեռները գալիս, Աղդամ թալանվում էին, նրա տղա Սաբիր Բաբուշեւը կոմերիտշրջկոմի քարտուղար էր, այդ տունը Երեւանից ուղղաթիռով հասցրած կարագ չէր ուտի, գործկոմի նախագահը պիտի հայիոյեր Գուրգեն Շեկյանի վարժապետական միամտությունը, գյուղում հիշեցին, որ դրանց ցեղը մի քիչ գիժ էլ եղել է, ասացին, «Շեգանց պողոճն էլի շարժվել է», - հետո առարկեցին, չէ, շատ էլ խելոք են, Գուրգենի Լազր եղբայրը 1918 թվին անձամբ Ստեփան Շահումյանին տեսել է, Բաքու ինչ-որ գործարանում անունավոր վարպետ է եղել, Էդ թվի սեպտեմբերին թուրքերը որ մտել, Բաքվի հայերին կոտորում էին՝ նրանց Թելլո մայրը հարսի ճակատը, թշերը սեւ մուր ներկ է քսել՝ Էդպես մի նկուղում փրկվել են, անգլիացիները խղճացել՝ նավով ուղարկել են Էնզելի, հետո անցել են Սամըրղանդ, պատվել-պտտվել՝ Ռուսաստանով ետ հասել են գյուղ, որովհետեւ ուրիշ մեկը կկորչեր Էդ թշնամի ճանապարհներին, իսկ Լազրը բանիմաց մարդ էր, փրկվել է, -ուղղակի Գուրգեն Շեկյանը Ղըրանց ինչպես 1959 թվին անճարակ թողել, ինքը տեղափոխվել է Երեւան՝ գիտի թե նույն աղքատն են...

Շոֆեր Գարաեւն Էդ բաների հետ՝ որ քարտուղարին անհարմար դրության մեջ են թողել ու Երեւանի կարագը չեն կերել՝ կապ չունի, մարդու վրա սուտուփուտ մեղք են դնում: Շոֆերի Էլմիրա կինը հայ է, մոտիկ Կոճողոտ գյուղից է 1967 թվին փախցրել ու հորից բաժանվել, որ հարսն Էդ խավար տանն անհարմար չզգա, հարսը շիլ Ալըշանին ասել էր՝ *կապիկ*, - սա այդքան հայերեն բառ լսած չկար, թաղի երեխեքին թաքուն հարցրել էր. «Ա բալամ, մեր հարսն ինձ ասում ա գաբիգ, գաբիգը ինչ բա՞ն ա», - ծիծաղել են, թե՛ «Ալըշան քիրվա, կապիկը շատ սիրուն, քեզ նման կենդանի է», - այսպիսի խայտառակության մեջ եթե Շոֆերը հայութւորքի տարբերությունն դրած լիներ՝ կինն առողջ - փառոք չէր ապրի,

թուրքավարի կտար, կսպաներ, Էդ Շահմար Յուսեյնովի տղան Է դպրոցի մասին հարցրել, իրենց տան քսան-երեսուն տարվա զրույցը դուրս Է բերել համագյուղական ժողով ու պատասխանն Էլ լավ Է ստացել: Շոֆերն Էդպես խռով՝ տունուտեղն ահա տանում Է՝ Սրիսավենդ քեռի ունի՝ նրանց պահ տա, ինքը Ռուսաստանի մարդ Է, հաշիվ չունի, ունենար՝ հրեն իրենց հին տան գերանը դեռ Անդրեասենց օճորքը պահում Է, կքաշեր, կփլցներ Էդ օջախը, բայց Էս խառնաշփոթը որ սարքվել Է՝ Աղաբաբյան Անուշավանի գործն Է, դրա հորը զուր չեն բռնել ու սպանել, որովհետեւ խորհրդային իշխանության ու ժողովուրդների բարեկամության թշնամի էր,- դեղին - կապույտ՝ շերտավոր «Ուազը» կանգնեց տնտեսության գրասենյակի բակում:

Ցուրտ իրիկնամուտ էր: Շրջգործկոմի նախագահն ընդհանուր բարեւեց, ղեկավարությանն ասաց. «Էս ի՞նչ եք անում, վաղը մյուս օրը մեր հարցը Մոսկվա լսում են, դուք էստեղ միջադե՞պ եք սարքում», - Եւ յոթ տուն թուրքն իրոք այդքան կարեւորվեց: Այնտեղ՝ Մոսկվայի համագումարների պալատի դահլիճում՝ մի կողմը՝ մերոնք, այն կողմը՝ Խուրաման Աբասովան՝ հեռագիրը կարդալիս, Եւ շրջանի ղեկավար Եւ միութենական պատգամավոր Վահան Գաբրիելյանն, իրոք, չէր կարողանալու բացատրել, որ դրանց ոչ ոք չի քշել, իրենք են կամավոր հեռացել՝ նախապես հրդեհելով տնտեսության ձմեռվա պաշար համարյա ողջ անասնակերը: Այստեղ արդեն զինվորական պարետ Կոնստանտին Ժվիրկոն մատ էր թափ տալիս գյուղի ղեկավարության քթի տակ. *«Միայն իմ դիակի վրայով կարող եք եղբայրական ադրբեջանական ժողովրդի ներկայացուցիչներին արտաքսել իրենց հարազատ բնակավայրից»*:- Շրջգործկոմի նախագահը վերջերս թերթերից սովորած՝ հայերեն «զգուշացեք, սադրանք Է» արտահայտությունը հիշեց, բայց դա չներգործեց: Դուրսը միլիցիայի քննիչ Սաշիկ Ստեպանովը բացատրում էր ավելի մանրամասը, որ՝ հատուկ Ղըրանց համար Աղդամից ավտոբուս Է մոտենում Խաչենի կամրջի զինվորական հսկիչ - անցաթողման կետին, գալիս են խմբով, ժուռնալիստներով, կնկարեն, կադրերը կպտտեն Բաքվի, Մոսկվայի հեռուստատեսությամբ Եւ կստացվի, որ՝ *«Իրենց սեփական հանրապետությունում ադրբեջանցիները փախստական են»*,

այն էլ՝ Յոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 72-րդ տարելիցի նախօրեին», - սա ներշնչող էր , հասկանալի, բայց եղածն արդեն ետ բերել չէր լինի, թեև շրջգործկոմի նախագահը զինվորական պարետից թաքուն հրահանագեց. «Ինչ գնով ուզում է լինի՝ գոնե մի ամիս պիտի պահեք էդ մարդկանց»:-

Պարետը հրամայեց Ղըրանց ամեն տան մոտ կանգնեցնել զինված կարգախումբ եւ 20.00-ից հայտարարեց պարետային ժամ, հետո իբր իմիջիայլոց խնդրեց, որ գրասենյակ հրավիրեն «փոքրամասնության շահերը ներկայացնող Շոֆեր Գարաբեկին»։ Շրջգործկոմի նախագահն, իհարկե, դեմ չէր, գյուղի ղեկավարներն էլ կուզենային պարզել՝ Ղըրանց ուզածն ինչ է, բայց մեկն անսպասելի կասկածեց, թե գնդապետական իր անհասանելի բարձունքից Կոնստանտին Ժվիրկոն այդ ե՞րբ է հարաբերվել Շոֆեր Գարաբեկի հյուրասիրությանը։ Բովանդակ ուսադիրավորների ամենօրյա ելումուտի մեջ իրենց իմացածը լեյտենանտ Անդրաս Չաուլյան է, որ տնաքաշ թունդ արաղից երբեք չի հարբում, միայն դառը ուշունց է կապում՝ *«մարդ չեք, սատկելու բան եք, ամեն լակոտ ռուսի դեմ դողում եք, հաց եք տալիս, միսուլարաղ, դրա համար էլ ձեզ մոտ՝ ոնց որ պապոնց տուն գնաս, անզեն ենք գալիս, իսկ Աղդամ հենց մի քայլ աջ կամ ձախ շեղվես՝ կտան, լեշդ կփռեն ու ավտոմատդ էլ կտանեն, կռվում եք՝ կարգին կռվեք՝ բան հասկանանք, չեք կռվում՝ հետները հաշտվեք, մենք էլ գնանք մեր գործին»*, - եւ ներում էին, որովհետեւ Անդրասըն ճիշտ է , ռուս չի, բայց խորհրդային բանակի սպա է, չի կարելի նրա վրա զենք քաշել, եթե ունենային էլ, Անդրասը հո գող Մուրթուզ Ֆարգալիեւ չի, բռնես՝ որսորդական հրացանի կոտորակով ոտքը քրքրես։

Շարքային զինվորը, միջինասիական նեղաչք մեկը, ձիգ գեկուցեց, որ ընկեր պարետի հրամանով քաղաքացի Շոֆեր Գարաբեկին ուղեկցել է գրասենյակ։ Դա թատերական ներկայացում չէր, այնքան կարեւոր, որ գյուղի ղեկավարությունը նույնիսկ կարկամեց՝ հարկավոր է ոտքի վրա դիմավորել, թե՞՝ նստած էլ ոչինչ,- Շոֆեր Գարաբեկը գեղեցիկ էր ու քաղաքավար. նա բուրում էր օծանելիք, եւ կղբենի թանկ գլխարկն ու սեկե ձիգ բաճկոնը նստում էին անթերի, եւ ճերմակ օձիքն ու շավվարի թարմ

արդուկը հուշում էին, որ ճիշտ է՝ սրա տեղը Բաքվի առնվազն տաքսապարկի գլխավոր մեխանիկի թանկ պաշտոնն է, նրանից ուղղակի մայրաքաղաքների ուժեղ փայլ էր ճառագում, եւ՝ որ խոսեց ռուսերեն, եւ այդ ճառի մեջ ոչինչ ծայրահեղական չկար. ոչ Ղարա թուրք, ոչ Ակ-Կոյունլու միջնադարյան պետություն, նույնիսկ չհիշատակեց, որ իրենցից մեկը՝ Շահ Իսմայիլը, Իրանի պես հզոր երկրի թագավորն է եղել ու նաեւ բանաստեղծ՝ Խաթայի, պարզապես գովեց ռուս զինվորականի կարգապահությունը, Մոսկվայի փայլուն խելքը, որ ծագած հարցերը լուծում է բացառապես խաղաղ ճանապարհով եւ արանքներում էլ չասելու նման անդրադարձավ յոթ տուն թուրքի *«սոսիալ-տնտեսական փրոփիլեմներին»*, որ՝ մայրենի լեզվով դպրոց չունեն, գրադարան, եղածը մի հեռուստացույց էր, էն էլ Գորիս նոր տրանսլյատոր են դրել՝ միայն Երեւանն է բռնվում, նաեւ՝ ռադիոն, Բաքվի հետ կապ չկա, բայց ամենավատն էն է, որ՝ *«մեր հարազատների շիրմերը Սրխավեդ ենք հողին հանձնում, հիմա Կիչան մեր ճամփան կտրել են, չէ, կիչանցիք լավ, հանգիստ ժողովուրդ են, իրենց մեղքով չի, Ստեփանակերտից մի քանի մորուքավոր է եկել, դրանք են խառնակում»*.- եւ սպասեց՝ իշխանության ներկայացուցիչն ինչ է ասելու:

Ամռանը բանաստեղծ եւ օրենդիր Բորիս Օլեյնիկի համար այդպես էլ պարզ չէր եղել՝ դարաբաղցիներն Ադրբեջանում ապրող ի՞նչ ազգ են: Գյուղական մշակույթի դահլիճը հին բեկական տուն էր, չէր տեղավորի հանդիպման բոլոր մասնակիցներին, դրա համար ժողովուրդը հավաքվել էր հիվանդանոցի ծառաշատ բակում՝ գոնե հով կլինի: Բորիս Օլեյնիկը սաստել էր՝ մկնագույն կեպիի շքոցն աչքերին խուփ արած՝ լսում կամ ավստսում էր կորցրած արձակուրդի այդ մի քանի օրը, որ կարելի էր լավ հանգստանալ Ղրիմի կառավարական առողջարաններից մեկում, հազիվ առիթ է, եւ Վահան Գաբրիելյանը երբ ասում էր՝ *«Բորիս Իլյիչ Օլեյնիկի գլխավորությամբ այս հանձնաժողովի այցը Լեռնային Ղարաբաղ վկայում է, որ ԽՍՀՄ Գերագույն Խորհուրդը մտահոգված է հարցի շուտափույթ եւ արդարացի կարգավորմամբ»*, - կուսակցական ղեկավարի եւ միութենական պատգամավորի իր բարձունքում նկատելի խաբված կամ կեղծ էր երեւում: «Գիժ»

Սարումը բռի մեջ կամացուկ հազաց՝ *«փեսա, էս Մասկվից եկածն ո՞վ է»*, - եւ Բորիս Օլեյնիկ անունը ոչինչ չէր ասում, ավելացրինք, որ Ռաֆիկ Նիշանովի տեղակալն է, Սարումը թափ տվեց ձեռքը՝ *«Դրանից մեզ խեր չկա, դա որ էսքան մարդուն չի էլ նայում, որ գնա Մասկվա, ի՞նչ պիտի ասի»*, - ու մահակը կռնատակերին ագուցած՝ գնաց, իսկ պատմության ուսուցիչը խոսափողի մոտ, որ մշակույթի մարզային վարչությունից հատուկ մի օրով գյուղ էր բերվել, Ստրաբոնի ժամանակներից նոր հասնում էր Արտաշ-իսյան- Արշակունի- Բագրատունյաց հարստություններին, թաթար-մոնղոլների, որ Ռուսիայի թշնամիներն էլ էին եղել, դեմ դժվար ճակատամարտ էր տալիս՝ Կիլիկյան թագավորության սպարապետ Սմբատ Գունդստաբլի գլխավորությամբ Մանգու խանի մոտ բանագնաց ուղարկելուց առաջ կամ հետո՝ այստեղի՝ Յասան-Ջալալ Դոլա մեծ իշխանի օրոք, որպեսզի այդ անսահման հեռուների մեջ գտնի խաղաղության քառասուն տարի՝ կառուցելու Գանձասարի հոյակապ վանքը, ըստ Յակոբսոնի՝ հայկական ճարտարապետության երեք գոհարներից մեկը եւ ի վերջո բանաստեղծ եւ օրենսդիր Բորիս Օլեյնիկին բացատրի, թե հենց այդ վանքում են Արցախի հայ մելիքները հեղինակել Պետրոս Մեծին հասցեագրված հայտնի նամակը, որ Պետերբուրգ է հասցրել Իսրայել Օրին՝ Միևսս վարդապետի ուղեկցությամբ, իսկ պահեստի գնդապետ Շահեն Պողոսյանն ասաց. *«Բորիս Իլլիչ, եթե տարիքս եւ վաստակս թույլ տային, ապա ես ծունկ կչոքեի Ձեր առջեւ ու կաղերսեի՝ խղճացեք այս ժողովրդին, բայց ես ծեր մարդ եմ, ուստի խնդրում եմ՝ մի վարվեք այնպես, որ ափսոսամ ֆաշիզմի դեմ պայքարում իմ հեղած արյունը»*, - բայց Յամբարձում Թովմասյանն ամփոփեց հանդիպումը:

Նա Ստրաբոն չէր կարդացել, չգիտեր Եսայի Յասան Ջալալյանի անունը եւ հատ-հատ՝ ռուսերեն ընդամենը լաց եղավ, որ՝ Մոսկվան մարդկանց խաբում է, էս երկրում ոչ մի արդարություն էլ չկա, որովհետեւ իր Ռաֆիկ տղան Սումգայիթ մի ամբողջ օր կացինը ձեռքին պաշտպանել է օջախի, ջահել հարսի պատիվը, մեն-մենակ ահագին խուժանի դեմ մի օր կռվել է ու իրիկնամուտին իր տան շեմին մորթվել, իսկ երկրի ղեկավարն ասում է՝ *«Չորքերը երեք ժամ են ուշացել»*, - եւ ինքը որդու թաղմանն էլ չի

գնացել՝ Ստեփանակերտի զինվորական պարետը խորհուրդ չի տվել, հիմա, եթե պետությունն ուժ ունի՝ թող մեքենա տա, հետը զինվոր դնի՝ գնա խեղճ տղայի ոսկորներն էն դժոխքից բերի, հայրենի հողին արժանացնի, հարցնում էր. «Այ, դու որ եկել ես, գլխներիս քարոզ պիտի կարդաս՝ կմդիմանա՞ս, որ ես ցավը քեզ տան»:- Բորիս Օլեյնիկի մկնագույն շքոցը թաքցնում էր նրա հայացքը, բայց ծերունին եզրակացրեց. «Չէ, դու ինձ չես հասկանում, դու իսկի մարդ էլ չես»:-

Ահա ամռան այդ խեղկատակ-ողբերգական հիշողությունների ուժով Շոֆեր Գարաբեդը հանգիստ առաջարկեց. «Ղարաբաղը մեր ընդհանուր տունն է, էստեղ ծնվել, էստեղ էլ մեռնելու ենք, բայց դե, տեսնում եք, առժամանակ հայերի հետ միասին ապրել չի լինի, որպեսզի հետագա բարդություններից խուսափենք, հարմար է, որ մենք՝ յոթ ընտանիք աղորբեջանցիներս, Կիչանի հետ փոխանակենք տունուտեղ, այգի-բանջարանոց, ճիշտ է՝ տուժողը մենք ենք, բայց ուրիշ ելք չկա»:- Չինվորական պարետ Կոնստանտին Ժվիրկոն հրճվեց՝ «գերագանց առաջարկ է»:- Շրջագործկոմի Նախագահը շեշտ նայեց Շոֆեր Գարաբեդին՝ «դուք գյուղ չեք»:- Ժվիրկոն ասաց՝ «բայց իրոք համարյա Կիչանի չափ ժողովուրդ են, կմիանան Սրխավենդի խորհրդին, եւ հարցը կլուծվի»:- Այդպես հեշտ չէր լինի՝ ընկնեին ծուղակ, շրջագործկոմի Նախագահը Ղըրանց դիմումին տեղյակ էր՝ ուզում են առանձին գյուղ դառնալ, նոր առաջարկն էր անսպասելի. եթե այդ է, ուրեմն մտքներին դրել են Ստեփանակերտ-Մարտակերտ ճանապարհը կտրել, հուշողն էլ զինվորական պարետությունից է, հակաճառեց. «Նման հարցերը ոտքի վրա չեն լուծում»:- Ժվիրկոն զգվեց՝ «միայն ցանկություն լինի», - իսկ գյուղի ղեկավարությունն այդպես էլ չհասկացավ՝ իրենց ու՞ր են կանչել, քանի որ կարծիք հարցնող չեղավ, իսկ ձմեռն, ահա, մոտենում է, ուղղաթիռով բերած ալյուրն սպառվելու վրա է, Երեւանը՝ յոթը սարից էն կողմ ու երկրաշարժն էլ հայերիս մեջքը կոտրեց: Շրջագործկոմի Նախագահը տնտեսության ղեկավարին թաքուն զգուշացրեց, որ ես մի քանի օրը նպատակահարմար չէ ճանապարհ գնալ, Սրխավենդ ահագին աղմուկ է: Ինքը եկել էր զինվորական պարետի մեքենայով. դեղին-կապույտ՝ շերտավոր «Ուազը» հեռացավ գյուղից.

-Սույն թվականի նոյեմբերի 7-ին մի խումբ հայ ծայրահեղականներ իրենց մշտական բնակության վայրից՝ Մարտակերտի շրջանի Առաջաձոր գյուղից բռնությամբ արտաքսել են ազգությամբ ադրբեջանցի քաղաքացիների, այդ թվում՝ կանանց, երեխաների, ծերերի:

ԼՂԻՄ եւ հարակից շրջանների գինվորական պարետ:-

«Ադր. ԽՍՀ Ադդամի շրջանի ներքին գործերի բաժնի պետ, միլիցիայի գնդապետ ընկեր Ի. Բ. Մամեդովին

Ադր. ԽՍՀ ԼՂԻՄ Մարտակերտի շրջանի Առաջաձոր գյուղի մի խումբ ադրբեջանցի բնակիչներից

ԿՈԼԵԿՏԻՎ ԴԻՄՈՒՄ - ԲՈՂՈՔ

Սույն դիմումը գրելով՝ հայտնում ենք Ձեզ, որ 1989 թվականի նոյեմբերի 7-ին, երբ մենք զբաղված էինք մեր ամենօրյա հոգսերով, որովհետեւ արդեն երկրորդ տարին է, ինչ կտրված ենք ամեն ինչից եւ ապրում ենք մշտական վախի պայմաններում, երեկոյան ժամը 23-ի սահմաններում, մեր առանձին թաղն են մտնում մի խումբ գինված մարդիկ, որոնց առաջնորդում էին գյուղխորհրդի գործկոմի նախագահը, տնտեսության ղեկավարը, դպրոցի դիրեկտորի եղբոր տղան, որ Ստեփանակերտից եկել, աշխատում է դասատու եւ մեր երեխաներին մինչ այդ բազմիցս ծեծել է, Էլի մի քանի ջահելներ, նրանց հետ էլ նախկինում ավագակության համար խորհրդային օրենքով մահվան դատապարտված՝ Մուշեղ Աղաբաբյանի տղա Անուշավան Աղաբաբյանը եւ մեզ ստիպում են դուրս գալ տներից ու հեռանալ Սրխավենդ, բայց մեքենա էլ չեն տալիս, ստիպված դուրս ենք եկել, գիշերով հասել Սրխավենդ ու մեր բողոքներին Մարտակերտի շրջանի ոչ մի ղեկավար չի լսում, դրա համար էլ Ձեզ ենք դիմում եւ խնդրում , որ զբաղվեք մեր հարցով, մինչեւ ե՞րբ պիտի մեր հողում մեզ տանջեն հայ ավագակներն ու նացիոնալիստները, խնդրում ենք կարգադրեք, որ մեզ ետ տանեն մեր տները, իսկ մեզ տանջած ավագակներին բռնեն ու դատեն խորհրդային արդար օրենքներով:

Փարաեւ, Շիրինով, Մուստաֆաեւ, Բաբուշեւ...»:-

Իրականում Ղըրա՞նք էին այս նամակը գրել, թե՛ Ադդամ սարքե՞լ էին՝ արդեն իմաստ չունեն հետաքրքրվել, նամակը պատշաճ

գրագրությամբ ուղարկվել էր Մոսկվա՝ ԽՍՀՄ ներքին գործերի նախարարություն եւ ստացվել անհրաժեշտ մակագրությամբ. «Չարուցել քրեական գործ եւ նախաքննությունը հանձնարարել ԽՍՀՄ ՆԳՆ հատուկ քննչական խմբին», - շատ փոխնախարարներից մեկն էր մակագրության հեղինակը, իսկ քննությունը տալու մեր մայրը Անատոլի Բրագինցեւը, նրան մեկը գյուղ պիտի ուղեկցեր, դա էլ Գրիգորի Օսիպովն էր, մարզային մեր միլիցիայի քրեական հետախուզության բաժնի օպեր-լիազորը, որ ռուս քննիչից տարբերվում էր այնքանով, որ կարողանում էր մեր մեջ հայերեն թաքուն խոսածը հասկանալ.

«ՉԱՐՑԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Բրագինցեւ.- Անուն, հայրանուն, ազգանուն, կենսագրական տվյալներ:

Պատասխան.- Աղաբաբյան Անուշավան Մուշեղի, ծնված 1922 թվականին, Մարտակերտի շրջանի Առաջածոր գյուղում....

Բրագինցեւ.- Դուք մոռացա՞ք, թե չեք ուզում ասել, որ ծնվել էք Ադր. ԽՍՀ ԼՂԻՄ Մարտակերտի շրջանի Առաջածոր գյուղում:

Պատասխան.- Ես ծնվել եմ 1922 թվականին, իսկ ԼՂԻՄ-ն Ադրբեջանի կազմում ինքնավարություն է հռչակվել մի տարի հետո:

Բրագինցեւ.- Լավ, ընդունենք, որ այդպես է եղել, շարունակեք:

Պատասխան.- Կրթությունս՝ միջնակարգ, անկուսակցական, աշխատել եմ «Պրավդա» կոլտնտեսությունում, ներկայումս՝ թոշակառու, ամուսնացած եմ, ունեմ երեք երեխա, որոնք ապրում են ինձնից առանձին:

Բրագինցեւ.- Որեւէ անձնական թշնամանք ունեցե՞լ էք արդյոք համագյուղացի Սուրխայ Մամեդովի հետ:

Պատասխան.- Ոչ, չեմ ունեցել:

Բրագինցեւ.- Ադր. ԽՍՀ Աղդամի շրջանի ՆԳ բաժնի միջոցով ԽՍՀՄ Ներքին գործերի նախարարին հասցեագրած դիմումով քաղաքացի Սուրխայ Մամեդովը հայտնել է, որ 1989 թվականի նոյեմբերի 7-ին Դուք մտել էք նրա տուն՝ Ձեր հետ ունենալով երկու շիշ բենզին եւ նրան ու ընտանիքի անդամներին սպառնացել՝ թողնեն հեռանան, հակառակ դեպքում տունը կվառեք, իրենց էլ հետը, - Դուք հաստատու՞մ էք դա:

Պատասխան- Ոչ, չեմ հաստատում, ես Սուրխայ Մամեդովի տուն չեմ գնացել ոչ այդ օրը, ոչ էլ առհասարակ:

Բրազիլացի- Պատմեցեք Նոյեմբերի 7-ի դեպքերի մասին:

Պատասխան- Այդ օրը արտառոց ոչինչ չի եղել, բայց Նոյեմբերի 3-ին ֆերմայի ծղոտի դեզը հրդեհվել է, պահակը եղել է Սուրխայ Մամեդովը, կասկածվում էր, որ պահակը դիտմամբ հրդեհել է ձմեռվա պաշար անասնակերը, հետո Շոֆեր Գարաբեհի տուն Բաքվից մարդիկ են եկել...

Բրազիլացի- Դուք հարցից շեղվում եք, պատմեցեք Նոյեմբերի 7-ի մասին:

Պատասխան- Նոյեմբերի 7-ին Սրխավենդի տնտեսության տնօրեն Էրշադ Ֆարգալիեւը տասը բեռնատար մեքենա է ուղարկել, մեր Ղըրանք իրենց ունեցածը բարձել, գնացել են, հետո եկել, տարել են իրենց դռների խոտը, փայտը, ցախավելը, շները, հավուճիվը...

Բրազիլացի- Դուք շարունակում եք պնդել, որ Սուրխայ Մամեդովի ընտանիքին ու անձամբ իրեն չեք սպառնացել:

Պատասխան- Պնդում եմ:

Արձանագրությունը իմ բառերից կազմված է ճիշտ, որի համար ստորագրում եմ՝

Ա. Մ. Աղաբաբյան

3 դեկտեմբերի, 1989 թվական»:

Քննիչ Բրազիլացիները հոգնած էր, դեմքը՝ նույնիսկ խիտ մորուքի տակ պարզ երեւում էր՝ սրված, գունատ: Գյուղական գրախանութում նա տեսավ Անատոլի Ռիբակովի «Արբատի գավակները» եւ զարմացավ, որ մենք նաեւ գիրք ենք կարդում, բայց հավանաբար կուզենար՝ գործուղման ժամկետն ավարտած լինելը, սակայն միլիցիայի շրջբաժնի պետ Վլադիկ Ավագիմյանն էլ լրացուցիչ բարդություններ է ստեղծում: Ո՞վ է լսել՝ մարդ չկատարի ներքին գործերի նախարարի հրամանը, իսկ մայրը Ավագիմյանն իրեն թույլ է տալիս հայտարարել, որ թուրք տեղակալի հետ չի աշխատի: Չես աշխատի՝ նախարարն էլ Բաքվից հրաման է արձակել առ այն, որ «ծառայողական պարտականությունների կատարման գործում թույլ տված բազմաթիվ սխալների, անհետեւողականության եւ զգոնությունը կորցրած լինելու համար միլի-

ցիայի մայրը Վլադիկ Վարդանի Ավագիմյանն ազատվում է ՆԳ Մարտակերտի շրջբաժնի պետի պաշտոնից եւ թողնվում ՆԳՆ Կարբերի գլխավոր վարչության հայեցողության տակ՝ մինչեւ կավարտվի նրա նկատմամբ սահմանված ծառայողական հետաքննությունը»։ Հետաքրքիր է՝ Բաքվից ուզում են շրջբաժնի պետի տեղակալ նշանակել Իսա Մամեդովին, որ Երեւան քաղաքի Սյասնիկյանի շրջանի պետավտոտեսչության պետ է եղել, հայտնի պատճառներով տեղափոխվել է Ադրբեջան, հայերը չեն համաձայնում, ասում են՝ տեղամասային տեսուչներ կան, հերիք է, մենք երբեք միլիցիայի թուրք տեղակալ չենք ունեցել,- բայց նաեւ բողոքում են, թե Բաքուն միշտ ճնշած է պահել։

«Առերեսման արձանագրություն

քննիչ՝ Ա. Բրագինցեւ

Թարգմանիչ՝ Ս. Ստեպանով

Ստեղծված իրավիճակում, երբ գործով կասկածյալների եւ տուժող ներկայացող կողմի միջեւ հնարավոր չէ առարեսում կազմակերպել ՆԳ Մարտակերտի շրջանային բաժնում, ես՝ ԼՂԻՄ գործուղված՝ ԽՍՀՄ ՆԳՆ օպերատիվ քննչական խմբի քննիչ Ա. Բրագինցեւս, որոշեցի առերեսում կազմակերպել Խաչենի կամրջի հսկիչ - անցաթողման կետում, որպեսզի գործով տուժող ներկայացող, ազգությամբ ադրբեջանցի քաղաքացիների անվտանգությունը ապահովված լինի։ Առերեսման քննչական գործողությանը ներգրավված է ՆԳ Մարտակերտի շրջբաժնի քրեական հետախուզության բաժնի օպերատիվ լիազոր, միլիցիայի ավագ լեյտենանտ Ս, Ստեպանովը՝ որպես ադրբեջաներենից ռուսերեն թարգմանիչ։

Առերեսման են հրավիրվում Ադր. ԽՍՀ ԼՂԻՄ Մարտակերտի շրջանի Առաջածոր գյուղի բնակիչ Ս. Մամեդովը եւ գործով կասկածյալ, նույն գյուղի բնակիչ Ա. Աղաբաբյանը։

Հարց. Մամեդով, Դուք այս մարդուն ճանաչու՞մ եք։

Պատասխան. Ես այդ մարդուն ճանաչում եմ, նրա անունը Անուշավան է։

Հարց. Աղաբաբյան, դուք այս մարդուն ճանաչու՞մ եք։

Պատասխան. Ես այդ մարդուն ճանաչում եմ, նրա անունը Սուրխայ է։

Յարգ. Մամեդով, ՆԳ Աղղամի շջանային բաժնի միջոցով ԽՍՀՄ ՆԳ նախարարին հասցեագրած դիմումում նշել եք, որ 1989 թ. նոյեմբերի 7-ին, երեկոյան ձեր տուն է մտել Ա. Աղաբաբյանը, որի ձեռքին եղել է երկու շիշ բենզին եւ սպառնացել, որ թողնեք ու գնաք, թե չէ տունը կհրկիզի՝ ձեզ էլ հետը, դուք պնդում եք, որ ծիշտ եք շարադրել կատարվածը:

Պատասխան. Ես չեմ հիշում, թե ինչ եմ գրել:

Յարգ. Մամեդով, Դուք իրոք չե՞ք հիշում:

Պատասխան. Ես դիմում չեմ գրել, անգրագետ մարդ եմ:

Յարգ. Դուք ձեր տանը տեսե՞լ եք Աղաբաբյանին:

Պատասխան. Ես այդ օրը տանը չեմ եղել, ես առհասարակ տանը չեի լինում, քանի որ աշխատում էի ֆերմայում, տանը եղել է իմ քույրը:

Յարգ. Մամեդով, ձեր քույրը ձեզ ասե՞լ է, որ Աղաբաբյանը սպառնացել է:

Պատասխան. Ընկեր պետ, էդ դիմումը գրել է ուրիշը, ես իսկի չեմ էլ ստորագրել:

Յարգ. Դուք որեւէ լրացուցիչ ասելիք ունե՞ք Աղաբաբյանին:

Պատասխան. Չունեմ, բայց կուզեի իմանալ, թե երբ կարող եմ ետ գալ եւ ապրել իմ տանը:

Յարգ. Աղաբաբյան, Դուք Մամեդովին ասելիք ունե՞ք:

Պատասխան, Ունեմ. Սուրխայ, մոտո՞ւ ի՞նչ ծխախոտ կա», - առերեսման մասին արձանագրությունից դուրս եղավ ահա այսպիսի երկխոսություն՝ տեսարան.

«Բրազիլացի. Վերջ տվեք, թատրոն չենք խաղում:

Աղաբաբյան. Ինչու՞, ընկեր մայր, ես իրոք նրանից ծխախոտ եմ խնդրում, քանի որ մեր սպառնկոտայում կարգին ծխելիք չկա:

Բրազիլացի. Մամեդով, դուք ուզում եք ծխախոտ հյուրասիրել Աղաբաբյանին:

Մամեդով. Ինչու չէ, կլինի, թե որ չունի՞ տալիս եմ:

Բրազիլացի. Կարող եք տալ», - Սուրխայ Մամեդովը հագնում էր գալիֆե շալվար, գույգ կրծքագրպաններով վերնաշապիկ՝ ֆրենչ, նա հանեց եւ Անուշավան Աղաբաբյանին մեկնեց երկու տուփ «Ռոդոպի» բուլղարական ծխախոտ, եւ մայրը Բրազիլացի-ը չհասկացավ՝ իրականում ի՞նչ էր եղել 1989 թվականի նոյեմբե-

րի 7-ին եւ ձեռքի տակ չունեցած նյութերի հիման վրա «հանցակազմի բացակայության» պատճառաբանությամբ որոշում կայացրեց քրեական գործի վարույթը կարճելու մասին:

Ինչքան էլ ուզենային՝ յոթ տուն թուրքը հազիվ թե հարյուր քսանմեկ մարդ եւ գյուղ դառնար, սակայն Բաքվից ասացին, եւ զինվորական պարետն էլ մեծահոգաբար հավատաց, որովհետեւ նույնիսկ օրենսդիր բանաստեղծների ժամանակներն անտես զլորվել էին մոռացության խորխորատները, երկրի գունդը պտտվում էր առանցքից շեղված, Աֆղանստանից դուրս բերվող զորքը ոչ թե Ռուսաստան, այլ Ղարաբաղ էր բերվում՝ ի կատարումն հրամանի Վիկտոր Պոլյանիչկոյի.

«ԽՍՀՄ ՆԳ նախարար

Ընկ. Բ. Կ. Պուզոյին

Իրազեկում եմ Ձեզ, որ ԼՂԻՄ Մարտակերտի շրջանի Մյասնիկյանի անվան կոլտնտեսությանը պատկանող 40 հեկտար ջրարբի տարածքում Ադր. ԽՍՀ տարբեր շինկազմակերպությունների կողմից ավերվել են թթենու եւ խաղողի այգիները՝ Ադդամի շրջանի վարչական ենթակայության ներքո նոր բնակավայր հիմնադրելու նպատակով: Աշխատանքներն իրականացվում են շուրջօրյա, ԽՍՀՄ ՆԳՆ ներքին գործերի ստորաբաժանման հսկողությամբ, ինչը թույլ է տալիս եզրակացնել, որ նման ապօրինի ձեռնարկումները թույլատրված են ԼՂԻՄ եւ հարակից շրջանների զինվորական պարետի կողմից:

Խնդրում եմ Ձեր անմիջական եւ անհետաձգելի միջամտությունը՝ կանխելու ԼՂԻՄ Մարտակերտի շրջանի վարչական սահմանները բռնությամբ փոխելուն ուղղված, իր հետեւանքներով արկածախնդիր այդ քայլերը:

ԽՍՀՄ Ժողովրդական պատգամավոր, կուսակցության Մարտակերտի շրջկոմի առաջին քարտուղար՝ Վ.Ս.Գաբրիելյան»: Խորհրդային Միության Գերագույն Խորհրդի 1989 թվի նոյեմբերի 29-ի նիստից հետո ժողպատգամավորների մեր անհամերաշխ քառյակը հայտարարված էր օրենքից գրեթե դուրս, եւ այդ նամակն արդեն որեւէ նշանակություն, մանավանդ՝ հետեւանք չէր ունենալու, որովհետեւ հաջորդ օրը կամ մի շաբաթ հետո պարետային կարգախումբը նրա մեքենան կանգնեցրել էր Կի-

չանի անցակետում եւ փաստաթուղթ պահանջել: ԽՍՀՄ ժողպատգամավորի նրա վկայականի վրա կարգախմբի ավագը ծիծաղել էր, իրեն հրել թափքածածկավոր «Ուրալ» մեքենա, ասել էին՝ «Աղդամ ենք գնում, մեկին էլ երեկ տարանք», - եւ դա Բորիս Դադամյանն էր եղել, օդանավակայանում աչքերը փակել, հասցրել էին Աղդամ: Շրջանի ԽՍՀՄ ժողպատգամավոր ղեկավարին երկու ժամ պահել էին բեռնամեքենայի թափքածածկի տակ, նրա հեռագիրը ներքին գործերի նախարար Բորիս Պուգոյին ոչինչ չէր ասում, իրական իշխանությունը տրված էր թուրքի երեք-չորս գյուղերի վրա տեղապահ կարգված՝ Արիֆ Ալիեւին, որ բանաստեղծ էր լինելու՝ լավ կամ վատ, սակայն կուսակցության կամքով եղել էր պետական ծառայող՝ շրջկոմի երկրորդ քարտուղար: Նա Շոֆեր Գարաեւ չպիտի ճանաչելիս լիներ, Բաքվից կարգադրել էին, որ՝ *«Իրենց հայրենիքում փախստական դարձած մարդկանց համար հարկավոր է նոր գյուղ կառուցել»*, - խորհրդային իշխանության հայացքով՝ Ղարաբաղի հարցը միայն տնտեսական ենթատեքստ կունենար, կառավարությունը հատկացրել էր 400 միլիոն կայուն ռուբլի եւ միջնորդել, որ այդ փողերը ծախսվեն «պարիտետային սկզբունքով», այսինքն՝ մեր բաժինն այդ գումարից թուրքի ստանալիքին պիտի հարաբերվեր՝ ինչպես թվաբանական գործողության մեջ՝ չորսը մեկին, Ղարաբաղի բնակչության չորսից մեկն է թուրք, չէ՞: Մոսկվան այդպես կմտածեր, բայց խորհրդային բանկային համակարգը գումարներ շրջանառելիս նկատի չէր ունեցել, որ մի հանրապետության կան «պետականակիր եւ ոչ պետականակիր ժողովուրդներ»՝ սա խելոք ձեւակերպում է, իսկ թուրքն ասում է՝ «գյալմա»՝ «եկվոր», «երկվորին» ո՞վ միլիոն կտա, վերցրել՝ Ղըրանց յոթ տուն թուրքի համար Արիֆ Ալիեւը կառուցում էր Ենի Գարալար գյուղ՝ ամբողջ «կուլտուր-կենցաղային ինֆրաստրուկտուրայով հանդերձ»՝ որ կենտրոնացված ջեռուցում լինի եւ՝ կոյուղի, դպրոց, գրադարան, բուժկետ, պարահրապարակ, Ղըրանք պիտի հավաքվեն եւ յոթ տնով «յալլը» պարեն եւ մեզ ատամ ու բռունցք ցույց տան, Նավրուզ պիտի տոնեն եւ գնան՝ գողանալու Ղազանչի հայ գյուղի անասունը, մարդուն: Սպանելու են պատմության ուսուցիչ Պավել Ասատրյանին՝ իր տանդ-

ռանը, սպանելու են Վարդի Հովակիմյանին, որովհետեւ Պավելի տղերքը զենք են վերցրել, Վարդի Հովակիմյանի Վլադիկ որդին Մարտակերտի միլիտետ ժամանակ Ղըրանց ինչ-որ մեկին արդար գողության համար նեղություն է տվել:

Տնտեսության տնօրենի մեքենայով Մարգուշավանից ծղոտ բարձած շարասյան առջեւից գալիս էինք, Խաթունբեյլուի վերջին ոլորանն անցանք՝ դիմացը թուրքի խառնամբոխ էր՝ աղբյուրի մոտ եւ՝ ոչ թեքվել կլինեք, ոչ՝ շրջադարձ, իրար սիրտ տալով,- դեկին տնտեսության տնօրենն էր,- ասացինք՝ գնանք,- եւ այն է՝ խրվում էինք մեջները՝ այդպես անցնելու կամ միանգամից հոշոտվելու, ամբոխը հանկարծ ետ քաշվեց, տեսանք՝ աղբյուրի մոտ Արիֆ Ալիեւը կանգնած է՝ անշառ ծիծաղը բերանին, ձեռքով հասկացրեց՝ կանգնեցինք,- խնդմնդաց. *«Հակոբյան, զոքանչդ քեզ շատ է սիրում, էս թղթակից ջահելն էլ հետդ է՝ բախտ ունի, պատահեցի, թե չէ հո գիտեք՝ բաններդ բուրդ էր լինելու, բա չե՞ք լսել՝ Ստեփանակերտ էլի Կրկժանի վրա կրակել, մերոնցից հինգ հոգի սպանվել է, դրությունը շատ խիստ լարված է»*,- մինչեւ Չլդրանի կամուրջ ուղեկցեց, թե՛ *«էս ճամփով էլ չգաք»*:- Իհարկե, շնորհակալ եղանք, բայց հետո անտանելի դժվար էր չհասկանալ, որ ուժի ցուցադրման այդ շքերթը նա անձամբ կազմակերպել էր, որ այլեւս մոռանանք Մարտակերտի կարճ ճանապարհն ու սողեսող քարշ գանք Չլդրան-Դրմբոն-Կուսապատ գծի վրայով, իսկ ձորը տրված է իրենց: Իրենք շարժվում էին զրահամեքենայի ուղեկցությանը՝ Աղդամից մինչեւ «Դալի դաղ» ու ետ, որովհետեւ իրենց ոչ-խարը պետական թանկ ապրանք էր եւ չէր կարելի անպաշտպան թողնել քոչի երկար ճանապարհին:

Փոխզնդապետը բաց կապույտ աչքեր ուներ, հագել էր երթադաշտային քողարկազգեստ, ոտքերին՝ «Ադիդաս» մարզակոշիկներ եւ այդ տեսքով սարերում նա մի փոքր բուտաֆորային - թատերական էր՝ «Մակարով» ատրճանակը գոտու տակ, ծխախոտը բերանի անկյունում տղայավարի կծած: Մենք նրան բացատրում էինք, որ գյուղից մի շաբաթ է՝ մարդ է կորել, թոշակառու ուսուցիչ, առավոտը տնից դուրս է եկել եւ յոթ օր է՝ փնտրում ենք՝ չկա, մարդը հո ասեղ չի՞, որ ծմակի խաշամի տակ չգտնես, ասում էինք՝ *«Իրենք են պատանդ տարել՝ թուրքերը, թող բերեն, մեր*

մարդուն ետ տան ու գևան քոչի իրենց ճանապարհը»:- Փոխգնդապետը լսում ու չէր հասկանում՝ իրենից մեր ուզածը եւ օրորում էր գլուխը, որ այդքան իբր թե զարգացած, գրագետ, բայց տարրական բաները չենք հասկանում՝ ոչխարն, ախր, պետական հարստությունն է, երկրին տալիս է բուրդ, միս, ոչխարի հազար տարվա բնույթն է՝ որ ամառը սար են տանում, ձմռանը՝ Կուրի տափաստաններ,- եթե սարերում ուղտը գլուխը թեքում է արեւելք եւ դժվար մռլնգում, ուրեմն քոչը կապելու ժամանակն է, ուղտի բնագոն անսխալ հուշում է մոտալուտ սառը քաշաթուխպ, մանրահատ անձրեւ եւ՝ առավոտները՝ եղյամ: Հիմա տղերքը գիշերով ժայռը պայթեցրել՝ քոչի ճանապարհը փակել են, թե՛ «*մեր մարդուն տվեք ու գևացեք, չէ՛ չեք անցնելու, եղպես մնալու եք սարերում բանտված*»:- Բայց խորհրդային իշխանությունը դեռ չի մեռել, որ իր զուտ հարստությունը թողներ ձյունների տակ, փոխգնդապետն, ահա, ուղարկվել է՝ կազմակերպելու «Դեբլուկադա» մարտական օպերացիան: Նրա հրամանի տակ ծանր տեխնիկա է դրվել՝ հողափոր մեքենա, ժայռ ծակող ու պայթեցնող սարքեր, բերել էին երկար, շրջանցիկ ճանապարհով, փոխգնդապետին հրամայված է քոչն անկորուստ հասցնել Ադդամ՝ նա հրաման է կատարում, իսկ եթե մեկն իր տնից դուրս է եկել ու յոթ օր է՝ չկա, դրա համար զինվորական իշխանությունը պատասխանատվություն չի կրում: Ծատ հավանական է՝ մարդը մոլորվել է ծմակում, կամ անձնական թշնամի է ունեցել՝ հետապնդել, մի խուլ տեղ բռնացրել է ու կացնի բնքով խփել-սպանել, սարերում պատանդ չկա, փոխգնդապետն անձամբ շրջել է բոլոր ուրթերը, զրուցել հովիվների հետ եւ համոզվել, որ նրանք անշառ ոչխարապահ մարդիկ են: Լաչին - Քելբաջար՝ ամբողջ նախկին Կարմիր Քուրդիստանը սանրել է, պատանդ չկա, նույնիսկ որսորդական հրացան չունեն, որոնողական աշխատանքները պիտի կազմակերպի տեղական միլիցիան, որ անգործության է մատնվել: Փոխգնդապետը ժամանակ չունի, շտապում է, նրան անընդհատ կապի են կանչում Գյանջայից, թե՛ Ադդամից, եղ մեր գործը չի, զինվորական գաղտնիք չկիսելու համար նա բավական փորձ ու հմտություն ձեռք է բերել դեռ Աֆղանստանում, հիմա երկու միամիտ կցասայլավոր տրակտորով եկել՝ մենք

ուզում ենք նրան ի՞նչ սպառնալ: Չի լինի, փոխգնդապետը խորհրդային սպայի թանկ պատիվը ոտքի տակ չի տալու, նրան սպասում է գնդապետի պայծառ ապագա, բնակարան՝ ճիշտ է՝ ոչ մայրաքաղաքում, բայց գոնե մերձմոսկովյան շրջակայքի արդյունաբերական ավաններից մեկում երեք սենյակ ու ամառանոց հաստատ կունենա, եթե պատվով ավարտի գործուղման ժամկետը, որ լրանում է մի երկու ամսից:

Փլված ժայռի քարակարկառների վրա ոստոստուն իր քայլվածքով այդ երիտասարդ փոխգնդապետն իրոք թատրոնի լավ կամ վատ դերասան էր, քոչը խռնվել էր նրա թիկունքում, եւ նրանք, որ հարյուր տարի եկել՝ մեր միջով անցել, սարերում ամառ էին վայելել,- Միշա Ասրյանն ասում էր՝ *«սպրեն մեր էս թուրքերը, որ էսքան խելոք են, հիսուն կոպեկ տալիս՝ մի տուփ խտացրած կաթ եմ առնում, ուտում, ամանը շինում նավթի ճրագ՝ իրենց վրա հինգ մանեթով ծախում, դրանք որ չլինեին, ես իմ են տասներկու երեխան ո՞նց էի պահելու»*, - հիմա փոխգնդապետական ուսադիրների ապահովության վերելներից չէին էլ փորձում մեզ հետ բառ կիսել. իրենք , իբր, գործ չունեն, փոխգնդապետը կբացի ճանապարհը, կուղեկցի մինչեւ Աղզամ, իսկ արդեն հաջորդ քոչին մենք չենք լինի՝ գետահովտի հինգ գյուղով սրբված կլինենք Յայաստան, որովհետեւ կարգադրված է Մեծ քոչի ճանապարհը մաքրել մեկընդմիշտ: Վանքը կար, Միքայել վարդապետ Աջապահյանն Էջմիածնից նշանակված էր հոգեւոր հովիվ: Միլիցիայի շրջբաժինը, որպեսզի անգործության համար չմեղադրվի, ուղարկել էր երկու աշխատակցի: Տեսան, որ փոխգնդապետի հետ վիճելն իմաստ չունի՝ սուսուփուս քաշվեցին ու կպան այդ երկու վայ թե համագյուղացիներին, թե՛ *«դավաճան եք»*:- Ուզում էին նույնիսկ նրանց ծառայողական «Ուազը» շուռ տան, մի բան պիտի անեին, բայց հետո ամաչեցին. քոչն իջնում էր գյուղով, եւ թուրքերին պետք չէր ուրախանալու եւս մի առիթ տալ: Նստեցին խմելու. մի երկու ջահել Մոսու կապի վրա դարան էին դրել՝ ոչխար էր ընկել ծուղակը, մորթեցին, կերան եւ համարեցին, որ թուրքերից վրեժ, այնուամենայնիվ, կարողացան առնել՝ մինչեւ գարուն, երբ, հավատացրին իրար, նրանք այլեւս չէին գա, որովհետեւ կվախենային կամ էլ չէր գտնվի ծախված

փոխզնդապետ, քանի որ ռուսները հազիվ թե չհասկանային, որ ես ձորերի ճանապարհը նաեւ իրենցն է՝ եթե տան թուրքին, վաղը դրանք ուզելու են միանալ Թուրքիային՝ ոնց որ՝ 18 թվին Էր Նուրի փաշան հասել Ադրամ, իսկ մենք միշտ էլ ռուսի սահմանապահ զինվորն ենք եղել, Էդ Գորբաչովն է, որ չի հասկանում, որովհետեւ մի թերթում կարդացել են՝ Գորբաչովը թուրք է, բայց Ռուսաստանը մեծ երկիր է, հզոր բանակ ունի եւ հաստատ գիտի՝ որ ես խառնակ աշխարհում իր միակ բարեկամը եղել եւ մնում է նորից հայր:

Յետո զգվեցին՝ որ Երեւան մի քանի տաքզուլիս ջահել էդքան հասարակ բանը չի հասկանում, եզրակացրին, թե *«դրանք Ամերիկայի փողերով եկած մարդիկ են, Էսոր - Էգուց ռուսը գլխներին կտա»*: Ամբողջ աշունը եւ ձմեռը վիճեցին, դարձյալ հիշեցին հեռավոր 18-20 թվերի պատմությունը՝ որ մինչեւ Սեյդիշեն թուրքը կրակ էր տվել, փախստական մարդիկ եկել լցվել էին ձորի Էս գյուղերը, եւ շատ երեխաների մեջ՝ նրանցից մեկը հետո Երեւան քաղաքում դարձել էր հայտնի սրտաբան՝ Անդրանիկ Ճաղարյան, որ 1969, թե 70 թվին եկել, մարդկանց անվճար խորհուրդներ էր տալիս՝ ինչպես անեն, որ ինֆարկտ չստանան, հետը սիրուն նկարներ էր բերել՝ ամերիկյան քաղաքների պատկերներ, ցուցադրեց ինչ-որ ապարատով, չէ, կինո չէր, անշարժ, մեկ-մեկ ցույց էր տալիս ու հետն էլ պատմում, ասաց՝ *«Բանաստեղծ Պետրոս Դուրյանի դիմանկարը վերականգնել եմ»*, - ջահել-պատկեր տղա էր: Դուրյանը Ստամբուլի գերեզմանոցներից մեկում է թաղված, առաջ ասում էին՝ Կոստանդնուպոլիս, Սկյուտար թաղամաս՝ դա գրականության սերտած դասերից էին հիշում, բայց հեռավոր ֆերմաներում հերթապահության գնալիս տանում էին ոչ թե գիրք, այլ՝ որսորդական հրացան, եթե գտնվում էր, ուսապարկերում՝ կաղամբի թթու, տաքդեղ, տնաքաշ արաղ՝ ինչքան էլ տնտեսության ղեկավարն զգուշացներ՝ որ *«խմած հերթապահը պոտենցիալ գրի է»*, - դեռ ոչ մի գլխում չէր տեղավորվում, որ խաղը, հեռավոր ցույցերի ժամանակներից, արդեն ավարտված է:

Բաքվից փրկված Շահբարյան Գըրիշը երկփողանի ուներ, պատմում էր, որ *«Բիւս»* օդակայանի հսկիչներին հիմարացրել՝ էդ հրացանը հասցրել է Երեւան, չէին հավատում, բայց հերթով

խնդրում՝ վերցնում էին հերթապահության գնալիս, իսկ Գըրիշը շարունակում էր պատմել, որ 89 թվի դեկտեմբերի 29-ին ստամոքսի խոցը պայթել է Բաքվի Էրմանիքենո թաղամասի իր սեփական տանը, շտապօգնության բժիշկն ասել է՝ *«հարկավոր է անհապաղ վիրահատել»*, - Գըրիշը կիսամեռ - սփրթնած՝ գլուխն օրորել է, թե՛ *«ինձ մորթելու են ձերոնք, մի ճար արա՛ հասնեմ Երեւան»*:- Եւ զինվորական մարդկանց, թե՛ զուտ փողի ուժով՝ եկել են նրան օղանավակայան տանելու՝ կնոջ հետ, ահա էդ արանքում էլ որսորդական հրացանը հայտնվել է հիվանդի տեղաշորում ու հասել Երեւան, իսկ Էստեղից բերել, իրեն է տվել, ուրեմն, Ալավերդյան Մելսիկը, երբ գնացել էր այլուրի, արդեն Մելսիկին հարցրեք՝ ոնց է հրացանը բեռների արանքը խոթել, ինչ է ասել ուղղաթիռ ստուգող ռուսներին:

Բայց անասունն, այնուամենայնիվ, գողացան: Մայիսի 9-ի հաղթանակի օրով խմել՝ Վահան Շահբարյանի պատմությունն էին լսում, որ Կերչում Թամանյան դիվիզիան լրիվ ջարդվեց, գնդապետ Վասիլյանի դիակը մի կերպ հանեցին՝ ֆաշիստների ձեռքը չընկնի: Չերթապահողը գնաց, իսկ մյուս՝ գյուղամերձ ֆերման համարեցին անվտանգ՝ *«թուրքը հո չի գա մեր միջից գողություն անի, կվախենա»*, - իսկ հաջորդ առավոտ կթվորը ոչ անասուն գտավ, ոչ՝ պահակ՝ *«չկա, ֆերման քշել են»*: -Մինչեւ իրիկսամուտ հազար անգամ *«հետք կտրեցին»*, հարյուր տարբերակ քննարկեցին, բայց ոչ մեկի մտքից չանցավ՝ իբր պատանդ տարված ու զինվորականների ձեռքով ետ բերված պահակին հարցնի՝ *«արա, էդ որտե՞ղ էիր»*:- Չարցրին, ասաց՝ *«չեմ հիշում, գլխիս խփեցին՝ ընկա, ուրիշ բան չեմ հիշում»*:- Գլուխը տեղն էր, կտորվածք, ջարդվածք չունեիր, տեղամասային հիվանդանոցի բժիշկն ասաց՝ *«միզիր»*, - մեզը մաքուր էր, ներքին արյունահոսություն չունեիր, կերավ՝ չթափեց, ջերմությունը չափեցին՝ 36 էր: Բժիշկն ակնոցները հանեց, տոնոմետրը խոթեց ձեռնապայուսակն ու քթի տակ անհասցե դժգոհեց՝ *«ես թատրոնի՞ եք կանչել»*, - պատանդ տարված եւ անարյուն ետ բերված պահակի բարեկամն արագ մտավ բժշկի թեւը, կնոջը կարգադրեց՝ *«ախչի, արաղ դիր, հաց-մաց»*, - բժիշկը խմելու հետ հաշտ էր, խմեց՝ չհարբեց, Էլի լցրին, երկրորդ շիշն էլ գնաց՝ անվրդով հայտարարեց՝ *«թե դրան*

մեկը մատով կպել է՝ գլուխս կտամ»:- Հաշորդ օրը հասցրին Ստեփանակերտ, հետքը կորավ: Մի շաբաթ անց Յեխ ձոր ֆերմայի վարիչի մեքենայի վրա կրակեցին, ասացինք՝ «*մութ պատմություն է*», - «քաղաքից» հատուկ եկան, հատուկ զգուշացրին, որ ավել-պակաս խոսելուց առաջ լավ կլինի՝ մտածենք մեր անձնական ապահովության մասին, եւ հին ակնածանքից ոչինչ արդեն չէր մնացել: Տնտեսության ղեկավարի հետ վիճում էին չնչին առիթով, գյուղխորհրդի նախագահը գլուխը դնում էր ահագին թաթերին եւ դանդաղ մարտում անկառավարելի իշխանափոխության դառնությունը, եւ Մոսկվա միութենական մայրաքաղաքում այլևս «ԼՂԻՄ եւ նրա շուրջ» հարց չէր քննարկվում: Իշխանությունը տրված էր Վիկտոր Պոլյանիչկոյի Կազմկոմիտեին: Թուրգուք Օզալը Միխայիլ Գորբաչովի հետ վերավավերացրել էր յոթանասուն տարվա վաղեմության ռուս-թուրքական՝ բարեկամության եւ եղբայրության մասին պայմանագիրը, իսկ Այազ Մութալիբովը՝ կենտրոնին երաշխավորել Ադր. ԽՍՀ հավիտենական գոյությունը նորացող դաշնապետության կազմում, եթե Կենտրոնն արտոներ «հայ ծայրահեղականներին զինաթափելու» գործողությունը:

Կաթնագույն «Նիվան» Մեծ քոչի լքյալ ճանապարհից թեքվեց, ոսոստաց գետեզրյա դարուփոսերի վրա, ապա կտրուկ թեքվեց եւ կարճ հնձած արտատեղերով մտավ անտառակ: Իր թաքստոցի հեռվից Տղան տեսավ հողմնապակիների կայծկլտումը, քիչ անց ներքեւից մեկը ցածր շվվացրեց եւ հորը,- ծնոտին իջած հարվածից նա ծնկել եւ հանձնվել էր Շոֆեր Գարաեւի որդու լկտիությանը,- գետնից պոկեցին: Գետահովտի նեղլիկ երկնքով ցածրագնա սահեց մարտական ուղղաթիռի ստվերը, կամրջի վրա թեքվեց ու կորավ, բայց պտուտակների շփշփոցը դեռ արձագանքվում էր: Տղան անաղմուկ սողաց դեպի ձորը եւ արեւի, դեղնող անտառների, կծղած խոտերի լռության միջով վազեց գյուղ՝ հասկացնելու, որ թուրքերը քշել են տավարը, տարել են նաեւ ոչխարը ու՝ հորը, եղբորը, Աղասյան Ժորա քեռուն, Մանյա մորքուրին, նրա Գեղամ տղային, հիմա երեւի Հայադի հանդից իջնում են դեպի Սրխավենդ, եւ Շոֆեր Գարաեւի Վագիֆ լակոտը թուրքերի հետ էր, ինքը ճանաչել է: Հայրն իրեն ասել էր՝ «*ետ ընկած անա-*

տուն ունենք, դու մի նայիր՝ ուր մնացին», - եւ ինքն այդպէս ազատվել է, - մի սպիտակ «Նիվա» էլ գետն ի վեր եկավ, մտավ անտառը: Բաց դաշտում ձին՝ պարանի կարծ կապը խճճած՝ աշ- նանացող արոտների, անտառների վրայով նայում էր դեպի հեռ- վի տաք հովիտները, որտեղից ռունգերին էր խփվում քիչ առաջ երկինքն ապականած՝ մարտական ուղղաթիռի փրցած զգվելի խարկահամը, եւ ձին հասկացավ Տղայի անարցունք լացը, նրան առավ մերկ մեջքին եւ թույլ տվեց, որ այդ մի մատ, համարյա ան- քաշ երեխան քշի իրեն քառատրոփ: Տղան փորձում էր հասուն երեւալ, բայց լացը խեղդում էր, նրա խառը հեծկլտոցի եւ ճղճղան գոռոցների մեջ գյուղն, այնուամենայնիվ, հասկացավ աղետը եւ խլրտաց, ցրվեց ու հավաքվեց՝ ձիավոր, հետիոտն, մեքենայով՝ բռնեց փոշոտ ճանապարհի, քարախեղդ կածանների տուտը:

Կաթնագույն «Նիվան» դարանակալ սպասում էր, ուղղաթիռը կրկին շեղակի հատեց Մեծ քոչի տափաստանից մի կտոր եր- կինք, կարգախմբի ավագն զգաստացավ, զրահամեքենան քիթը հանեց խրամափոսից, աշտարակի գնդացրի փողը պտտվեց, պտտվեց անտառների, արոտների, հնձած արտատեղերի վրա- յով եւ սպառնալի տնկվեց ճամփաբաժան խաչմերուկին, որ թշ- նամի տափաստանի եւ դեռ շարունակվող մեր կյանքի վերջին սահմանն էր Եսայի Զասան Ջալալյանի երկու հազար տարվա նահանջի ճանապարհի վրա: Քիչ հեռու ավագակախումբը կանգ էր առել՝ մի փոքր ծիծաղելու, ծաղրելու գերվածի մարզական անցյալը, տարիների ուսուցչությունը, եթե դասուցել - դաստիա- րակի իրավունքով մի անգամ քաշել է Շոֆեր Գարաբեւի լակոտի ականջը, իսկ սա մարզական փափուկ կոշիկներ է հագել եւ «Մա- կարով» ունի, բայց չէ, չի սպանելու: Զայրն ասել էր՝ «կբերես ոտ- քերս լվա, ջուրը խմցնելու եմ դրան», - պիտի կենդանի տեղ հասց- նի, թուրքերից մեկը հարցրեց. «Դրա գլուխն ի՞նչ կարժենա», - Շո- ֆեր Գարաբեւի տղան ատամների արանքից անտարբեր թքեց՝ «մեզ փող պետք չի, էսքան տավարը բա փող է, չէ՞»:- Բաքվից եկածի համար ոչխար-անասուն դատարկ բան է, կարելորդ՝ որ հայ են բռնել, հայի հետ չեն կատակում, միայն սպանում են ու՝ վերջ, նա փակադակը շոխկացրեց եւ ավտոմատի փողը դրեց մարդու քունքին. գլուխը թանկ է, թե՛ Եժան՝ գնդակը երկու դեպ-

քում էլ ուղեղը ցփնում է, եւ դա գեղեցիկ է՝ հայի ուղեղը՝ ոտքերի տակ, իսկ կնոջը կարելի է հետո վերջացնել, երբ կարգին ուրախացած կլինեն:

Շոֆեր Գարաբեւի տղան ցուրտ հրամայեց՝ *«տեղդ վեր ընկիր»*, - Բաքվից եկածը հրացանը ետ քաշեց, եւ այդ միջակայքի հավիտենությունից մարդը հասկացավ, որ մեռնել կարելի է միշտ, իսկ հիմա հարկավոր է ձգել՝ գուցե հրաշք լինի, ասաց. *«Տղամարդ տղերք եք ու ձեր մեջ կարգ պիտի որ լինի՝ Ես հարսը թողեք գնա, երեխեքը մեղք են, ես ու ժորան կմսանք»*, - նրա թուրքերենը ծիծաղելիորեն աղավաղ էր, ուսուցչության անցյալում առիթ չէր եղել՝ սովորի, չուզեցին հասկանալ: Դաժան հարցրեց՝ Շոֆեր Գարաբեւի Վագիֆը. *«Քոնոնք, որքան գիտեմ զույգ են՝ տղերքդ, բա էն մեկն ու՞ր ես տանը թողել»*, - պատասխանեց, թե՛ *«էն մեկին քեռու մոտ եմ ուղարկել»*, - թուրքը ծիծաղեց, իբր՝ էդ խի՞ եք բա տակներդ լցրել՝ Երեւան եք փախչում, բայց չասաց, որովհետեւ չուզեց խաբված լինել՝ մի հատ ուրպատահի խփեց: Ուրիշ տեղ ձեռքը կկոտրվեր՝ չէր ծալվի, բայց ավտոմատի սառը փողի տակ ոլորել՝ մեջքին մետաղալարով կապել էին, մարդը բերանքսիվայր գլորվեց, մյուսներն այնտեղ խլրտացին, Բաքվից եկածը ոսկետատամ հռհռաց՝ *«սանին բաքսյոր անասը...»*:-

Անտառի խոր լռության մեջ ճյուղ չրթաց, թուրքն անհանգիստ ետ շրջվեց՝ դարձյալ տապ արած անդորր էր, փտող խաշամի ծանրահոտ, եւ ոչինչ չէր մատնում անհարազատ տագնապ, սակայն հեռավոր թշնամանքի սառնության պես՝ զգաց՝ տերեւ կաթող ծառերի անորոշ զանգվածի մեջ ինչ-որ բան, այնուամենայնիվ, այն չէ: Այդպես որսորդն է հետեւում վտանգավոր գազանին՝ իրեն չի մատնում, բայց համառ կա, թիզ առ թիզ մոտենում է: Մարդը համրացավ, խլացավ, մարդ չէր, այլ՝ անտառակոճղ. թուրքը խփեց փափուկ մարգակոշիկով՝ ուղիղ քիթ-բերանին, խփեց ավտոմատի խզակոթով եւ դեռ ծաղրեց՝ *«գիտեմ՝ ուժեղ ես, չես սասկի՝ գնալու ենք, դե, հայդա»*, - քացով էլի խփեց, եւ մյուսը, որին Բաքվից եկած էր կնքել մտքում, դարձյալ ասաց. *«Սպանենք-պրծնենք, ոնց որ թե՛ գորք է գալիս»*, - Շոֆեր Գարաբեւի լակոտը պոռթկաց՝ *«գորք մեր կողմից է գալու, օգնիր՝ պոկենք տեղից»*:- Տավարը ցրվել էր, մյուսները, որ էլի պատանդ էին

համարվում, բայց կարելու է թուրքի աչքում, տապակված գետնին՝ սպասում էին՝ ինչ է լինելու՝ մարդը ծառ էր, քար, մարմինը չէր շոշափվում, բռնել չէր լինում՝ ձիգ մկանակույտ: Անտառի ահա-ահա պայթող լուռության մեջ նա խուլ մոնջյունով պրկեց բազուկները, մետաղալարը խրվեց բազուկները, ոսկորների վրա ճռնչաց եւ պողպատի մաքուր զրնգոցով փշրկվեց, եւ գյուղի աղաղակը թնդաց արդեն շատ մոտ, ընդարմացման մուժի հափրանքներում մարդը չհասկացավ, որ գյուղն իրեն եւ մյուսներին փրկել է, հիմա մացառուտում գլուխ-գլխի՝ հավաքում է ցրված անասունը, որ թուրքի հետքերով իջնում՝ կրակում է, հետո պիտի ափսոսա, որ վրիպեց, բայց դա սուտ էր. իրակա-նում այդքան աշկարա մարդ սպանելու համար ոչ ոք դեռ չէր դաժանացել, մանավանդ՝ ողջ -ամողջ ետ էր բերում բոլորին, գյուղը սրբում էր արցունքները, երեսը շրջել՝ չէր նայում՝ Մանյան ծնկների վրա շտկում է փեշը:

Տղերքն, այնուամենայնիվ, Սրիսավենդի հին ջրաղացատեղում գտել էին թուրքի անտեր անասուն, շատ պարարտ կովերի այդ նախրից նրանք բերել էին մի ջահել ցլիկ, ասացին՝ *«ընկեր Շահբարյան, էս ցլիկը քու պատվին մորթելու ենք»*:- Միայն իր նման ծալեց ցուցամատն ու մատնեմատը, մեծ մատը վեր ցցեց, ձախ ձեռքով սեղմվեց թուլակողին եւ հայտարարեց, որ իր տան մատաղը մորթվելու է իր արդար գառներից եւ խմվելու է գուտ տնաքաշ արաղ՝ ով տղա է, թող մի լավ ուրախություն անի, խմեցին ու հարյուր անգամ ստիպեցին՝ կրկնի թուրքի խոսքը՝ *«տեսնես էս գլուխն ի՞նչ կարժենա»*:- որ Բաքվից եկածն էր ասել, եւ ինքը հավատացնում էր, թե էդ լակոտը Ղըրանց ինչ-որ մեկի տղան է կամ թոռը՝ արդեն պինդ հարբած էին՝ չլսեցին, չուզեցին տեղը բերել: Գյուղական ուրախության այդ սեղանին սեյսուլանցի ուսուցիչ Գավրուշ Չարությունյանը չպիտի ներկա լիներ, այդքան հեռվից մարդ հրավիրված չէր, բայց տեսան՝ նստած է մի անկյունում, ձեռքը բաժակ տվին՝ խմիր,- երկրորդն էլ լցրին, բայց վրան գույն չկար, բաժակը ձեռքին դողացրեց, զարմացան՝ *«էդ սեյսուլանցին ո՞ր օրվանից է արաղից զգվում»*: Խեղճ տնքաց՝ *«չեմ զգվում, տղերք , թուրքերն աղջկաս Սրիսավենդ պատանդ են վերցրել»*,- չհասկացան՝ աղջիկն ինչ գործ ուներ Սրիսավենդ, բացատրեց, որ

Ծովիկը Ստեփանակերտ մանկավարժական Է սովորում՝ ինստիտուտ, տուն պիտի գար՝ Կիչանի ճանապարհին մեքենան կանգնեցրել՝ «ժողովի» Է եղել, բռնել տարել են, Էս Էլ Լամակը, Կիչանի ռուսներն են Էսօր բերել: Աղջիկը գրել էր, որ իրենց վատ չեն վերաբերվում, պահում են տղաներից առանձին, ուտելուց դժգոհ չի, թուրքերն ուզում են, որ Աղաբաբյան Անուշավանին բերեն՝ իրենց հետ փոխանակելու, ուրիշ պայման չկա:

Թուրքի պահանջ էր՝ որ իմանաս՝ քո ցեղի աղջիկն Էստեղ իրենց պատանդն Է, եթե ուզում ես ազատվի՝ բռնիր ու Աղաբաբյան Անուշավանին տուր, չէ՝ քո մատաղ աղջկա պատվից ձեռք քաշիր, գնա Էդ մեռած խղճով ապրիր: Մնացին շվար, դեմները հայր էր Լստած, բայց Լաեւ անհնարին բան էր թուրքի պայմանը, ասացին՝ «մի բան կմտածենք»:- Կիչան դեռ զորք կար՝ գրահամեքենայով, բայց դա սուտ ապահովություն էր: Կարգախմբի ավագը գրահամեքենայի աշտարակից հարբած գոռաց. «Ձեր մերը... վրա եք տալիս, հրեն՝ արծիվները դուրս եկան որսի»:- Էրշադ Ֆարգալիեւի տանը Լա խմել էր «Ստոլիչնայա», սեղանին դրել էին մեկ ամբողջական թառափածուկ եւ պայմանավորվել, որ չորս պատանդն արժե, Էսպես, «մի երեսուն հազար մանեթ», թող հայերը տան, եթե Անուշավան Աղաբաբյանն իր ոտքով չի հանձնվում՝ ոչինչ, իսկի Էլ կորած տեղ չի՝ մի օր կբռնեն, կաշին կքերթեն: Ավագ լեյտենանտը, որ ասում էին՝ չեչեն Է, լորտուխ սառած աչքեր ուներ՝ կլոր, կարմրավուն, բայց խոստացած փողը դեռ Մարտակերտ չէր հավաքվել: Փոխարենը եկել էին միլպետ Օսիպովը, ՊԱԿ-ի լիազոր Ղասումյանը, ժողկրթբաժնավար Ռաֆիկ Բադրասարյանը՝ պարեկատան, որ Կիչանի տնտեսության գրասենյակն էր եղել, բակում հավաքված՝ Լրանք գուցե թե վստահություն չէին Լեռնչնչում, բայց հույսը միշտ Էլ ամենավերջում Է մեռնում՝ պատանդների ծնողներին խորհուրդ էին տալիս պահպանել սառնասրտություն, որովհետեւ, եզրակացվում էր՝ «եթե տեղները բացահայտել են, ուրեմն ամենասարսափելին չի լինելու»:

Չեռակա կարգով Էրշադ Ֆարգալիեւն ապսպրել էր՝ «թող շատ Էլ զահլա չտանեն, իմ ախպորը բա որ կրակել, վիրավոր քարշ են տվել՝ թողել ձորում, ես քա՞ր էի, չդիմացա՞, Էդպես Էլ՝ իրենք», - խոսվում էր Աղդամից ինչ-որ Ալլահվերդիի մասին, Լրանից Է,

իբր, կախված՝ բաց կթողնեն պատանդներին, թե՛ չէ, Սրիսավեն-
դի կողմից ազատ, համարձակ՝ «Ուազը» դուրս եկավ ձորի ճա-
նապարհի ոլորանից, արգելակների թարմ ճռնչոցով կանգ
առավ: Ոչինչ չէիր ասի՝ թուրքը ներկայանալի, մտավորական
տեսքով տղամարդ էր: Ոսկեգույն շրջանակով ակնոցը նրա դեմ-
քին նստած էր անբասիր քաղաքավարության, հեռավոր խաղաղ
օրերի մտապատրանքի գեղեցկությամբ եւ՝ որ հայերեն մաքուր
գրականով ասաց՝ *«բարեւ ձեզ, ես կապիտան Իսա Մամեդովն
եմ, Մարտակերտի միլիտերի տեղակալը»*, - կարճ բացատրեց, թե
աղջիկներին որոշել են արձակել, տանելու են Փափրավենդի հս-
կիչ-անցաթողման կետ, իսկ տղաների հարցը մի քիչ բարդ է.
*«Մարտակերտ Ումուդլուի տեղամասային բժշկին են պատանդ
վերցրել, տեղը դեռ ճշտված չէ, որոնում ենք՝ զինվորականների
հետ միասին, երեւի փոխանակություն լինի»*, - որպես էլ նոր
մարդ ու համարյա երեւանցի՝ ասաց. *«Երեւան շաքարաքլորի
արձանը որ կա՞ ԳՈՒՄ-ի մոտ, էդ թաղում եմ ծնվել»*: - Իսա Մամե-
դովն այդքան բացախոս չպիտի լիներ՝ կասկածեցինք, երեւի
հասկացավ, որ լեզվի սանձերը բաց է թողնում, մանավանդ՝ միլ-
պետ Օսիպովը ռուսերեն ընդհատեց նրան. *«Իսա, աղջիկներից
խոսիր»*, - եզրափակեց, թե գնում է Փափրավեդ, թող ծնողները
հետեւեն իր մեքենային, սակայն Սրիսավենդի ճանապարհը մե-
րոնց համար փակ էր: Օսիպովի սեւ «Գազ-31»-ը բռնեց Կիչան-
Չլդրան-Դրմբոն շրջանցիկ երթուղին:

Նույն պահին կամ մի քիչ հետո, Ռիգայի հատուկ նշանակու-
թյան գորաջոկատն անադմուկ շրջափակում էր Զաչավանը: Ամ-
ռանը էլի հանձնաժողով էր եկել, եւ Սլավա Մոսունցը ասել էր՝
*«մեր դաշտային օթեւանները եթե գյուղ չդարձան՝ համարեք, որ
էն լռված բերքի տերը չենք»*, - իսկ դահլիճը դժգոհ աղմկել էր՝ *«Ես
ի՞նչ է ասում, է, իբր գյուղերում մարդ կա՞» մնաց, որ դաշտային
օթեւանների հոգսը քաշե՞նք, մեր պահանջը տնտեսական չէ, այլ՝
քաղաքական»*: - Աղաղակել էին՝ «արդար պահանջ՝ ոչ մի նա-
հանջ» եւ ցրվել եւ սպասել, որ ակադեմիկոս Եմելյանովը Մոսկվա
մեծ քաղաքում արդար տեղեկանք եւ առաջարկություն կանի,
իսկ Գերագույն խորհուրդը կքվեարկի եթե ոչ ինքնավար մարզը
մայր Հայաստանին վերամիավորելու, ապա գոնե Ադրբեջանի

ենթակայությունից լիովին դուրս բերելու նախագծի օգտին: Ջահել մի տղա՝ Նորիկ Դանիելյանը մտել էր Վահան Գաբրիելյանի առանձնասենյակ. *«Ուզում ենք գյուղ հիմնադրել»*, - հարցրել էր՝ *«որտե՞ղ»*, - պատասխանել էր՝ *«մեր Գյուլաթաղի դաշտային օթեւանում»*, - եւ գործկոմը կայացրել էր համապատասխան որոշում. *«Հիմնադրել գյուղ եւ կոչել Քաջավան»*: - Շոթլանլուի թուրքն աշնան այգում ոչխար էր արածացնում, տղերքը դեմը կանգնեցին. *«Էդ դու՞ք եք Իրավանից եկած զորքը»*, - թուրքը խորամանկ նայել եւ սպասել էր՝ ի՞նչ են պատասխանելու, Նորիկն ասել էր՝ *«բա մենք զորքի նմա՞ն ենք»*, ասել էր՝ *«Էն սահմանը տեսնու՞մ ես»*, - ցույց էր տվել չորահուն հեղեղատը, ասել էր՝ *«դրանից էս կողմ դու անելիք չունես, գնա, մենք մեր հողն ենք պահում, քո հողի վրա աչք չունենք»*: - Թուրքը գլուխն օրորել էր՝ *«վերջը լավ չի լինելու»*, - ասել էր. *«Գնա, գնա, վերջը լավ է լինելու»*, - Ռիգայի հատուկ նշանակության ջոկատը գնում էր ավերելու Քաջավանը, եւ հայրը ընդոստ նստել էր անկողնում. սուր - շամփրող ցավն անցել էր ձախ թիակից դեպի կուրծքը, շունչը կտրվում էր, տեսածը չարագուշակ երազ էր՝ տղերքն, իբր, խմած են, պարում են, շարքի գլխին՝ Նորիկը, թաշկինակը ծածանում՝ *«Քոչարի»* է պարում՝ կատաղի, ցնորված: Իսա Մամեդովի առաքելությունն ուշադրություն շեղելու համար էր, որովհետեւ երկու ժամից, երբ ուզում էինք կապվել Մարտակերտ, իմանալ՝ աղջիկներին ազատ արձակեցին, թե չէ՝ հերթահապը քրթմնջաց. *«Էդ ինչ մեծ բանի վրա եք, էստեղ աշխարհ է քանդվում»*: - Շուրջկալել, գյուղն ավերել էր Ռիգայի հատուկ զորաջոկատը, Քաջավան չկար այլեւս, եւ թշնամի տափաստանը հրճվում էր:

Հին, խորհրդային ժամանակներում պատահել էր՝ ԵՆԿԵՎԷ-ԴԷ-ն մեր մեջ մեկին երկրի անհարազատ տարր էր տեսել՝ գիշերով տարել էին դեպի անհայտություն, եղել էր՝ վանեցի իմ պապ Յովհաննես Մինասյանը թաքուն օտար ռադիոալիքներ է որսացել՝ որբանոցային իր անգլերենով իմանալու՝ աշխարհի մեկ վեցերորդական մասից զատ էլ ինչ կա երկիր մոլորակում, եւ դա որակվել էր լրտեսություն՝ հօգուտ Ամերիկայի Միացյալ Նահանգների, կանչել են շրջան, պապս ասել էր. *«Ձեր արխիվներում պիտի որ պահպանված լինի մի փաստաթուղթ՝ կոմունիստ-*

տական իմ անթերի վարքի մասին վկայություն»,- բայց դա գրված է եղել հեռավոր 1936 թվի ամռանը. «Մենք վկայում ենք, որ *Յովհաննես Մաթեոսի Մինասյանը* *Լենինականի որբանոցում* գրագիր աշխատելու ժամանակ որբերի շրջանում ծավալել է ակտիվ պրոպագանդա եւ կոմերիտական հանձնարարություններ կատարել՝ ապահովելով կեղծ անցաթղթեր, որով նպաստել է քաղաքի կոմերիտական կազմակերպության անդամների եւ որբերի կապը:

Նա լենինյան գաղափարների պրոպագանդիստ է եղել, մնում է հավատարիմ մեծ առաջնորդ ընկ. Ստալինի եւ կոմունիստական պարտիայի գործին, որի համար մենք երաշխավորում ենք նրա գաղափարական կայունությունը:

Շքանշանակիր բանաստեղծ Նաիրի Չարյան

Խորհրդային Հայաստանի հիմնի հեղինակ Սարմեն

Քանաքեռգետի շինարարության պարտկոմի քարտուղար Սերոբ Դեմիրճյան»:-

Գրությունն, իհարկե, պահոցներում գտնվել է, պապիս ազատ են թողել եւ զգուշացրել, որ բողոքը վերադաս ուղարկվելու դեպքում պատիժը չի ուշանա, իսկ գյուղում պատմության ուսուցիչ Սուրեն Մուսայեյանը ծաղրել է նրան. «*Հիմա քո կյանքը կախված է ինձնից*»:- Բայց պատերազմն ավարտված էր, երկիրն արդեն մի քիչ հանդուրժողական էր դառնում՝ մինչեւ կգրվեր հաջորդ մատնագիրը՝ պապս Երեւան քաղաքի Քանաքեռ թաղամասում գտավ եղբորորդի Պողոս Չադոյանին եւ Ավշար գյուղում՝ քրոջ տղա Յովսեփին, թողեց տունն ու վաստակավոր ուսուցչի համբավը՝ զնաց միանալու եղեռնից փրկված իր հարազատներին, որ նաեւ մեր բոլորինս էին, ասում էինք՝ «*Պողոս ձյաձյա*»,- ծիծաղում էր՝ աղջիկների, փեսաների, թոռների, մեր ընդհանուր սեղանի գլխին նստած, պապիս դիմում էր «*հորեղբայր*» քնքնությանը եւ մի քիչ զարմանալի էր, որ ճերմակ մազերով այդ հսկայամարմին մարդը հորեղբոր կարոտ ունի: Մեկին էլ մորաքույրս էր գտել՝ օտար կին էր՝ Չաբել անունով, Ռումինիայից էր Երեւան եկել, ասելով՝ նկարչուհի էր, 47 թվին ուղարկել էին գյուղեր՝ պատկերելու հայ աշխատավոր մարդու վերածնված կենցաղը, նկարակալին ստացվել էր կալ, կալվոր կանայք՝ բոբիկ, ճաքճաք

ոտերով, կիսամերկ երեխեք՝ չէին ընդունել, Երեւանում արդեն կառուցվել էր ցեղասպանության զոհերի հուշարձանը՝ Ծիծեռնակաբերդի հուշահամալիրը, մորաքույրս այդ կնոջը տեսել էր Ծիծեռնակաբերդ, պատմում էր, որ նստած էր, «*Կիլիկիա*» էր երգում: Այդպես ծանոթացել էին, այդ կինը երբեմն գալիս էր մորաքրոջս տուն, ժամերով լուռ նստում էր, հետո թե՛ «*երթամ պիտի, երթամ պիտի Մոսկվա, պիտի մտնիմ ռումինական դեսպանատուն, ալ դուրս չի պիտի գամ*», - եւ չէր լինում, չէր գնում, որովհետեւ միայնակ այդ կնոջը ո՞վ կտաներ Մոսկվա, տանեին էլ՝ որտե՞ղ էր գտնելու Ռումինիայի դեսպանատունը, որ մտնի ու էլ դուրս չգա, այսինքն՝ ասի, որ իր երկիրն է ուզում, Ռումինիա: Այդպիսի բաներ գիտեինք, անծանոթը հատուկ զորաջոկատի շուրջկալն էր, թեեւ գերմաներենի դասատու Մանվել Յայրապետյանը շատ անգամ անթաքույց հրճվանքով պատմել էր, որ 1944 թվին ընկեր Ստալինը մի գիշերում բոլոր չեչեններին աքսորել է Միջին Ասիա:

Նեղ գետահովիտն իր անցյալում թուրքաց Նուրի փաշային ճանապարհ չէր տվել, բայց 11-րդ Կարմիր բանակի հեծյալ ջոկատն անարգել անցել էր՝ 20 թվի գարնանը՝ սարերում հռչակելու «*ազատագրված կարմիր Զուրդիստան*», եւ հին կոմունիստ Ասատուր Բաբայանը, - որովհետեւ թոշակի անցնելուց հետո ամեն տարի հրավիրում էին պիոներական դրուժինայի խորհրդի նիստերի, - ինքն էլ սկսել էր հավատալ, որ անձամբ հիշում է՝ «*գնդապետ Մեսյանը եկեղեցու թաղից կենտ մի անգամ կրակեց ու փախավ սարի ճանապարհով, շարքի առաջին ձիավորը կախվեց թամբից*»: - Չոհվածի անունն ուղղակի դրել էր՝ Սիբիրյակ, եւ դա բոլորովին նման չէր գրքերում կարդացվող քաղաքացիական պատերազմի: Իսկական զորք տեսել էին «*Կովկասի նախալեռներից մինչեւ Բեռլին*», կամ՝ 56 թվին Յունգարիա, որովհետեւ Մանվել Չաքարյանը տանկի մեխանիկ վարորդ էր եղել, ասում էր՝ «*Յանոշ Կադարին տեսել եմ*», - հնարել էին, թե՛ Մանվելն իր տանկով է Յանոշ Կադարին Բուդապեշտ հասցրել եւ երկրորդ անուն էին կպցրել՝ *Յանոշ*: Ընդունել էր եւ Յայրենական մեծ պատերազմի մասնակցի արտոնություն ուներ, հետո՝ Աֆղանստանը, որտեղից ընդմիշտ հորթարած Արտուշ Միրզոյանի Մելսիկ

տղան փրկված եկել, պատմել էր զոհերի մասին, սանիտարափրկարարական մեքենայի վարորդ էր եղել, սրան էլ կնքել էին «*Մեյ-դավոզ*», - դե գնա ու հասկացիր, որ դա նշանակում է դիակառքի վարորդ, ով Աֆղանստան էր տեսել՝ հիշեց, որ իրենք էդպես շուրջկալում էին «*դուխերի կիշլակները*», - բայց կարկամեց, որովհետեւ համեմատությունն ահավոր մերկ եւ անամոթ էր: Ուղղակի սսկվեցին եւ չուզեցին հավատալ, որ Աֆղանստանից դուրս բերված զորքերի հրամանատար գեներալ Գրոմովին նշանակել են ԽՍՀՄ ՆԳ նախարարի տեղակալ հենց այն նպատակով, որ լավ գիտի՝ ինչպես կարելի է անաղմուկ ավարտին հասցնել «*ԼՂԻՄ եւ Նրա շուրջ*» հարցի լուծումը ու արդեն համարյա զավեշտական էր, որ գյուղխորհրդում հավաքված՝ փորձում էին կշռադատել հետագա իրենց անելիքը, բայց միշտ գալիս էին այն եզրակացության՝ որ խորհրդային ռուս զինվորը խաղաղ քաղաքացիների դեմ գեներ չի բանեցնի եւ միամտանում:

-Կարելի է թոշակառու-շքանշանակիր վետերանների մի խմբով գնալ, գյուղից դուրս դիմավորել, հետները խոսել,- Նույնիսկ պատվիրակության հավանական կազմն էլ գրեթե ճշտված էր: «*Փառքի*»՝ երկու, «*Կարմիր աստղի*» շքանշանների, «*Արիության*» մեդալի ասպետ Վահան Շահբարյանը, Նրա եղբայր Չիլֆին, որ երկար տարիներ գյուղխորհրդի նախագահ էր աշխատել, ուզեցին այդ ցուցակը վերջնականապես ճշտել՝ Կիչանից հերթապահ հեռախոսավարուհին գծով մեկ ծղրտաց՝ «*փախեք, ում պատահի՝ բռնում են՝ տղամարդկանց*», - եւ Մելսիկ Ալավերդյանը ծանր եզրափակեց. «*Քաշվում ենք սարերը, բայց էնքան՝ որ եթե հանկարծ կին-երեխայի չարչարեն՝ հասնենք, խա՞ղ եք անում , արա*»: - Նրա Աշոտ տղան գետահովտի միակ ճանապարհի վրա գիշերով ինքնաշեն ական էր դրել, Նրա տունը զինվորական շտաբի պես մի հավաքատեղի էր արդեն՝ ենթարկվեցին, այդ նշանավոր օրվա՝ 1991 թվի հուլիսի 3-ի համագյուղական ժողովի ամփոփ արձանագրությունը Մելսիկ Ալավերդյանը պիտի որ պահելիս լինի, նման փաստաթուղթը կորցնելու համար չի կազմվել:

Չորագունդը սողաց Մեծ քոչի՝ հարյուր, Եսայի Հասան Ջալալյանի նահանջի՝ երկու հազար տարվա ճանապարհով: Դա հաղթական բանակի ռազմերթ չէր, ոչ էլ՝ ազատարար զորքի շքա-

հանդես, եւ գրահամեքենայի թրթուրների տակ ծաղիկներ չէին նետվում: Այդպես դարանակալ՝ միայն գազանն է որսի ելնում, գողի պես ու ամենավերջին խուժանի նման դիմակավորված՝ նման էր վարձկան մարդասպանի: Աղդամ ամբողջ գիշեր կերու-խումի նստած՝ լուսաբացի հետ գալիս էր մեզնով վճարելու մի կտոր հացի, խմած արաղի, փոստային կայծակ առաքումների գինը, բայց մենք որոշել էինք չվաճառվել եւ անհնար էր ձորերի, անտառների, քարակարկառների թնջուկից պոկել մեր ծաղիկ որ-ծատոհմը՝ հանձնելու Աղդամի, Շուշիի, Բաքվի տանջարաններին, մենք հիշեցինք մանկության կածաններն ու քարկապերը, եւ զորագնդի այդ ջահել զինվորները հաստատ վախենում էին ձորի ահռելի ամայությունից՝ դեպի ուր նրանց մղում էր առաջնորդ թուրքը: Թաքստոցի մեր ապահովությունից Աղասյան Մելիքը միայն մատի շարժումով ցույց տվեց եղինջուտում սողացող նրանց եւ անխոս հասկացրեց՝ որ *«քար գլորենք՝ կմասն տակը, կջնջիվեն»*:- Իհարկե, ճիշտ էր, կարելի էր, բայց զուտ՝ մտքում, պատկերացնելու պես, իրողության մեջ Աղդամ - Գանձակ - Մոսկվա՝ հեռակապի գերարդիական սարքերը մեկ թողնում դա կծեակերպեին *«գինված դիմադրություն անձնագրային ռեժիմի ստուգում հրականացնող՝ իշխանության օրինական մարմիններին»*, - եւ կլիներ, կկրկնվեր այն, ինչ արդեն փորձարկված էր Քաջավան: Մարտական ուղղաթիռը պտտվում էր անտառների վրա եւ ամեն մոտենալիս՝ մենք ավելի տափակվում էինք հողին, իսկ եղինջուտը չէր թաքցնում զինվորների վերելքը:

Մեր ու նրանց միջեւ հիսուն-վաթսուն ոտնաքայլ անդունդ էր, մանկության այդ *«Քարահանք»* ասվածը՝ մութ անցուղի, որ, ահա, փորձության սահմանն էր: Առաջնորդ թուրքը ցույց էր տալիս քարայրի մուտքը, երեւի ասում էր՝ *«էնտեղ են տապ կացել»*:- Ջոկի սոխագլուխ հրամանատարը գուցե կուզենար բարձրանալ, նա նույնիսկ մի քայլ առաջացավ, վերելից նրանք ծիծաղաշարժ թիրախի պես էին, մեկը նույնիսկ՝ մերոնցից, ձեռքը տանելու էր որսորդական հրացանին, եւ դա բավական էր, որ չոր հողակոշտը պոկվի, չռռա նրանց գլխին: Այդ էր, ու՝ համազարկը, սակայն կրակոցն անցավ մեզնից շատ բարձր, ձորը կլանում էր նշանա-ռուի նրանց համբավն ու կամքը: Հետո մարտական ուղղաթիռն

իջավ խոյահար, կրակեց՝ պոկվեց վեր, անդունդը հաստատ չէր տրվում օդաչուի փորձառությանը, անցավ, գնաց՝ հեռվի անտառները կարկտահարելու խոշոր տրամաչափի գնդացրի կրակահերթերով, իրենց կարծիքով՝ պիտի վնասած լինեին կամ՝ առնվազը սարսափի ուժով դուրս էին կորզելու մեզ մեր ապահովությունից:

Ծեգից ոտքի վրա՝ մայրս լոբուտը շրելու էր, զորագունդը մտնում էր գյուղ, եւ մայրս գիտեր, որ գալիս են՝ շատերի հետ տանելու նաեւ ինձ: Տասնվեց տրամաչափի որսորդական հրացանը, փամփշտակալը, ինքնաշեն դանակը՝ հրացանի կաշեփոկով խառը կապած՝ որպէս շարտել էի մոշուտը՝ մնացել էին: Տունը, դէ չէին պոկել տարել, խռնշտել էին գրադարակները, եւ քոռաչք Ալըշանի Չահիդ թոռը ցույց էր տվել Սունդուկյանի գեղեցիկ լուսանկարը, ասել էր՝ *«Ես ավագակ Անդրանիկի գիրքն է»*, - լուսանկարը պոկել էր, ռուս կամ ռուսացած, որ ավելի վատ տեսակ է, զինվորը չթացրել էր հրահանը, մոխրամանում Սունդուկյանից մնացել էր մի պտղունց դառը մոխիր: Մայրս Ղըրանց լակոտին ասել էր. *«Էդ խելքո՞վ ես սրանց առաջն ընկած եկել, տառերն էլ չես ճանաչում»*, - հաբեշի կախ պռոշների միջից Չահիդ ասվածը Ֆշշացրել էր. *«Ընու տղան, հա, գրող է, բայց որ մեզ էս գյուղից քշել տվեց՝ դրա համար եմ եկել՝ գտնեմ, տանեմ մաշկեմ, լեշը զցեմ շների առաջը»*: - Մայրս ծաղրն է պաշտպան ընտրել՝ *«իմ տղան քեզ ընկեր չի, կարելոր գործի՝ մի օր Ստեփանակերտ է, մյուս օրը՝ Երեւան, քու ձեռքն իմ տղային չի հասնի»*, - թուրքը դաժան կտրել է՝ *«չէ մի չէ՝ Իրավան, հրեն՝ սարից բռնել՝ տղայիդ տանում ենք Ադդամ»*, - ու իբր բռնված բոլորիս էլ լցրել են հին դպրոցի առաջին հարկի սենյակները՝ Էստեղ ենք:

Մայրս այդ երեկո, երբ զորագունդն արդեն գնացած էր, պատմում ու լալիս էր. *«Գնացել, Էս հին դպրոցի դիք ճամփին դեմ եմ ընկել, չոքել ու քեզ եմ կանչում, ծնկասող իբր առաջ եմ գնում, բայց ետ- ետ գլորվում եմ՝ դեպի ձորը, ձորը, ձորը...»*: - Նրան այդպէս գտել, երեսին ջուր էին շփել հին դպրոցի թաղի կանայք, իրենց՝ դարձյալ ծմակներում ապաստանած տղաների թանկ արեւով երդվել, որ սարից ոչ ոքի էլ չեն բռնել, Ղըրանց լակոտը խաբել է: Հով իրիկնամուտի հետ արդեն իջել էինք գյուղ եւ գիտե-

ինք, որ տասնհինգ մարդու զորագունդը միամտացրել՝ կալանել է՝ տներում, պահեստի դռանը, խոտհնձի ճանապարհին՝ որտեղ պատահել էր մեկն, ում թվացած էր եղել՝ կարելի է խորհրդային մաքուր անձնագիր - գինգրքույկով ապացուցել, որ դու ոչ էլ մորուքավոր գրոհային ես, ծնվել, ապրում ես էս գյուղում, գերանդին առած՝ գնում ես քո անասունի ձմեռվա խոտը հնձես քո հոր, քո պապի, քո ապուպապի պոռթկուն մարգագետիններում, որովհետեւ ընկեր Լենինն ասել է՝ «ով աշխատի՝ նա կուտի», - իսկ գողը գող է առհասարակ՝ լինի թուրք, թե՛ հայ, ինչպես նաեւ հավասարապես ազնիվ են բոլոր աշխատավոր մարդիկ: Չորագունդն, իհարկե, ծանակել էր նրանց այդքան ապուշ միամտությունը եւ նույնքան դաժանորեն էլ շարտել թափքածածկավոր բեռնամեքենա: Մայրս պատմեց՝ մերոնցից մեկին ասել է՝ *«Ի՞նչ ես ցցվել էստեղ, խի՞ չես փախել»*, - խանութի պատին մեջքը հենած՝ *«Պրիմա»* ծխախոտը դեղին ատամների տակ, սա իր արեւին մեծ ճշմարտություն էր հայտնագործել. *«Էդ ես խի՞ պիտի ծլկեմ, ախչի, նրանք իմ ետեւից չի, քու տղու համար են գալիս»*, - այդպես՝ խանութի դռանն էլ բռնել էին եւ ձեւակերպել՝ *«որ անձը հաստատող փաստաթուղթ չունի»*, - կամ՝ եթե դու լեզվանի աշխատավոր ես, բոստան ես մշակում եւ հնձում քո անասունի ձմեռվա պաշար խոտը, ուրեմն դարձյալ վտանգավոր ես Ադր. ԽՍՀ ինքնիշխանության տեսակետից, քանի որ Այազ Մութալիբովն ասել է . *«Ով չի ընդունում Ադր. ԽՍՀ Սահմանադրությունը, նա չի կարող ապրել Ադրբեջանում»*, - իսկ Ադր. ԽՍՀ Սահմանադրության մեջ գրված է, որ այս արոտները տրված են Մեծ քոչին եւ իրենց հրամայված է ոչ մի դեպքում դատարկածեռը ետ չգալ Ադրամ:

Հին գերեզմանոցում գտել էին փնթի թաքցրած երկու որսորդական հրացան. տասնհինգ մարդուց՝ հինգը՝ թռչակառու, գրոհային ջոկատ հազիվ թե կազմվեր, եւ զենքն էլ չէր համապատասխանում Բաքվի քարոզչությամբ Մոսկվային ներշնչած որակների, ուստի մեղադրանքը հենց տեղում վերաորակավորել էին, թե՛ «Սրանք են գյուղից արտաքսել յոթ տուն թուրքին՝ Ղըրանց կամ՝ իմացել, բայց չեն հայտնել, ինչը Ադր. ԽՍՀ Քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածով նույնպես առաջ է բե-

րում պատասխանատվություն»:

Չորագունդը վերադառնում էր Մեծ քոչի հարյուր տարվա ճանապարհով, եւ առաջին կանգառը Սրխավենդն էր: Գող Մուրթուզ Ֆարգալիեւին հատուկ շալակէլ,- քանի որ ոտքի մէկը կոտորակով քրքրված էր անցյալ տարվանից, երբ Հացուտի սար անասունն քշելու էր հասել, ու տղերքը երկփողանին լրիվ դատարկել էին վրան, ձիավոր ավազակի նրա մարմինը հետո կցասայլավոր «Բելոռուսը» հասցրել էր Կիչան, վերքի արյունը կանգնեցրել, արաղով-բանով մի կերպ մշակել, բիստերով փաթաթել, շալակէլ՝ հասցրելի էին Սրխավենդի իրենց աղբյուրն ու ասել. «Քավթառ - դոջա մարդ ես, գողությունից ձեռ քաշիր, հիմա էն թիվը չի, նոր էլ ջահել կինկ ես առել, բա հիմա քու բանը ո՞նց է լինելու», - տևից բերել էին՝ որ տեսնի՝ հայերին, այսպես, գլուխ-գլխի լցրել են զինվորական բեռնամեքենայի թափքը: Ասել էր. «Լավ չեմ տեսնում, բարձրացրեք», - խտտել՝ մի կերպ մռութը հասցրել էին թափքակողին, բրեզնտից ծածկոցը ետ էր տարել, տեսնի՝ ծանոթ կա՞: Մէկը, որ կեսօրին խմած բռնվել էր կարգախմբի ավագին մի բաժակ արաղ հյուրասիրած լինելու մեղադրանքով, առաջ էր սողացել, Մուրթուզ Ֆարգալիեւը կում արել՝ երեսին թքել էր՝ «թյու՛ուհ, չես էլ սատկում, էլի, աննամուս, բիրչակդ սպիտակ Չրանտի՞կն ես, դե գնա, սանանին անասը...»:- Հետո էր պատմելու, այդ պահին մտածել է, որ մեջներն, այնուամենայնիվ մի քիչ մարդկություն գուցե դեռ կա, խնդրել է. «Մեծ մարդ եմ, ասա ինձ բաց թողնեն», - եւ գողը թքել ու հայիոյել է. «Որ կարգին սատկելու ապրանք էլ չեք, ի՞նչ եք բա ճոթբերան խոսում, կոտորվեք՝ մենք էլ պրծնենք էլի, ոչ ապրում եք, ոչ մեզ եք թողնում՝ մեզ նման ապրենք»:- Ետ եկող կար, ասաց. «Ձարդում են, ջարդում», - եւ անուններ էր հիշում՝ մերոնցից, ում, իբր, Շուշի հատուկ ընդունելության են սպասում եւ եզրակացվեց, որ հենց ինքն էլ Շուշի ասել էր, թե ում բերեն, որ հարցը փակվի:

... «Ուշադրություն, մուտքը սահմանափակելու կապակցությամբ ԼՂԻՄ-ում մշտական գրանցում չունեցող անձանց խնդրվում է տոմսերը վերադարձնել»:- Ստիպված էի Ստեփանակերտ թռչել մենակ՝ օդանավակայանում թողնելով քրոջս եւ պապիս: Նա 82 տարեկան էր, բայց դեռ կարողանում էր կատակել. «որ

գամ՝ *ինձ ետ Թուրքիա՞ կուղարկեն*»:- Պապիս անձնագրում ծննդյան վայրի դիմաց գրված էր՝ «Վան, Թուրքիա»: 1942 թվականին Նրան շնորհվել էր վաստակավոր ուսուցչի կոչում: Սպիտակ կարճաթել՝ շեղօձիք վերնաշապիկով նա գնացել էր շրջկենտրոն՝ ուսուցիչների ամառային խորհրդակցության՝ որ նշանակվի միջնակարգ դպրոցի տնօրեն, ճաշարանում հանդիպել էր Խաչիկ Ղալայանին՝ ռազմաճակատից վիրավոր եկած՝ գինկոմի տեղակալ էր, ճաշարանը՝ փոքրիկ, ազատ սեղան չէր եղել, Խաչիկ Ղալայանի հետ մի ավստ բորշ ղնելու, աթոռ եւ գդալ ունենալու համար թեթել վիճել էին, իսկ ընդմիջումից հետո ժողկրթբաժնար Արշակ Անանյանը կանչել էր. «Մի մտիր գինկոմի մոտ՝ շուտ արի, որ հրամանդ տամ, Չաքին հազիվ գյուղ է գնում, երկու ձիով է եկել՝ հետը հանգիստ կգնաս»:- Չինկոմիսարիատից դուրս էր եկել, Արշակ Անանյանից թուղթ եւ գրիչ խնդրել. «Լուսիկ, ես գնում եմ բանակ, Չաքիի միջոցով ուղարկում եմ արձակուրդայինս, երեխեքին լավ կնայես»,- դրել էր իր հռչակավոր ստորագրությունը, եւ հաջորդ առավոտյան բեռնատարը Նրան հասցրել էր Եվլախ, ասում էր. «Գնացքի էինք սպասում, մեկ էլ կայարանի ռադիոն կարդաց Ադրբեջանի Կենտգործկոմի նախագահության հրամանագիրը, որ Մարտակերտի շրջանի Առաջածորի միջնակարգ դպրոցի ուսուցիչ Հովհաննես Մաթեոսի Միանայանին շնորհվում է հանրապետության վաստակավոր ուսուցչի կոչում», - նստեցի ու մի լավ լաց եղա»:- Իսկ հետո մտածել է, որ վաստակավոր ուսուցչի, այն էլ՝ ռազմաճակատ ուղարկվածի ընտանիքին հաստատ արտոնություններ տալու են եւ Եվլախից հեռագրել. «Լուսիկ ինձ վաստակավորի կոչում են տվել գնա Արշակի մոտ եւ ճշտիր արտոնություն տալի՞ս են թե ոչ լավ եղիր երեխեքին լավ նայիր ես գալու եմ»:-

Մայրս պատմում էր, որ վաստակավոր ուսուցչի այդ կոչումը պատերազմի սովից իրենց՝ երեք քույրերին համարյա թե փրկել է, որովհետեւ ամեն ամիս տատս ստացել է խտացրած կաթ, ձվի փոշի՝ ամերիկյան օգնություն, սապոն, շաքար, թեյ ու կակաո, եւ խտացրած կաթով կակաոն եւ փոշուց ձվածեղը զարդարել են իրենց մանկությունը: Եւ տատիս՝ որպես ռազմաճակատային վաստակավոր ուսուցչի, կնոջ եւ երեք աղջիկ երեխայի մոր նշա-

նակել են գյուղական որբերի համար հատուկ բացված մանկապարտեզի վարիչ ու նաեւ դրամական նպաստ են ստացել: Վաստակավորի այդ կոչումը պապս փայփայում էր որպէս զուտ հեղինակություն, մանկավարժական վաստակի արդար հատուցում, բայց 1990 թվականին հրաժարվեց, դա նրա բողոքն էր Բաքվի հայության դեմ գործադրված բռնությունների առթիվ, «*Խորհրդային Ղարաբաղ*» թերթում տպագրված է այդ նամակը: Այդպիսի անձնագրով եւ, մանավանդ, բողոքի ցույցով նա, իհարկե, Ստեփանակերտ չէր թաչի, գար՝ որ ի՞նչ: 1986 թվին Երեւան-Ստեփանակերտ նրա ինքնաթիռը վայրէջքի ուղարկել էին Ադդամ, աղջկա՝ մեր ժաննա մորաքրոջ եւ Լուսինե թոռան հետ էր: Տառս արդեն չկար, փոքրիկին նրա անունն էին տվել, շփոթված մնացել էր, բայց աշխարհում բարի մարդ միշտ մի տեղ գտնվում է, թեկուզ՝ աղդամցի եւ թուրք՝ տաքսու վարորդը ծերունու շվարանքը հասկացել եւ ապահով հասցրել էր գյուղի իր տունը: Անունը չի հիշվում, բայց հիշողությունը կա՝ որ այդպէս՝ վանեցի եւ թուրքի գոհ, պապս հանկարծ հայտնաբերել էր, որ այդ մարդու հետ կարելի է նաեւ բարեկամություն անել: Այդ ամառ նա գյուղի տան բակում ոչխար մորթել տվեց, աղդամցու հեռախոսի համարն ուներ եւ կապի հանգույցից գանգեց՝ հրավիրեց քեֆի, հետո աղդամցին մի օր ծեծել էր Երեւանի իրենց բնակարանի դուռը: Մորաքույրս խնդալով պատմում էր, որ թուրքը իր մեքենայով էր, կնոջ հետ առուտուրի էր գնացել: Երեւի մտածել է՝ «*մի էն հային փորձեն*», - եւ խեղճ պապս քաղաքն ընկած՝ պատերազմի մասնակցի իր վկայականով խանութներում անհերթ կարագ, հարկավոր ուրիշ բաները գտել, վճարողն, իհարկե, թուրքն էր, բայց պապս գոհ էր մարդու մարդկայնությունից՝ որ խոսքի տերն էր եղել, եկել՝ Երեւան տեղը իրեն գտել էր: Կատակեցի՝ «*ընկեր Մինասյան, արի գնանք Ադդամ, էդ մարդուն գտնենք ու ասենք՝ ախպեր, էս ձերոնք ի՞նչ են անում, ախր հացն ինչ է՝ հացի հոգս ունենք*», - չարացավ: Կյանքում կոշտ խոսք նրա բերանից լսած չկայի, բայց հավատավոր կուսակցականի երդվյալ նվիրվածությամբ նա անիծեց այն օրը, որ «*Գորբաչեւը եկավ ու երկիրը սկսեց քանդել*», - հետո խեղճացավ. «*Այ բալա, ախր ու՞ր ես գնում, գանգիր մորդ՝ թող իրենք էլ գան, թուրքը վատ բաներ է անելու*»: -

Եւ սակայն մի հեռավոր զգայարանով իմացա՝ հպարտություն ունի, որ թոռը Ստեփանակերտ- Երեւան ճամփին շարքային ուղեւոր չէ, այլ՝ հատուկ մարդ, կարող է Գերագույն խորհրդի նիստին ելույթ ունենալ: Զարցրեց՝ *«Էն Շիրինյանը որ կա՝ Մարտակերտից, դա հո Միրզաջանի տղեն չի՞»*:- Նա Էր՝ Վիգեն Միրզաջանի Շիրինյան, ասաց. *«Մյուսներին չեմ ճանաչում, ումանցի՞ց են»*, - եւ դա մի փոքր միամիտ- տարօրինակ հնչեց՝ որ կարծում Էր՝ Ղարաբաղ բուլոյին պիտի իմանար, արանքում հասկացրեց, որ Գերագույն խորհրդի ինչ-որ նիստում «Էն Միրզաջանի տղեն» կանգնել եւ ինձ համարել է կոմունիստ քարտուղար Վահան Գաբրիելյանի դրածո: Եղել Էր այնպես, որ Չավեն Իշխանյանին խնդրել եւ համոզել էի, որ Մեծ քոչի ճանապարհը քարուքանդ է, կարելի է խիճը թարմացնել, քանի որ յոթ գյուղ դրա հույսին Էր, եւ չուզող մեկը նամակ Էր գրել Երեւան՝ Գերագույն խորհրդի նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանին, իբր *«Ձեր պատգամավորը եւ կուսշրջկոմի առաջին քարտուղարը միացած՝ թուրքի քոչի ճանապարհը վերանորոգում են»*: Ասացի՝ *«գործ չունես, տղա է, իր իմացածով՝ եթե ճանապարհը նաեւ քոչի համար է, ուրեմն մերը չպիտի լինի, վերջը կիմացվի»*, - չհանգստացավ՝ *«գրելու եմ, դրա պատասխանը ես պիտի տամ»*:-

Զին վեճ, երեւի թե ունեցած կլիներ Շիրինյան Միրզաջանի հետ, երկուսն էլ ուսուցիչ էին եղել: Նիստերի դահլիճում մեր կողքի հարեւանը Գեորգի Թաթարյանն Էր, Վիգենի հետ բռնվեցին, եւ Չավեն Իշխանյանը հորանջեց եւ ափսոսաց, որ տեղը ուրիշի չի գիջել. «Երեւան» հյուրանոցի ռեստորանում նա խորոված պատվիրեց՝ լավ չէր, կոնյակը՝ նույնպես, հառաչեց. *«Ու՞ր ես էէէ, ու՞ր ես՝ ճախին անցի աղբյուր»*:- Դահլիճում անտանելի շոգ Էր, քարտուղարության աղջիկները հագնում էին բարակ- թափանցիկ շոր, նրանք կռանում՝ օձանելիք եւ զուտ կանացիություն էին բուրում՝ երբ հարկավոր թղթերը պիտի բաժանեին, Չավենն ասաց՝ *«խելքս գնում է՝ որ էդքան մոտենում են»*:- 1990-ի ամառն է, «ահավոր շոգ», ինչպես երեւանցիք են ասում: Փողոցների կուպրը հալիվել- հոսում է: Զրապարակի շատրվաններն ասես համր կինոյում են տեսնում. ջուրն անաղմուկ վեր է նետվում, լուռ թափվում ավազանները: Տոթը, անտեսանելի *«մեկուսիչ ապակու*

պես», խլացնում է ձայները: «Երեւան» հյուրանոցի մայթին Չավեն Իշխանյանը մեծ-գունեղ թաշկինակով քամհարում է դեմքը: Մայիսին Հայաստանի Գերագույն խորհրդի պատգամավոր ենք ընտրվել: Ինքը «Ճանշին» տեղամասի պետ է, ես՝ «Խորհրդային Ղարաբաղ»-ի սեփական թղթակից: «Գնանք՝ մի բան ուտենք»:- Երեւան Գերագույն խորհրդի նստաշրջանի ենք եկել: Մյուսներին տեղավորել են «Էրեբունի»-ում, եւ նա կասկած ունի, թե «մեզ անտես են արել»:

Ոչինչ, ասում եմ,- Էստեղ Չարենցն էլ է ապրել:

Ո՞վ,- ականջիս տակ գոռում է Չավենը: Մի քիչ ծանր է լսում:- Չարենցին բա չեն սպանե՞լ:

Հա, բայց մինչեւ կսպանեին՝ Էստեղ է ապրել, երեւի՝ Արովյան փողոցի վրա պատշգամբ ունեցող համարում:- Մտնում ենք հյուրանոցի ռեստորան: «Դու սուս կաց», - կարգադրում է Չավենը: Ինձ վրա մի գուրգուրոտ ուշադրություն ունի: Տարիքի՞ց է, թե՞ դիրքից: Մեկ է՝ ուտելու ախորժակ չկա: Սառը սպաս ենք խմում, ինչ-որ մտեղեն ծամում: Ծույլ, դժգոհ, ջղային: Նստաշրջանն էլի ընդմիջել են: Նախագահի թեկնածուներից ամենաարժանին ո՞վ է: «Դու Տեր- Պետրոսյանի՞ն ես ձայն տալիս, թե՞ Մովսիսյանին», - Չավենն ափսեի վրայից հայացքը չի բարձրացնում: Անհարմար է:

-Տեր- Պետրոսյանին, իհարկե,- պատասխանում եմ:

Ինչի՞:- Հանքային ջրի բաժակը դանդաղ տանում է շուրթերին: Աչքերը կուլ են գնում, բայց երբ խմում-վերջացնում է, ապշանքով տեսնում եմ, որ հարցը մնացել է շուրթերին եւ դեռ թրթռում է: - Էդ ծակ պրոֆեսորը պիտի՞ մեզ կառավարի, կտան՝ Էն մի աչքն էլ կհանեն, մերն էլ՝ հետը: Վիգենն է, հա՞ խելքդ կերել: - Ծիրինյան Վիգենի մասին է հարցնում, թեւ գիտի, որ մենք ոչ միայն մտերմություն, անգամ կարգին «բարեւ-բարի օր» էլ չունենք: «Նա կոմունիստների դրածոն է», - Վիգենն է իմ մասին ասում: Նրան մի քանի տարի է՝ գիտեմ: Մի ժամանակ «բանաստեղծություններ» էր գրում՝ երկար, անհամ-անալի բաներ: Հիմա պատգամավոր է՝ «լեռնական»:

Վիգենն ինձ բան չի ասի:- Աչքերը խոնարհում է: «Գիտեմ, բայց սխալվում ես»:- Չավենը կանչում է մատուցողին, վճարում եւ

դուրս ենք գալիս: Դեմ-դիմաց թերթի կրպակն է, որտեղից նաեւ ծխախոտ ենք առնում: Փակ է: Զաղաքը, երեւի՝ ողջ Հայաստանը չի աշխատում: Շունչը պահած՝ սպասում է. *«Ամենաարժանին Տեր-Պետրոսյանն է, թե՞ Մովսիսյանը»*: Դժվար խնդիր է: *«Կընտրեն, հետո կտանեն՝ Պապ թագավորի նման գլուխը կուտեն»*, - Տեր -Պետրոսյանի մասին երեկ ասաց քրոջս հարեւանուհի Զնարիկը: Երբ հյուրանոցում ձանձրանում եմ, թողնում, քրոջս տուն եմ գնում: Չավենը գունդուկծիկ- ամուր տղամարդ է: Մազերը մոխրած են՝ «աղուպղպեղ» գույնի, իսկ աչքերը հուշում են լավ ապրվող կյանք եւ փորձվածի անհանգստություն: Այդպես տագնապում են, երբ ինչ-որ բան կորցնելու զգացողություն են ունենում: Չենք խոսում: Մայթերին քիչ մարդ կա: Հրապարակի նշանավոր պուլպուլակից պորտները բաց տղա-երեխեքն իրար ցայում, ժղվժում են: Ջուր ենք խմում: Սառն է: Չավենը չի հավանում. *«Ու՞ր ես, Է՛, ու՞ր, ճախին անցի աղբյուր»*: - Ծիծաղում եմ: Ահագին աղմուկ-մրցակցությամբ է ընտրվել, բայց ասում է. *«Էս իմ տեղը չէր, Մխիթարյան Էլզիկը պիտի գար՝ խոսեր, Էստեղ ես ի՞նչ գործ ունեմ»*: - Անկե՞ղծ է, թե՞ խաղում է: Ի՞նչ իմանաս: Բայց մի տարտամություն բոլորիս վրա էլ կա: Ոչ ընդհանուր նստեկ-վերկենալ ունենք, ոչ բան: Մեկ էլ՝ որ երեւանցիներին մոտ-մոտ են անում, թեեւ, կարծես, հակառակը պիտի լիներ: Իրենք էին մեր մտերմությունը փորձելու: Ինձ ու Չավենին *«Երեւան»* հյուրանոցի երկտեղանոց մի համար է բաժին ընկել, մյուսներին՝ *«Էրեբունիս»*: Ո՞վ է տնօրինել, ինչու: Գլուխ չկա՝ հարցնես: Գործուղման փող են տվել, սննդի կտրոններ: Ճաշարանը կառավարության նիստերի դահլիճի ներքնահարկում է: *«Լրիվ կոմունիզմ»*, - որով-հետեւ գներն, իրոք, ծիծաղելի են, սնունդը՝ Ստեփանակերտի սովահարությունից հետո՝ *«արքայական»*: Դե, երեւի Երեւանում էլ մի բան չի: Թե չէ Սերո Խանզադյանն ինչու՞ պիտի շոգ-կրակին շուկայի պայուսակով մտնի բուֆետ: Էնքան է մլուլ տալիս, մինչեւ մեկնումեկը մոտենա.

Բա՞ն էր պետք, Սերո Նիկողայիչ:

Չէ, հենց Էնպես նայում եմ: - Մինչեւ որ սա հասկանա՝ երշիկ, պանիր, ձու, թթվասեր, կաթնաշոռ պատվիրի: Վճարի, ինչ-որ մեկին հանձնարարի՝ *«Էս տղուն ասեք, գա Սերո Նիկողայիչին տուն»*

տակի»:-

... Ճեմասրահում զով է: Չավենի հետ մերոնց ենք փնտրում: Կամ չկան, կամ «ազատ չեն»: Կամարների տակ խուլ բվվոց է, ինչպես լինում է, երբ հարյուր-երկու հարյուր մարդ միաժամանակ իբր ցածրաձայն խոսում է: Կանգնած են: Քայլում են: Երկու-երկու: Խումբ-խումբ: Նրանց արանքներով սահում, վազում, պագում, ոտնաթաթերի վրա ձգվում, մեկը մյուսի ոտքը տրորում, ներողություն են խնդրում եւ դարձյալ «փաթ ընկնում» տասնյակ լրագրողներ, հեռուստաօպերատորներ, լուսանկարիչներ, նստաշրջանի քարտուղարության շահել աղջիկներ: Բարձրանում եմ երկրորդ հարկ, որտեղ նիստերի դահլիճն է: Կարմրաթավիշ պաստառած՝ պատգամավորական դատարկ բազկաթոռների տեսքը՝ ամեն մեկի թիկնակին՝ «տիրոջ» ընտրատարածքի թվահամարով ցուցանակ, չգիտեմ ինչու, մտքիս խորքերից արթնացնում է Վարդգես Պետրոսյանի վեպի վերնագիրը՝ «Դատարկ աթոռներ՝ ծննդյան տոնին»: Նույն տատի հոբելյանին որոշեցին մի տեղ հավաքել գերդաստանի ցրված բոլորին՝ չստացվեց: Գու՞ցե լավ էր, որ չստացվեց: Մի՞թե Հայաստանն ինքը բոլոր հայ գերդաստանների հավաքատեղին չէ: Ի՞նչ կարիք կա խճանկարն ավելի խտացնել: Վարդգես Պետրոսյանն էլ պատգամավոր է: Մի օր առիթ լինի, կհարցնեմ՝ ինչու՞ է վեպի խորագիրը փոխել-դարձրել «Կրակե շապիկ»: Ինչի՞ց է զգուշացել: «Դատարկ աթոռների՞ց»: Երեւի. եղպես, ախր, ստացվում է, որ երբեք հնարավոր չի լինի՝ Հայաստանի մասերն իրար բերվեն, միանան: Մնում է, որ «թուրքերի հետ լեզու՞ գտնվի», չէ՞: Իսկ հնարավոր է, որ պատգամավորական բոլոր բազկաթոռները միաժամանակ զբաղեցված լինեն՝ ոչ ոք չբացակայի: Իհարկե, բայց, միեւնույն է, դա միասնություն չէ, որովհետեւ ես ու Չավեն Իշխանյանը տարբեր վճիռ ենք ընդունելու: Եւ ամեն մեկս կարծելու է, թե ճիշտն ինքն է: Նիստերի դահլիճը նեղլիկ կողասրահ ունի: Պատուհանները նայում են կառավարության շենքի ներքին բակին: Այնտեղ շարժական հեռուստակայանն է. մարդիկ պիտի ուղիղ եթերում տեսնեն, թե որքան եռանդուն եւ, մանավանդ, արդյունավետ են աշխատում իրենց ընտրյալները: Աղբարկղ- մոխրամաններ կան: Ծխում ու քայլում եմ, ամեն անգամ կանգ առնում, որպեսզի մո-

խիրը ուղեգորգապատ հատակին չթափվի: Վերջին կանգառը դիմացի պատի եւ աջակողմյան պատուհանագոգի հատման տեղում է: Ծխախոտը մարում եմ, շրջվում: Ձախ թելում բաց դուռ եմ տեսնում: Երկարուկ սեղան: Կենտրոնում, դեմ-դիմաց, նստած են *Լեւոն Տեր-Պետրոսյանը եւ Վլադիմիր Մովսիսյանը*: Նրանց միջեւ զանգվածեղ մոխրաման կա՝ ծխուկներով լիքը, մի-երկու շիշ «Ջերմուկ»: Իջնում եմ ճեմասրահ: Նույն խուլ աղմուկն է, վազվ-զոցը: Չավենին գտնում եմ բուժետում: Հանքային ջուր է խմում: «Ու՞ր էիր»:

Էստեղ ման էի գալիս:- Մնաց կես ժամ: Հետո բարձրախոսը թավ ձայնով կիրավիրի մոտենալ քարտուղարության սեղանին՝ քվեաթերթիկ ստանալու: Մեր ժամանակավոր վկայականը դարձյալ ձեռքից-ձեռք կանցկացնեն՝ հո ուրիշի փոխարե՞ն չենք էստեղ, ապա մեկ-մեկ կմտնենք քվեախցիկ, որտեղ սեղանիկ կա, վրան՝ մանուշակագույն գրիչ: «*Արժանավորներից ո՞վ է ամենաարժանին, Տեր-Պետրոսյանը, թե՞ Մովսիսյանը*»: Երկուսից՝ մեկը: Երրորդը չկա: Որքան քիչ են հրավիրյալները, այնքան դատարկ աթոռներ չեն լինում: Չավենը գլուխն օրորում է՝ «*ծը-ծը-ծը*»:

Քարտուղարները գնացել են, - ասում է: Չեմ հասկանում:- *Մեր քարտուղարները, որ էստեղ էին, Ղարաբաղ են թռել*:- Քաղկոմ-շրջկոմների քարտուղարներ էին Երեւան եկել: Հիմա վերադարձել են: Եւ Չավեն իշխանյանն իր «*կոտրած ձեռքով պիտի մի ծակ պրոֆեսորի ձայն տա*»: Ճեմասրահի դուռն ուղղակի Մելիք-Ադամյան փողոցի վրա է, պատուհանագոգերը՝ մայթին գրեթե հավասար: Մարդիկ առվակ առ առվակ հոսում են, լցվում փողոցը: «*Լեւո՛ն, Լեւո՛ն*», - վանկարկում է ամբոխը, բռունցք թափահարում, ծիծաղում, լալիս, ոտքերով դոփդոփում: «*Բա որ ասում եմ՝ սա Էլզիկի՞ տեղն է*», - քվեաթերթիկը ձեռքին՝ Չավենը նայում է փողոցի ցնորամտությանը: Սառած, զարմացած:

... Շոգ ու խելագար այդ օրերից մի առավոտ նիստերի դահլիճի բազկաթոռներից մեկին ճերմակ վարդերի փունջ էր դրված: Գիշերն «Էրեբունի» հյուրանոցի մոտ, ՀԱԲ-ի ղեկավարության հետ բանակցությունների ճանապարհին, սպանվել էր Վիտյա Այվազյանը: «Միացում»-ն ավարտվել էր, եկել էր իրական իշխանության ժամանակը, որ դրսից խառնակ, ներսից մինչեւ ամենա-

վերջին ստորություն հաշվարկված- գրված՝ արդեն դերաբաշխվում էր:

...Յետո՞ւ Սրիսավենդ չկար, իսկ ամռանն արդեն մեր ունեցածը գործ չէր: Չորքը, երբ պարտությունն անխուսափելի է տեսնում, կանոնավոր նահանջի՝ հակառակորդին անընդմեջ քրքրելու նպատակն է առաջնորդ ընտրում կամ նահատակության դաժան խորհուրդը, նույնիսկ նահանջող բանակն էլ հմայք ունի, եթե դեռ գիտակցվում է որպես գործ: Պատերազմում միայն չեն հաղթում, եւ անհաջողության կողքին միշտ ապրում է հատուցման հույսը, բայց նրանք դա այլեւս չէին զգում եւ դադարել էին անգամ աշխարհագոր, թե՛ երկրապահ ջոկատ լինել, եւ նրանց պարտությունն ու նահանջն էլ պարտության եւ նահանջի նման չէր եւ անհանդիպադրելի էր երեկվա խանդավառությանը, երբ ձյունների միջով, թրատող քամու պոռթկումների ընդմիջումներին խումբ-խումբ օղակում էին մեր դժվար փրկված հողն անարյուն կռվով նորից կիսած՝ թուրքի գյուղերն ու կռվում՝ 1991 թվի մայիս-հունիս եւ հետագա ամիսների նվաստացումները թոթափած լինելու մոլուցքով: Եթե զուգադրվեր, եթե համեմատվեր՝ նահանջն իմաստ կունենար եւ պարտությունը՝ նույնպես: Նրանք մոռացել էին ամեն ինչ: Չէին հիշում, եւ զենքը՝ երեկվա հպարտություն, դարձել էր ավելորդ բեռ, որ կես ճանապարհին կարելի էր շարտել, տալ ուրիշի, թաքցնել, միայն թե՛ ազատ լինեին գինվորյալի պարտավորությունից, գնային - հասնեին իրենց երեխաներին, ձեռքը բռնած՝ քայլեին փախափախի ճանապարհներին, եւ ոչ ոք չհարցներ՝ ո՞վ ես, որտեղի՞ց ես գալիս, ինչ՞ու, ի՞նչ պատահեց, ինչու՞ են նահանջում: Նրանք օտարվել էին լսելու, պատասխանելու, վերլուծելու՝ զուտ մարդկային ուղեղի մենաշնորհից:

«Ու՞մ է պետք խոսքը, հրեն՝ թուրքը գալիս է, ով քաջ է՝ թող մռութին տա, կանգնեցնի»,- չէր ասվում, իմաստ էլ չկար, բայց միտքը կախված էր օդում, անընդհատ բռնվում, բաց էր ընկնում, բաց էին թողնում, վախենում էին երկար պահել. այդ հարցերը, հարցականները ծամել-մարսելուց էին փախչում, որովհետեւ գիտեին՝ տանջանքը,- որ երկու-երեք ժամում ահագին գյուղից շունչ կենդանի բան մնացած չի լինում, իսկ թուրքի տանկը միայն հաջորդ լուսաբացին է մոտենում եւ ամեն ինչ թաքստոցից տեսնում

Էին անզոր ատամկրճտոցով ու դեռ չգիտեին Էլ՝ կոլխոզի Էն շուն-շանտղա նախագահն ավտոն մինչեւ վերջ իր տուն-տե՞ղն Է լցրել, թե՛ գուժը շարժվել՝ երեխեքին ապահով Ստեփանակերտ Է հասցրել,- եթե իրենցը եղավ՝ նորից են կապվելու Էս թշնամի-հարագատ հողին: Միտքը բռնում, հաջորդ վայրկյանին շրմփոցով ոտքի տակ էին տալիս, բայց անտերը չէր մեռնում, ծեծկված շան պես քարշ էր գալիս քրտնախարշ քարավանների հետքերով, կուչուրում գիշերային վատ քողարկված խարույկների կողքին ու մի պառավի լեզվով հոգի քրքրում:

-Էս քոչած ու՞ր ենք գնում, ա խոխեք:-

1992 թվականի մայիսին Լաչինով ճանապարհը բաց էր, հասանք Երեւան. մեքենան ռազմավար «ԿամԿՁ» էր, Ստեփանակերտ գինվորական իշխանության պարետ Մուրադ Պետրոսյանը կանգնեցրել էր՝ *«Էդ տանում եք ծախե՞ք»*, - խմած էր, հաղթական բանակի հերոս պարետ էր, բացատրեցինք, որ՝ *«չէ, գյուղերում այլուր չկա, գնում ենք Երեւան այլուր խնդրենք, իշխանություն չկա, ժողովրդի հոգսը քաշող չկա, լոբի Է խաշում ժողովուրդն ու անհաց ուտում, դիրքի տղերքի հոգսն Էլ՝ հետը»*:- Դժվար էր հասկանում, իր իմացածով՝ պարետը մնում էր պարետ, եթե գեներալ Սաֆոնով չէ՛ բոլորիս Շուշի՝ բերդ կամ ճակատի առաջին գիծ չի քշում՝ պիտի շնորհակալ լինենք ու մեքենան նվիրենք բանակի կարիքներին: Տույց տվինք նախկին ավտոբազան՝ *«Էնքան մեքենայից բա մեկը հիմա ու՞ր Է»*, - ասաց՝ *«Բորիս Դադամյանին հարցրեք, ինձ նշանակել են պարետ, որ կարգուկանոն հաստատեմ»*, - Յայաստանի Գերագույն խորհրդի պատգամավորի վկայականն ու ազնիվ խոսքը՝ որ *«երեք օրից մեքենան լինելու Է իր տեղում՝ որպես Խաչենի գումարտակի, ուրեմն՝ ամբողջ բանակի սուրբ սեփականություն»*, - Մուրադ Պետրոսյանի համար ոչինչ էր: Հարցրեց՝ *«Սամոն տեղա՞յ Է»*:- Չգիտեինք, որ բանակում եւ իշխանության ամենաբարձր դիրքում նոր մարդ կա՝ անունը չէինք լսել, վարորդին ուղարկեցինք՝ բացատրի, թույլտվությունը հաստատվի, Խաչենի գումարտակի հրամանատարն իր կարգադրությունը գրավոր արել էր, չհաստատվեց, բայց մեքենան քշեցինք՝ անցանք, քանի որ Էդ արանքներում ով որ մեկը Մուրադ Պետրոսյանին կանչել էր հեռախոսի մոտ: Կարելի Է ասել՝ Մուրա-

դից փախանք: Ղեռնոյան Էռնիկը Հատուկ ծրագրերի վարչության բաժնի պետ էր, հատուկ խնդրանքով դիմեցինք՝ այլուր հաջողացնի, ուղարկեց ավրադաց կոմբինատ՝ քսան տոննայի թուլտվություն կար, տասը կարողացանք բարձել եւ Էլի Մուրադից ծածուկ հասցրինք գյուղ, բայց դա չնչին բան էր, մի երկու տոննա հաչենի գումարտակին սվիրատվություն արեցինք, հետո որոշվեց, որ գնանք Էլի Թալիշ՝ ցորենի, եւ դա համարյա ռազմերթի պես էր: Մարաղան չկար, Մարգուշավանը՝ նույնպես, Հասանդայա թուրքի դիրք էր...

Եթե իմանային ուր են գնում՝ հայտնության հույս կլիներ, չկար, որովհետեւ գիտեին՝ որտեղից են գալիս, բայց դա այլեւս ստույգ գյուղանուն չէր, այլ ընդհանրական դժոխք՝ Մարտակերտ, եւ ամռան, վաղ աշնան անամպ երկինքներում պայթող արհավիրքները նրանց կողքից անցնում էին նույնքան անիմաստ, որքան սեփական դեռ գոյության առեղծվածը: Ու՞ր են առյուծ տղերքը. կռվողը սպանվել է, նահատակվել, հոշոտվել: Թուրքը գերեզմաններն էլ չի խնայում, շնագայլի պես փորում է թարմ շիրիմները, չորսբուլորը թուրքի գիշակեր կաղկանձն է՝ աաաուուուու,- թուրքն անկանգ գալիս է՝ բացերախ հրեշ՝ պոչը՝ Կասպից ծովում, մի թեւը՝ Ատրպատական, մյուսը՝ Դարբանդ. այս աշխարհի՝ սարերի ու կիճերի վրայով թուրքը գլուխը մեկնել՝ գնում է Անատոլու՝ իր մոր ծոցը, Մայր հրեշի ու այս մեկի արանքում արեւոտ մի դաշտ է, բանաստեղծի ասած՝ «արծաթ մի ափսե», եւ՝ լեռնաստան: Հրեշը գալի՞ս է, թե՛ առաջն ընկած՝ Էլի բերում են, իսկ առանձին թուրքը ոչինչ է: Ահավորը թուրքի ամբոխն է, զանգվածը, մեռյալ տափաստաններից դարերի եւ քաղաքակրթությունների միջով անխաթար բերած՝ մորեխանալու բնագող. առանձին թուրքը ճակատին գնդակ է առնում, առանձին - առանձին՝ թուրքը հազարներով ընկած՝ նեխում է այս աշխարհի ճորերում ու անտառներում, բայց սեւապարս զանգվածն Էլի գալիս է՝ աաաուուուու,-խարկված դաշտերով թուրքը ձգվում, երկարում, բռնում է ճամփաները: Ու՞ր են առյուծ տղերքը. չկան. գոհվել են. նահատակվել. հոշոտվել:

1992 թվի մայիսի 8-ին սպանվեց Իգորը. նոյեմբերի 19-ին՝ Հովսեփը. Իգոր եւ Հովսեփ Հասրաթյանները. երկուսն էլ՝ հերոսա-

բար: Իգորը կրակել էր մինչեւ... մնացել էր մեկ փամփուռ: Իր բաժինը: Ասել էր՝ «*թուրքին գերի չեմ ընկնի*», - Զոլսեփը, չէ, շրջապատման մեջ սպասել էր այնքան, որ թուրքը փորձի գերել եւ պայթեցրել էր ձեռնանունակը: Պապը չի հիշում՝ ե՞րբ, ի՞նչ հեղեղ էր էլի անցել կարկուտ թակած այս երկրով, կամ թուրքաց փաշա էր, կամ՝ պարսից շահզադե, կամ՝ լեզգաց ավագակախումբ, պապի հիշողության բարակող ծալքերում մնացել է միայն զրույցը. իրենց նախապապն, ահա, Քոլանի Սարգիս ասված կամ՝ Սաքո, Գյուլիստանի անանուն գյուղից,- գյուղն անուն ունեցել է, պարզապես Սարգսի՞, թե՞ Սաքոյի մահով տոհմն սկսել է մոռանալ,- հասել է Սյունիքի Կոռնիձոր եւ ստույգ մահից իրեն ու նորահարս կնոջն ազատելու հաճույքը կամաց-կամաց սրբել է գաղթի, կոտորածի մանրամասնությունները, եւ Կոռնիձոր՝ Գյուլիստանի անանուն գյուղի համեմատ ապահով պնդոցում նրանք ճակատագրից վրեժխնդիր լինելու պես հինգ արու զավակ են աշխարհ բերել. Սարգիս ծնավ Մարտիրոս, Ասատուր, Չաքար, Առստամ, դարձյալ՝ Սարգիս: Առստամ ծնավ Մկրտիչ, Մկրտիչ ծնավ Յասրաթ, Յասրաթ ծնավ Յովսեփ՝ իր հայրն է, որ արդեն բնիկ կոռնիձորցի պիտի համարվեր, բայց Սյունիքն աղքատ էր, ուներ փոստային մի ճանապարհ՝ Գորիս-Շուշի-Եվլախ, եւ Յովսեփը, որ ուզում էր մի քիչ լավ ապրել՝ խուրջինն ուսած անցնելու էր Քոլանի Սարգսի գաղթի ճանապարհը՝ հակառակ ուղղությամբ՝ դեպի արեւելքի տափաստանները, դեպի Բաքու:

Բաքվից բերածը մի բուռ ոսկեդրամ էր, որ եղավ երկու զույգ լծկան, մի քանի մոզի, գութան, լայնաշեղք գերանդի, եղան, կացին, նավթալամպ, դեղին ինքնատեռ, թախտ եւ աշխարհի հետ կռիվ տալու, այդ դժվար հողի վրա իրեն ու զավակներին հաստատելու, գաղթի բեռն ուսից շարտելու ինքնամոռաց ջանք՝ քանի դեռ ռուսաց կայսրության հովանին աշխարհի մեր այս կողմերից պատկառելի հեռու էր գսպում թուրք նասրանու, պարսիկի, քրդի, լեզգու արյունառու ախորժակը: Յովսեփ ծնավ Ալեքսան, Յամբարձում, Յախշիբեկ, Մակիչ՝ 1910 թվին: Մակիչը Իգոր եւ Յովսեփ Յասրաթյանների պապն է, մեռավ վերջերս՝ Ստեփանակերտ, թաղվեց Ստեփանակերտ՝ Իգոր եւ Յովսեփ թոռների հետ նույն գերեզմանում: Տոհմը մեկ անգամ էլ ծննդավայր փոխել է

կոլխոզաբաժան տարիներին եւ հաստատվել Կարմիրավան. Կարմիրավանը թուրքի կոխան հող է հիմա , - Ջուլանի Սարգիս ծնավ Առստամ. Առստամ ծնավ Սկրտիչ. Սկրտիչ ծնավ Յովսեփ. Յովսեփ ծնավ Յասրաթ. Յասրաթ ծնավ Յովսեփ. Յովսեփ ծնավ Մակիչ. Մակիչ ծնավ Շուրա, Ժորա. Շուրա ծնավ Իգոր. Ժորա ծնավ Յովսեփ.-1992թ, մայիսի 8-ին Նախիջեւանիկ գյուղի դիրքերում զոհվեց Իգոր Յասրաթյանը. 1992թ. նոյեմբերի 19-ին ռազմաճակատի հյուսիսային ուղղության Կիչան-Խաչենի կամուրջ հատվածում զոհվեց Յովսեփ Յասրաթյանը: Նահանջ չէր. գլխապատառ փախուստ չէր, ի՞նչ էր՝ չէր իմացվում. զոհվողը զոհվել էր, գնացողը՝ գնացել, եւ դա հասկանալի էր՝ որպես սեփական մարմնի վերք, որ տեսնում ես նույնիսկ փակ աչքերով: Դժվարը մնացածների համար էր, որովհետեւ մնացողը հավելելու էր զոհվածների, նահատակների աշխարհը, իսկ հեռացածները երկար չէին վերադառնալու, եւ փափուկ, բերքառատ աշնանը ձորերի, անտառների ու նեղիկ գետահովտի երկնքում անտես, բայց տիրական սավառնում էր մահվան ուրվականը՝ կորստյան, օտարացման դառը շունչը:

Ճանապարհը շրջանցիկ-երկար էր, մեքենան՝ ամենագնաց «Ուրալ», որ Արեգը Յրագդանից էր ստացել: Թելման Տեր-Պետրոսյանն էր նվիրել՝ Վոլսկու իշխանության լավ օրերին, երբ բեռնված գնացք Ստեփանակերտ դեռ հասնում էր: Յետո ամեն ինչ կտրվեց: Երբեմն հաջողվում էր Երեւան ուղղաթիռ վարձել, բայց «ՄԻ -8»-ի բերածն ի՞նչ էր լինելու՝ մի երկու արկղ սապոն, հինգվեց պարկ ալյուր, շաքար, ծխախոտ-լուցկի, որ աշխարհագորի դիրքապահ տղաներին հերիքում էր հազիվ տասը օր: Կամ պատահում էր՝ Ստեփանակերտից հասնում, հենց ուղղաթիռից էլ բեռն իջեցնում՝ տանում էին՝ ի տնօրինություն «կենտրոնական շտաբի», որ ինչ-որ տեղ պիտի լուծելիս լիներ մեծ կարելորության հարցեր, բայց ձմեռնամուտին գյուղ էր հասցվել ընդամենը 20 ավտոմատ: *«Էդ է, առայժմ յուրա տարեք»*, - ասել էր Արկադի Կարապետյանը եւ համարել, որ *«Խաչենի ուղղության ինքնապաշտպանական ջոկատը կազմուպատրաստ է՝ դիմագրավելու հակառակորդի ցանկացած ոտնձգություն»*, - թշնամին, մինչդեռ, Սրիսավենդի մոտ, անանուն բարձունքին, գնդացիր էր դրել, եւ

Կիչան էր բերվել «հարվածային խումբը»՝ ստեփանակերտցի 10-15 տղա: Իսկ ճանապարհը փակ էր՝ դեպի Մարտակերտ, որտեղ, ինչպես կարծվում էր սարերով պարփակված մեր գյուղերում, ցորենի արտերն արդեն հնձած, բերքը պահեստավորված պիտի լիներ:

Գնում էինք Թալիշ: Մարգուշավան- Մարաղան ապրիլին էր մորթվել: Փորձակայանի դաշտերը հրկիզված, պաշտպանիչ անտառաշերտը, որ տափաստանի խորշակների դեմ տնկվել էր կալվածատեր Յուզբաշեի ժամանակներից, խարկված-սեւ էր: Մարտակերտ- Կարմիրավան- Սեյսուլան, որտեղ սարեցու մեր միամտությամբ կոմբայն էր հռնդալու, ամայի անտերություն եւ կծղած արտեր էին: Գործկոմի Նախագահ Ներսես Օհանջանյանի սեղանին զինվորական կապի հեռախոսը սեւ-լուռ էր, շենքում՝ ամայություն, վախ:

Թալիշ կարո՞ղ էք հասնել,- գործկոմի Նախագահը, որ գարնանն էր «միաձայն ընտրվել» այդ պաշտոնում,- իրականը Վահան Գաբրելյանին իշխանությունից զրկելու՝ Մարտակերտի աշխարհագրային հրամանատարության որոշումն էր եղել,- ասաց:

Ես գրություն կտամ, որ ցորեն վաճառեն:

Թալիշը մտել էր ներքնահարկերն ու սպասում էր՝ էլի ինչ է լինելու: Նախագահ Արարատը հագել էր զինվորական համազգեստ: «Ուազ»-ը մի թույլ կանգնեցրեց, հաշվապահին կարգադրեց:

Կիլոն իրեք մայեթից ինչքան կուզեն՝ ձեւակերպիր,- ինքը գնաց:

Հաշվապահի ձեռքերը դողում էին: Դժվար էր գրում:

Կտաք պահեստապետին,- մեր հաշված 15 հազար խորհրդային ռուբլու դիմաց տվեց տետրի քառածալ մի կես-թերթ, որտեղ գրված էր. «Բաց թողնել 5 տ. երկրորդ կարգի ցորեն», - ստորագրություն, ամիս-ամսաթիվ:

Ինչու՞ «երկրորդ կարգի», էդ ի՞նչ էք հնարել,- հաշվապահին գիտեի մի երկու տարի,- ի՞նչ էք անում, Աշոտ:

Նա գլուխը կախեց եւ զանցանքի մեջ բռնված դպրոցականի նման կարմրեց:

Ես բանից տեղյակ չեմ, ինչ ասում է՝ անում եմ:

Արարա՞տը:

Իրեն էլ ուրիշն է ասում, էլի, ես աշխարհից չե՞ք:

Պահեստները գյուղից դուրս՝ դաշտում էին: Եւ եթե ցածրա-
նիստ բլրաշարը չփակեր՝ կտեսնվեր թուրքի Բորսունլու գյուղը,
որտեղից նախօրեին տանկը բարձրացել՝ ուղիղ նշանառությամբ
կրակել էր: Տանիքի շիֆերը փշրված էր, պատի մի հատված՝ փլ-
ված, բայց բոլոր դռները պինդ կողպած էին, մոմադրոշմով հա-
վելյալ կնքված: Քանդված տեղերից թեթեւ ծուխ էր մլլում, վառ-
վող ցորենի, երբ աղանձ են անում, ահա այդ ծանոթ հոտն էր տա-
րածվում. արկը ներսում էր պայթել, հսկա ցորնաշեղջն իր ներ-
սում դանդաղ մոխրանում էր: Հակառակ ծայրին էլեկտրաշարժ
բարձիչ կար՝ պարապ կանգնած: Հոսանք վաղուց չկար: Պարկե-
րը լցնում էին թիերով, դուլլերով, ձեռքով:

Էդ՝ դուք, ես՝ ցորենը,- պահեստապետը, որ ծղոտե լայնեզր գլ-
խարկով էր եւ հագել էր անթեւ վերնաշապիկ՝ փեշերը գոտու
վրայից արձակ թողած, Աշոտի քառածալ թուղթը դրել էր կրծ-
քագրպանը՝ «Պրիմա» ծխախոտի եւ լուցկու արանքում եւ ինչ-որ
տեղ սպասում էր՝ մինչեւ մեքենան բարձվի, որ մեզ հետ՝ ետ գյուղ
բարձրանա:

Պահեստում կայուն տոթ էր, դուրսը՝ տժտժան արեւ: Մի գլուխ
թաքցնելու ստվեր իսկ չկար: Աջից բարձր կանգնած էր բարդինե-
րի անվերջ թվացող շարքը, բայց անհնար էր հավատալ, որ հա-
մատարած սպիտակա-դեղնախառը տափաստանի ինչ-որ հատ-
ված դեռեւս ջուր ու կանաչ ունի, մարդիկ գետն են մտնում կամ
բակում՝ ծորակի տակ փնջալով լվացվում՝ մինչեւ կանայք ծառի
ստվերում սեղանին հաց դնեն, սառնարանից բերվի արաղի քրտ-
նած շիշը.- վետվետուն՝ ինչպես բարկ թոնրից, շոգը խառնում էր
տեսարանը, ավելի հեռուն՝ բարդիների նկարեն կանաչից վեր՝
երկինքը մթամած էր, ասես՝ աշնան մառախուղ էր պատել, բայց
դա թշնամի հորիզոն էր այլեւս, եւ միակ սպասելիքը՝ որ Բորսուն-
լուից տանկը կրկին կխփի կամ «Գրադը»՝ Միրբաշիրից, կամ ինք-
նաթիռն ռումբ կնետի, ավելի ստույգ էր, քան պատրանքը, որ
հյուսվում էր չայլուեցի Ռաֆիկ Անտոնյանի այգում հյուրընկալ-
ված լինելու հուշերից եւ վայրկենապես ցնդում՝ օդի բարկ տա-

տանումների հետ:

Երբ մեքենան պռնկեպռունկ բարձած էր, միայն իրեն հայտնի թաքստոցից եկավ պահեստապետը: Նայեց՝ գլուխն օրորեց, շուրթերն ուռցրեց.

Էս ի՞նչ եք արել, թալա՞ն եք եկել:

Ասացի.

Հինգ տոննայի փող ենք մուծել, եղբան կա՞:

Խռչաց.

Հինգ չէ, վեց-յոթն եք բարձել, պիտի կշռվի:

Ո՞ւսց:

Ծիծաղեց.

Սարեցի եք, տեխնիկայից գաղափար չունեք, մեքենան քշում ենք գյուղ, էստեղ ավտոկշեռք կա՝ բարձրացնում ենք, կշռում, ու՝ հաշիվը դառնում է պարզ՝ դուք եք պարտք մնում, թե մենք:

Բա մեքենայի քա՞շը:

«ԿամԱԶ» ունենք, դրա հաշվով դուրս կգանք, նրա էլ թափքը երկաթից է:

Ահավոր տապին վիճելու գլուխ չկար: Ծարժվեցինք: Պահեստապետն ինձ հետ խցիկում էր: Մերոնք բարձրացան թափք, մեկնվեցին ցորենի պարկերի վրա: Ուժասպառ էին: Ծեգից բան չէինք կերել՝ չհաշված մի երկու բուռ արդեն որդևտ կեռասը, որ տղերքը պռճոկել էին ճամփամերձ ծառերից:

Գյուղ մտնելիս «Ուազ» անցավ մեզնից, աջ քաշեց: Արարատն էր: Դիրքերից էր գալիս կամ ով գիտեր՝ որտեղից: Էլեկտրաաղացի մոտ էինք, աշխատում էր: Դիզել- շարժիչ էին դրել, որ Մարտակերտին ալյուր հասցնեն՝ օրը երկու-երեք տոննա: Աղացի հզորությունն այդ էր: Աղացյան Ժորան լուսնահարի գայթուն քայլվածք ուներ, վզին՝ մի մատ փոշի, դեմքը՝ նիհար, մորուսած: Արարատը գոռում էր, Ժորան կամ չէր լսում, կամ այնքան զգված էր, որ ամեն ինչի, նույնիսկ այդպես հոգնած՝ տեղում ընկնելու-մեռնելու հետ էր հաշտված, ոչինչ չէր խոսում, անթարթ նայում էր ցորենի շեղջին, որ ձագարածեւ տաշտից լեցուն առվակով հոսում էր ցած՝ թեփախառը, չմաքրած եւ սեւագորշ ալյուրի շիթով լցվում պարկը:

Լուռ հայացքով Արարատին կողմ կանչեցի: Դժկամ-դժկամ մո-

տեցավ: Պատի տակ թեթեւ ստվեր էր:

-Էն ցորենն ափսոս է:

Ի՞նչ անեմ:- Սպայական լայն գոտու տակ բաց «Մակարով» ատրճանակ ուներ, մեքենայում՝ ծալովի «ԱԿՄ», ռացիա, ոտքերին՝ «Ադիդաս» մարզակոշիկներ: Ես հասարակ «աֆղանկա» էի հագել: Իմ մեքենան բեռնաբարձ «Ուրալ» էր, իրենը՝ նախագահաջոկատահրամանատարական «Ուազ», մարզակոշիկի թեթեւակի հարվածով Արարատը մանրաքար շարտեց, կպավ «Ուրալի» փքուն անվադողին: Չոր հարված էր:

Ասացի.

Կանգնած հարյուր տեխնիկա ունես, կազմակերպիր՝ Էն բերքը մի տեղ հասցրու:

Համապատասխան կարգադրություն արվի՝ անեմ, ես իմ գլխու չեմ:

Ո՞վ պիտի ասի՝ անես:

Ասաց.

Վագիֆը, Գալստյան Վագիֆին գիտե՞ս, բոլորս նրա ենթականերն ենք, իրեն ենք հաշիվ տալիս: Ձեր բեռն ինչքա՞ն է:

Պիտի կշռենք:

Էդ մեկը՝ չէ: Պարկերը հաշվե՞լ եք:

Հա, 115 հատ բարձել ենք:

Մտածեց, թե.

Իմ հաշվին՝ տասնհինգը նվեր, մնացած հարյուրն էլ որ հիսուն կիլոյից հաշվենք՝ կլինի Էնքան, ինչքանի որ մուծվել եք:- Եւ հարցական նայեց.

Եղա՞վ:

Չլինի՝ ի՞նչ եմ անելու, հո էսքան բեռը չե՞նք թափելու: Բայց Էն ցորենը մի կերպ արա՝ գյուղից հանիր, պետք է գալու:

Արդեն մեքենա էր նստում, խարդախ ժպտաց.

Որ Ստեփանակերտ եկա՝ կխոսենք, հիմա Էստեղ մարդու բան չասես, առանց էդ էլ ոտքները դրսի վրա են քսում:- Բշեց- գնաց: Պահեստապետը վիզը ծուռ կանգնած էր:

Հինգ օր անց Չայլուի դիրքերում զոհվեց Վլադիմիր Բալայանը: Հետո Գյուլիստանի խուճապը սրբեց- դատարկեց Թալիշը, եւ ինամի Մեժունց Չավենը մի տակ շորով հասավ Ստեփանա-

կերտ: Երկու բիդոն արաղ էր տվել՝ բերեմ-ծախեմ: Իր հաշվով՝ 1000 ռուբլի փող էր հանելու արաղը: Վերցրեց, կնոջ հետ Երեւան պիտի գնային: Յարցրի.

Արարատն ի՞նչ եղավ:

Չեմ տեսել, ասում են՝ սպանվել է: Կեսօրից ետ մեքենա գտնվեց: Թափքում տեղավորվեցին՝ ուրիշների բեռների վրա:

Աշնանն «Էրեբունի» օդանավակայանում Արոոյա Խալափյանին տեսա: Թռչում էր Բաջալ սար: Շահեն Մեղոյանի ջոկատի հետ: Արարատից հարցրի: Մեղրագույն աչքերը մշուշվեցին: Ասաց.

- Էստեղ՝ Յրագդան է, Էլցանցի պետ են նշանակել:

«Փշրելով հայկական էքսպեդիցիոն կորպուսի վերջին գործախմբերի անկանոն դիմադրությունը, մեր հաղթական բանակի Աղդամի եւ Թարթառի գնդերն այսօր ազատագրել են Սրխավենդ եւ Կիչան գյուղերը, մարտեր են մղվում Առաջածոր, Վանքլու գյուղերի համար, ճանապարհը դեպի հանքենդի բաց է: Ադրբեջանի պաշտպանության նախարարության տեղեկատվական-վերլուծական կենտրոն. 19 նոյեմբերի, 1992 թվական»:- Յաղոթագրության այս նյութին Բաքվի ռադիոյի խոսնակ Շամիստան Ալիզամանլին հավելել էր, որ այն ստացվել է բաց տեքստով՝ Չլդրանից եւ դրա ճշմարտացիությունն անձամբ հավաստել է Ադրբեջանի ազգային հերոս, գնդապետ Սուրեթ Յուսեյնովը: Երկու թուրքից մեկը հաստատ *«խանանդա»* է ծնվել, եւ Շամիստան Ալիզամանլին երգում էր, ճիշտ է՝ կիթառի նվագակցությամբ եւ այդ օրը լավ առիթ էր, նա *«Իգիթ ասկյար մոհքյամ դայան»* կրկներգը մի առանձին ջերմությամբ էր մատուցում:

Իրականը, սակայն, այն էր, որ կեսօրից անց կրակոցն ուժեղացավ. արկերն արդեն պայթում էին գյուղամերձ հանդերում:

-Չլդրանից են խփում շան տղերքը,- անցավ մտքից եւ համարյա նույն պահին էլ տարօրինակ սուլոց լսեց՝ չարագույժ, տեւական, պահեստների կողմից ծուխ բարձրացավ, ապա, վայրկյան անց, վրա հասավ դղրոյունը, եւ Ժորան չհասցրեց անգամ կռանալ. դուլը, որով սեւ դամբուլի ջեջ էր կրում, ասես ինքն իրեն ընկավ, թափվեց:

-Մի տես է, արդեն հաշվով են խփում,- թոնթորաց,- Մայիս, Էս

ի՞նչ բան է:

-Է, ախպեր, կռիվ է, բա ո՞նց, դու բանիդ կաց՝ արադը չվառես:- Աշխարհ էլ քանդվի՝ Մայիսն արադը չի թողնի: Կեսլիտրանոցը դեմը դրած՝ հետը կոխ է բռնել: Թե ուտելու բան էլ լիներ: Ախր, անկնիկ գյուղում սեղան չի սարքվի: Երկու թուշը դեղնած լուլիկ է գտել բոստանում, մի ցուրտը տարած տաքդեղ. «Սալաթ եմ անում:- Հացն էլ՝ քարթու կտորտանք, նստած՝ խմում է:

-Արա, բա մածու՞նը,- Մայիսը կարծես կարդում էր եղբոր թաքուն մտքերը,- չե՞ս լսել՝ մեծշենցի Խուրշուդյան Բագրատը մի տեղ դոնախ է ընկնում, էդ տան կնիկն ասում է՝ «արադ էլ կդնեի, բայց մածնի հետ արադը...», - Ժլատ մեկն է եղել, Խուրշուդյանն ասել է՝ «բեր, բեր, արադի իսկական մազան մածունն է», - հիմա դու ես՝ վախից էլ ջեջը թափեցիր, էն մի լիտր քահուրբար արադը կորավ:

-Սարսաղ-սարսաղ խոսում ես, քան թե գնաս՝ շտաբից բան իմանաս,- Ժորան իր կասկածների հետ էր:

-Շտաբս ո՞րն է, շտաբում ո՞վ կա՝ ինչ ասի:

-Ո՞նց թե:

-Հենց էնպես: Պարզ եմ ասում. որ ուղիղ շենամիջին խփում են, կնշանակի՝ թուրքը առաջ է անցել, որ առաջ է կացել,- Մայիսը մի բաժակ էլ խմեց, «հու» արեց,- ուրեմն իմ հաշվով մերոնք ճիլոտը թողել են:

-Ճիլո՞տը,- ձեռքը, որ կոթավորը տանում էր տակառին՝ մնաց օդում, Ժորան սառավ:

-Հա, բա ո՞նց, մեր ու Չլդրանի մեջ ամենաբարձր տեղը ճիլոտն է, թուրքն ուզում է «Գրադ» դնի էստեղ, մենք իսկի թուրքի համար հաշիվ չենք, մեզ պրծած է համարում, ուզում է էդ բարձր տեղից քաղաքին խփի, հասկացա՞ր:

-Բա մերո՞նք:

-Արա, ես չեմ ասում է՝ թուրքն էդքանն արել է կամ թե չէ՝ անելու է, ասում եմ՝ ուզում է, էդ է մտքինը, մերոնք էլ հո քնած չեն, մի բան կանեն, ետ կտան, արի, մածունդ սառավ,- եւ Մայիսը ծիծաղեց:

-Գիժ - գիժ դուրս ես տալիս, էն երեխեքը կրակի բերանում ինչ են անում, խաբա՞ր ես:

-Կռիվ է, կռվելու են, դրանք էլ որ ետ քաշվեն՝ մեկ էլ Լաչին ենք շունչ քաշելու,- Մայիսը հանկարծ լրջացավ: Նույն սուլոցը լավեց եւ էլի՝ դղրդոց, լռությունը պայթեց: Նորից, անընդմեջ, թվաց՝ մի ամբողջ հավերժություն,- Ես արդեն «Գրադ» էր, Կիչանից խփեց:

-Բա էն երեխե՞քը, հարսն էլ՝ Ստեփանակերտ,- Ժորան շշկվեց:

-Սպասիր, ոնց որ մարդ է գալիս,- մեկն, իրոք, մոտեցել էր բոստանի դռնակին, բայց երեւի կասկածում էր, Մայիսը ձեռքով արեց,- արի, արի մի բաժակ բան խմիր:- Մարդն առաջ եկավ, սի-հար, մորուսած մեկն էր, հագին՝ զինվորի «խեբե» համազգեստ:

-Բարի օր,- ասաց ու մնաց կանգնած:

-Նստիր,- Ժորան աթոռը մոտ քաշեց,- որտեղացի՞ ես:

-Կրակ ընկած Կարմիրավանից,- կնկա նման անիծեց,- անունս էլ՝ Գավրուշ, քաղաք էի գնալու, ձեր ես Խաչենի կամրջին բռնեցին: Բա ես կռվո՞ղ եմ, իմ հասակի մարդը բանակում ի՞նչ կանի,- խմեց, լուրիկի կտորը չուզեցնալու պես լվմացրեց անատամ բերանի անկյուններում,- ջահելներին բաց են թողել, եկել ինձ կռիվ են տանում: Թե գնացի՞ հա, էս է ծմակով, ճամփա էլ չգիտեմ, Կիչանից ես կողմ եկել եմ՝ որ մութն ընկնի՝ անց կենամ Զոլատակ, ասում են Էնտեղից Խնձրիստան կարճ ճամփա կա, գիտե՞ք:

-Որ ուզենաս, խի՞ ես Խնձրիստան մտնում, Զոլատակի սարով Լաչինի վրա դուրս կգաս, մոտ է,- քթի տակ փնթփնթաց Մայիսը: Մարդը երեւի չհասկացավ կատակը, աչքերը փայլեցին:

-Հա՞:

Մայիսը պայթեց:

-Չոռուցավ, Էդ որ քամակիդ ցախավել կապած ճղում ես, Ղա-րաբաղը թաղե՞լ ես, թե դոնախ չէիր՝ քեզ Լաչին էի ցույց տալու, արադդ սուսուփուս խմիր ու ձենդ էլ փորդ քաշիր՝ հագիվ չեմ գժվել:

Ժորան սաստելու փորձ արեց, իբր՝ մարդ է, թող խոսի, Մայիսը ձեռքը թափ տվեց:

-Դու գիտես, մեծ ախպեր ես, տունն էլ՝ քոնը, բայց դրա պես չախկալներն են Մարտակերտը տվել թուրքի ռեխը:

Իսկ կրակոցն ահագնանում էր: Հյուրը սփրթնած ոտքի կանգ-

նեց.

-Շեն կենաք, դե ես գնամ...

-Ո՞ր,- Ժորան փակեց ճանապարհը,- ես մետրանոց պատը թռած դուրս ես գալիս ի՞նչ անես: Մնա մեզ հետ՝ աստված մեծ է:

-Ախր շտաբն էլ քոչել է, ուտելիք - բան լցրին տրակտորը, գնացին, հիմա երեւի Սեյդիշենն անցնում են, ասում են՝ թուրքն էսօր Կիչանն առնելու է, պայման է՝ մինչեւ Խաչեն տվել են իրենց, գալիս են տիրություն անեն, ամերիկացի մի մարդ կա՝ եղ քարտեզը գծել է, Լաչինը մեզ են տալիս, Մարտակերտը՝ թուրքին...

-Քու եղ ամերիկացին դալաթ է արել,- Մայիսը բուշլատը տակը քաշեց, պառկեց,- ես քնում եմ, ախպեր:

Կրակոցն ուժեղանում էր: Այդ համատարած դրոգոցի ընդմիջումներում միայն երբեմն-երբեմն լսվում էր կենտ պայթյուն, մեր հրետանին էր պատասխանում թուրքի հեղեղին, իսկ գյուղում ասես շունչ - կենդանություն չկար:

Ժորան նովի տակից վերցրեց լիքը դուլը, կրակը ետ քաշեց, արաղը տարավ ներքնատուն, շորով բերանը ծածկեց: Դուրս եկավ, դուռը կողպեց: Մայիսը քնած էր: «Իսկական Մսրա Մելիք...»,- որտեղից հիշեց՝ Մելիք, գարնանը Սոխավենոյ ականը պայթեց, Մելիքը... Բորիկը ջարդել էր ոտուձեռքը, լավացավ, հիմա Ղարալար դիրքերում է, Յուրիկն էլ էստեղ է, Մայիսի Դավիթը, հարեանի Յուլակը, Էդիկը, Վալոդիկը, Սամվելիկը,- մտքում փորձեց հիշել դիրքերի բուրդին՝ հաշիվը խառնեց՝ ողջերի եւ սպանվածների, ապա երբ սթափվեց, տեսավ՝ բակում մենակ է, ու՞ր մնաց կարմիրավանցին, էէէ, հա, Մայիսից երեւի վախեցել՝ գնացել է՝ տերն իր հետ: Եկավ, բոթեց եղբորը.

-Մայիս, Մայիս...

-Յը՞,- Մայիսը միանգամից արթնացավ,- բա՞ն է եղել:

-Չէ, չգիտեմ, ասում եմ՝ բա մենակ ի՞նչ ենք անելու:

-Մենակ չենք, գյուղում ահագին մարդ կա, տապա արած են, որ մթնի ու տրաքոցը կտրի՝ կտենես՝ քանի ճրագ են վառելու:

-Յա, բայց ինչ օգուտ, թուրքերը որ մտան Կիչան՝ խոխեքը մնալու են աշխարհից կտրված, մենք էլ՝ էստեղ:

-Մտնի էլ՝ դուրս են անելու,- Մայիսին եղբոր փաստարկները թվացին անողոր-համոզիչ, Կիչանից էստեղ ի՞նչ ճանապարհ կա,

բայց նույն պահին էլ իրենից հեռու վանեց կասկածը, սա վերջին սահմանն է, թուրքի թափը կոտորած է, սեպտեմբերից էս կողմ մի մետր առաջ չի եկել, ծմակներում կոտորվում են՝ հարյուրներով, ասաց.

-Էսօր թուրքի հերն անիծվելու է:

Ժորան հավատա՞ց: Դժվար թե, բայց սկսեց ճրագի պատրաստություն տեսնել եւ արաղի սարքուսուրքն էլ չքանդեց: Իսկ աշնան կարճ օրը մթնելու վրա էր, եւ կարմիրավանցին դեռ չկար: Մայիսը կաթսայի տակ մարմրող կրակն իրար բերեց, թեժացրեց: Մայիսը ճրագի լույսով չորս-հինգ անգամ լցրեց, դատարկեց արաղի կաթսան: Եւ էլի խմեցին ու լաց եղան իրենց զոհված հոր համար, գարնանը սպանված Մելիքի, մյուս տղաների եւ ժորայի կնոջ եւ Բենիկ հիվանդ տղայի համար, որ Զովհաննես անունով զավակ ունի Երեւան քաղաքում, բայց հարսն էլ չի գալիս, գյուղից խռով է, երանի տվին մեռածներին, որ էս օրերը չեն տեսնում, գեղեցիկ-կարգով թաղված են: Եւ ցուրտ աստղալույս էր մաղվում գյուղի, վառվող անտառների վրա, եւ չկար ժամուժամանակ՝ որ դարպասը հանկարծ ծանոթ ճռռաց. Բորիկն էր: Դիրքերից մի երկու ժամով բաց էին թողել՝ արաղ տանի, ցուրտ է: Ասաց՝ «կեսօրից ետ թուրքը մտել է Կիչան, տղերքից՝ Մարտակերտի եղած ջրկատների, ահագին զոհ կա, մնացել ենք Ղարալար՝ երեք կողմից շրջապատված, մեկ էլ Ղազանչի ժիրոն է: Գետն անցել՝ Սեյդիշենի թթաբաղերով եմ եկել եւ դեռ եղքան էլ գնալու եմ, քանի որ լուսաբացի հետ մերոնք հարձակվելու են, քաղաքից ահագին արկուփամփուշտ են հասցրել, Նորիկն էլ հոսպիտալից վիրավոր եկել՝ ինքն է ղեկավարելու, որ թուրքին Կիչանից ետ տանք:»- Եւ խոսքի արանքներում էլ երեքլիտրանոցը լցրին, Մայիսը Բորիկի հետ էլի խմեց, պաչուպոռոշտիով ճամփու դրին՝ գնաց:

Եւ գիշերը ծանր էր լուսանում:

Աստղերը դեռ աղոտ ցուցվում էին՝ «Գրադը» Սեյդիշենի կողմից կրակեց: Արկերը հրեղեն սլացքով գնում էին թափվելու թշնամու դիրքերում: Եւ Մայիսը նայեց Կիչանի ուղղությամբ, ուր իր հաշվով թուրքն արդեն գլխապատամ փախչելիս պիտի լիներ, կանգնեց երկար՝ հրճվանքից խումհար բերանը կիսաբաց, հետո ձեռքը տղայավարի, թափով տարավ շեքամեջին եւ ամայի թաղով

մեկ , մրսած լուսաբացի միջով գոռաց.

-Առ քեզ՝ ճամփան մինչեւ Խանքենդի բաց է:

... Թուրքի հեղեղը, որ բախվել էր Չլդրան-Կիչան գծի աշխարհագրային պատկերին, թողել հարյուրավոր սպանված, հաջորդ օրերին մանրիկ առվակներով արդեն ետ էր հոսում՝ դեպի Ադրամ, Միրբաշիր, եւ Խաչենի գումարտակի վաշտի հրամանատար կարգված՝ Մելսիկ Ալավերդյանը գորանոցից հպարտ-հպարտ դուրս եկավ, ասաց.

-Շարժվում ենք:

Աշուն էր:

Ամառվանից Լահանջել- Լահանջել՝ հասել էին Մեծ կամրջին: Դեպի հարավ մայրաքաղաքն էր՝ մի քսանհինգ- երեսուն կիլոմետրի վրա եւ ամեն օր ռմբակոծվում էր:

Ապահովը գետահովտի փոսորակն էր, բայց դիրքերը շատ մոտ էին:

-Շարժվում ենք: Ստեփանակերտ բենզին կգտնվի՞:

Գնում ենք Երեւան:

Մեքենան անցյալ տարի դեռ տնտեսության տնօրենին էր: Բրեզենտե ծածկոցով «Ուազ»-ը կանգնած էր գորանոցի բակում:

Մնացողներին պատվիրեց.

Մի շաբաթից էստեղ եմ:

Դիրքերում հանգիստ էր:

Թուրքերը լուռ էին: Մեկ- մեկ խփում էին, բայց ընդհանրապես սսկված՝ սպասում, որ մյուսները Չլդրանից դարձյալ առաջ անցնեն՝ նրանց միանան՝ գան Մեծ կամրջի վրա: Իսկ Չլդրանը դեռ կար: Գյուղը, ճիշտ է, հանձնել էին, բայց դիրքը պահվում էր՝ Սելցեխի ծմակը: Մեկ էլ Կիչանը կար: Տալիս- առնում էին: Ու դեռ մնում էր:

Տաք, հանդարտ աշուն էր: «Ուազ»-ը կապույտ էր, բրեզենտը՝ մաշված:

Ամռանը երեխեքին տարել էին Երեւան: Աշուն էր՝ գնում էինք տնտեսության: Տանում էինք մի պարկ սպիտակ ալյուր, պոպոք, չոր լոբի: Միս չկար: Անասունը վաղուց մորթվել- կերվել էր, խոզը՝ իրեն տվել ծմակին: Հավուճիվը հաշիվ չէր. ով բռնում՝ գլուխը կտրում-ուտում էր: Անտեր թռչուն է, պատահել է, բաց թողնելը

մեղք կլինեք. միս չէինք տանում:

Բենզին գտնվեց:

Թույլտվությունը՝ որ Խաչենի գումարտակի վաշտի հրամանատարը 5-օրյա ժամկետով կարող է մեկնել հանրապետության սահմաններից դուրս՝ Երեւան քաղաք՝ գրված, կնքված էր, ԻՈՒ շտաբի պետի ստորագրությամբ վավերացված:

Առաջին պահակակետում թղթերը նայեցին, թե.

Շտաբից զանգել են, որ ես մեքենան քաղաք պիտի ուղարկվի:

Շտաբում էլ ասացին, իբր գյուղից զանգել՝ զինվորական հատուկ կապը զբաղեցրել եւ տեղեկացրել են, որ հրամանատարը Երեւանից ետ գալու միտք չունի, հետն էլ՝ տանում է մեքենան ծախի: Ո՞վ էր զանգել: Գյուղից էր ո՞նց կապվեցին ուղիղ շտաբի հետ: Ասացին.

Քնացեք, հարցերը կարգավորեցեք, հետո էլի կգնաք, Երեւանը չի փախչի:

Ետ եկանք: Նույն զորանոցն էր: Տղերքը մի տեսակ դժգունած էին: Խռովության պես էր ստացվում՝ եթե հրամանատարը թողնում՝ Երեւան է գնում, իրենք էդ ի՞նչ իրավունքով են պահվում դիրքերի առաջին գծում: Իրենք կին- երեխա չունե՞ն:

Մեքենան հենց բարձած էլ շրջեց: Ավտոմատը վերցրեց: Ռացիան հարմարեցրեց կապի հարկավոր գծին: Յարյուր մետրի վրա «Ուազ»-ը ղնջղնջաց, հանգավ: Շարժիչը լռվել էր: Բանալիները շարտեց՝ ում որ պետք էր եղել, որ շարժիչը լռվի՝ նրան, ավտոմատը ուսը զցեց, ռացիան դրեց բուշլատի կրծքագրպանը եւ ոտքով իջավ դիրքերը: Ինձ ասաց.

Գիտեի, որ եսպես մի բան լինելու է, ներող կլինես, որ քաղաքում չասացի: Մեքենա կպատահի՝ կգնաս: Դու եստեղ գործ չունես:

Սարերում նոսր մառախուղ կար: Գետահովտի քամին դեռ չէր ծակում. տաք էր: Չորանոցում ճրագ էին վառել: Նստած ծխում էին: Ոչ ոք չէր խոսում: Ասես բան էլ չէր եղել, բայց լռությունը երկարում էր: Ուրեմն ամաչում էին: Գուցե՝ հրամանատարի բացակա ներկայությունից, գուցե՝ հենց իրարից, որ վաղը չպիտի կարողանան միմյանց աչքի նայել եւ խոստովանել, թե առաջինը ու՞մ մտքով անցավ, որ կարելի է զանգել կենտրոնական շտաբ:

Անխոս սպասում էին՝ ինչ է լինելու, որովհետև գիշերը հո անվերջ չէր, լույսի հետ դեմ դիմաց կանգնելու էին: Կամ՝ գուցե հենց գիշերով են տազնապ հայտարարում:

Աշոտը մի թեթեւ հրեց.

Դուրս գանք:

Չորանոցի բակում աշնան ծղրիդը ճռռում էր: Գետի ձայնը խուլ էր, բարակ: Պատի տակ սալ քար կար: Նստեցինք:

Յարցրեց.

Որ մեքենա պատահի՝ գնալու՞ ես:

Ասացի՝ հա, մնամ՝ ի՞նչ եմ անելու:

Ասաց.

-Դժվար է, շատ է դժվար:

Ի՞նչը:

Էս տեսակ կյանքը:

Ասաց.

Էն օրը մի թուրք եմ խփել: Ծառի հետեւը պահված էր, մի ծառ էլ ինձ էր թաքցնում: Ու գիտեի՝ ինքը հասկանում է, որ մոտերքում մի տեղ կամ: Չգուցե է, բայց չի տեսնում: Սպասում է, որ ինձ աչքառ հանեմ՝ կրակի: Բայց ինքը չդիմացավ: Խփեցի:

Դե, բա կռիվ է: Դու չխփեիր՝ ինքն էր խփելու:

Յա, հեշտ ասում ես: Գիտե՞ս՝ երեք օր է՝ չեմ քնում: Աչքս փակում՝ թուրքին եմ տեսնում: Ձենն ականջիս մեջ է՝ որ դուրս եկավ ու կրակեց, իր ահից գոռաց՝ «Վայ, դադամ», - կրակեցի՝ ընկավ: Սպասեցի՝ գուցե վիրավորվե՞ց: Չէ, ուղիղ կրծքին էի խփել: Անշարժ պառկած էր: Ու հիմա էլ երեւի կա՝ եղպես անտեր, անթաղ: Դժվար է: Յորս էլ չթողին, հա՞ Երեւան գնա:

Չթողին՝ ոչինչ: Մեծ կորուստ չի, բայց որ ասել են՝ «տանում է մեքենան ծախի», - եղ լավ չի: Խռովություն են անում: Որ ի՞նչ:

Չգիտեմ: Յերս կռվել ու կռվում է, բայց իրեն չեն սիրում:

Դառը «Պրիմա» էր: Թութունից էլ վատ. տուփը մեջտեղ դրած ծխում էինք: Ես ու Աշոտը:

Ես երեսուներեք տարեկան էի, Աշոտը՝ տասնինը: Բայց նա ինձնից տարիքով էր:

1992 թվականի աշունն էր:

Ճակատը պահում էր աշխարհագրը:

Չորք ու զինվորական կարգապահություն չկար: Ընկերություն էր լինելու՝ ամեն ինչի պակասը, կասկածը, ասեկոսեներն ավերում էին նաեւ մարդկային պարզ կապերը: Եւ մի ուժեղ ձեռք էր հարկավոր, որպեսզի բոլորի եւ ամեն ինչի վրա իշխեր հասկանալի արդարությունը: մահը հավասար է, փրկությունը՝ ոչ: Ամեն ոք փրկվում էր յուրովի: Յուրաքանչյուրը գտնում էր փրկության իր տարբերակը: Եւ ավելի հաճախ դա նույն մահն էր: Ի՞նչ տարբերություն՝ այսօր, վա՞ղը, մյուս օ՞րը: մահը ուրվականի նման թեւածում էր գետահովտի երկինքներում, եւ փրկությունը սոսկ ապրած պահն էր՝ մինչեւ հաջորդ դեմառոյց հանդիպում, որ լինելու էր լուսաբացի հետ կամ՝ հաջորդ իրիկնամուտին, որովհետեւ դիրքերը մոտ էին, կռվողը՝ քիչ, իսկ հեռացածները երբեք զենքի չէին գալու:

Բակում փոքրիկ ջրավազան՝ նախագծողը հանգստի համար նաեւ ծաղկանոց էր մտածել: ջրավազան, ծաղիկներ, կողքին՝ փոքրիկ սեղան ու՝ ծածկ, նստես ու ամառվա շոգին գարեջուր խմես, մտնես՝ ավազանում շուռումուռ գաս, պառկես արեւին ու էլի խմես՝ մինչեւ հովն ընկնի, գետից քամի փչի,- վերցրել՝ գորանոց էին ասել՝ «011»-ի, որ ազդականչ էր: Մուտք էր: Ջրավազանի ուրվապատկերն ընդամենը գիտակցվում էր: Անծանոթը չէր զգա: Խուլ, դավադիր լռություն էր: Կրակոց չկար: Ոչ էլ՝ մեքենայի աղմուկ: Ո՞վ էր գալու: Բոլորը վաղուց գնացել էին՝ կին, երեխա, ծեր ու հաշմանդամ՝ Ստեփանակերտ էին, Երեւան: Գուցե՝ արդեն Ռուսաստան: Մնացողը հիսուն- վաթսուն հոգանոց խումբն էր, որ սեպտեմբերին անվանվել էր «Խաչենի գումարտակի առաջին վաշտ», բայց իրեն գորքի մաս եւ զինվոր չէր ընկալում:

Եթե ուրիշ տեղ լիներ՝ անծանոթ գյուղի դիրք, քաշվելու առիթ կլիներ, բայց համարյա թե տան- դռան էին: Ու՞ր պիտի գնային: Օտարություն: Իսկ այդ օտարությունը ինչո՞վ էր լավ թշնամի գետահովտից: Վարձկան օդաչուն քաղաքի վրա պտտվել եւ ռումբը հատուկ նետել էր հանրակացարանի վրա: զոհվողը փախստական ժողովուրդն էր: Աղդամից հեռահար հրետանին խփել՝ ավերել էր կինոթատրոնի շենքը՝ էլի մարտակերտոցիք էին զոհվել: Չոհվում էին նաեւ դիրքերում: Եւ դա ուրիշ մահ էր, քան՝ որ քաղաքի մի նկուղում լիներ: Մահն էլ պիտի իմաստ ունենար, չէ՞,

եթե ապրել չէր լինում:

Այդպես համակերպված՝ զորանոցը խճուղու վրա հուշում էր, որ թիկունքում դեռ տունուտեղ եւ գյուղ կա: Տղերքին առաջ է տվել՝ թուրքի դեմը փակեն, գյուղը հաց է թխում, արաղ է քաշում, ճաշ է եփում՝ հասցնի կովոդին: Չոհվածի համար լաց ունի, հոգեհացի սեղան է դնում, լուռ բաժակ է խմում: Չկար: Գյուղը դատարկ- օտար էր: Նայում՝ չէիր տեսնում: Վերացական՝ անունը գյուղ էր, բայց ներսը շունչ չուներ եւ դրանից՝ չէր գիտակցվում: Մի տեսակ օտար գոյություն էր դարձել:

Մի լրիվ տուփ «Պրիմա» էր՝ սալ քարի վրա: Մեկումեջ վերցնում՝ ծխում էինք: Գիշեր էր: Լուսաբացի հետ ես գնալու էի: Խոսելիք չէր գտնվում: Հայրը դիրքերում էր, հորեղբայրը՝ զորանոցում: Մյուսը հոր հորաքրոջ տղան էր: Ձեռքը օպտիկական նշանացույցով «ԵՍՎԷԴԷ» հրացան էր տվել՝ հայրը, շարքի առաջ նշանակել իրեն տեղակալ եւ՝ հատուկ նշանառու, նրա եղբոր ուսին դրել «Իգլա», որ հսկի գետահովտի նեղլիկ երկինքները՝ թշնամու ինքնաթիռ չանցնի, բայց հակաօդային պաշտպանությունը Ցեխ ձորից ապահովում էր գենիթահրետանահրթիռային գնդի «Օսա» կայանքը եւ թշնամու մի երկու կործանիչ կամ մբարկու արդեն խփել էր:

Տաս՝ սատկացնես,- անհասցե չարացավ:

-Քեզ հավաքիր, արդեն երեխա չես, ոչ էլ ինքը՝ թուրք:

Ասաց.

Թուրքից վատ են, որ խառնակում են:-

Դժվար էր լուսանում: Արեւելքը թշնամի էր: Դիրքերն այդ ուղղության էին, եւ Քարագլխի բարձունքը՝ մի ոտով գետին հենված, ուրվագծվում էր տարրորեն տգեղ. ասես հեքիաթի վիշապն էր՝ պոչի վրա բարձրացել՝ ահա- ահա յոթներախ գլուխը ժայթքելու էր հալած արճիճ, եւ գետահովտը ծածկվելու էր հրեղեն լավայի հաստ շերտի տակ՝ ինչպես մեկ անգամ եղել էր աստծո արարչագործությունից միլիոն կամ միլիարդ տարի առաջ:

Բայց լռություն էր: Եւ ոչինչ չէր լինում՝ ինչպես՝ երբ դեռ չկա տազնապը, բայց մաշկով զգում ես՝ ինչը ասվում է վախ:

...Հոգնած, ահաբեկ խումբը կանգ առավ. օրը մթնելու վրա էր: Անտառի այդ հատվածը՝ գետի աջ ափն ի վեր, պատահաբար

կամ թուրքի դիվական նպատակադրությամբ,- որպեսզի փրկության հույսին տրված՝ մարդիկ հատկապես այդ երթուղին ընտրեին՝ ծնկասող անցնելու մի քանի հարյուր մետր ճանապարհը եւ իրենց ավելի նվաստացած ու անպաշտպան զգային՝ չէր հրետակոծվում: Ծառերն անվնաս՝ բարձրուղեշ կեցած էին, հաճախները՝ լրիվ մերկացած, ճերմակին տվող բներով, եւ հատուկենտ կաղնիները՝ մռայլ, անհրապույր- մթնդած: Ծառի այդ տեսակն իր սաղարթագուրկ տեսքով միշտ հեռավոր տազնապ է արթնացնում՝ կայծակի հուշ, ջրդեղվող երկաթի թշնոց, երբ գարնան ամպրոպի սեւ երկնքում կախվում է դառը խարկահամ, եւ թռչունները տազնապով լքում են կաղնուտը:

Խաչենի կամրջից վեր՝ Կիչանի գերեզմանոցի անտառակում հանդիպակա մարտի արձագանքն ու բացատի թշնամի լռությունը խորամանկ դավի կասկած էին ծնելու՝ որ մոտերքում թուրքը դարանակալ սպասում է: Մի արկով, ռումբով, կրակահերթով սպանելու, տասը մարդու՝ ուժահատ ծերունի, ջահել հարս, պառավ կին ու տղա-խոխա՝ այդքանի վերջը տալու հաճույքն իրեն չնչին հագեցում է տեսել ու հիմա հեռվից հետեւելով՝ որսի դուրս եկած գազան՝ եկել, շուրջկալում է:

Թփի տակից կածանը ծունկ արած՝ դուրս է գալիս մայրուղի. ոչ այս կողմի վրա, ոչ դեպի քաղաք՝ մեքենա չի հռնդում, շարժում չկա, ոլորանների բարձունքից ցոլարձակների լույսը չի սանրում հաճարկուտի գանգուրները, ուրեմն՝ տղերքն էստեղ շրջապատման մեջ են, վերջին փամփուշտներն են կրակում՝ գերի չընկնեն կամ թվում է՝ դեռ կարելի է եղպես կրակելով դուրս քաշվել, գետն անցնել եւ հասնել Զարագլխի մերոնց դիրքերը, չգիտեին՝ ինչ է կատարվում այնտեղ, որ կործանման եւ հույսի հեղհեղուկ սահմանն էր:

Ուսապարկում խոզի միս կար, մի լրիվ երաթաթ, կեսօրին Աշոտը բերեց. «Հանգիստ կխորովեք, կուտեք, գողացած չի, մեր խոզն եմ մորթել, տանում եմ դիրքեր, մնա՝ ուրիշն է ուտելու», - ասաց ու աչքի տակից խորամանկ նայեց արաղի սարքուսուրքին: Հասկացան՝ փոխանակության պես մի բան է առաջարկում, հետը երեքլիտրանոց ուներ, ամենաթունդ տեղից լցրին՝ խնդմնալով գնաց: Գյուղի վրա արդեն կրակում էին. Մայիսն անտար-

մին փշաքաղ էր անում, երբ երկինքն անսպասելի դողդաց, միայն մի ակնթարթ փայլատակեց գերծայնային ռմբարկու ինքնաթիռի պաղ արծաթավուն իրանը, բայց դա արդեն հեռու երկնքում էր՝ Ադդամի ուղղության, իսկ բացատի վերելում ճերմակ ամպիկներ ծլեցին, ու առաջին հուժկու աղմուկը հազիվ մարելու էր՝ օդը չարագուշակ վնգաց, սուլեց, աստղագարդովող կապույտը դժոխային արագությամբ փուլ եկավ անտառի վրա, եւ խումբը ցփնվեց հողին, իրեն նետեց պատահական գուրբի մեջ, ձեռքը զցեց փտած կոճղերին, գալարվեց-կուչ եկավ ծառաբների հետեւում,- բայց երբ երկինքն է փլվում գլխիդ, թիկունք ասվածն իմաստագրկվում է,- խումբը ոռնաց եւ հեծկտաց, լռեց եւ բղավեց, հաշտվեց անգետ- անօգնական բզկտված լինելու հեռանկարի հետ եւ ձուլվեց անտառի սառնությանը, իսկ մարդահնար ամպրոպները պայթում, բազմապատկվում էին եւ որպես արճճե կարկուտ՝ թափվում, ծեծում ծառերը:

Յետո խուլ լռություն էր, եւ սպասում՝ «Մի՞թե վերջացավ»: Գերծայնային ռմբարկու ինքնաթիռը գնաց՝ գտնելու իր հանգրվան թռիչքադաշտը: Օդաչուն երեւի արդեն ռադիոկապով հայտնած կլիներ, որ մարտական առաջադրանքը կատարված է գերազանց: Լեռնային բարդ ռելիեֆը եւ վատ տեսանելիությունը, ինչպես նաեւ՝ հյուսիս-արեւմտյան պոռթկուն քամին արգելք չէին եղել, որ նշանակետը ճշտվի եւ գրոհվի,- նրան դիմավորելու էին զուսպ կասկածանքով, որովհետեւ վարձկան է եւ չի բացառված՝ ստում է, բայց, այնուամենայնիվ, ժամը քսաներեքի ռազմաճակատային ամփոփագրով ռուսերեն եւ թուրքերեն հաղորդվելու էր, որ «Ադրբեջանի բանակի Թարթառի եւ Ադդամի խմբավորումներն այսօր՝ 1992 թվականի նոյեմբերի 18-ին, ճնշելով Յայկական էքսպեդիցիոն կորպուսի ստորաբաժանումների համառ դիմադրությունը, ազատագրել են Օրթափայա, Բաշ-Գյունեփայա, Սրխավենդ, Ղազանչի եւ Կիչան գյուղերը եւ, միանալով հաչին-չաչի կամրջի շրջակայքում, հաղթականորեն առաջ են շարժվում: Մեր զորքերի ճանապարհը դեպի հանքենդի բաց է, բայց ռազմերթը դժվարացնում է անտառային ճանապարհների անանցանելիությունը»: Նույն պահին, բայց այլ հաճախականությամբ եթեր մտած հայերեն մի լուրջ ձայն, ընդհակառակը, վստահեցնե-

լու էր, որ՝ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ինքնապաշտպանության ուժերը օրվա ընթացքում դիրքային մարտեր էին մղում ռազմաճակատի Վաղուհաս- Չլդրան - Ղազանչի գծի ողջ երկարությամբ՝ հակառակորդին պատճառելով կենդանի ուժի եւ տեխնիկայի զգալի կորուստներ»:-

Փրկվածների համար շարունակությունն իմաստ չէր ունենալու, որովհետեւ մեկ է՝ իրենց մասին ոչ ոք չէր իմանալու, եւ հպարտությունը՝ որ տասը հոգով իրենք զոհ եւ վիրավոր չունեն՝ մնալու էր լուռ: Նրանք ապշահար նայում էին ՝ ով ինչպե՞ս, որտեղի՞ց է ելնում՝ մինչեւ ամենավերջին կինը չծկլթաց՝ «Վիրավորվեցե՛լ եմ», - բայց ընկնելիս խեղճին ալոճենու մի փշփշոտ թուփ էր բաժին հասել՝ ձեռքը քերծված էր, եւ արյուն էլ կար: Արաղով դաղեցին վերքը եւ կարողացան դեռ ծիծաղել, հիշեցին նրա հանգուցյալ մոր խոսքը, - երբ հարեւան-հարեւան վեճի օրն ուրագով խփել՝ ամուսինը մեկի գլուխը ճղել էր, լուսահոգին ընկերական դատարանին ասել էր՝ «Մի քիչ փոթ արյուն է հանել էլի, ի՞նչ եք ձեռնը աշխարհք գցել», - եւ շղայնացան. «Ախչի, սուս մնա, մեծ կնիկ ես, ամոթ է, մի թեթեւ չանգռվել է», - եւ նա ուրախ էր, որ այդպես է, բայց չէր ուզում՝ իր տագնապն անտեղի համարվի, մտածեց ու գտավ, թե՛ մեռնելուց չի վախենում, ուզեց իմաց անի՝ էս քոլի տակ է, չմտածեն իր մասին: Խմբին նա միացել էր պատահաբար, տան մոտով անցնելիս մեկը հիշել էր, որ նրան երեկ, թե էսօր տեսել է, վիճել էին, աղմուկի վրա դուրս էր եկել, ձեռքերը գոգնոցի տակ պահած՝ հարցրել էր. «Էս ի՞նչ զուլում տրաքոց է», - եւ իրեն օտար էր զգացել՝ բեռան պես, ասել էին՝ «Բա ամո՞թ չի, էդ ինչե՞ր ես ասում, քու ոտով գալու ես էլի, հո շալակներիս չե՞ս նստում» , - սակայն չէին մոռացել հիշեցնել. «Ախպերդ բա որ ավտոն տունուտեղ լցրած գնաց՝ քեզ խի՞ չվերցրեց, տղադ քաղաքում ի՞նչ բանի է, էն մեկը դեռ Ռուսաստա՞ն է, աղջի՞կդ, փեսա՞դ»:-

Թուրքն արդեն գրավել էր Չլդրանը, եւ մեծ խուճապ էր՝ մեքենա, տրակտոր, կցասայլ՝ ով ինչ գտներ՝ տան եղած-չեղածը լցնում՝ հասցնում էր Ստեփանակերտ, Շուշի, Երեւան՝ մրցելու նման, ասես՝ պատերազմը հենց այն է, որ գյուղերը թողնեն: Կիներեխան դեռ ամառնավերջին էին ուղարկել, իսկ տղամարդիկ

գնում-գալիս էին՝ խումբ-խումբ, խնամի, բարեկամ, հարեան՝ մինչեւ ամենավերջին լոբին պճղվի, դամբուլը՝ դառնա արաղ, ընկույզը հատիկ-հատիկ հավաքվի՝ ձմեռվա ապրուստ է կամ՝ ծախելիք, Երեւան ընկույզի միջուկին միշտ լավ գին են տալիս, անասունը մորթվեց, ջրի գնով Ստեփանակերտ ծախվեց: Մարդ չամաչի՝ ծանրած կովի բկին դանակ դնի, մի թաքուն տեղ հորթը փորից հանի, միսն արևոտ ջվալով հասցնի ծանոթի դուռը, ստեփանակերտցիք էլ վրա տան՝ «Չես ամաչու՞մ, մեր խոխեքը քու էն ավերակ Մարտակերտ է, մարդակեր է՝ ինչ զահրումար է՝ էստեղ արյուն թափեն, դու հողդ թողնես, գաս ու էստեղ միս ծախե՞ս, տուր, ինչ գին ասում ենք, թե չէ էնպես ենք տանելու»: - Ով դիրքերում կռվող ուներ՝ թեւքաշ պտտվում էր Սեյդիչեն, Յիլիս, Խնձրիստան, Ռեւ, որ մոտ լինի՝ ճամփի վրա: Մեքենա կար, խղճով վարորդ՝ վերցնում էին կես լիտր արաղով, մի հավով, հենց էնպես՝ տանում կամ բերում էին՝ փամփուռտի, արկերի, ականների, նռնակի, ուտելիքի, շորի՝ իրենց բեռների հետ խառը՝ լոբի, կարտոֆիլ, ընկույզ, ինչ որ կար, կարելի էր տանել, եւ հրամանատարությունը հաշտվել էր այդ խառնիճաղանջ ուղերթների հետ, եթե թուրքը մի գիշերում հասնում, գրավում է Չլդրանը, մի երկու պահակակետ-բան Վանքի ու Վաղուհասի միջակայքում դեռ կար, պահվում էր, ճակատի կենտրոնը Կիչանն էր, Կիչանից ձախ՝ անտառներով, -լրագրողներից մեկն անվանել էր Մահվան հովիտ, անունը կպել-մնացել էր, - Ճիլոտը մերն էր, բայց դա գյուղ ու բնակավայր չէր, այլ՝ դիրք, մի քիչ էլ՝ ներքեւները՝ Խաչենի հոսանքով եւ աջից՝ Զարագլխի բարձունքը, եղածն այսքանն էր եւ համարվում էր «Ռազմաճակատի հյուսիսային ուղղություն», - եւ, իհարկե, հրամանատարությունն արգելք չէր լինելու, որ մարդիկ ապրուստի իրենց միջոցը հասցնեն Ստեփանակերտ կիսասով ծվարած երեխեքին, կանանց: Եւ ո՞վ էր հնարել՝ Ստեփանակերտ վտանգ չկա, Ստեփանակերտն ամեն օր հրետակոծվում, ռմբակոծվում, արկակոծվում էր, բայց երեւի մարդ հաշտվում է այն մտքի հետ, որ մենակության զգացումն ավելի ահավոր է, քան՝ բուն վտանգը, իսկ թուրքը մղվում էր: Աշնան մութ, ահազարհուր գիշերներին, երբ մինչեւ լուսաբաց թուրքի հրետանին չէր խփում, անճրագ տներում շխկոց-թխկոց էր լսվում եւ զուսպ ձայներ. ու-

րեմն հարեւանը եկել է, Ստեփանակերտ խոսել՝ մեքենա է գտել, գինը կտրցրած է եւ հիմա տունը հիմնովին դատարկում է, եւ կինն էլ հատուկ գիշերով բերել է, որ հետո քաղաք հասնելուց գլխացավանքի մեջ չընկնի՝ «Էս՝ մեքենա, Էս՝ տունդ, ինչ որ կարող ես՝ լցրու, տեղավորիր», - ու ճղվելով, թոնթորալով կրում է. տեղաշորն առանձին պիտի դարսվի, մեջն, ուրեմն, օժիտացու կա, ամենադժվարը բարձերի հարցն է՝ ոչ կարող ես հենց Էնպես շարտել թափքը, ոչ ջուկ-ջուկ փաթաթելու ժամանակ ունի՝ խցկում է վերմակ-ներքնակի արանքները, հուպ տալիս՝ մինչեւ կինը կարպետի ծայրերն իրար բերի՝ կարի. «Էս՝ մեկ, Էս՝ երկու, երեք, չորս, հինգ, վեց՝ ու՛Ֆ, Էսքանն ինչի՞ է պետք, Էս շան քածն Էսքանն ու՛մ է տալու: - Իսկ մեքենան ուշանում է, չկա, սպասում են Էն ստեփանակերտցի լավ տղային, իսկ օրը կամաց-կամաց բացվում է, արեւելքից, հյուսիսից նորից որոտում են թուրքի հրետանին, «Գրադը», գորանոց կոչվածի բակը երկու քայլի վրա է, հռնդում է մի կենտ մեքենա եւ հասկանում են, որ թուրքն էլի հարձակվում է՝ պիտի մտնեն ներքնատուն եւ ամեն կրակոցի հետ դողան, որպեսզի հաշտվեն ամեն ինչ կորցնելու մտքի հետ եւ մարդ - կին՝ իրար մեջ մտած դուրս գան ամայի ճանապարհ, իսկ հարեւանը կասի՝ «Դուք գնացե՛ք», - եւ հայացքով ցույց կտա բակի մեծ ձմեռնուկ տանձենին՝ բերքը վրան, հետո մի հավերժություն քարշ կգան մինչեւ Ցեխ ձոր՝ զինվորական հոսպիտալի մոտերքը, իսկ այնտեղ մեքենա կլինի կանգնած, կմոտենան, կխնդրեն՝ քաղաք տանի, եւ մի ջահել կբացի «Ուազի» ետնադուռը եւ կտեսնեն պատգարակի վրա՝ Էն լավ ստեփանակերտցի տղան՝ սառած, բաց աչքերով, եւ տղամարդը կոռնա ցավից, կվազի անտառ, կփռվի թաց խաշամին, - հազար այսպիսի պատմություն գիտեին, ուստի իրենց դառնացածությունից զզվել էին, թե՛ «Դե որ տանեին՝ մեկի հետ կգնար, էլի», - վերքը կապեցին եւ իծաշարուկ՝ կածանն ի վեր՝ մագլցեցին անորոշության ճանապարհի մնացած հատվածը՝ մարդն ո՞վ է՝ այդքան զգույշ լինի՝ գազանի պես համր, անշշուկ:

Հանդիպակաց ափին լուսածիր գնդակների մոլապար չկար, լռել էր հրետանին, եւ ձորահովիտը բութ թշնամ էր, գե՞տն էր, թե՞ լռությունը՝ հասկանալու կարեւորություն չկար, միայն հիշե-

ցին, որ կեսօրին տղերքը դեռ դիրքերում էին՝ Սրխավենդից ներքե՝ Ալիադալուի դիմաց, եւ նրանցից վերջին տեղեկությունն այն էր, որ արադ էին ուզել: Ճիւղտի բարձունքից գայլ ոռնաց՝ ասա-աուուուու,- նրան արձագանքեց երկրորդը, երրորդը՝ իրար կանչելու, իմաց անելու պես, եւ խումբը կանգ առավ: Կին, տղամարդ, երեխա, ջահել հարս՝ ականջ դրեց: գայլը դարձյալ ոռնաց, եւ կաղկանձը չմարած՝ մութ երկինքը ճեղքվեց ազդանշանային հրթիռի ֆշշոցով, լույսը կախվեց հաչենի մեծ կամրջի վրա, մեկ-երկու ականթարթ սպասեց, հետո ծուլ-դժկամ ծորաց ներքե՝ ցուլաց-նելով ամայի խաչմերուկը, գետի արձագուլն ժապավենից մի պատառ, եւ հրետանին որոտաց, երբ ներքեներում անաղմուկ առկայծեց վառողը՝ խըըը222,- արկը շրխկաց գուցե գլաքարի, գուցե՝ կամրջի երկաթբետոնե հենասյանը, բայց զարնվեց կարծրության, հրաշեկ գունդը փշրվեց, մարեց:

Եթե գիշերով էլ խփում են՝ կնշանակի տղերքը դիմանում են, եւ թուրքը ճանապարհն է նշանակետ ընտրել, որ քաղաքից չգան, օգնություն չլինի: Խումբն արագացրեց քայլը՝ «Մայրուղին, ուրեմն, մերն է», - եւ շտապեց՝ իմաստավորելու իր կես օրվա գնացքը փրկության առարկայականությամբ: Մազլցեց, ճեղքեց նուրացող անտառը, խճճվեց մոշուտներում ու երբ հասկացավ՝ դուրս է գալիս մայրուղի, աշնան մաքուր սառնության մեջ հոտոտեց ծխահամ: Դա վառվող տան մգլահոտ չէր, ոչ էլ՝ գաղջ վառոդահամ, այդպես վառվում է անխառն չոր փայտը՝ բուրելով տուն, որ միայն հոգնաբեկ ճամփորդն է զգում: Խումբը կուլ տվեց, իրեն պարուրեց բնակավայրի տաք շնչով եւ կանչեց բոլոր հիշած անունները՝ գյուղի մարդկանց, որ խելամտորեն լքված անասնաշենքն իրենց կացարան էին արել դեռ ամռան օրերին՝ զինվորական բուժարանի հարեանությամբ...

Բայց նրանցից ոչ մեկը չհասկացավ, որ նույն պահին բլրակի վրա, ուր կապի «ԿԱՇԷԷՄԿԱ» մեքենան էր, ջահել հրամանատարը՝ ճակատը վիրակապերի մեջ, արթնացնում էր ազդականչերի լռությունը. «Ժիրո, ախպեր, էս գիշեր ու վաղը մինչեւ կեսօր պիտի դիմանաս», - իսկ գծի մյուս ծայրից խռպոտ մի ձայն, հուզմունքից շնչահատ, հարցնում էր. «Գործ լինելու՞ է»: - Չտեսավ, որ մեքենայի կիսախավարում Նորիկը ժպտում է՝ արտասվելու պես,

Եւ աչքերը կարմրած, հոգնած են , չլսեցին, որ Ժիրոյին պատասխանեց. «Չա, ծեգին քեզ հյուր եմ գալու», - Եւ դողացող մատներով անջատեց ռացիան:

Լուսաբացի հետ մեր հրետանին սկսեց, Եւ Ժիրոն ռադիոկապի՝ իր շրջապատված մահապարտությունից ճչաց՝ «Ուուուխ: - Յետեւակը նետվեց գրոհի՝ փրկության հաշորդ օրվա ծեգին:

...Ամիսներ անց Տղան արդեն գիտեր, - մի քանի օր շարունակ մորքուրի տնից, ուր հայրն իրենց թողել՝ ետ դիրք էր գնացել, առավոտյան դուրս էր գալիս, հասնում քաղաքի կենտրոն, զինվորական շտաբի մոտ, - որ իրենց կողմերի վրա մեքենայի անցուդարձ կա. զինվոր են տանում, զենք, ուտելիք ու թե պատահում է, նաեւ՝ գյուղ գնացող մեկին Եւ հույս ուներ, որ խղճով մի վարորդ իրեն էլ կվերցնի, թեկուզ՝ թափքում, զինվորների հետ, իբր՝ նրանցից մեկն էլ ինքն է: Թող էդ կռիվ գնացողն իրենից շատ-շատ մի երեք տարի մեծ լինի: Ձմեռ է, ցուրտ, զինվորները քուրք ու բուշլատ են հագնում, սապոգ, ականջակալ գլխարկ՝ չի տարբերվի, օձիքն էլ բարձրացնի՝ վերջ, ո՞վ է էդ որոշելու՝ «Սա խոխա է»:- Դիրքերում զինվորի պակաս կա, մորքուրի մարդն անցած իրիկուն եկավ, թե «Մեզ Մարտակերտ են տանում», - մնացին սառած, ուշունցախառը կպավ՝ «Էդ անիծած հողում տղամարդ չկա՞, կնկա լաչակ են կապել՝ փախել, տեղաշորի մեջ կոլովել՝ պոստի ստուգողներին խաբել են, քանի որ սրանք մենակ վարորդի փաստաթղթերն են նայում, մի կարգին կարդալ էլ չգիտեն, կնիք, ստորագրություն նայում՝ բաց են թողնում, - իրենց ղաչաղի պես տվել են Լաչինի քերծերին, գելի, աղվեսի կածաններով՝ ահը սրտներում, ոտքները քարշ են տվել՝ հասել Գորիս, ուսապարկում պահած կոստյումը հագել, փողերը հանել՝ գնել են Ստավրապոլի, Մասկվայի տոմս, հիմի քեֆ են անում, ես գնամ իրենց հողը ազատե՞մ»:- Չխնայեց, չմտածեց՝ «Կինս էլ էդ ավերակ հողից է, կռվի են ամենաթեժ բերանում Ես երեխեքի հերը կա՞, չկա՞՞ մի ամիս է՝ տեղյակ չեն»:- Մորաքույրը, իբր թե հացի հոգսի է, դուրս եկավ, մայրը՝ հետը, մնացին երեխեքով ու թախտի վրա կուչ եկած էդ մարդուց սառը, ցուրտ մի բան, ոնց որ՝ օձ տեսնես, լցվեց սենյակը: Փոքրերն իրենց հոր ոտքերի տակ քնեցին, ճաշը մնաց ափսեններում, իսկ մայրն ու մորքուրը երկար քչփչում էին

խոհանոցում:

Գիշերը մի կերպ լուսացրին, ծեգին մորքուրի մարդու հետ դուրս էր գալու՝ չթողեց՝ «Գնամ, տեսնեմ ինչ են ասում՝ նոր», - եւ տղան հասկացավ, որ նրանց շոկատը երեւի գիշերով է գնացել, բայց չխոսեց, չհարցրեց՝ «Եթե դիրք ու կռվի ես գնալու, բա ավտոմատդ խի՞ ես տանը թողում»:- Տղան նույնիսկ ուրախ էր մորքուրի համար, որ ճարպիկ ամուսին ունի, դասավորել՝ շոկատի խոհարարն է, մեկ-մեկ հաց ու թաց է բերում՝ մի տուփ պահածո միս, խտացրած կաթ՝ ինչ հասցնում է ետ գցել ու ամեն անգամ ձայնը փորը քաշած՝ մորքուրին զգուշացնում՝ երեխեքի ձեռքին բան չդնի՝ հարեւանները տեսնեն, դատի կտան, կկորցնեն, կքշեն ամենաառաջին խրամատները, որտեղ ամեն րոպե մարդ է խփվում: Տղան չէր ուզում՝ մորքուրը դժբախտանա, բայց այդ առավոտ նրա մարդուն ասում էր՝ որ զինվորի բաժինը գողանում, տուն է բերում, եւ զգվելի էր մորքուրի քաղցր թեյը, բանակային հացի պատառը, թվում էր՝ բերանը տանի՝ որձկալով ետ կտա: Մայրն ասաց՝ «Ի՞նչ ես ձեւեր թափում», - ու ինքն էլ բաժակը ցած դրեց, մորքուրը փոքրերին ուղարկեց սենյակ՝ խաղալու, հարցրեց՝ «Էդ ինչի՞ մի տեսակ եղաք», - սպասեց՝ արձագանք չեղավ, բացատրեց՝ «Դե բա սու՞տ է ասում, փախել են, էլի, ես քաղաքի խեղճ տղերքը քարի՞ց են, երկաթի՞ց են, նրանց Մարտակե՞րտ է պետք, հող ունեն՝ թող գան՝ գնան, պահեն, թաղեմ դրանց գլուխը, եկել լցվել են, ասես կարմիր խնձոր ենք ուղարկել, բոշա ժողովուրդ են, են մի կտոր օգնության վրա նստած՝ լափում են, մեր միևնուճար ախպերն էլ դրանց տեղ պիտի կռվի՞, ախչի, մարդդ որ սպանվի՝ երեխեքդ ո՞վ է պահելու, մեր ախպոր մի մազը որ ծռի՝ էլ մենք ինչացու՞ ենք»:-

Տղան դուրս եկավ խոհանոցից: Միջանցքում, ննջասենյակում, պատշգամբում՝ այս տանն ինչ-որ տեղ պիտի գյուղից բերած իր ուսապարկն ընկած լիներ, մեջը՝ հորեղբորից մի ամսվա աղաչանք- արցունքով խնդրված բուշլատ, ականջակալ գլխարկ, «խեբէ» ասվող՝ շարքային զինվորի շալվար, ոտքերին առանց էդ էլ զինվորական քուղավոր ճտքակոշիկներ են: Միջանցքի պարկերի մեջ չգտավ: Պատշգամբում էր, դեռ փնտրելիս տղան զգաց՝ դուրսը ձյուն է գալիս, այս եղանակին մեքենա հագիվ թե լինի, ու-

սապարկը գտավ, շորերը՝ ինչպես դրել՝ կային, հապշտապ հագնվեց, ոտքերի ծայրի վրա դուրս եկավ, խոհանոցի դուռը փակ էր, ապակիները՝ քրտնած, անթափաց, նախշանկար: Դուռը ծածկելիս տղան մի ակնթարթ խղճաց մորը, բայց հետո մտածեց, որ հորեղբորը կխնդրի՝ զինվորական կապով կտեղեկացնի շտաբ, Էնտեղից էլ՝ մորքուրեկն տուն: Շքամուտքում մարդ չկար, փողոցն ամայի էր, տղան շրջանցեց հանդիպակաց մայթը, անցավ շենքերի արանքն ու ծանոթ արահետ-աստիճաններով արագ-արագ քայլեց դեպի քաղաքի կենտրոն:

Չոր, մանրահատ ձյուն սկսեց կեսճանապարհին, թափքածակի ճեղքերից քամին ներս էր լցվում, խլում զինվորների բերանի ծխախառը գուլորշին: Տղան նստել էր արկի արկղին՝ երկու զինվորի արանքում, փաթաթվել նրանց քուրքի փեշերով, բայց ինչքան էլ փորձում՝ դողը զսպել չէր լինում: Շտաբի մոտ երկար խնդրելու կարիք չեղավ. ջոկատի հրամանատարն իսկույն ճանաչեց հորեղբորը, միայն ասաց, որ գյուղ չի մտնելու, հենց Խաչենի կամրջից ուղիղ գնալու է Կիչան: «Ոչինչ, «011»-ի զորանոցը մոտ է, ոտով կհասնեմ», - ասել էր տղան, եւ դա տպավորել էր: Թափքակողի բացվածքից տեսնում էր միայն ձյունամած ծառեր՝ տղան էլի դողացնում էր, եւ կողքի հարեւանը բոթեց. «Հը, մարտակիրտեցի, տակդ լցնու՞մ ես», - բայց հաջորդ վայրկյանին էլ մի թեթեւ խփեց ծոծրակին. «Չէ, տղամարդ է, հերը՝ կռվում, մերը՝ գյուղում, քաղաքում նստի՝ ի՞նչ անի, չէ՞»: - Ասաց՝ «Պինդ կաց, ախպերիկ, ինձ նման սար ընկեր ունեցողը մենակ թուրքի մերն է Էնպես անելու»:-

Կամրջի վրա տղան մեծավարի սեղմեց բոլոր զինվորների ձեռքը, թափքակողից ցատկեց եւ մինչեւ համարյա գոտկատեղ խրվեց ճամփեգրյա խոր ձյունի մեջ: Զիչ անց ճերմակ ամայության միջով, մեքենայի հակառակ ուղղությամբ նա արդեն բացում էր իր դժվար արահետը՝ մեկ-երկու, մեկ-երկու՝ նա փորձեց հաշվել քայլերը, բայց որոտն ամեն ինչ խառնում էր, եւ սարսափելի օտար էր ձորահովտի ձմռան անշունչ իրիկնամուտը:

Կեսգիշերից առաջ հետախուզական ջոկի տղաները դուրս եկան զորանոցից եւ այն է՝ մեծ ճանապարհը հատած՝ հանդամիջյա արահետով բարձրանալու էին սարի ուղղությամբ՝ դեմ առ

դեմ հանդիպեցին օրորվող ստվերի. «Կանգնիր, կրակում եմ»:- Անշշուկ լռության մեջ շրխկաց փակաղակը, եւ Տղան միայն հասցրեց ծղրտալ՝ «Չէ, ես եմ՝ եկել եմ»:- Հայրը, հորեղբայրը, հորեղբոր տղերքը, քեռին դիրքում էին, ինքն ի՞նչ ուներ քաղաքում:- ...Մերուժան Տեր- Գուլանյանը Գե հանձնաժողովի նախագահ էր: Վեց ամիս Երեւանում չէի եղել: Տարեվերջին գնացի: Ամռանը մորս հետ երեխեքին ուղարկել էի. Ստեփանակերտը կամ ամեն օր ռմբակոծվում, կամ Աղդամից հեռահար հրետանին էր խփում: Վարդագույն Երեւանը ձյունների մեջ կքած էր: Գերագույն խորհրդի շենքում հոսանք կար: Միջանցքներում անաղմուկ,- որովհետեւ հին- կենտրոնական ուղեգորգերը մնացել էին,- ջահել կանայք էին պատահում՝ սանրված, շպարված, եւ նրանց քայլքը մոռացված գրգիռներ էր արթնացնում, երբ բարձրանում էի երրորդ հարկ:

Շեֆը հըլը չի եկել,- Տեր- Գուլանյանի գործավարուհին բարալիկ սիգար էր ծխում: Սեղանին սուրճի բաժակ կար, նա մոխիրը թափ տվեց եւ դարձյալ հարցական նայեց: Ես «Պրիմա» վառեցի եւ դուրս եկա : Մի հարկ իջա: Նիստերի դահլիճի ճեմասրահի բազմոց- բազկաթոռները դատարկ էին: Մեծադիր պատուհաններից այնկողմ Բաղրամյան պողոտան լուռ էր: Այգու ձյունամած ծառերի կատարներն անշարժ էին: Ճեմասրահից աստիճանները տանում էին դարձյալ մի հարկ ներքեւ: Միջանցքի հեռավոր անկյունում պիտի որ գանձարկղը լիներ: Տարիքոտ մի կին դժկամությամբ բացեց ակնատն ու պատգամավորի վկայական պահանջեց: 1990 թվի ամռան իմ լուսանկարը նրան երեւի կասկածելի թվաց. «Անձանգիր չունե՞ք», - հարցրեց: Անձնագիրս հին էր, 1976-ին էի ստացել եւ լրացված էր թուրքերեն-ռուսերեն: Կինը զգվանքով ետ վերադարձրեց, դարձյալ ուշադիր զննեց դեմքս: Նրան երեւի թվում էր, թե ես Գերագույն խորհրդի գանձարկղը կողոպտելու էի գնացել: Դարձյալ «Պրիմա» վառեցի եւ սպասեցի: «Մի քիչ են-կողմ կանգնեք, հա՞», - ասաց գանձապահն, ու ես հեռացա. պատուհանի մոտ աղբարկղ-մոխրաման կար: Հետո երկար ժամանակ դասավորում էի փողերը: «Ուշացել էք, մնացածն էս է», - ստացածս խորհրդային հինգ հարյուր ռուբլանոց շատ թղթադրամներ էին, կինը հարցրեց. «Գործուղման թերթիկ ունե՞ք», եւ ես

չհասկացա:

Ստացել եք վեց ամսվա աշխատավարձ, եթե գործուղման թերթիկ ունեք՝ տվեք, որ հաշվեմ, ձեզ հյուրանոցի, էստեղ սևվելու, ճանապարհածախսի, ուրիշ բաների համար էլ են վճարում,- արդեն մեղմ, թվաց՝ նույնիսկ քնքշանքով բացատրեց տարիքոտ կինը:

Չունեմ, - տխրեցի ես: Եւ գանձապահը ներքին հեռախոսով ինչ-որ մեկին ասաց, որ «պատգամավոր Վահրամ Աթանեսյանն էստեղ, մեզ մոտ է, գործուղման թերթիկ չունի, կարելի՞ է նրան հասանելիքը տամ», - եւ ես դարձյալ աղբարկղ-մոխրամանի մոտ գնացի ու հասկացա, որ այդ կինն ինձ խղճում է, բայց հեռանալ չէի կարող. երեք երեխայի հետ մայրս Չարենցավան ցուրտ քաղաքում էր, եւ բոլորի հույսը քրոջս ուսուցչական աշխատավարձն ու սեւ հացի կտրոնն էր: Ես չլսեցի, որ գանձապահը «պարոն Աթանեսյան» է կանչել: Նա թիսկացրեց ակնատըլ եւ դարձյալ ինչ-որ թղթեր ստորագրել տվեց: Ես նրան մի հատ հինգ հարյուր ռուբլանոց թղթեցի եւ դանդաղ՝ աստիճան առ աստիճան մտածելով, բարձրացա երրորդ հարկ:

Շեֆը Էկավ ու գնաց,- Տեր- Գուլանյանի քարտուղարուհին դարձյալ բարալիկ- երկար քնթուկով սիգար էր ծխում եւ մոխիրը թափ էր տալիս սուրճի կեղտոտ բաժակի մեջ: - Էսօր ֆոյեում բանկետ է, շեֆն ասաց, որ իրիկունը ժամը 9-ին գաք, համ էլ էս թուղթը տվեց՝ փոխանցեմ:- «Վահրամ ջան, կներես, ես շտապ տեղ եմ գնում, դու մտիր Նարինե Բալայանի մոտ», - Տեր- Գուլանյանն էր գրել: Նարինե Բալայանը սոցիալական հանձնաժողովի նախագահն էր: Նրան ասում էին «Նարինե Միսակովնա», - հայրը Ղարաբաղում հայտնի պետական պաշտոնյա էր եղել, ինքը՝ Խորհրդային Հայաստանի սոցապ նախարար: Նա ինձ տվեց մի բուռ կտրոններ եւ բացատրեց՝ ում եւ որտեղ դիմեմ: Գե գործերի կառավարչությունում հարկավոր աշխատակցին գտա, միասին իջանք ծառայողական ճաշարանի պահեստ, որ գրեթե թափուր էր: Ամենավերջում ստվարաթղթե արկղեր կային: Պահեստապետը կտրոնները վերցրեց: Մի բանվոր արկղերը ձեռնասայլակի վրա դուրս տարավ: Գործերի կառավարչության պաշտոնյան ասաց. «Բա մեքենան ու՞ր է»: Ես ուսերս թոթվեցի՝ ի՞նչ մեքենա:

«Եսքանը ո՞նց եք տուն տանելու», - բացատրեց նա եւ պահեստապետին կարգադրեց՝ «զանգիր, թող հերթապահ ավտոն ուղարկեն»: Դա հին, քրքրված «Վոլգա» էր: Արկղերը բարձեցին: «Ու՞ր ենք գնալու», - մի քիչ ջղային հարցրեց անթրաշ վարորդը:

Էստեղ՝ մոտիկ է, Բաղրամյանի վրա: - Ես գործերի կառավարչության պաշտոնյային շնորհակալություն ասացի: Գերագույն խորհրդի՝ Դեմիրճյան փողոցի անցակետից դուրս եկանք, թեքվեցինք աջ, սառած-անթարթ լուսանշորից դարձյալ աջ թեքվեցինք եւ հանգած «Վոլգան» սղղաց Բաղրամյան պողոտայով: Ձախից տեսա Միացյալ Նահանգների դեսպանատունը: Ամերիկյան դրոշը հպարտ նայում էր անկախ Յայաստանի մայրաքաղաքի կենտրոնական պողոտայի կեղտոտ ամայությանը եւ ինձ թվաց, թե բոլոր պատուհաններից «յանկի» դիվանագետները հետեւում՝ ձյունների մեջ մեր խեղճուկրակ ընթացքի վրա ծիծաղում են: Բեռնախցիկում չո՞րս, թե՞ հինգ արկղ էր: Չգիտեի՝ դրանց խորհրդավոր ներսում ինչ կա: Ինձ հարագատը մեծ տոպրակն էր՝ «Թռչնի կաթ» կոնֆետներով բերնեբերան լիքը, որ պահեստապետն ամենավերջում բերել՝ մեքենայում գիրկս էր դրել: Ես մի-երկու բուռ կոնֆետ լցրի վարորդի կիսամուշտակի աջ գրպանը, եւ նա «մերսի» ասաց ու ինձ «ԼՍ» ծխախոտ հյուրասիրեց: «Սրան գիտե՞ք ինչ են ասում», - ասացի՝ «հա, «Լեւոնի մայրիկը», բայց դու ուշադիր եղիր, հիմա պիտի էլի աջ թեքվենք՝ Ալիխանյան փողոց», - եւ նա լռեց:

Շրջադարձի վրա, որտեղ մանրավաճառի կրպակ կար, ինձ թվաց՝ ծանոթ դեմք տեսա: Փառահեղ գլուխը վերարկուի օձիքներով մինչեւ կեսը ծածկած՝ մայթին կանգնել էր Դավիթ Գասպարյանը եւ մեկի հետ խոսում էր: Հինգ-վեց տարի առաջ նա իմ գիտական ղեկավարն էր եւ կարծում էր, որ «Կոմիտասի կերպարը հայ գրականության մեջ» թեմայով թեկնածուականը դժվար չի լինի պաշտպանել: «Մի թույլ եստեղ պահիր», - խնդրեցի, եւ վարորդը դժկամորեն արգելակեց: Մի քանի տարի չէինք հանդիպել, բայց նա ինձ ճանաչեց: «Ուրախ եմ, - ասաց, - հայտնի մարդ ես դառնում»: Եւ ծիծաղեց ու ծանոթացրեց. «Գրիգոր, դարաբաղի իմ ասպիրանտն էր, Էստեղ դեպուտատ է», - կողքինը Գրիգոր Ջանիկյանն էր: Ասաց. «Էդ ու՞ր էդպես», - եւ ակնարկեց «Վոլ-

գա»-ն:

Չէ, իմը չի, Գերագույն խորհրդից է,- ես մտածեցի, որ մանրավաճառի կրպակի մոտ երկու առողջ տղամարդ նախաամանորյա «կծող գների» համար մինչ այդ Գերագույն խորհին, նախագահին ու կառավարությանը թունդ հայհոյած պիտի լինեին: Ասացի. «Մեկ-մեկ եմ գալիս»,- Ջանիկյանի հայացքը սեւեռված էր սառած մայթին: Նա հաստ ներբաններով կոշիկներ էր հագել եւ ձեռնոցներ: Ինձ թվաց՝ ձանձրանում է: «Լավ, Ղարաբաղի վերջն ի՞նչ է լինելու»,- հարցրեց Գասպարյանը, եւ ես շփոթվեցի:

Լավ կլինի,- իմ փոխարեն ասաց Ջանիկյանը: Ես ժպտացի: Մանրավաճառի կրպակի մոտից երերուն քայլերով մարդիկ էին անցնում, եւ նրանց հայացքներում հաշտված անտարբերություն էր: Հակառակ մայթին ՀՀԾ գրասենյակն էր՝ արդեն անելումուտ: Կամ, գուցե, տեղափոխվել էին: Մի հիսուն-հարյուր քայլ ներքե Գրողների տունն էր: Մի ժամանակ սրճարան ուներ: Այնտեղ նստում էր քննադատներից «շնորհալի» կնքված գրող-բանաստեղծների սերունդը: «Հրազդան» գինի կամ պորտվեյն էր խմում եւ կոմունիստներին գամում անարգանքի սյունին: Մի-երկու անգամ իմ բարեկամ Լեոնիդ Թեյյանի հետ ինչ-որ անկապ առիթով մտել, «գարունականների» հետ խմել էինք՝ Մերուժի եւ Հակոբի: Մերուժան Տեր-Գուլանյանի եւ Հակոբ Մովսեսի: Մյուսներին չհիշեցի:

Գրողների միությունի՞ց եք գալիս,- մի բան ասած լինելու համար հարցրի, եւ Դավիթ Գասպարյանն ասաց. «Էդ ինչի հիշեցի՞ր»:

Գրողների միությունն չկա,- Գրիգոր Ջանիկյանը ոտքից ոտք փոխվեց: Մրսում էր: «Վոլգա»-ի վարորդը դուրս եկավ՝ մեզ էր մոտենում: «Շտապու՞մ ես»,- հարցրեց Դավիթ Գասպարյանը: Ինձ չէ՛ նրան, եւ վարորդն ասաց. «Ծխելիք չունե՞ք, իմը պրծավ»:

Մենք ծխելը թողել ենք,- ասաց Ջանիկյանը:

Ես վարորդին «Պրիմա» առաջարկեցի, դժգոհեց՝ «հազացնում է»:

Այ ընկեր, աղջիկ ես գտել՝ բանն էլ հե՞տն ես ուզում,- եւ ուսիս խփեց Դավիթ Գասպարյանը,- ընկեր վարորդը ֆիլտրով սիգարեթ է ծխում:- Եւ ես անհարմար զգացի: Վարորդը գնաց, մեքե-

նայից մի լրիվ տուփ «ԼՄ» բերեց, «հույրասիրվեք» ասաց եւ սպասեց: Եւ ամոթ էր, որ չորս տղամարդով Բաղրամյան պողոտայի մայթին կանգնած՝ մենք սկսեցինք աղմկել, որովհետեւ երկուսը թեւեւ ծխող չէին, բայց խաղի մեջ մտան, իսկ ես չէի ուզում, որ վարորդը նորից հիշեցնի «Լեւոնի մայրիկը» եւ տուփը ետ՝ իրեն մղեցի: Մանրավաճառի կրպակի առաջ հերթ էր գոյանում:

Ես ի՞նչ եղավ,-հետաքրքրվեց Ջանիկյանը:

Ոչ մի բան,- անտարբեր ասաց Դավիթ Գասպարյանը,- մարդիկ երեւի փող ունեն՝ հերթ են բռնում:- Վարորդն ինձ հասկացրեց՝ «ուշանում եմ»: Գերագույն խորհրդի կարգը ես չգիտեի, բայց նա եթե անհանգստանում էր, ուրեմն առիթ ուներ: Կրպակից ես դատարկ տոպրակներ խնդրեցի, մանրավաճառն ասաց՝ «հատը՝ հարյուր ռուբլի»: Կիլոգրամը երկու հազար ռուբլով նա կոնֆետ էր վաճառում եւ մի երկու արկղ կես-կանաչ մանդարին էլ ուներ: «Թռչնի կաթ» շոկոլադներով հսկա թղթածրարից ես երկու փոքրիկ տոպրակ կոնֆետ լցրի: Եւ սառնամանիք օրով իմ մեջքը հանկարծ զզվելիորեն, ասես չպատրաստված քննության էի, քրտնեց:

... Ալիխանյան փողոցից մենք դարձյալ աջ թեքվեցինք, նորից՝ աջ եւ փակուղում կանգ առանք: Եւ դա իմ քրոջ տունն էր՝ փոքրիկ վանդակադռնով: Նրանք արդեն անհանգստացած էին: Նկուղում գլանաձեւ վառարանը կարմրել էր: Նվարդն ու կինս բլիթաչափ հացեր էին թխել: Սեղանին տնաքաշ օղի կար, կանաչ լուլիկի թթու եւ ամենախսկական կոտլետներ: Զրոջս երեխաներին ես միմի բուռ կոնֆետ տվեցի: Վարորդի հետ արկղերը քարշ տվինք տուն: Օղի նա չիմեց: Զույրս հացի մեջ երկու կոտլետ դրեց ու մեկնեց վարորդին: «Չէ, քուր ջան, դուք կերեք, հեսա տուն եմ գնում», - եւ գրեթե փախավ: Մենք սոված էինք եւ ախորժակով կերանք: Չետո կինս լուռ հայացքով խնդրեց, որ արկղերը բացեմ: Այդ նուրբ աշխատանքը թողեցի փեսա Սլավիկի շնորհքին: Մեկի լրիվ պարունակությունը մրգախյուս էր՝ ինչպես խանութի ձուն են «բջիջներ»-ով շարում՝ մանրիկ ապակե անոթներ: Մյուսը՝ շոգեխաշած մսի պահածո: Երրորդը՝ նրբերշիկ: Յաջորդը՝ զանազան հյութեր:

Թաղեմ դրանց գլուխը, տես ամեն օր ինչ են է՛ լափում-լա-

կում,- քիթը վեր քաշեց կինս:

Նոր տարվա նվեր է,- ասացի:

Էդ խելքին ես, էլի,- կնոջս պաշտպանեց Նվարդը: Սլավիկն անտարբեր էր: Մարիամն ու Միհրանը մի-մի «վատման» թուղթ վերցրած՝ ձմեռ էին նկարում: Բայց ստացվում էր կանաչ-կարմիր Թալիշ, որ իրենց հոր գյուղն էր եղել:

Ես մտածում էի, որ բանկետի չարժե գնալ. կոստյում-փողկապներս ու ճերմակաթույր վերնաշապիկս Ստեփանակերտ էի թողել: Սլավիկն ասաց. «Իմը կհագնես, հրես երկու ժամվա հոսանքը կտան՝ Նվարդը կարդուկի»: Կինս ու քույրս ետ՝ արկղերի մեջ դասավորում էին «հատուկ մթերաբաժինը»: Սեղանին կես-շիշ օղի կար. փեսաս խմող չէր: Բաժակս նորից լցրի: Թունը էր: Բլիթահացից նավթահոտ էր զգացվում: Սլավիկն ասաց. «Գնամ՝ փռում հերթ կանգնեմ»: Սարյան փողոցի փռում նա ծանոթ ուներ, սպիտակ մատնաքաշ էր վերցնում: Փոքրիկ այգու ծառերը մանրիկ կտրտել՝ վառում էր: Նկուղում տոթ էր, տնաքաշ օղին՝ բարկ: Քնեցի եւ երագում տեսա, որ աշխարհը կարմիր-կանաչ է...

Ցեխուձյունների մեջ Սուրեն Շաբոյանը Սեյդիշեն- Առաջածոր հոսքագիծ էր անցկացնում: Ոչ Սրիսավենդ կար, ոչ՝ եսթակայան. հոսանքը բերվում էր Ստեփանակերտից: Եւ ճակատի գիծը դեռ Կիչանն էր: 1993թ. հունվարն էր:

Բորիս Բաբայանին նշանակել էին Մարտակերտի շրջանում ՊՊԿ լիազոր ներկայացուցիչ: Հունվարի 19-ին Բորիս Բաբայանը Վանքում զոհվեց: Վարձկան օդաչուն խոցել էր նշանակետը: Եւ դա նախկին տեղամասային հիվանդանոցն էր, որ դարձրել էին հոսպիտալ:

Միասին էինք լինելու:

Առավոտյան Ստեփանակերտ էր՝ գործի տեղում, որ խմբաբուրոյան առաջին հարկն էր. տվել էին Մարտակերտի վարչակազմին: Կանչեց.

-Շրջան եմ գնում, գալի՞ս ես:-

Հետո միտքը փոխեց. «Լավ, դու սպասիր, հետո կգաս, որ բացումը պատմես թերթում»:- Հոսքագծի բացումը շուք էր տալու ընդհանրական ամայությանը, բայց կեսօրին արդեն գիտեինք, որ

կործանիչ ինքնաթիռը խփել՝ ավերել է հիվանդանոցի շենքը, եւ Բորիս Բաբայանը զոհվել է: Ձյուների մեջ կանգնած՝ Սուրեն Շաբոյանը արտասովոր էր: Նորիկ Դանիելյանը տխուր էր: Օր առաջ զոհվել էր ընկերը՝ լրագրող Նորիկ Մարությանը: Եւ դպրոցի մեր շենքը, որ գորանոց ու հրամանատարական կետ էր, արդեն օտար էր: Դասասենյակներում աշխարհագրային տղերքը թաց շորերը փռել՝ չորացնում էին: Ճտքակոշիկները ծանր հոտում էին: Գրադարանը ավերված էր: Փայտը թաց էր, չէր վառվում, գրքերից տակն էին տալիս: Վառարանագոգում՝ Էքերման՝ «Չրույցներ Գյոթեի հետ»: Ռուբեն Չարյանի նվերն էր: Նա հորս հետ մտերմություն ուներ: Միշտ «Յայրենիքի ձայն» թերթ էր ուղարկում՝ հատուկ բանդերոլով, նոր լույս տեսած գրքեր: Երբեմն գրում էր նամակներ: Մեզ համար զարմանալի խորհրդավորություն ուներին այդ նամակները՝ մեքենագիր, վերջում՝ իր զարդարուն, գեղաքանդակ ստորագրությունը: Հորս մահով կապը սեղմվեց: Գրել էի, որ ինստիտուտն ավարտում եմ գերագանց, մտադիր եմ ընդունվել ասպիրանտուրա: Ուզում էի, որ ասեր՝ «Արի Երեւան, կօգնեմ», - բայց պատասխանեց. «Համալսարանն ավարտելուց հետո երեք տարի Ախալքալաք ուսուցիչ եմ աշխատել: Կյանքիս ամենալավ տարիներն են»:- Բայց գրքեր էի ուղարկում էր: Արդեն՝ դպրոցի հասցեով: Եւ Ֆիզիկայի ուսուցիչ Արամ Շեկյանը մի օր կատակեց. «Էդ մարդուն գրեք՝ թող կարողացող էլ ուղարկի»: Գյոթեի իմաստուն զրույցները՝ որպես թուղթ, ջերմացնում էին գորանոցի պատերը: Լուսնահար- գայթուն՝ վերջին հերթափոխի տղերքը գնում էին Կիչան: Եւ միամիտ ու անօգնական էր թվում միակ լամպը, որ աչքը թարթում՝ վառվում, կիսամարում, կրկին բռնկվում էր հիվանդոտ դեղին լույսով, բայց խելագար նահանջից, կորուստներից, հուսալքումներից եւ հիասթափություններից հետո դա ընկալվում էր փրկության պես, որ՝ «Եթե պետությունը ծախս է անում, հոսանք է հասցնում, ուրեմն ամեն ինչ դեռ կորած չէ»:- ՊՊԿ նախագահն էր եկել: Նորիկի հետ առանձնացած՝ նրանք երկար քննարկում էին ռազմաճակատի այդ հատվածի վիճակը:

Գյուղը խուլ ամայի էր: Անլուս այդ գիշերվա լռության մեջ Նորիկի սենյակի լամպը վառվում, մարմրում, հետո Նորից բռնկվում

Եր: Սեղանին հաց էին դրել՝ զինվորական օրապահիկ: Օղի կար: Եւ կենաց Եր ասվում: Ստեփանակերտում Բորիս Բաբայանին էինք հողին հանձնել: Օդային տագնապի շչակները վնգում էին չարագույժ, բայց ոչ ոք շարքից դուրս չէր գալիս: Նրա տեղակալը ՊՊԿ նախագահի հետ Եր: Սպասում Եր նշանակման: Դիրքեր էին գնում վերջին հոգնած աշխարհագրորային տղերքը, ում անցյալ սեպտեմբերին զինվորական հագուստ-կապուստ էին տվել եւ համարել բանակ, բայց նրանք համառորեն չէին հարմարվում կարգապահությանը եւ կուզենային ամեն ինչ վերջանար: «Կամ՝ Ես կողմ, կամ՝ Էն», - որովհետեւ շատ դժվար Եր հավատալ, որ ձյունակոխ գետահովտից հնարավոր Է ծմակի միջով անցնել՝ հասնել Չլդրան՝ որքան Էլ ՊՊԿ նախագահը վստահեցներ, որ շատ մեծ հակահարձակում Է նախապատրաստվում:

Վարձկան օդաչուն խփվել Եր գետահովտի երկնքում: Նշանակետը խոցել՝ վերադառնալու Եր իր թռիչքադաշտը՝ «Օսա» կայանքի ռադարը հայտնաբերել, ու հրթիռը ճշտորեն ուղարկվել Եր, եւ փորձառուի նրա լկտիությունը, երբ կարողանում Եր քողարկվել ծխածածկույթով, այդ անգամ չէր օգնել. նա իջնում Եր կատապուլտով: Այդքան ստույգ՝ ոչ ոք դեռ տեսած չկար, որ գենիթահրթիռահրետանային գնդի «Օսա» կայանքը մարտական ինքնաթիռ Է վայր բերում թշնամի երկինքներից, բայց օդաչուն չէր ուզում հանձնվել. երկրորդը ցածրաթռիչք մոտենում՝ պարաշյուտը քշում Եր գերձայնային արագայության իր հոսանքի ուժով՝ դեպի ավելի ներքեւները, ուր ճակատային սահմանը հատվում Եր թուրքի տարածքում, եւ բոլորը նայում՝ տեսնում էին, որ «Օսան» Էլի հրթիռ արձակեց, եւ երկրորդը, որ իբր ապահովության երկնքում Եր, նույնպես ծուխ արձակեց, բայց դա արդեն հեռու եւ օտար տարածք Եր: Վարձկան օդաչուն բռնվել՝ տարվել Եր Ստեփանակերտ: Կամրջի եւ Ցեխ ձորի միջակայքում զինվորական հոսպիտալն Եր, եւ հոսքագծի սյուները նշում էին ճանապարհի ուղղությունը՝ ի հակառակ ամռան եւ աշնան կորուստների՝ դեպի Չլդրան:

Փետրվարի 5-ին Սուրեթ Յուսեյնովը թողեց Չլդրանը: Ամսավերջին Թարթառ-Քելբաջար մայրուղին արդեն ուղիղ նշանառության՝ մերոնց կրակի տակ Եր, եւ Սուրեն Շաբոյանը գնում Եր Դրմ-

բոն իր գյուղը: «ԿՐԱԶ»-ը ծանր հռնդում էր ՍԵԼ ցեխի ծմակի ճանապարհին, որտեղից մի քանի օր առաջ անցել էր զրահատեխնիկան: Մեկը պայթել էր հակատանկային ականի վրա: Նեղադուր ճանապարհ էր, եւ շեղվողը ընկնելու էր հաջորդ ականի վրա. բեռնամեքենայի վարորդը կպել էր դեկին եւ սեղմում էր գազը, իսկ ես ու Սուրենը կատակում էինք:

-Շաբոյան Սուրեն, գործերդ թույլ են:

-Բա քո գրածները ու՞ր են:- Եւ վարորդը հասկանում էր, որ իրենից շատ՝ վախեցողը հենց մենք ենք, եթե միայն հիմարություններ ենք խոսում:

Գյուղ էր: Տներ: Ամայություն:

Սուրենը ծունկ չոքեց՝ որտեղ դարպասն էր եղել՝ այդ հողը համբուրեց: Տան դուռ- լուսամուտները պոկել- տարել էին: Տան պատին թանձր կարմիր ներկով թուրքը գրել էր. «Ադիլ, զուր ես չարչարվում, տունը զբաղեցրել եմ», - բայց մի սեղան մնացել էր:

Ձյունը ետ- ետ արեց՝ Սուրենը մարգատեղեղում հերվա ցանած կանաչի պոկեց, մի երկու թել էլ՝ սխտոր: Հաց ու շոգեխաշած մսի պահածո ուներ: Տան ներքնահարկում Սուրենը արաղ գտավ: Վարորդը տափաշիչ բերեց՝ երախակալը դարձավ բաժակ, սվին- դանակը՝ գդալ ու պատառաքաղ: Խմեցինք: Իսկ հրանոթները որոտում էին: Ճակատի գիծը Սարսանգի ջրամբարի հարավ- արեւմտյան ափն էր՝ Արջի արձանի շրջակայքը: Մի երկու տուն նայեցինք:

Լավ ժամանակներում Սուրեն Ասլանյանը Ստեփանակերտ դատավոր էր աշխատել: Դրմբոն տուն էր կառուցել: Պատին հուշաքար կար. «Տուն Արեւիկի: Այս տունը կառուցվեց Արեւիկի նախագծով՝ իր երեխաների եւ թոռների համար»: Արեւիկը կինն էր: Հուշաքարի տակ թուրքը թողել էր իր հոխորտանքը. «Այս տունը պատկանում է Թարթառի գումարտակի զինվոր ԱկիՖ Նադիելին: Ալլահ աքբար»: Երեւի թուրքի զորակայան էր եղել՝ տունը պահպանված էր: Ամեն եկող թողել էր իր տխեղծ հիշատակը, բայց ամենանողկալին BBC գրությունն էր, մեկ էլ՝ վրացական գիրը, երեւի՝ ժուռնալիստական:

Սուրեն Ալեքսանյանի տունը դարձյալ զորակայան էր: Նորիկը տեղափոխվել էր Դրմբոն: Վլադիկ Սարգսյանը նշանակվել էր

Մարտակերտի շրջանում ՊՊԿ լիազոր ներկայացուցիչ: Նոր «Նիվա» էր ստացել, հագնում էր կամուֆլյաժ եւ ատրճանակ էր կրում: Մեքենան ինքն էր վարում: Դրմբոն Սուրեն Ալեքսանյանի տան մի սենյակում Նորիկը վիճում էր Վանքի գումարտակի հրամանատար Յուրի Զակոբյանի հետ: Յուրիկը քարտեզի հետ գլուխ չունեւ: Նրա իմացածը որսի կածաններն էին՝ դեպի Նարեշտար կամ Զրաղլու, Ալմալը գյուղերը: Իսկ զորքը արդէն դառնում էր բանակ, եւ Քելբաջարը խրված էր նրա երկու թելերի միջնակները, կաշկանդում էր: Դրմբոնը հավաքում էր: Միշտ այդպես է լինում. որտեղ իշխանություն կա եւ պաշտոն՝ մարդու կարիք զգացվում է, որովհետեւ բանակի հետ՝ նրանից մի երկու քայլ ետ՝ գաղթած բնակչությունից մեկումեջ գալիս էին՝ բոլորը տնանկ, կարիքավոր: Եւ զինվորական ղեկավարությունը խառնվում էր, դառնում անօգնական, որովհետեւ անհնար էր վերադարձող յուրաքանչյուրին կցել թիկունքային օժանդակ ծառայության, որպեսզի օրապահիկ հաց ստանա ու մի աման տաք ճաշ, բայց եւ չէր կարելի աչք փակել. եկողը մտնում էր զորանոց:

Սուրեն Շաբոյանի հայրն էր ետ եկել: Թուրքի լքված հրետանային դիրքերում արկերի դատարկ արկեր էին բրզված: Զանդում՝ բարակ տախտակը, մեխն ու փական-բռնակները խնամքով առանձնացնում՝ տան դռները այդպես կարգի էր բերում: Եւ վառարան էր դրել, փայտե թախտ: Քնում էր մի բարակ ծածկոցի տակ եւ ուրախ էր, որ մեղուն լրիվ չի հանգել: Մի երկու փեթակ շունչ ուներ, եւ Դրմբոնն արեւկող գյուղ է՝ մարտի վերջերին մեղուն արդէն խաղում էր: Արկանոցի կողքին Լազր Շաբոյանը ծերունու նման չէր: Տարիք չունեւ: Ուղղակի՝ ինչպես եթե կյանքը մի անգամ լրիվ մեռած լինեւ, ու աշխարհում՝ մենակ ինքը, ահա այդպես կանգնած՝ նայում եւ հրճվում էր, որ երկիրը իմաստ ու կերպ է առնում: Թուրքի խրամատներում գտել էր գրանցամատյան, արանքներում՝ դիմում:

«Ադրբեջանի հանրապետության Լեռիկի շրջանի զինվորական կոմիսար գնդապետ Աբաս Զասանովին

Սույն դիմումը գրելով՝ հայտնում եմ, որ ես մանկությունից խուլ եմ, որի համար նույնիսկ խորհրդային բանակ ինձ չեն տարել, բայց հիմա ուղարկել են Թարթառ, որպեսզի թիկունքում

աշխատեմ, բայց ուղիղ բերել են ռազմաճակատի առաջավոր գիծ, բայց ես ոչինչ չեմ լսում եւ այստեղ ինձ բոլորը համարում են, որ չեմ ուզում կռվել, բայց ես նորից եմ խնդրում, որ իմ հարցը ճիշտ չի լուծվել, քանի որ խուլ եմ, շատ եմ խնդրում, որ դիմումս ստանալով իմ հարցը կարգադրեք, որ լուծվի, եւ ես վերադառնամ տուն, քանի որ մայրս միայնակ է, իսկ հայրս երկու տարի առաջ է մեռել, ուրիշ տղամարդ տանը չկա, քույրերս մարդու գնացած եւ ապրում են՝ մեկը Սումգայիթ, երկուսը՝ մեր շրջանում:

Շատ եմ խնդրում, որ դիմումս չմերժեք:

Ադրբեջանի ազգային բանակի Թարթառի գումարտակի շարքային զինվոր»,- ստորագրությունը չէր կարդացվում կամ՝ չէին թողել, որ ստորագրի՝ ուղարկի: Դիմումը մնացել էր վաշտի գրանցամատյանի թերթերի արանքում: Եւ Լազր Շաբոյանը տխրում էր այդ խուլ տղայի համար: Սուրենը հոր բարության համար զոհ էր, բայց տունն, ախր, սրբել- տարել էին, մնացել էր ցինկաթիթեղ ծածկը: Դա էլ արկ ու ականից, ռումբի բեկորներից էր ծակծկված: Իսկ Քելբաջարը մնում էր:

...Գարնանամուտ երեկոյի թանձրացող խավարից հանկարծ ծխախոտի կրակ առկայծեց, որից մի վայրկյան լուսավորվեց լայն, զանգվածեղ դեմքը, եւ գյուղական տարողունակ լռությունը պայթեց ջահել ծիծաղով:

-Էդ ի՞նչ հալի ես, գործ ես անում, հա՞, վայ ես աշխարհի ինչն եմ ասել, բա ամոթ չի՞, որ քու նմանը գա, թե՛ հող տվեք, բոստանատեղ, էէէ:- Էլի պիտի ծիծաղեր, եթե պինդ խմած չլիներ:

«Փղերն իմ բարեկամներն են» կինոն էին գյուղ բերել, թե ուրիշը, բայց հենց Էկրանին տեսան Ֆրունզիկ Մկրտչյանի տխուր-ծիծաղաշարժ դեմքը՝ ակումբի դահլիճում աղմկեցին. «Արա, ես հո մեր...», - եւ գյուղը նրան երկրորդ անուն տվեց՝ Ֆրունզիկ: Ես ասում էի՝ «Ֆրունզ, ո՞նց ես»:- Ընդունել էր:

Իրենց դարպասի մոտ քարին նստած՝ Ֆրունզը ծխում էր, եթե չխոսեր՝ չէի նկատելու:

-Արի գնանք խմենք, լավ արադ ունեմ:

-Չէ, Ֆրունզ, էսօր հավես չկա, մի ուրիշ անգամ:- Ասաց՝ «Թալիշի կողմերն են տանում, ով գիտի», - եւ ծխուկից նոր սիգարետ վառեց: Տեսա՝ հագած- կապած է, ճոքակոշիկները՝ փայլեցրած,

ճերմակ օձիք էր կարել քողարկագեստին:

-Ֆրունզ, էդ կռի՞վ ես գնում, թե հարսանիքի-բանի հաշիվ կա...

-Հա, պատրաստ եմ, Թալիշ են տանում:

-Ի՞նչ Թալիշ, այ տղա:

Դավադիր, չորս կողմը նայելով, թեեւ մեզնից բացի ոչ ոք չկար՝ շշնջաց.

-Մեր, Մարտակերտի Թալիշ, շատ մեծ հարձակում է լինելու, մինչեւ Միր-Բաշիր պիտի սրբած գնանք...

-Հաստա՞տ:

-Հա, Օմարը պրծանք՝ թիկունքից էլ ահ չկա, գնալու ենք, արի դե, մի լավ հարբենք:

-Այ Ֆրունզ, հրեդ՝ խմած ես, գնա պառնկիր, Միր-Բաշիրից հետո՝ խնդրեմ:

-Է, արա, ինչ մարդ ես, մեռնե՞նք, որ թերթերում բան-ման ես գրում, առաջ ես ընկել: Մի թաղի տղերք ենք, քանի անգամ ասեմ՝ Թալիշ են տանում: Ես Թալիշ տեսած կա՞մ, ես Թալի՞շ եմ ճանաչում: Չէ, բայց մեր հողն է, գնում եմ, լավ բաներ եմ պատմելու, արի:

-Քո ԲՄՊ-ի ու գերի թուրքերի պատմությունը հազար անգամ լսել եմ:

-Ո՞վ է ասել:

-Գյուղի բերանն ընկած՝ պատմում-ծիծաղում են, թե՛ Ֆրունզը Օմարում ԲՄՊ-ն քշել, թուրքի վրանի առաջ կանգնեցրել է ու՛ շրախկ, շրախկ՝ ուղիղ մեջտեղը, հետո մտածում է՝ թե մեջը մարդ էլ կար՝ հաստատ եւեւ եղավ: Իջնում են, ներս մտնում. «Պահ-պահ, ես ինչ են արել մեր «ախպեր» թուրքերը, ձյուն ձմռանը նարինջ են բերել դիրքերը, մանդարին, խիար ու պոմիդոր, չամիչ, կարագ, շաքար»:- Ֆրունզն ասում է՝ «Տղերք, թե մի կտոր բան եք թողել՝ ամոթ ձեզ, հավաքում, տանում ենք Դրմբոն»:- Կրում, կրում են, վերջը որ նստում են՝ շունչ քաշեն, թուրքի թողած ծխախոտից վառում են, Ֆրունզը մեկ էլ հո չի գոռում՝ «Արա, թուրքերը»- Նայում՝ տեսնում են մի պուճախում երկու թուրք զընգըր-զընգըր դողացնում են: Քեզ տեսնեմ՝ Ֆրունզ, թուրքերենդ ո՞ր օր-վա համար ես պահել, խելքը գլուխն է հավաքում.

-Բիր չոխըն, թեզ...

Երկուսին էլ քշում, բարձրացնում է ԲՄՊ-ի վրա ու հայդա՝ Դրմբոն:- Էդ չի՞ քո պատմությունը:

Առաջին բաժակը խմեցինք լուռ: Ֆրունզը դժվար էր կուլ տալիս, դանդաղ՝ ասես դեղ էր ընդունում, վրայից էլ՝ ջուր: Մայրն ասաց.

-Դու մի խմիր, հերիք է:

Ֆրունզը ժպտաց՝ մա՞:

Ֆրունզը հացին ձեռք չտվեց՝ «Դու կեր, ես մի քիչ էն չեմ»:

-Ինչի՞, Ֆրունզ ջան:

-Լավ չեմ, մի տեսակ եմ, ոնց որ ամեն ինչս տեղն է, բայց ես ես չեմ:

-Թե վախենում ես՝ էս անգամ մի գնա:

-Ոնց թե՛ մի գնա, ես կնի՞կ եմ, որ տանը նստեմ,- Ֆրունզը խմեց երկրորդ բաժակը, երրորդը, խմեցինք, ծխեցինք, լռեցինք, հետո Ֆրունզն ասաց.

-Էն պատմությունը հնարել ես:

-Չնարել եմ:

Ֆրունզն օրորեց գլուխը.

-Լավ չի, կռիվը դուք ոնց եք եղբան հեշտ հնարում, սարքում թատրոն: Չերս պատմում էր՝ չէինք հավատում, ասում էինք՝ «Այ հեր, ջահել ես եղել՝ աչքդ վախեցել է»:- Մեր իմացած կռիվը կինո էր, հորս պատմածը՝ տանջանք, սով, նահանջ, գերություն, փախուստ՝ չհասկացանք, հերս եղպես էլ ապրեց: Նստում, պատմում էր՝ լսող չկար:

-Կար, Ֆրունզ, կար, հորդ պատմածը ես լսում էի, հետո որ հուշեր էր գրել՝ կարդացել եմ, էն տետրն ի՞նչ արիք, պահում եք:

-Պիտի որ մնացած լինի:

Չայրը 1939 թվին բանակ էր գորակոչվել, տարել էին Ուկրաինա, հետո՝ Արեւմտյան Ուկրաինա, 41-ին գերի էր ընկել, փախել, միացել խորհրդային բանակին, կռվել, 47 թվին վերցրել՝ քսորել են. «Չայրենիքի դավաճան ես,- ասել էին,- ինչու՞ քեզ չես սպանել»:- Չայրը ԷՆԿԱՎԵԴԵ-ի Սենտրոնի երեսին շարտել է՝ «41 թվին որ հրացան լինե՞ր՝ գերմանացուն կսպանե՞ի, գերի չէի ընկնի», - եւ այդ խոսքերի պատճառով Ֆրունզն ուշ է ծնվել՝ 1962 թվին: Այդքանը ես գիտեի, տարօրինակը Ֆրունզի մռայլ տխրությունն էր:

-Դե լավ, հա, կատակ էր, արեցի:



Մեծ-մեծ, խոնավ աչքերով նայեց՝ «Բա էդ կատա՞կ էր, այ տղա»:-

Թուրքն, ուրեմն, փախել էր, ԲՄՊ-ի կրակին թուրք չէ, քարն էլ չի դիմանում, Ֆրունզը մտնում է վրան: Ոտելիք է, գենք է՝ պիտի հավաքվի, Ֆրունզն իր գործին է լինում, տղերքը երեք թուրքի են պատահում կալմեջ անում՝ բռնում: Յետո մեկը գալիս է, թե՛ երեքին էլ սպանելու եմ, ատրճանակը հանում՝ կրակում է, Ֆրունզը մեջ է ընկնում:

-Իրավունք չունես:

-Դու ո՞վ ես:

-Մի շարքային գինվոր:

-Դե որ շարքային ես՝ ձեռք կտրած գնա կռվի:

-Ես եմ գերի վերցրել, երեքն էին, հիմա էս երկուսին տանելու եմ Դրմբոն:

-Չես տանելու:

-Տանելու եմ:

Ֆրունզը կանգնում է դրա ու գերիների արանքը:

-Ես թուրքի մոտ գերի ընկեր ունեմ, տանում եմ՝ փոխանակեմ,- գոռում է,- հերս ինձ պատմել է, որ գերի մարդուն չի կարելի սպանել:

Ու հաղթում է: Թուրքն ընկնում՝ Ֆրունզի ոտքերը լիզում է, իրենց սպանված ընկերոջը չի նայում, նրա համար ոչինչ չի խնդրում:

-Այ, էդ է, որ չի կարելի հնարել, էդ կատակի բան չի՝ սպանված ընկերոջդ թողնես ու՝ քեզ համար քո թշնամուց կյանք խնդրես՝ գերություն, մենակ թե՛ արեւ տեսնես, լույս աշխարհում շնչես, մարդու հետ խոսես՝ թեկուզ՝ թշնամուդ, կյանքն, ուրեմն, էդքան քաղցր բան է:- Ֆրունզն էլի խմեց:

-ԷԷԷ,-Ֆրունզը հառաչեց,- ամեն մարդ ինքը պիտի որոշի:

Ուշ էր, բաժանվեցինք:

Երկու օր հետո Ֆրունզը գիշերով Ներքին Յոթաթաղից տուն է գալիս: Մորն արթնացնում է՝ հաց-մաց դիր: Նստում են, Ֆրունզն ասում է՝ «Ախպորս տեսնեի», - եւ հրաշքի նման դուռը բացվում է:

-Ախպեր,,,

Երեք ամիս իրար չէին տեսել:

Մեծն ասում է,

-Արի տուն գնանք:

Ֆրունզը թե՛ «Զո տունն էս է: - Նստում են խմում: Յետո մեծն, այնուամենայնիվ, գնում է իր երեխաների մոտ, իր կնոջ մոտ, իր տուն:

Եւ Ֆրունզը խումհար-խումհար շոջում է բոլոր սենյակները, իջնում բակ: Երկար նայում է անվրդով քնած գյուղին, եւ սիրտը երգ է ուզում՝ երգում է: Պատշգամբի բազրիքին հենված՝ երկար նայում է գարնան մութ երկնքին եւ տնքում:

-Բա մարդ էս սիրուն աշխարհը թողած կգնա, էս սեւ հողին գերի կդառնա՞...

Իսկ հրաժեշտից առաջ մորն ասում է.

-Մա, թե որ բան է՝ սպանվեմ, ինձ հորս կողքին կթաղեք:

Ուղիղ երեք օր հետո մեծ եղբորն ուզում էինք համոզել.

-Ընկերներից Ֆրունզին մի բաժանիր, թող տանենք հուշարձանի մոտ:

Մեծ եղբայրը լսում, օրորում էր գլուխը եւ գունդ-գունդ արցունքներ էր շաղում:

-Չէ, իմ ախպերը գիտեր, իմ խելոք ախպերը ճիշտ է ասել...

Չոհվել էր ԲՄՊ-ի մոտ՝ արկի պատահական բեկորից: Իսկ մյուսի հորը տանում էին խրամատ փորելու:

-Տաք շոր բան դիր, ուտելիք, մտնելու եմ Յոռաթաղ,- ասաց կնոջը, բայց սիրտը ծանր-ծանր էր: Գուցե տղային չտեսնի: Ասում են՝ «Թուրքի կողմից ուժեղ հարձակում է սպասվում»: Տղային կխնայե՞ն: Պիտի որ մի քանի օրվա զինվորին ուղիղ ճակատ չքշեն, ախր լրիվ խոխա է, զենք բռնած չկա, բայց պատերազմ է, շատ հաճախ տարիք- փորձ չեն հարցնում: Ինչ էլ երկար գիշեր է, սիրտը չի դիմանա . խառը երազների մեջ էր հայրը՝ դարպասը ծեծեցին . «Բարմեն, հե Բարմեն», - ձայն տվեց հարեւանը:

-Կանչում են,- կինը երեւի ողջ գիշեր չէր քնել,- երեխին մի երկու օրով կբերես, խնդիր, ասա՝ «Ճնված օրն է»:

Դրմբոն ասացին՝ «Գնալու եք Մատաղիս- Լեւոնարի», - բայց ուշացրին, լույսով չի լինի՝ թուրքը խփում է: Չենք բաժանեցին: Ուրեմն՝ ճակատ են տանելու, խրամատի հաշիվ չկա: Չորքն ուղղակի նեղվում է, եթե վաթսուն տարեկան մարդու ձեռքն ավտոմատ են տվել: Մի շահել սպա հանգիստ բացատրեց, «Այ սա պահունակն է, էսպես փամփուռները լցնում եք, հետո տեղն էք

դնում, նայեք՝ բարդ բան չի, հիմա արդեն կրակելու պատրաստ է, ավտոմատի վրա կրակելու երկու ձեւ կա, էստեղ գրված է, Էդ նշանակում է, որ գեներից կարելի է կրակել ավտոմատ եւ՝ հատ-հատ, մնացածը պարզ է՝ փակադակը ձգում եք- բաց թողնում, հետո կրակում, հեշտ բան է»:- Մինչեւ երեկո պահեցին:

Ժանգառքին դիրքերից մեքենա եկավ:

Բարձրացան թափքածածկի տակ, շարժվեցին, դանդաղ էին գնում՝ մարած լույսերով: Չէին կողմնորոշվում՝ որտեղ են: Վեր-ջապես կանգ առան:

-Իջեք:

Գնացին լուռ, մտան դատարկ խրամատները:

-Երկու-երեք հարյուր քայլ են կողմ՝ թուրքի դիրքերն են, արգել-վում է՝ կրակ վառել, բարձրածայն խոսել: Ձեզնից այց ու ձախ եւ կենտրոնում՝ մի հիսուն քայլի վրա՝ մեր խրամատներն են,- մեկն այսպես բացատրում էր: Դեմքը չտեսան, բայց ձայնը դաժան էր, չոր ավելացրեց.

-Բահերը, քլունգները պահեք՝ պետք եղավ՝ խրամատ էլ եք փորելու, բայց առայժմ պատրաստ եղեք մարտի:

-Թե նոր համալրումն ուշանա՝ էգուց մենք ենք թուրքին դիմա-վորելու,- ականջի տակ փսփսաց հարեւանը,- ասում են...,- ու Էլի լռեց:

-Ի՞նչ են ասում:

-Չե՛չ, մեկն Էստեղ տակից-գլխից դուրս էր տալիս, իբր թե երեկ-վա կռվում մեր տղերքից մի երկուսը վիրավորվել են:

-Մե՞ր գյուղից:

-Դե շատ բան էր խոսում, որի՞ն հավատաս,- հարեւանը երեւի թաքցնում էր: Մութի մեջ դժվար էր. եթե լույս լիներ՝ կնայեր աչ-քերին եւ սուտն ու ճիշտը դուրս կքաշեր:

Ձախ կողմից, որ պիտի Մատաղիսի ուղղությամբ լիներ, աղ-մուկ լսվեց, խրամատի գիզգազներով տազնապ անցավ, եւ քիչ անց խավարից անջատվեց շահել հրամանատարի սիլուետը.

Ձեր մեջ Առաջածորից ո՞վ կա:

Բարմենն առաջ ընկավ.

-Ես եմ:

-Արի էս կողմ, պարզելու բան կա:

Գետնահյուղակում աղոտ մոմալույս էր, դեմք չէր զանազան-

վի:

-Ճանաչում ես,- հրամանատարը ցույց տվեց անկյունում կուչ եկած մեկին:

Մոտեցավ.

-Աշոտ, էստեղ ի՞նչ ես անում:

Աշոտը թոթվեց ուսերը:

-Տղերքը բա ու՞ր են:

-Չգիտեմ:

Չարեւանն, ուրեմն, ճիշտ էր ասում, երեկվա մարտին մերոնք մասնակցել են, Աշոտը կամ ետ է ընկել, կամ...

-Թուրքի կողմից էր գալիս, լավ է՝ չխփեցինք,- բացատրեցին:

«Թուրքի կողմից», - չէ, աղետ է եղել, եթե սա թուրքի կողմից է եկել: Կցկտուր պատմածից հասկացավ, որ գումարտակը տագնապով հասցրել են դիրքերն ու ծեփին թուրքը վրա է տվել, ով սպանվել է, ով՝ փախել, հիմա էստեղ թուրքն է նստած:

Դողը հազիվ զսպած՝ մոտեցավ հրամանատարին,

-Տղաս նրանց հետ է եղել, բաց թող՝ գնամ Յոռաթաղ:

-Գնա, գենքդ հանձնիր ու գնա,- հայացքը փախցրեց,- Էն կողմի վրա մեքենա է գնում:

Մաղավուզի քարհանքերի դիրք հասան, երբ լույսը բացվում էր: Լավ տղա էր վարորդը, մինչեւ խաչմերուկ քշեց, Յոռաթաղի կածանը ցույց տվեց, թե՛ «Չշեղվես հանկարծ, ականի վրա կընկնես, ուղիղ գնա»:

Գումարտակի շտաբում ասացին՝ «Տղերքը ցրվել, փախել են, փնտրում ենք, մեկ-մեկ կամ՝ խմբով դուրս են գալիս, սպասիր»: Սպասեց: Իրիկվա կողմ եկան, թե «Գյուղ ենք գնում, արի հետներս»:- Արդեն գիտեր՝ թաղում են զոհվածներին: Մեքենա նստեց:

Ուսապարկը շարտեց պատի տակ, աստիճաններին փլվեց:

-Գագոն ու՞ր է, պա,- երկյուղով հարցրեց աղջիկը:

-Չգիտեմ,- փղծկաց,- չեմ տեսել, ոչ ոք չի տեսել:

Չոհերին թաղում էին՝ երեքին, մյուս յոթից տեղեկություն չկար: Խառը բաներ էին պատմում, թե՛ «Գերի են ընկել կամ անցել «Եղնիկների» մոտ»:- Մեկն, իրոք, հասել էր Թալիշի ծմակները, երկու օրից եկավ: Չարցրին՝ չէր տեսել: Փախել էր մենակ: Յետո պատմեցին՝ «Մեզ հետ էր, մի ահագին տեղ եկավ, շուտ-շուտ

հոգևում էր, բայց գալիս էր՝ մինչեւ ընկանք կրակի տակ, արդեն ամեն մեկս մի կողմի վրա դուրս ենք քաշվել՝ չենք հիշում»:

Մորն ուզեցինք համոզել՝ «Պատերազմում, ոչինչ, նաեւ գերի են ընկնում, էստեղ ու իրենց մոտ համապատասխան հանձնաժողովներ կան, տվյալները կհայտնենք, կկապվեն Բաքու՝ իրենցից մեկի հետ կփոխանակենք»:- Մի երկու նման դեպք գիտեինք, մնացածը հնարեցինք՝ որ հույս լինի, մայրը չհավատաց,

-Իմ տղան զոհվել է, մնացել էստեղ:

Հորն ասացինք՝ «Տղամարդ կաց, քեզ մի կորցնի:- Շեշտ նայեց.

-Տղամարդ եմ, դիակը պիտի գտնեմ:

Թուրք գերու մի հետք էինք գտել՝ Եվլախից: Երեւանով-Մոսկվայով դրա քեռու համարը հասցրինք բարեկամի,

-Չանգում ես Մինգեչաուր, ասում ես՝ ձեր տղան Ստեփանակերտ է, դու էլ մերին գտիր:

Մի շաբաթ սպասեցինք, Մոսկվայի մեր բարեկամը զանգեց, թե «Չի գտնում, եղ անունով գերի Ադրբեջան չկա»:

Հայրը Հոռաթաղ էր, սպասում էր՝ այն դիրքերն ազատվեն: Գերու, փոխանակության հարցերին հայրը չէր խառնվում: Մի ամիս, երկու ամիս... Չորս ամիս գնում, գալիս էր:

Գարնանը գտավ:

Խումբը փնտրել, ետ էր դառնում, հայրը նայեց բարձրացող խոտերին՝ «Էս անգամ էլ թե չգտա՝ վերջ, խոտը կծածկի, անձրեւ ու հեղեղ կլինի, տեղն ինչ մնացել է՝ կքշի ձորը», - եւ կածանից թեքվեց դեպի աշունքից մնացած չոր մացառուտը: Դեմն այն բարձունքն էր, որտեղից, տղերքի պատմելով, թուրքի գնդացրի կրակի տակ էին ընկել, աջից՝ ձորը, որ թաքցրել էր փրկվածներին: «Էստեղից ու՞ր պիտի գնար են երեխան», - մտածեց եւ մտավ մացառուտ, թե ական կա՞ թող պայթի, իրեն էլ տանի, իր ապրելն ու՞մ է պետք, - դեռ հեռվից աչքովն ընկավ բուշլատը: Շունչը կտրվեց, հայացքը շաղվեց: Երբ դողը փոքր ինչ անցավ՝ նորից նայեց, տեսիլք չէր, ահա արհեստական մորթուց օձիքը՝ ինքնակար, Գագոն գլխարկը քանդել՝ բուշլատին օձիք էր կարել:

-Դավիթ, գտել եմ, - ու ոռնաց, հող ճանկռեց:

...Հետո ամեն ինչ ասես երագում լինեք: Տեսնում էր միայն վրան-թիկնոցը, որ տղաները տանում էին զգույշ, գլխիկոր:

Բայց թաղմանը պատմեց ամենավերջին մանրամասնություններով եւ յուրաքանչյուր ցավակցողի ասում էր, «Տեսա՞ր, որ ասում էի՝ գտնելու՞ եմ»:- Եւ պարտադիր ավելացնում էր,

-Խոխան ոտքից վիրավորվել է, օգնող չի եղել, թողել, անցել են:- Բայց ոչ ոք գլուխ չէր կախում, չէր ամաչում այդ ահռելի վշտից:

...Չասմիկի հետ չորս տարի սովորել ենք մանկավարժական ինստիտուտում, բայց իրար նոր ենք ճանաչում, անցյալը երեխայություն էր, կատակ, որ դողանջեց կարճ մի պահ եւ գլորվեց մոռացության խորխորատները: Այդ խաղի նման օրերում, սակայն, երբ հիմա պատահում է՝ մեկ-մեկ փորձում ենք ինչ-որ բան իրար բերել, կպցնել,- իբր դրանից դառնությունը ետ է գնալու,- ես տեսնում եմ վաղ աշնան ետմիջօրե, հանրակացարանի ընդհանուր պատշգամբ եւ չորս-հինգ տարեկան մի տղա երեխա. նրա մազերը հատուկ այդ օրվա համար՝ քաղաք բերելու առիթով, խնամքով կտրել, թելը թրջել-սանրել են գյուղի քույրիկները, ձյունաճերմակ շապիկ են հագցրել, նորածեւ շալվարը ծալը-ծալին արդուկել՝ նստեցրել են հայրիկի մեքենան, եւ նա, խաղողի շողշողուն ճուղը ձեռքին՝ ճովողում է մեծ քույրիկի գուրգուրոտ հայացքի տակ եւ երջանիկ, զրնգուն իր մանկության ծիածանաթույր երազներից մեզ լեզու է ցույց տալիս, դըջի-դըջի անում, ծիծաղում:

-Պու,- ճարտարցու իր հանգով հոգու հետ ուզում եմ խաղալ,- արա, էդ քույրիկի համար սո՞րս ես բերել...

Երեխան ետ՝ սենյակ է փախչում եւ քիչ անց կարմրած-շնչահատ՝ վերելից ծլնագցնում.

-Չէ, մարտակիրտեցի, քեզ համար շատ թուղթուգրիչ եմ բերել,- եւ սենյակի խորքում Չասմիկը գոհ ծիծաղում է՝ իր պատասխանն է:

Գուցե՞ ուրիշ հանդիպում էլ եղել է՝ չեմ հիշում, դա է տպավորվել: Ու երբ մի օր լսեցի՝ Չասմիկի եղբայրը զոհվել է՝ զարմացա, ցնցվեցի՝ այն փոքրիկ, սիրուն երեխա՞ն: Որտե՞ղ: Ինչու՞: Անցել էր ուղիղ տասնյոթ տարի, բայց ինձ թվաց՝ երեխան խաղողի ճուղը ձեռքին խաղի գնալիս է եղել՝ ձյունաճերմակ շապիկով, թելը սանրած, եւ մանկագող մի հրեշ երկնքից ծղրտալով իջել՝ նրան տարել է հոր, մոր, քույրիկների աչքի առաջ: Արար աշխարհի ան-

տարբեր աչքի առաջ:

Հասմիկին հիշեցրի այն հեռու, լուսաշող աշևան կատակը՝ տեղը չբերեց: Ինչ-որ տարտամ բան պատմեց՝ իմ հուշը չէր եւ դրանից ավելի դառնացավ: Կուչ եկավ: Նա առհասարակ պինդ մարդու տեսակ է, որ ձեռքը թաշկինակ չի առնում՝ չեղած արցունքը սրբելու, բայց հանկարծ կծկվեց, ասաց.

-Խեղճ ախպերս անհիշատակ գնաց,- լռեց, հետո թե՛ «Ձեռքս էլ չի բռնում՝ նստեմ մի բան գրեմ: Մերս, ախր, տանջվում է. ախչի, իմ խոխի համար էս աշխարհում ամեն բան կտրվա՞ծ է»:

-Ճարտար չեմ ուզում գնալ, Կարենից հետո խորթ, օտար գյուղ է: դատարկ: Ինչու՞ է եղպես:- Ոչինչ չի ուզում հիշել, պատմել.

-Չարմանում եմ՝ ուրիշներն ինչու՞ էղքան հեշտ են խոսում՝ ոնց որ՝ անգիր սերտած դաս: Չեմ հավատում: Ամեն ինչ կեղծ է թվում, հնարանք, թատրոն...

Ինքն իր հետ կռիվ է տալիս՝ գուցե ուրիշներն են ճիշտ, գուցե պատմելուց վիշտը թեթեւանում է կամ՝ զոհաբերման խորհուրդը՝ դառնում ավելի հասկանալի: Ծանր խոկումների մեջ է ընկնում Հասմիկը, որ եղբայր է կորցրել՝ միակին:

Մաճկալաշենցի մորն ասել են՝ «Քո տղային ճարտարցի Աղաջանյան Կարենն է օգնել»:- Պատմել են, որ մարտի ժամանակ իր տղան վիրավորվել է, բեկորը հատել է ոտքը, թողել մի բարակ ջիլ: Իր տղան օգնություն է խնդրել. «Մեկնումեկդ եկեք, դանակ ունեցող մեկը թող գա, ջիլը կտրի», - վիրակապ է ուզել, ռետինե լարան՝ արյունը կանգնեցնի: Խրամատում մաճկալաշենցի էղ տղային ճանաչում էին, գիտեին՝ մի ամիս առաջ եղբայրն է զոհվել, բայց փոթորկալի կրակ է թափվելիս եղել, դուրս եկողը ստույգ մահվան էր գնալու՝ ափսոսացել են ու սպասել, իսկ Կարենը չի համբերել, խրամատից դուրս է քաշվել, հասել վիրավորին, ջիլը կտրել, լարան է դրել՝ արյունը կանգնի, խրամատից վիրակապ են նետել՝ ետ է եկել, վերցրել, կապել է վերքը, շալակել է մաճկալաշենցուն, մի քայլ արել ու... խփվել է Կարենը, իսկ մի քանի ժամ հետո, հոսպիտալի ճանապարհին, հանգել է մաճկալաշենցին: Մայրն այդ պատմությունը լսել է քառասուն օր հետո, եկել է ճարտար՝ Կարենի մորն այցի: Ասել է՝ «Եթե իմ տղան փրկ-

վեր, կդառնար նաեւ քունը, Աստված չի կամեցել՝ մենք տղա ունենանք: Դու մինուճար չես կորցրել, երկուսն ես կորցրել, իմը երեքը եղավ, մեր լացը մեկն է»:

Եւ նստել, երկու մայր ողբացել են իրենց մեծ լացը:

Թողություն տուր, Աստված, որ պատմեցի: Այդ ցավը չի պատմվի, իսկ այս տղան փրկվել է: Գրոց անունն օտարոտի է՝ Վիլիելմ: Թե գյուլիստանցի ծնողներն ի՞նչ ամենաբարեկամ են տեսել իրենց զավակի եւ պրուսական հայտնի միապետի միջեւ՝ ոչ մեկին չի հետաքրքրում, որովհետեւ միայն պաշտոնական գրություններում է ասվում՝ «Լեյտենանտ Վիլիելմ Մկրտումյան», մնացած բոլոր հանգամանքներում նա Վիգեն է՝ հրամանատարների եւ ծառայակից սպաների համար՝ անխտիր:

Վիգենը մոռագույն գլխարկ է կրում, որ նրան առանձնացնում, մի տեսակ խորհրդավորություն է հաղորդում: Ծեկ, բարձրահասակ տղա է Վիգենը՝ քսան-քսաներկու տարեկան, աչքերը խաժմեղրագույն են, դեմքը՝ տղայական զվարթ, ծիծաղն ուղղակի կաթում է երեսից, երբ տրամադրությունը տեղն է, բայց ափսոս, որ նման պահեր օրվա մեջ շատ քիչ են պատահում:

Վաշտի հրամանատարը ե՞րբ է հասցնում՝ ուրախ լինի: Երեւի թե՛ միայն իրիկնային ստուգականչից հետո, երբ արդեն գեկուցել է, որ բոլոր զինվորներն իրենց տեղերում են, վերակարգն ուղարկված է ճաշարան, օրապահն ստացել է անհրաժեշտ հրահանգները եւ նման շատ այլ բաներ՝ ահագին թղթաբանություն էլ դեռ մնում է: Հաջորդ օրվա պարապմունքների կոնսպեկտ պիտի գրվի, կամ՝ գեկույց առ այն, որ «Վարժական հրաձգության ժամանակ կրակվել է այսքան քանակի այսինչ տրամաչափի փամփուշտ, բոլոր պարկուճները հավաքված՝ հանձնված են ըստ տեղի եւ պատկանելույն, արդյունքները՝ գրանցված վաշտի մարտական պատրաստության մատյանում»:- Մի խոսքով՝ ինչպես օրինավոր բանակային կարգապահությունն է պահանջում: Ու դեռ պիտի հասցնի՝ մաքուր օձիք կարի համազգեստին, ճոքակոշիկները փայլեցնի, թրաշվի, բաղնիք գնա, լվացքատնից վերցնի փոխնորդը:

Չորանոցային իր տնակում, ուր ապրում է հասակակից մի ուրիշ լեյտենանտի հետ, Վիգենը տնավարի անկյուն է ստեղծել՝

մահճակ, պահարանիկ, պատին կանոնավոր շարքով մեխեր խփել՝ սրբիչի, գլխարկի, բուշլատի համար՝ առանձին-առանձին, մահճակի տակ՝ հողաթափեր: Եւ ամեն երեկո այնպես տնավարի գուլպա է փոխում, որ կողքից նայողին կթվա՝ տղան հենց միանգամից լեյտենանտ եւ վաշտի հրամանատար է ծնվել:

Եթե ճիշտն ասենք՝ այդպես էլ եղել է, միայն՝ մի փոքրիկ տարբերությամբ. լեյտենանտի երկու փոքրիկ աստղերը Վիգենը հետո է ստացել՝ պարտադիր զինվորական ծառայությունը գերազանց ավարտելուց հետո: Չարցրել են.

-Կմնա՞ս զորամասում:

-Եթե պետք եմ,- պատասխանել է:

Ասել են.

-Նպատակահարմար ենք տեսնում, որ ծառայությունը շարունակես որպես սպա, կարգապահ-օրինակելի զինվոր ես եղել, փորձ ունես, ամեն ինչ տեսել՝ սովորել ես, գրագիտությունը, ոչինչ, բավարար է, եղիր սպա:

-Ինչպես կհրամայեք, ծառայում եմ հայրենիքիս,- շիկնած պատվի է բռնել:

Վերջացրել են.

-Չաջողություն ենք մաղթում:

-Կաշխատեմ արդարացնել ձեր վստահությունը,- եւ քրտնած դուրս է եկել շարքայինից սպա կնքված Վիլիելմ Մկրտումյանը՝ ծնված Շահումյան շրջկենտրոնում, կրթությունը՝ միջնակարգ, ամուրի: Այս տեղեկությունները, ծառայողական բնութագիրը, 3x4 չափսի լուսանկարները հետո արագակար թղթապանակի մեջ հասցրել են Պաշտպանության բանակի շտաբ, բանավոր ասված կարծիքներն ու ցանկությունները, գովեստներն ու մաղթանքները մնացել են Տոնաշեն, եւ դա պաշտոնապես ձեւակերպվել է հրամանի մի տողով.«Լեյտենանտ զինվորական կոչում շնորհել թիվ 7 Պաշտպանական շրջանի շարքային Վիլիելմ Մկրտումյանին»,- եւ Վիգենը նստել, ծնողներին նամակ է գրել, որ այսուհետեւ Պաշտպանության բանակի սպա է կամ թե ոչինչ էլ չի գրել, ծնողներն իրենք հասկացել են, որ «Էն գիժը կյանքը բանակին է տվել»:-

Գուցե այդպես չի եղել, բայց Գյուլիստանի իրենց լիաբուռն

ապրուստից զրկված ու երեւաններում մի կերպ ծվար եղած հայրնումայրը դժվար գոյության այս աշխարհում քսան տարեկան առողջ, լեզվանի, մեր պէս ասած՝ օձը բնից հանող տղայի կարիք շատ պիտի ունենային ոչ միայն ծնողական սիրո, այլև օրվա ապրուստի պարտադրանքով, տղան, այնինչ, բռնել՝ ընդմիշտ զինվորականի վտանգավոր կյանքն է սիրելի դարձրել: Ու հիմա սիրելի է անում մի ձյունաճերմակ օձիքով, մոռագույն հագվագյուտ գլխարկի խորհրդավորությամբ, փայլեցրած ճտքակոշիկներով, անգամ՝ ուսապարկով, որից,- երբ իրիկնային ստուգականչն ավարտված է լինում, զեկույցները՝ գրված, կոնսպեկտը՝ պատրաստ,- Վիգենը հանում է նոթատետրը եւ սկսում ֆլումաստերով ինչ-որ նկար ներկել՝ երկար, ջանադրաբար կամ դանդաղ թերթում է՝ ամեն էջի վրա այնպես կենտրոնացած, ասես հուշատետրը լի է մանրատառ գրված տպավորություններով, մինչդեռ շատ էջեր մաքուր են, մի հասցե, հեռախոսի համար կամ՝ լուսանկար՝ թերթերի արանքում,- ահա Վիգենի ամբողջ քնարական հարստությունը՝ լեռների եւ անտառների թագավորության այն գորամասում, ուր ամենադժվարը իրիկնային ժամերն են անցնում, երբ ավարտվում է զինվորական կյանքի եւս մի օր, բայց գիտես, որ վաղը կրկնվելու է նույնը. ժամանակն ասես ճոճանակ լինի՝ գնում, գալիս է նույն տեղը՝ կախված հիշողությունների բարակ թելից, որ ինչ էլ անես, որքան էլ փորձես՝ չի կտրվում երբեք:

Ահա՝ ծանր ոտնաթմբոցով գալիս է Վիգենը: Ինքը՝ բարակ, երկար, քայլքը՝ ծանրամարդու: Շարային պարապմունքների ժամանակ զինվորների հետ էնքան է մեկ-երկու արել, որ ճաշարան գնալիս էլ ձախը միշտ հատու է խփում: Դուռը բացում է թափով: Մռայլ-մռայլ է, շեկ ունքերը՝ իրար տված: Ջուր է խմում: Նստում: Յանում է գլխարկը: Ետ է տալիս ճտքակոշիկների քուղերը: Պլանշետ- պայուսակը պատից իջեցնում է, աթոռը մոտ քաշում, վրան փռում թղթերը: Ծխախոտ է վառում: Յետո նոր միայն ասես հիշում, որ տաք սենյակում նստել է բուշլատով՝ հանում, կախում է պատի համապատասխան մեխ-կեռիկից:

-Վիգեն, ի՞նչ ես գրում:

-Կոնսպեկտ,- առանց գլուխը բարձրացնելու պատասխանում

Ե, թերծխած սիգարեթը շարտում մոխրաման: Դժվարանում Է: Պահարանը խառնշտում, ինչ-որ գիրք Է փնտրում: Գրում Է: Ծխում: Էլի ջուր Է խմում: Ամեն երեկո՝ նույնը, նույնը, նույնը: Ինքը, մյուսները, զորանոցը, զինվորները: Օրվա կարգը՝ հաստատված՝ վերկաց, մարզանք, նախաճաշ, պարապմունք, ճաշ, շրջակայքի մաքրում, Էլի պարապմունք՝ վարժաիրապարակում, ընթրիք, ստուգականչ, քուն: Ուսումնական գումարտակ Է, զինվորները՝ նորեկ, քաղաքացիական կյանքի հոտը դեռ քթներում: Խրամատ ու դիրք չեն տեսել, պատերազմի մասին միայն լսել են ու՝ հարցասեր: Արի, դրանց պատասխանիր: Չեն հասկանում, որ բանակում հարց ասվածը մեծ շայլություն Է, կանոնագրքի խախտում: Երեխայի պես, որին ծնողը սաստում Է անհարկի շատախոսության համար, խռովում են, տեսնում են՝ քիթը կախեց: Ջղայնանում են, հետո ստիպված հասկանում, որ դժվար Է՝ համազգեստ հագնելով՝ երեկվա տղան մի օրում զինվոր չի դառնում, քիթն արդեն խփվել Է բանակի երկաթե կարգապահությանը, պիտի օգնես՝ հաղթահարի: Վիզենը փորձում Է, բայց իր սպայական ուսադիրներն, ախր, այդ տղաների համազգեստի հասակի են՝ երկու շաբաթվա: Դրանից Էլ մռայլ Է, հոգևած:

Վիզենը երազում Է խրամատների՝ իրեն հարազատ աշխարհը, որտեղ ամեն ինչ հասկանալի Է՝ էստեղ մենք ենք, Էստեղ՝ թուրքը,- ու քանի դեռ այդպես Է՝ պիտի ցանկացած անակնկալի պատրաստ լինես: Խրամատների, գետնատնակների, ձյունուսառնամանիքի այդ աշխարհում ապրելու եւ հաղթելու խնդիր Վիզենը գիտի տասնյոթ տարեկանից, հիմա պարտավորված Է նույնը սովորեցնել ուրիշների՝ դժվարանում Է: Ասում են՝ «Ադապտացիայի հարց կա», - Վիզենը համաձայն չէ՝ իբր ի՞նչ դժվար Է, երեկ քաղաքում իր համար ազատ թռչուն՝ աղջիկների հետ սուրճուշամպայն էր խմում, լավ էր անում, իսկ հիմա թող մոռանա եւ անթերի զինվոր դառնա: Բանակում ասում են, չէ՞՝ «Չգիտե՞ս՝ կսովորեցնենք, չէ՞ս ուզում՝ կստիպենք», - ահա հարցն այսպես են լուծում: Մնացածն ավելորդ բաներ են:

Մռայլ-մռայլ Է, հոգևած: Շեկ ունքերն իրար Է տվել՝ ինչպես Քաչալ սարից ձյունամշուշն Է իջնում անտառներին, բռնում ձորերը: Ուսումնական վարժաիրապարակի լուսարձակները մառա-

խուղի մեջ կայծոռիկներ են թվում:

-Վիզեն...

-Յո՞ւ, - մի պահ կտրվում է թղթերից ու հարցական նայում:

-Վիզեն, Շահումյանը հիշում ես:

-Բա ո՞նց, կարգին տղա էի՝ որ դուրս եկանք:

-Երազում տեսնում ես՝ ձեր տունը, դպրոցը, ընկերներիդ:

-Մեկ-մեկ, ինչու՞ ես հարցնում:

-Յե՛չ, ուզում եմ ցրվես, մի բան երգիր, հա՞:

-Էս է՛ պրծնեմ, հաց կերե՞լ ես:

-Կերել եմ, դու՞:

-Ժամանակ չկար, բայց որ մի բաժակ թեյ լիներ՝ կիմեի, քաղցր թեյ...

-Պանիր-հացով...

-Չէ, էդ շատ եղավ:

-Դե չկա՝ չկա, գոնե չուզե՞նա՞նք էլ: Վերջին անգամ ե՞րբ ես տա-
նը եղել:

-Մի երեք ամիս կա, էս հավաքը պրծնի՝ սրանց բարձրացնենք դիրքերը, խնդրելու եմ՝ արձակուրդ տան, քրոջս հարսանիքն է, - եւ նոթատետրի արանքներում Վիզենը փնտրում է քրոջ լուսանկարը. իր նման շեկ, գեղեցիկ աղջիկ է, հետո հավաքում է թղթերը, պլանշետ պայուսակը կախում: Մահճակին նստած՝ Վիզենը հիմա էլ աթոռն իր համար թմբուկ-նաղարա արած՝ տակտով խփում է եւ երգում: Չարմանալի բաներ է երգում Վիզենը: Ինչ- որ հայտնի մեղեդի է վերցնում, բառերն իրենից՝ ռուսերեն, որովհետեւ Շահումյան ռուսական դպրոց է սովորել, - եւ ոչ մի բանաստեղծություն էլ չկա . երգում է սիրուն աղջիկների մասին, որ դժբախտ են, խաբվում են փողով, ընկեր տղերքի, որ հեռու են՝ իր մտածած կյանքն է պատմում, բայց ամենաշատը՝ պատերազմից: Մի երգ նրան հիշատակ է մնացել Շահումյանից, ռուս գինվորի երգ է՝ աֆղանական պատերազմի հուշի նմանակությամբ: Ուշ է: Քնելու ժամ է, պառկում ենք, փաթաթվում գորշ ծածկոցներով:

... Ուսումնական շրջանն ավարտվել է: Չինվորներից ոմանք ըստ մասնագիտությունների առանձնացվել են՝ տարբեր ծառայությունների ուղարկվելու: Մեծ մասը համալրելու է դիրքային

գումարտակները: Վիգենն ուրախ է: Հրճվում է: Դասավորում է իրերը: Մաքրել - յուղել է ավտոմատը, բոլոր պահուսակները լրիվ լիցքավորել: Նոր գենք է ստացել՝ սպայական «SS» ատրճանակ, կախել գոտուց՝ պատյանով, աջուձախ հրամաններ է տալիս, ռուպեն մեկ՝ վագում գումհրամանատարի մոտ: Սիրտը թռչում է այնտեղ՝ լեռները, ուր ռազմաճակատի գիծն է, եւ ամեն ինչ պարզ է՝ էստեղ մենք ենք, էնտեղ՝ թուրքը, որ եկել՝ դեռ Գյուլիստանի հողի վրա նստած է, կեղտոտ սապոզներով կոխկրտում է Վիգենի հայրենիքը, եւ այդպես չպիտի մնա:

Մյուսը՝ քանի որ գումարտակի հրամանատարը զինվորական ուսումնարան է գործուղվել՝ իրեն նորակոչիկների հավաքի պետ են նշանակել եւ շատ գեղեցիկ է հնչում, երբ տողանի առջեւից խրոխտ քայլում՝ ստուգայցի եկած բարձր հրամանատարությանը հատու զեկույց է տալիս.

-Ուսումնական գումարտակը շարված է, զեկուցում է հավաքի պետի պաշտոնակատար, լեյտենանտ Սահակյանը;

Չէ, բանակում գիտեն՝ ով ինչի է ընդունակ, իսկույն նկատում են, որ մարդը ծնվել է հրամանտար լինելու համար: Նայում եւ հիանում եւ, թե ինչպես է ամենադժվար վիճակից,- երբ ուրիշ մեկն անելիքը չիմանալով՝ կսկսեր կմկմալ,- իր խելքուշնորհքով դուրս գալիս. ուրեմն արժանի է ավելի բարձր դիրքի եւ պաշտոնի:

Ահա՝ Հայկը: Ոչ բարձրագույն կրթություն է ստացել, ոչ՝ կարգին աշխարհ տեսել, ինչ գիտի՝ բանակից է, պատերազմից:

Մոտը ժամերով խոսիր՝ չի արձագանքի, եթե ասածը կռվից չէ: Շատ-շատ վերջերս աշխարհ ընկած բաներից կիտաքրքրվի՝ խոսքի օրինակ՝ ճապոնական ո՞ր տեսամագնիտաֆոնն է լավ, որովհետեւ ջահել-ազապ տղա է, գորամասն էլ՝ քաղաքից հեռու, փող ծախսելու տեղ չկա, սպայական բարձր աշխատավարձն այդպես հավաքվում, մնում է, խմող չի, ծխախոտ էլ բանակն է տալիս, թեեւ դրա հետ էլ գլուխ չունի՝ օրվա մեջ մի քանի հատ փստացնում է, եւ հավաքված՝ սպայական այդ աշխատավարձը գնում է Շուշի՝ ուսանողուհի քրոջը, որ դառնա վերջին նորածեւության մարգահագուստ, «Ադիդաս» կոշիկ ու կրեմ, մի սիրուն մայկա՝ որ կարելի է հագնել կամուֆլյաժի տակից, մնացածն էլ թող քույրիկը տնօրինի իր իմացածով: Ջահել աղջիկ է, քաղաք

տեղը բա հո ընկերուհիներից հետ չի՞ մնալու: Արար աշխարհում մի քույր, մի եղբայր են: Աստված է այդպես կամեցել, թե հայր-նումայրն են որոշել, որ ծնողի իրենց սերը երկու բաժին պիտի լինի միայն՝ այդ են ու իրար կարոտ քաշելով, միմյանց համար հեռու-հեռվից տազնապած,- քույրը՝ որ կրակի բերանում ախպեր ունի, ինքը՝ որ շունուգել շատացել է, քույրիկին էստեղ նեղություն կտան, վեր է կենում, արձակուրդի երկու-երեք օրը ճամփի վրա ծախսելով՝ հասնում է Շուշի,- ապրում են: Մանկությունը մնացել է հուշ:

Հայկն է, լեյտենանտ Սահակյանը, նորակոչիկների հավաքի պետ են նշանակել եւ օրը յոթ տակ կաշի են քերթում վրայից՝ շարային ստուգումից դժգոհ ենք, «Տեսակների մոտ երկու ծխուկ է ընկած՝ ու՞մ մեղքով՝ պարզիր եւ գեկուցիր, կարգազանցներին էլ պատժիր՝ համաձայն կանոնագրքի, վերակարգի զինվորները փնթի են՝ իսկույն փոխիր, բաղնիքն ինչու՞ չեք վառել՝ շաբաթավերջ է, եդ ո՞ր ծնողի մեքենան է տարածք մտել՝ ետ ուղարկիր շտաբ, էն զինվորը կաղին է տալիս, չլինի՞ խփել եք, տես հա՞՞ ծնող կգա, անձամբ ես պատասխանատու՝ մի կաթ սպիրտային խմիչք չտանեն զորանոց, ստուգում՝ նոր ցուցակով բաց ես թողնում իրենց երեխաների մոտ:- Պետ է, հրամանատար՝ գլխով պատասխանատու: Առաջին անգամ է, որ նորակոչիկներն ուսումնական շրջանն անմիջապես տեղում են անցկացնում: Մինչ այդ սպաները գնում, ուսումնական զորամասում վարժեցնում, համարյա պատրաստ զինվոր էին բերում:

Հայկն էլ երկու անգամ եղել է այնտեղ, փորձ ունի եւ համբերություն, բայց ուսումնական զորամասի պայմաններն՝ ուր, սա՞՞ ուր: Այնտեղ վարժահրապարակ կա, հրաձգարան, դասասենյակ եւ՝ ընդամենը մի վաշտի հրամանատար ես, իսկ հիմա ստիպված է չեղածից էլ ստեղծել: Ուսումնական հավաքի հրամանատարին տվել են երեք հարյուր զինվորացու եւ առաջադրել մարտական խնդիր՝ «Նորակոչիկների դասընթացները կազմակերպել եւ անցկացնել այնպես, որ քառասուն օր հետո բոլորն անխտիր հանձնեն ծրագրով նախատեսված քննությունները»:- Ասել են՝ «Հարցեր կա՞ն, լեյտենանտ Սահակյան»:- Հարցեր, իհարկե, կան, բայց չեն ասվում, դրա համար էլ արթնանում է ժամը հինգին: Թե ե՞րբ

Է քնել՝ նշանակություն չունի, այդ ժամին ոտքի վրա է: Հագնվել, լվացվել, սանրվել՝ հինգ թուպե, եւս հինգ թուպե՝ ամբողջ տարածքը շրջել է, ժամապահների զեկույցներն ընդունել, հետո անցնում է ճաշարան՝ «Նախաճաշը պատրաստ է»:- Ամեն ինչ կարգին է, ժամը վեց զրո-գրոյին տալիս է վերկացի հրաման, եւ ուսումնական ժամական գումարտակի օրն սկսվում է:

-Հայկ, էդքանը ե՞րբ ես սովորել:

-Ի՞նչ եմ սովորել, շատ քիչ բան գիտեմ,- պատասխանում է,- կարգին հայերեն խոսելն ի՞նչ է՝ դժվարանում եմ: Տասնյոթ տարեկանից կռվի մեջ էի, ես ու հերս միասին ծառայել ենք, ինչ տեսել՝ էն էլ սովորեցնում եմ, զինվորը «չէ» բառը չպիտի սովորի, ու ամենադժվարն առաջին օրերն են, բաց թողիր՝ էլ ետ չես բերի:

-Մտածե՞լ ես, որ մի օր հրամանատար ես դառնալու:

-Չէ, կռվի ժամանակ ո՞վ էր եդ մասին մտածում: Հետո, որ հրադադար եղավ ու առաջին համալրումն ստացանք, տեսա, որ ահագին տարբերություն կա մեր ու նոր եկածների միջեւ: Տեսնում ես՝ դիրքում իբր կանգնած է, բայց զենքն էսպես է բռնել՝ ոնց որ զոռով, մոտենում, մի երկու խոսք ես ասում, զգում ես՝ էլ առաջվա շշկվածը չի, մեջը տղամարդը կամաց արթնանում է, էդպես մեկ-երկու՝ տղան զինվոր է դառնում, աչքը բացվում է, հիմա ուղարկիր էն ամենավերջին պոստը՝ կգնա, կկանգնի, էդ ժամանակ հասկացա՝ կռվի փորձը մեծ բան է:

-Բայց միայն դա բավակա՞ն է:

-Ոնց ասեմ, էսօրվա բանակում՝ չէ, բայց մեկ էլ մտածում եմ՝ կռիվը որ վաղը նորից սկսվի՝ էդ կոնսպեկտ-բանը ու՞մ է պետք գալու:

-Դե, էսօր սովորում են վաղվա համար...

-Համաձայն եմ, բայց էլի եմ ասում՝ կռիվն ուրիշ է:

-Զո տեսած կռիվը:

-Երեւի: Ճիշտը որ ասեմ՝ էն ժամանակ էլ հասկանում էինք՝ սովորելու տեղ ունենք, ժամանակ չկար, սխալվելով սովորեցինք կռվել:

Տխրում է լեյտենանտ Սահակյանը: Երեւի՝ որ շատ բան չգիտի, բայց երեք հարյուր զինվորի հրամանատար է, մեկ էլ կողքին՝ Վիգենը:

Սա Չայկն է, լեյտենանտ Սահակյանը, տարիքի համեմատ՝ լուրջ, եթե զինվորի մոտ է խոսում, իսկ այնպես մեկ-մեկ տղայություն է անում Վիգենի հետ կամ դժգոհում, որ ինքն ընդամենը վաշտի հրամանատար է եւ օրեր է հաշվում՝ հավաքն ավարտվի՝ բարձրանա դիրքերը: Այնտեղ լավ է, տեղանքն անգիր գիտի, ամառվանից ամուր գետնատնակներ են շինել, խրամատները խորացրել՝ զինվորն ապահով լինի դիպուկահար կրակից, բանակում մարտական հերթապահությունից լավ բան չկա: Բայց ես ի՞նչ գործ ունեի այնտեղ:

Թեկնածու նախագահի հանդիպմանը բանակի սպայակազմը ներկա էր գումհրամանատարից բարձր մակարդակով: Եթե բուրրին հրավիրեին՝ եւ դահլիճը չէր տեղավորի, եւ գործը կմնար անտեր: Բանակի փոխհրամանատարը պատմեց թեկնածու նախագահի կենսագրությունը, ապա խոսք առավ ինքը՝ Գերագույն գլխավոր հրամանատարը եւ բացատրեց, թե ինչու է ուզում երկրորդ անգամ ընտրվել՝ որ եւ կայունություն լինի, եւ առաջընթաց: Ուրիշը մինչեւ սովորի, մինչեւ բանակը վարժվի նրան, հակառակորդը գուցե գայթակղվի եւ հարձակվի: Մի խոսքով, կարճ կապեց.

-Չարցեր չկա՞ն,- դահլիճին դիմեց թեկնածու նախագահը: Չարցեր չկային: Դահլիճում հավաքվել էին նրանք, ովքեր կամ հրամայում էին, կամ հրաման կատարում: Չարցի հետ գլուխ չունեին . ոչ հրաման տալիս է պետք, ոչ՝ կատարելիս: Չանդիպումը նախընտրական էր, թեկնածուն՝ գործող նախագահ: Ուրեմն՝ ամբողջ բանակի, բանակի հրամանատարության հրամանատար, ում հարց տալ կնշանակեր կասկածել: Կամ՝ լինել հիմար: Այդքան սպայի մեջ մեկը պիտի հիմարանար: Դա ես էի:

Եւ ահա պաշտպանական շրջանում եմ: Ամենահեռավոր, որտեղ ուղարկում են հիմարներին եւ կարգազանցներին, եւ ստացվում է՝ ինչպես ցարն էր Լերմոնտովին աքսորում Կովկաս կամ դեկաբրիստներին՝ Սիբիր: Նախագահն, իհարկե, ցար չէ, բայց իշխանություն ունի: Բանակի հրամանատարը՝ ավելի, եւ նրա ներկայությամբ թեկնածու նախագահին հարց տվողը եւ կարգազանց է, եւ հիմար: Ուրեմն, նրա տեղը ամենահեռավոր պաշտպանական շրջանն է, պաշտոնը՝ դաստիարակչական աշխա-

տանքների գծով վաշտի հրամանատարի տեղակալ:

Ուսումնական գումարտակում երեք սպա ենք: Հայկը հավաքի պետ է, Վիգենը՝ մարտական, ես՝ դաստիարակչական աշխատանքների գծով տեղակալ: Ապրում ենք հավաքովի տնակում, որ ունի նեղ միջանցք եւ դուռ- դռան՝ երկու սենյակ: Երրորդը փակ է: Միջանցքում դաշտային կապի հեռախոս կա: Հեռախոսի մոտ նստում է շարքային Աշոտ Շալջյանը: Հայկն ու Վիգենը նորակոչիկներին տանում են հրաձգարան, շարային պարապմունքների, հազարումի բան են հնարում, որ օրերն անցնեն: Ես հիմնականում պարապ եմ: Այստեղ ոչ թերթ են ստանում, ոչ հեռուստացույց կա: Նորակոչիկներին կարդալ եմ տալիս զինվորական երգումը, հետները դեսից- դենից գրուցում: Ստացվում է դաստիարակչական աշխատանք, թե՛ ոչ, հեռավոր գորամասում ոչ ոքի չի հետաքրքրում: Հրամանատարներին խելոք զինվոր չէ պետք, այլ՝ մարզված, կոփված:

Հրամայված է, որ քառասուն օր հետո գումարտակը պիտի մի մարդու պես ստորագրի երդման թուղթը, զենք վերցնի եւ բարձրանա դիրքեր, որ Քաչալ սարից ձգվում են մինչեւ Գյուլիստանի բերդը: Սա է: Ի՞նչ հարց: Չինվորը պարտավոր է ծառայել հայրենիքին: Որքան քիչ մտածի՝ այնքան լավ: Իսկ որպեսզի քիչ մտածի կամ առհասարակ չմտածի, հարկավոր է նրան բացատրել, որ բանակը մանկապարտեզ չէ, սպան դաստիարակ չէ: Մայրիկի մասին երկու տարի պետք չէ հիշել: Ոչ էլ՝ աղջիկների: Դրա համար առջեւում դեռ մի ամբողջ կյանք կա: Երկու տարին՝ հայրենիքին, որպեսզի կյանքդ իմաստ ունենա: Թե չէ ու՞մ է պետք մայրիկի փափկասուն բալիկը: Նմաններին աղջիկներն արհամարհում են: Որտե՞ղ: Թեկուզ՝ Իսրայել: Իսրայելի բանակում ծառայում են նաեւ աղջիկները: Այստեղ աղջիկներ չկան: Չորամասի միակ կիկը Նատոն է:

Նատոն բուժմասի պետն է: Դաշքեսանից է գաղթել: Իրենց գյուղում բուժքույր է եղել, բանակում դարձել է զորամասի հրամանատարի տեղակալ, թեեւ զինվորական կոչում չունի: Ապրում է առանձին տնակում, որը նաեւ բուժկետ է: Առաջին սենյակում Նատոն ընդունում է հիվանդներին, երկրորդը ննջարան է: Բակում կախովի լվացարան կա՝ փոքրիկ հայելիով, բայց Նատոն

հազիվ թե երբեւէ սանրվում է կամ շրթներկ քսում: Նրա դեմքը խիստ է: Երբեմն՝ ավելի, քան՝ զորամասի հրամանատարինը: Նատոն քիչ է խոսում: Մեկ- մեկ գալիս է ուսումնական գումարտակ: Ոչ դեղ է բերում, ոչ ճնշաչափ կամ ֆոնետոգրաֆ: Ի՞նչ կարիք կա: Չինվորին ո՞վ է իրավունք տվել՝ հիվանդանա: Ուրիշները փող են ծախսում՝ հասնում Շվեյցարիա: Այստեղ ամեն ինչ աստվածատուր է՝ սարեր, գոլ, մաքուր օդ: Մարդ այստեղ կհիվանդանա՞: Տասնութ- քսան տարեկան տղայի ի՞նչ հիվանդանալու ժամանակն է: Նատոն իր սկզբունքներն ունի. զինվորները հիվանդանում են երկու պատճառով՝ ծուլությունից եւ մտածելուց: Եթե մշտապես զբաղեցնես զինվորին, նա մտածելու ժամանակ չի ունենա եւ չի հիվանդանա: Մնացածը սուտ է: Դեղերն էլ՝ հետը:

Ուսումնական գումարտակի հավաքովի տնակները զուգահեռ երեք շարքով ձգված են ձորում: Մի բարակաջուր առու շարահրապարակը բաժանում է խուլ անտառից: Գյուղը վերելում է: Այնտեղ նաեւ Նատոյի բուժկետն է, որ հեռախոս չունի: Եթե պետք է՝ շարքային Շալջյանը գանգում է սակրավորներին: Նրանց տուն-զորանոցը բուժկետի մոտ է, մեկը գնում- կանչում է Նատոյին: Շարքային Շալջյանն, իհարկե, Նատոյին անմիջապես դիմելու իրավունք չունի, բայց այստեղ էլ ոչ Յայկն է հեռախոսին մոտենում, ոչ՝ Վիգենը: Կարգադրում են՝ «Շալջյան, Նատոյին կապի կանչիր»: Անցնում է մի կես ժամ, սակրավորների մոտից գանգում են եւ ասում, որ Նատոն տեղում չէ, տարածքից դուրս է: Քաղաք է գնացել:

Նատոն քաղաքից բերում է օղի եւ ծխախոտ: Չորամասը հեռավոր է, գյուղը՝ լքված- դատարկ, իսկ սպաները խմել սիրում են: Մեկ- մեկ էլ սրտները տալիս՝ բանակի անֆիլտրը շարտում, իսկական ծխախոտ են փստացնում:

Նատոն նորից քաղաք է գնացել, իսկ նորակոչիկ Սուրեն Ավետիսյանը հիվանդ է: Շարային պարապմունքի ժամանակ ուշագնաց ընկել է, տարել՝ զորանոցում պառկեցրել են: Դեմքը գունատ է, ճակատը՝ սառը: Կծկվել է բարալիկ ծածկոցի տակ. ծնկները գրեթե ծնոտին են կաչում եւ դողացնում է: Յայկն ու Վիգենը շարային պարապմունքը չեն ընդհատում: Նատոն չկա, սանիտարական մեքենան վերցրել՝ քաղաք է գնացել, իսկ նորակոչիկը եր-

կու անգամ արդեն փսխել է: Շալջյանին ուղարկում եմ՝ մոտը նստի: Քիչ անց նա ներս է վազում. «Թույլ տվեք զեկուցել, պարոն ավագ լեյտենանտ...»:

Ասա, ի՞նչ է եղել:

-Պարոն ավագ լեյտենանտ, թույլ տվեք զեկուցել, որ...

Դե ասա, թույլ եմ տալիս:

Պարոն ավագ լեյտենանտ, ես վախենում եմ:

Ինչու՞:

Պարոն ավագ լեյտենանտ, Սուրիկը լավ չի:

Վազում եմ հիվանդի մոտ: Նորից է փսխել:

-Շալջյան, գնա եւ այստեղ կանչիր ավագ լեյտենանտ Մկրտումյանին:

Շալջյանը գնում է: Հիվանդը շարունակ դողացնում է: Ատամներն իրար են զարնվում:

Սուրիկ,- ձեռքս դնում եմ ճակատին: Վառվում է:

Մի կերպ բացում է աչքերը: Հայացքը մշուշոտ է:

Ո՞նց ես, Սուրիկ;

Ցավում է:

-Ի՞նչդ է ցավում:

Ձեռքը տանում է աջ կողքին:

Երեւի կույր աղիքի բորբոքում է:

Շալջյանը ետ է գալիս.

-Պարոն ավագ լեյտենանտ, պարոն ավագ լեյտենանտն ասաց, որ չի կարող թողնել պարապմունքը եւ գալ:

Լավ, առանց նրա էլ մի բան կանենք, Շալջյան, վազիր եւ ծորակից մի շիշ սառը ջուր բեր:

Սառը ջու՞ր:

Այո, շատ սառը ջուր: Գերադասելի է՝ սառույց:

Ձմեռ է, բարակաջուր առուն՝ սառած:

Քիչ հետո Շալջյանը բերում է մի շիշ ջուր եւ մի քանի կտոր սառույց:

Օգնիր՝ հիվանդին մեջքի պառկեցնենք,- ասում եմ եւ ծածկոցը Սուրիկի վրայից քաշում:

Մեջքի ենք պառկեցնում, բացում փորը եւ սառույցը դնում աջ կողքին:

Ի՞նչ եք անում, պարոն ավագ լեյտենանտ, կմեռնի,- վախենում է Շալջյանը:

Եթե հինգ բոպեից ցավը մեղմանա, ուրեմն կույր աղիքն է բորբոքված, պետք է շտապ հոսպիտալ հասցնել: Մոտը նստիր:

Դուրս եմ գալիս զորանոցից: Շարահրապարակից դոփոփոյուն է լսվում: Հայկն ու Վիգենը զինվորներին վարժեցնում են: Ցուրտ է: Անտառը եղյամապատ է: Քաչալ սարի վրա մառախուղ կա: Իրիկնամուտին կիջնի, կլցվի ձորը: Բարակաջուր առուն սառույցների տակ անձայն հոսում է: Քայլում եմ մի փոքր տեղ: Ծխում եմ: Հասնում եմ սպայական մեր տնակին: Վերջ: Այստեղ զինվորական տարածքն ավարտվում է: Երկու քայլ այնկողմ մասրենու թուփ է՝ վառ կարմիր պտուղներով: Թեեւ դեկտեմբեր է, բայց պտուղները դեռ պինդ են: Մեկը պոկում եմ, ափիս մեջ տորրում, մազոտ սերմերը փչում- թափում եւ պտղամիսը դանդաղ, ծամոնի պես, ծամում: Սա էլ՝ այսօրվա հաճույքը: Ետ եմ դառնում:

Սուրիկը մեջքի վրա պառկած է:

Մեղմացա՞վ,- հարցնում եմ:

Այո,- կիսաձայն պատասխանում է նա:

Ձեռքը բռնում եմ՝ տաք է, երակազարկը՝ արագ:

Պառկիր, - ասում եմ,- քեզ երեւի հոսպիտալ տեղափոխեն:

Շալջյանը լուռ կանգնած է:

Դու մնա մոտը,- հանձնարարում եմ նրան:

Արդեն ճաշի ժամ է: Հայկն ու Վիգենը վերջացրել են շարային պարապմունքը: Նրանք ճաշում են սպայական մեր տնակում: Տապակած կարտոֆիլ են ուտում: Վիգենը գլխի շարժումով հրավիրում է: Ախորժակ չկա: Տրամադրություն չունեմ:

Էն նորակոչիկին պիտի հոսպիտալ ուղարկել,- ասում եմ:

Ի՞նչ է եղել,- գլուխն ամանից բարձրացնում է Հայկը:

Երեւի կույր աղիքի բորբոքում է,- բացատրում եմ, որ եթե սառույց ես դնում՝ ցավը մեղմանում կամ լրիվ կտրվում է, ուրեմն կույր աղիքն է բորբոքված, իսկ դա վտանգավոր հիվանդություն է՝ եթե չհեռացվի, կարող է պայթել...

-Հետո՞,- հարցնում է Վիգենը եւ նորից կռանում ուտելիքին:

Հետո այն, որ բորբոքված կույր աղիքը թարախալում է, իսկ

երբ պայթում է՝ թարախը լցվում է որովայնը..

Յետո՞,- Վիգենը կրկին բարձրացնում է գլուխը, իսկ Յայկը վեր է կենում տեղից:

Եթե ժամանակին չի վիրահատվում, հիվանդը մեռնում է:

Ի՞նչ:

Մեռնում է, դու մա՞րդ ես, թե՞ մեքենա: Հասկանում ես, տասնութ տարեկան տղան կարող է մեռնել, եւ պատասխանատուն դուք եք լինելու՝ դու եւ Յայկը: Յայկը եւ դու, որովհետեւ մեկդ փաստորեն գումարտակի հրամանատար է, մյուսդ՝ տեղակալ:

Իսկ դու՞,- հարցնում է Յայկը:

Ես էլ՝ ձեզ հետ: Բոլորս ենք պատասխան տալու, եթե նրան մի բան պատահի: Իսկ որպեսզի չպատահի, հարկավոր է զորամասի հրամանատարին զեկուցել: Թող հարեւաններից սանիտարական մեքենա խնդրի, բժիշկ կանչի քաղաքից: Ինչ ուզում է՝ թող անի, բայց չի կարելի անտեր թողնել:

Բայց ո՞վ կզեկուցի,- Վիգենը նույնպես թողնում է սեղանը:

Իհարկե՞ Յայկը,- ասում եմ:

Ես չեմ զեկուցի,- Յայկի դեմքը սրվում է:

Իսկ ես իրավունք չունեմ,- արդարանում է Վիգենը:

Ես ինքս,- որոշում եմ, - կգնամ՝ անձամբ իրեն կխնդրեմ:

Իրիկնամուտին հարեւան զորամասի սանիտարական մեքենայով Սուրիկին հոսպիտալ տարան: Երբ պատգարակով դուրս էին բերում, նա ժպտում էր: Ճակատին քրտինք կար, աչքերը շաղված էին:

Ամեն ինչ լավ կլինի,- ասացի:

Ի պատասխան՝ Սուրիկը գլխով արեց:

Սանիտարական մեքենան գնաց:

Մի ամիս անց Սուրիկը եկավ:

Նա ընկերներից ուշացել էր. ուսումնական գումարտակը վաղուց ցրվել էր: Սուրիկին պահեցին որպես կապավոր:

Մի օր նա քաշվելով մոտեցավ.

-Թույլ կտա՞ք, պարոն ավագ լեյտենանտ:

-Ասա:

-Պարոն ավագ լեյտենանտ, գիտեք ինչու՞ էի հիվանդացել:

Բոլորի մոտ էլ պատահում է:

-Գիտեմ, պարոն ավագ լեյտենանտ, բայց քաղաքի բժիշկն ասաց, որ իմը մրսելուց է բորբոքվել: Ավագ լեյտենանտ Մկրտումյանը մի գիշեր ինձ փոսն էր իջեցրել:

-Ու՞ր:

-Փոսը չգիտե՞ք, պարոն ավագ լեյտենանտ: Դա պատժի տեղ է՝ ձորում: Ով կարգը խախտում՝ տկլորացնում, իջեցնում էր փոսը: Շատ ցուրտ էր, ես այնտեղ եմ մրսել: Հաջորդ օրը ուշքս գնաց, հիշում եմ:

-Հիշում եմ, բայց դու աշխատիր մոռանալ: Ավագ լեյտենանտ Մկրտումյանը հիմա դիրքերում է:

-Ուզում եմ, պարոն ավագ լեյտենանտ, բայց ախր ի՞նչ էի արել...

-Գնա, գնա Սուրիկ,- ընդհատեցի ես,- տղամարդ ես, կմոռանաս:

Այդ օրը սրտի սուր տագնապ ունեցա: Մոտս նիտրոգլիցերին ունեի: Դա փրկեց: Մի շաբաթ պառկած էի: Երբ փոքր ինչ լավ զգացի, բարձրացա բուժկետ:

Նատո, ուղեգիր է պետք:

Կարգին բժիշկ ես եղել՝ չենք իմացել,- ասաց,- քաղաքին կարոտե՞լ ես:-

Եւ ուղեգիր չտվեց:

Նատոն հեռավոր զորամասի բուժօժանայության պետն էր եւ՝ միակ կինը:

Ննջասենյակում նա միշտ օդի եւ ծխախոտ ուներ, իսկ տնից - ընտանիքից կտրված սպաները սիրում էին խմել, եւ այդ օրերին Նատոն գուցե գեղեցկանում էր: Եւ նույն օրը, երբ նա մերժեց-ուղեգիր չտվեց, ես գումարտակի հրամանատարին ասացի.

Վաղը գնալու եմ:

Սպայական երեքսենյականոց տնակում, որտեղ մենակ էր ապրում, նա երեւի հենց նոր լոգանք էր ընդունել. դեմքը կասկարմիր էր, մազերը՝ դեռ թաց: Չարմացավ.

Էդ ո՞նց տես գնալ:

Մեկ-երկու, մեկ-երկու՝ ոտքով կհասնեմ Մատաղիս, Էնտեղ մի բան կանեմ:

Նա մեջքով դեպի ինձ շրջվեց: Դիմացի պատին հայելի կար,

կողքի սեղանիկին՝ թրաշի սարք: Վարժ ձեռքով նա թշերն օճանեց, անվտանգ ածելին վերցրեց - տաք ջրով թասի մեջ թաթախեց, ապա դանդաղ սահեցրեց ուռցրած այտի վրայով, հետո միայն հարկ համարեց ինձնից զգվել:

Չգիտեմ,- ասաց,- զահլա չունեմ, եղ՝ դու, Էն՝ Բանակի հրամանատարը: Թող մի բերան ասի՝ նույն օրն էլ ավտոն տակդ դնեն՝ գնաս քու քաղաք՝ քու գործին: Որ չի ասում, ուրեմն չի ներել, էլի: Ոչ առաջինն ես, ոչ՝ վերջինը:

Հա, բայց ուրիշները գոնե գիտեն՝ որքան են մնալու, ինչ են անում, փող են ստանում, վերջապես:

Ես կորած գեղ տեղը փողն ինչի՞դ է պետք: Ոչ խանութ կա, ոչ ճաշարան-բան: Հրեդ մեզ հետ ուտում-խմում ես:

Բայց ես կին-երեխա ունեմ...

Չգիտեմ: Կգնաս՝ կգրեմ, որ ծառայությունից փախել ես, կբռնեն-կդատեն:

Ես էլ բա եղ եմ, չէ՞, ուզում՝ որ դատ լինի՝ հարցնեմ, թե ես ի՞նչ պատիժ է, որ բանակի ավագ լեյտենանտը չորս ամիս է՝ մի լումա փող չի ստանում:

Ասաց.

Չահլա ես տանում,- եւ ածելին սահեցրեց մյուս այտի վրայով:

Դուրս եկա: Ուսումնական գումարտակի եռուզեռն արդեն խաղաղվել էր: Մարտ ամիսն էր, իրիկնամուտի սրսուռ ցուրտ:

... Կեսօրին արդեն Մարտակերտ էի: Գարիկ Խաչատրյանը դիվիզիայի քաղբաժնի պետն էր՝ նախկին լրագրող:

Էդ ի՞նչ ես անում, Էդ մտածե՞լ ես՝ գլխներիս ցավ ես բերում:

Ասացի.

Անմիջական պետ ես՝ մի բան մտածիր, Եսպես ապրելն ու՞մ է պետք,- սեղանի գլխին Գարիկը մթնեց: Մտածեց ու՝ թե.

Արի քեզ հինգ օրվա կալանք գրեմ:

-Ինչի՞, այ մարդ, Էդ բռնացնում ես:

Տխրեց.

Բան չես հասկանում. որ հինգ օրվա կալանք տամ՝ կպրծես: Ես ի՞նչ գիտեմ՝ Ստեփանակերտ քու համար ի՞նչ են որոշել: Կասեմ՝ իմ բաժին պատիժը տվել եմ՝ նստած է, Էդպես վայ թե մոռանան:

Գարիկի հետ ոսպապուր կերանք: Նախկինում այդտեղ «ՃԱՆ-ՇԻՆ» գրասենյակ կար: Պետն էլ Ավետիսյան Աշոտն էր: Ճաշա-րան էր բացել, օժանդակ տնտեսություն ուներ: Երբեմն Աշոտին հանդիպում էի: Խմում էինք:

Գարիկն ասաց.

Հիմա ի՞նչ ես անում:

Մարտակերտ՝ հիվանդանոցի մոտ տեսել էի Բանակի քաղ-բաժնի «Նիվա»-ն:

Չէ, ինձ բան չեն ասել: Ապուրի ափսե՛ն Գարիկը սեղանի վրա-յով գեղեցիկ սղոցորեց: Արդեն փոխզնադպետ էր: Իրեն թույլ էր տալիս կոպտություն անել: Բայց դուրսը Մարտակերտի վաղ գարնան զգվելի ցուրտն էր: Անդուռ- անլուսամուտ տեղ է, եւ քա-մին բոլոր կողմերից է փչում:

Պիտի գնամ,- Գարիկն արաղ չէր հյուրասիրել, եւ կարծես մը-սում էի:

Ասաց.

Քու շառի հետ գլուխ չունեմ:

...Գարիկի մոտից դուրս եմ եկել եւ գիտեմ՝ քաղբաժնի «Նի-վա»-ն Մարտակերտ ինձ համար է եկել: Իրեն տեսնում եմ՝ Պետ-րոսյան Էդիկին: Մլուլ է տալիս՝ մինչեւ բռնացնի: «Դե քու տիրու-մերն էլ, ես Մարտակերտ տեղը հազար ծանոթ ունեմ, բանիդ գնա»,- Ավթանդիլյան Սլավիկի տունը՝ հրեն: Սլավիկն իմ աներ-ձագ Գարիկի աներն է: Կինը՝ Վերան, Օհանյան Սերգեյի փռում հացթուխ է: Նրանց ներքնահարկը մի թաքուն գրավչություն ու-նի. Սլավիկը բերել է՝ Ադդամից, մի երկու տակառիկ «օղլու» արաղ: Խմում ես՝ թույլ, քաղցրոտ բան է, բայց լավ հարբեցնում է: -Գնամ Սլավիկենց տուն:

Գարիկ Խաչատրյանը դիվիզիայի քաղբաժնի պետ է: Սլավիկն ինձ կհասկանա: Նրանց տանն անիմաստ հարցեր չեն տալիս: Գլուխս թեթեւ պտտվում էր: Ճանապարհին Ագատյան Կամոյին տեսա՝ տուն էր գնում: Պետական իշխանավորի գործը պրծել՝ մի բաժակ քաղցր թեյ էր խմելու: Բարեւեցիկը-անցանք: Ոչ մի գյու-ղի տղա ենք, ոչ՝ բան:

...Կինս Սլավիկենց տանն էր: Բարի լուր էր բերել. «Գարեգին

Ղազարյանը Բանակի «Նիվա»-ն ուղարկել է՝ քեզ քաղաք տանեն, ու՞ր էիր»:- Պիտի Տոնաշեն նստեի՝ Էդիկ Պետրոսյանը գար՝ ինձ կալանած տաներ:

-Ես կապիկ չեմ, որ փակ «Նիվա»-ով Ստեփանակերտ տանեն:

-Բա ի՞նչ ենք, հիմի մենք կապիկ ենք,- նա լաց եղավ:

Սլավիկենց տանը լոբախաշու կար: Կանաչ լուլիկի թթու ունեին՝ «օդլու» արաղի հետ լավ էր: Գիշերով հասանք Ստեփանակերտ: Մենք՝ «Մոսկվիչ» տաքսիով, Էդիկն՝ իր «Նիվա»-ով: Ուղիղ՝ Բանակի շտաբ: Չէ, ի՞նչ եմ ասում, կնոջս իջեցրինք հանրակացարանի խաչմերուկում: Գնաց, որ երեխեքին աջբալուսանք տա. «Ձեր հորը մի տասը օրով կնստեցնեն, հետո լրիվ ազատ կլինի»:

Գարեգին Ղազարյանը կալանքի թուղթը դեմս դրեց. «Բանակի հրամանատարի կարգադրությունը չկատարելու համար... ենթարկել տասնօրյա կալանքի», - ասացի.

-Կներես, բայց էստեղ սխալ է, Բանակի հրամանատարի կարգադրությունը ես կատարել՝ չորս ամիս է՝ Տոնաշեն եմ:- Նայեց, թե.

Ճիշտ ես ասում, ես ի՞նչ եմ գրել:

Ինձ թողեց՝ Հրամանատարի մոտ գնաց: Կես ժամից եկավ: Նոր կարգադրագիր էին ձեւակերպել. «Անմիջական հրամանատարի կարգադրությունը չկատարելու համար...»: Ծառայողական իր մեքենայով տուն ուղարկեց: Հանրակացարանի մեր սենյակում սեղանն արդեն պատրաստ էր: Խմեցինք եւ ուրախացանք: Սքանչելի երեկո էր:

... Առավոտյան վերցրի կնոջս պատրաստած պաշարը, մի քանի գիրք: Տաքսի կանչեցի.

Քշիր ռազմական ոստիկանություն:

Տաքսու վարորդը կարծում էր՝ ինչ-որ մեկին հաց- մաց եմ տանում:

Ինչքա՞ն սպասեմ:

Տասը օրից նույն ժամին էստեղ լինես,- ասացի, վճարեցի հինգ հարյուր դրամը եւ թակեցի երկաթե դարպասը: Նա մատը տարավ քունքին, պտտեց: Ես ժպտացի, եւ մեքենան պոկվեց տեղից:

ՌՈ պարետատանն ինձ չստուգեցին: Ամեն ինչ ասված էր: Երբ սպայական կալանախուց մտա՝ լայներես մեկը մոտեցավ.

Բարեւ,- ասաց,- ինձ էականումն է էստեղ կոխել:

Ի՞նչ տարբերություն,- զարմացա:

Էն՝ որ քանի դու էստեղ լինես՝ չեն ծեծի: Դյավոլն ասել է՝ «ոչ մեկին ձեռ չտաք, մի կլյաուզնիկ ժուռնալիստ են բերում»:- Լայներեսը վերցրեց ձեռքիս կապոցները:

Դյավոլն ո՞վ է,- հարցրի մահճակին փռված երիտասարդին:

Էստեղի մեծավորն է, Դյավոլին չե՞ս ճանաչում,- զարմացավ լայներեսը:

Է՞ն Դյավոլը,- հարցրի:

Յա, հիմի էստեղ է, փոր է կոխ տալիս:- Լայներեսը բացում էր ուտելիքի տոպրակը:

Դրսում ոչ ձյուն էր, ոչ արեւ, ոչ՝ անձրեւ:

Մարտ ամիս էր, մենք՝ կալանքի տակ երեք սպա...

Ռոբերտ Քոչարյանը նշանակվել էր Հայաստանի վարչապետ:

Միշիկը եկավ...

Միշիկը անցավ...

Միշիկը որ տեսի...

Կորած գյուղ է: Բայց անունը դրել են Պաշտպանական շրջանի կենտրոն: Եկել՝ 1994 թվի մայիսին հասել են մինչեւ Տոնաշեն ու կանգնել: Կանգնե՞լ են, թե՞ ասել են՝ «պիտի կանգնեք, էստեղից առաջ գնալու իրավունք չկա», - էդ արդեն Յովիկ քեռու խելքին չի հասնում. «Գազ 66» տեսած կա՞ք, էդ ամենագնաց մեքենայով Յովիկ քեռին հաց է տանում հեռավոր դիրքերն ու չի հասկանում, թե՛ «ախր, էս ո՞նց եղավ, որ Ինջա գետին հասանք ու մնացինք էս ջահանդամներում»:- Մարտակերտի Տոնաշեն լինի, թե Հայաստանի Շիրազլու՝ Յովիկ քեռու համար աշխարհը դժվար «ջահանդամ» է, քանի որ Վերինշեն՝ իր տան-դռանը չէ:

Մի անխելքն էլ՝ դու, - իմ մասին ասում է նա եւ ամեն օր, հենց հացը դիրքերում բաժանում-ետ է գալիս, Յովիկ քեռին առանց թակել բացում է սպայական մեր տնակի դուռն ու, գլխարկն աչքերից մի քիչ վեր բարձրացնելով՝ հրավիրում՝ գնանք Գառնոյի փուռ, որտեղ մի փոքրիկ սեղան կա, վրան՝ անտառի ինչ-որ կենդանու խաշած միս, երկու թեւ կաղամբի թթու, կես շիշ տնաքաշ արաղ, որ երբ խմում-վերջացնում ենք, Յովիկ քեռին Գառնոյին աչքով է անում, եւ շիշը դարձյալ կիսատ սեղան է բերվում:

Էդ ինչի՞ կես-կես ես բերում, Յովիկ քեռի:

Որ քեռեկենիդ «ձախ չգնա» հանկարծ,- եւ Յովիկ քեռին մինչեւ արցունքոտվել ծիծաղում է, որից նրա լերկ գլուխը բազուկի պես կարմրում է:

Արաղը սատանի խմիչք է, որ շատ տեսնես՝ կհարբես,- բացատրում է նա եւ նորից Գառնոյին աչքով անում:

Յովիկ քեռին Տոնաշենի ծմակներում հոն է քաղում, գլեռ, մասուր, շլոր:

Միշիկից թթվի դատարկ ուշատ եմ վերցրել՝ ես արաղն իմ մաքուր քաշածն է,- Յովիկ քեռին բաժակներն ինքն է լցնում, Գառնոյի մասին ասում է.

Ես լակոտը սատանի հանք է, հարբեցնում է:

Իբր՝ երբ Գառնոն է բաժակ լցնում, արաղը գլխին է խփում: Բայց ճիշտն այն է, որ արաղը քիչ է, իսկ Գառնոն լիքը-լիքն է լցնում, թերատ շիշը, մինչդեռ, հինգ-վեց անգամ սեղան է գալիս: Բայց երբ քեռի Յովիկն է մատռվակում, խմելը դառնում է փիլիսոփայելու պես. ամեն բաժակի վրա նա պատմություն է անում՝ մոտ եւ հեռու անցյալից: Եւ այդ պահերին մսի պատամները ետ՝ սեղանի են դրվում, հացի կտորն իր համար ննջում է, կաղամբաթթուն՝ լիկում:

Յրաշք պատմող է Յովիկ քեռին: Կարող է անգիր ասել, թե Րաֆֆին Գյուլիստանի որ գյուղի մասին ինչ է գրել, բայց ընդամենը յոթերորդ դասարանն է ավարտել: Ամենագնացի խցիկում Յովիկ քեռին պահում է բանակի «Մարտիկ» թերթի բոլոր համարները եւ գիտի, որ այնտեղ մի քանի բան էլ ես ունեմ գրած: Ասում է.

Էն՝ որ մեր Նովիկի մասին պատմել ես, հետը խոսած կա՞ս:

Մի անգամ հանդիպել եմ, ինչ պատմել է՝ ասել եմ:

Բա մոտը չես գնացե՞լ, ինչ էստեղ ես:

Ի՞նչ ասեմ Յովիկ քեռուն: Չորամասում գրեթե աքսորական եմ: Սպաներից միայն Արողյա Խալափյանն է հետոս «բարեւ-բարի լույս» փոխանակում: Մյուսները խուսափում են՝ ինչպես ժանտախտից: Ի՞նչ կարող եմ անել, եթե Բանակի հրամանատարի կարգադրությամբ եմ Տոնաշեն ընկել: Ոչ ռոճիկ եմ ստանում, ոչ պաշտոնս գիտեմ: Ուղղակի ասել է՝ «գնա, Էստեղ խելքդ գլուխդ

կբերեն», - եւ մի- երկու ամիս է՝ Տոնաշեն եմ:

Այդքանն, իհարկե, Յովիկ քեռուն չեմ ասում: Բայց նա ամեն ինչ հասկանում է: Գառնոն էլի մի կես- շիշ տնաքաշ արաղ է դնում սեղանին, եւ Յովիկ քեռին քառորդ չափով լցնում է սրսռոտ բաժակները: Ոտքի է կանգնում: Բոլորս հետեւում ենք նրան:

Չէ, դուք նստեք,- բաժակը սեղմում է ափի մեջ՝ ասես ամրութունն է փորձում, մի քանի վայրկյան լռում է, կոկորդը մաքրում, որից նրա կնճռոտ ճակատն ու պարանոցը քրտնում են, ապա հանդիսավոր սկսում,- ես ես բաժակով խմում եմ էն մարդու կենացը, որ ինչքան էլ բարձրանա՝ չի մոռանա, որ կրիան պատյան ունի:

Գառնոն ասում է.

-Ի՞նչ կրիա, ի՞նչ պատյան, Յովիկ քեռի, մարդս աղա պիտի լինի:

Յովիկ քեռին դանդաղ խմում է տնաքաշ արաղի քառորդ բաժակը, մի թեւ կաղաբաթթու վերցնում՝ դնում բերանը: Ծամում է երկար՝ ասես ատամ չունի: Յետո միայն իր բաժակը կիսով լցնում է, դարձյալ ոտքի կանգնում.

Ողորմածիկ տատս ասում էր՝ «կրիան պատյանից դուրս եկավ, պատյանը չհավանեց»:

Եւ գնում է: Յասակը՝ ցածր, ուսի մեկը՝ ծուռ: Ոտքերին՝ ռետիկետ սապոգ, մգդակած շալվարի փողքերը՝ վրան լայն, քամուց տարուբերվում են: Եւ թվում է՝ ոչ թե քեռի Յովիկն է քայլում, այլ ձմեռնամուտի սառը մշուշն է նրան տանում:

... Ուշ երեկոյան քեռի Յովիկը սպայական մեր տնակի դուռը ճնչոցով բացեց: Վիզենը կոնսպեկտ էր գրում: Յայկը զինվորական բաճկոնի կոճակն էր կարում: Ես հագուստ-կապուստով պառկած էի մահճակին՝ ծալած բուշլատը գլխատակիս: Քեռի Յովիկը խմած էր: Ասաց.

-Դուրս արի:

Բարձրացա, հագա բուշլատս: Վարժաիրապարակի լուսարձակները մառախուղի մեջ հագիվ կայծկլտում էին: Ցուրտ էր: Ասեղնահատիկ ձյուն էր գալիս: Անխոս հետեւեցի քեռի Յովիկին: Բայց այս անգամ փուռ չգնացինք: Չուգահեռ ձգվող տնակներից մեկի մոտ նա կանգ առավ, որպեսզի գնալիքս իմանամ: Յետո

թափով մի դուռ բացեց եւ կանչեց.

Միշիկ, էստե՞ղ ես:

Չետեւեցի նրան: Սենյակում գրեթէ կիսախավար էր: Սեղանի գլխին նստած էր զինվորական առանց տարբերանշանների համազգեստով մի չորուկ մարդ, որի գլուխը սպիտակ-ճաղատ էր, ականջները՝ լոշտակ: Ազդու էր նրա հատկապես ծնուտը՝ երկար, սուր, բայց մանավանդ՝ այտից իջնող խոր սպին:

-Նստեք,- քաղաքավարի հրավիրեց անծանոթը՝ նկատի ունենալով ինձ, քանի որ քեռի Յովիկը փառավորապես տեղավորվել էր զինվորական նեղլիկ մահճակալին եւ արդեն ռետինե սապոգներն էր հանում: Նստեցինք դեմ-դիմաց: Ճաղատ անծանոթը միերկու հարց տվեց՝ ո՞վ եմ, ինչու՞ եմ ընկել Տոնաշեն: Ասացի՞ ինչ որ ինքն էլ գիտեր: Նա խոժոռվեց.

Ուրեմն անմեղ տե՞ղն ես, էլի, էստեղ:

Ո՞վ ասաց, ուղարկել եմ, պիտի հրամանը կատարեմ,- ասացի եւ այն է՝ ոտքի էի կանգնելու, անծանոթը ոսկրոտ ձեռքի կտրուկ շարժումով ստիպեց, որ կրկին գամվեմ աթոռակին.

Յովիկ քեռին քու մասին պատմել է, էս գորամասի Միշիկը ես եմ, դու էլ էսօրվանից քեզ լրիվ ազատ զգա:

Քեռի Յովիկը բուշլատի գաղտնագրպանից, որտեղ սպաներն ատրճանակ են պահում, հանեց մի լրիվ շիշ օղի: Միշիկը գոռաց.

Շալջյան, էն բաները բեր,- եւ հանձնակատար զինվորը սրբիջով ծածկած սկուտեղը դրեց սեղանին:

-Վիրենի խոզի խորոված է, կերած չես լինի,- Միշիկը երաթաթի թիակը դրեց իմ ափսեում: Խմեցինք: Կերանք: Էլի խմեցինք: Եւ աշխարհը պայծառ, կյանք հեշտ էր: Չկար միայն Միշիկի եւ քեռի Յովիկի Վերինշենը, որ մնացել էր խրամատից այնկողմ՝ օտար ոտքի կոխան:

... Մի ամիս անց Բանակի հրամանատարը կարգադրեց, որ ինձ Տոնաշենից տեղափոխեն ռազմական ոստիկանության կալանախուռ: «10 օր թող նստի՝ հետո պահեստագոր կարճակենք»:

Սպայական կալանախցի դուռը չէին կողպում: Կես-բանտարկյալ, կես-ազատ էինք: Տնից հաց- մաց էինք ստանում, երբեմն էլ՝ օղի: Կալանքի երրորդ օրվա երեկոյան Միշիկին բերեցին: Ինչ-որ դժբախտ դեպք էր եղել՝ բարդել էին վրան, թեեւ հրամանով պայ-

մանագրային շարքային էր գրանցված:

Հաջորդ օրը երկար սպասեցի, բայց տնից ուտելիք չկար: Ընթրիքի ժամին ստացանք մեր բաժին կես-հացը՝ սեւ, խմորակուլով: Միշիկն ասաց.

Տնից որ բան են ուղարկել, լրի՞վ եք կերել:

Յելոֆանտ տոպրակը պտռեցի, քրքրեցի՝ դատարկ էր: Մի սրվակ գտա, մեջը՝ մանանեխ, որ կինս էր դրել՝ նրբերշիկի հետ:

Բեր, տիրումերն էլ, էլի տան հոտ կա, բեր,- Միշիկը մեր կես-հացերը պճղեց, մանանեխ ցանեց, կերանք: Այն է՝ վերջացրել էինք, կալանախցի դուռը բացվեց: Իմ համազյուղացի Էդիկն էր, տնից հաց էր բերել, ասաց.

Ներող կլինես, ժամանակ չկար, կեսօրից հետո է:

Կինս կոտլետներ էր դրել, կանաչի, սոխ, պանիր, մի շիշ տնաքաշ:

Ռուսն ասում է՝ ճաշից հետո էլ ի՞նչ մանանեխ, բայց մերը ճաշից առաջ էր, չէ՞,- Միշիկը բաժակները լցրեց: Խմեցինք: Չորսով էինք: Այն երկուսին արդեն մոռացել եմ:

Հինգ օր անց ես դուրս եկա: Միշիկը մնաց: Հետո լսեցի՝ գործը կարճել, մեղավոր են գտել քեռի Հովիկի՝ ջոկի հրամանատար տղային: Զանի՞ տարվա կալանք էին որոշել՝ չիմացա:

2005 թվի ամռանը գնացել էի Ումուդլու: Զեռի Հովիկին տեսա՝ դպրոց էր եկել՝ պատգամավորության թեկնածուի հետ հանդիպման: Փշրված, հանգած էր: Միշիկից հարցրի: Խամրած աչքերը դաժան կայծկլտացին.

Միշիկը քուլումը ծառի տակ է ընկել՝ մեռել...

Եւ այս պատմությունը, երբ դեռ բանակային թերթի խմագիրն էի՝ այդ օրերից մնացած, ծաղկեց հիշողությանս խորքերից.

«Բարեւ, քեռի, ես փողը ձեր աղջիկն է տվել՝ հարյուր քսան դրամ, տեսա՝ խանութից բան է առնում, ձեռքինը հինգ հարյուրանոց էր, մտածեցի՝ հարուստի երեխա է, ճի՞շտ եմ նկատել, խնդրեցի, ինքը տվեց, հետո մի տատիկ հիսուն դրամ տվեց, եղավ հարյուր յոթանասուն՝ մի հացի փող, բայց ձեր աղջիկը հետո եկավ, թե «Պապաս քեզ կանչում է, պապաս քեզ ուզում է տեսնի», - հո սխալ բան չե՞մ արել, քեռի, եթե չէիք ուզում՝ վերցրեք ձեր հարյուր քսան դրամը, վերցրեք, թող ես տուն գնամ,

քեռի»:-

Կոշիկները դուրսն է հանել՝ սանդղահարթակին, վերարկուն դեռ վրան է՝ երկար, քրքրված, գլխարկը՝ գինՎորական ականջակալ՝ քուղերը ծնոտի տակ պինդ ագուցած, այդպես միջանցքում կանգնել՝ փողը ձեռքին խոսում է, իսկ աչքերը նայում են սենյակին՝ իր համար ուզում է պարզի՝ ի՞նչ մարդու տուն է ընկել, դժվարանում է, որովհետեւ եթե հինգ հարյուր դրամը տվել ես երեխայի ձեռքն, ուղարկել խանութ՝ ծխախոտի, ուրեմն վատ չես ապրում, բայց տանդ տեսքը հարուստի չէ, վրա գլուխդ գործից եկած մարդու՝ թերմաշ մարզահագուստ, տանու գործած սվիտեր՝ իրեն բարձր դիրք չեն հուշում, դեմքիդ էլ ոչ բարկություն կա, ոչ՝ ատելություն, իրենից ավելի շփոթված՝ ասես այդ ամոթը քոնն է, քո տղան է փողոցն ընկած մուրում՝ նայում ես ու հրավիրում՝ ներս գա, ուզում ես վերակուն բռնել՝ խոյս է տալիս, ասում է՝ «Աստված, դու ինձ ես նեղ տեղից ազատես.»,- ասում է «Քեռի, ես գող չեմ, խուժան չեմ, ինձ համար փողոցն ընկած՝ ողորմություն եմ անում, ու՞մ եմ վնաս տալիս, բարի մարդիկ են պատահում՝ գոհ եմ մնում, չար շատ կա, դրանց հետ գործ չունեմ, ուշուց ես տալիս, խփում, բռնում՝ ավտոբուսից շարտում են. «Լակոտ, փող որ չունես, ու՞ր էիր նստում»,- բա ի՞նչ անեմ, ես ձյունուցեխին ոտներս մրսում են, քաղաքն էլ՝ մեծ, ճամփաս՝ երկար, որ մի երկու-երեք կանգամ թողնեն նստեմ՝ ի՞նչ կլինի, մեծ ավտոբուս է, դատարկ գնում- գալիս է՝ նստող չկա, դուք են դեղին ավտոբուսը նստում եք»:-

Մի կերպ բերել եմ սենյակ, վերարկուն կախել եմ, բայց գլխարկը չի հանում, փողը ձեռքին՝ բազկաթռռի ծայրին այնպես է նստել՝ կեղտոտ գուլպաներով ոտքերը հատակին չհասնեն ու հարցական նայում է՝ հը՞:- Ասում եմ՝ «Մեկ-մեկ նստում եմ, իսկ ընդհանրապես՝ որ գործից չուշանամ՝ երթուղային տաքսի»:- Աշխուժանում է՝ «Տեսնու՞մ եք, քեռի, ձեզ նման շատերը կան, քանի որ եղ ավտոբուսը դանդաղ է գնում, մենակ ծերերն են նստում, իսկ վարորդը չար է, ինձ չի թողնում»:-

-Ախր տոմս պիտի վերցնել,- ուշադիր ինձ է նայում.

-Գիտեմ քեռի, տոմսն արժե տասը դրամ, բայց որ փող չունե՞մ:-

Տարել են խոհանոց, առաջը հաց են դրել՝ դուրս եկել, աղջիկս վիզը ծռում է «մեղք է, չէ՞», - իրեն դուրս է բերել այս հարաբերական ապահովությունից՝ հիմա ճղած կոշիկից դուրս պրծած բթամատի ցավով զգում է կյանքի դառնությունը:

Հաց իբր թե կերել՝ նորից կանգնել է՝ «Քեռի, յոթ երեխա ենք, մերս գործի չի գնում, առաջ թաշկինակ-բան է կարելիս եղել, հիմի էդ գործատեղը փակ է, պուճուր ախպերիկ ունեմ՝ երեք տարեկան, հերս կռվել է, շատ տեղեր է կռվել՝ Աղդամ, Ֆիզուլի, հա, Մարտակերտ, են որ կռվում թուրքերից ավտոմատ են է խլել, հերս էլ է մի հատ բերել տուն, հետո միլիցիայից եկան, հանեցին, տարան, հորս էլ դատեցին, երեք տարի գործ են տվել, կեսը նստել է, քեռի, ես գող չեմ, Աստված վկա՝ տալիս են՝ գոհ եմ, իրենց համար աղոթք եմ ասում, չեն տալիս՝ իրենց գործն է, բայց թող չխփեն, ես ի՞նչ մեղավոր եմ, թաղում գիժ են ասում, բայց ես գիժ չեմ, գժերի դպրոց եմ գնում՝ էստեղ գրքերը ձրի են տալիս, շորմոր են տալիս՝ դրա համար, յոթերորդ դասարան եմ գնում, մերս ասում է՝ «Ութն ավարտիր՝ տալու եմ արհեստի», - ճիշտ է ասում, ութն ինձ հերիք է, սովորեմ ի՞նչ անեմ»:-

Վերարկուն հագել՝ դուրս է գալիս, կոշիկները մեծ, քրքրված են, հենց այնպես մտնում է մեջները եւ ժպտում՝ «Շնորհակալ եմ, քեռի, Աստված ձեզ պահապան, երկու հացի փող ունեցա», - շրջվում է, որ իջնի՝ ետ է դառնում՝ «Քեռի, գարունը գա, օրերը տաքանան՝ բոստան եմ անելու, հերս բոստանատեղ ունի, գնալու եմ փորեմ՝ կարտոֆիլ ցանեմ, ջուր էլ կա, լոբի եմ ցանելու, գազար, կաղամբ, վարունգ, պոմիդոր, ամառը լի կուտենք, ավելն էլ կանենք ձմռան պաշար»:-

Ժպտում եմ.

-Հա, էդ մեկը լավ ես մտածել:

-Քեռի, բա ես հո գի՞ժ չեմ,- եւ գնում է: -

Պատուհանդ բաց, պարոն, իր ճանապարհն ուրիշ էիր ասել, ինչու՞ այսպես եղավ, որ լքված գյուղի տները փլված են, եւ շոգ միջօրեին երբեմն մողեսը պատի ճեղքախոռոչից գլուխը հանում, նայում է պարապուտներին, ապա անճոռնի -փութկոտ ետ քաշվում, եթե հասցնում է փրկվել օձի կախարդանքից, որ հին կյանքի հուշերով գալիս, լիզում են արտեզյան ջրհորերի ցամաք բե-

տոնը, առունների կավահողը եւ կատաղի ֆշշացնում, եւ արեւը շիկացնում է, մրկում տափաստանը:

Իսկ Շունն ուռուտում էր ապաստանել: Դեմ- դիմաց՝ իր թաքստոցից նա տեսնում էր հողապատնեշի մեջ փորված տնակը, դաշտային խոհանոցն ու ջրի կլորափոր մեքենան, որ անցյալ երեկու եկել ու կանգնած էր, եւ ծարավն ավելի էր տանջում: Մեկ-երկու ցատկը նրան կհասցներ տնակի մոտ՝ ամեն օրվա պես, բայց հովտում երբեք այդքան համր լուռություն չէր եղել, եւ վաղ առավոտից Շունը թաքուն երկյուղ էր զգում: Շուրջըլորն ամեն ինչ անշարժ էր, եւ տնակի մոտ անցուդարձ չկար: Շունն անքթիթ նայում էր ուղիղ դիմացը: Աչքերն արցունքոտվում էին: Ուռուտի մեճ արմատներով հագիվ պահված՝ նրա փորատակի հողը զզվելիորեն տաք էր: Շունը փորձելու էր թաթերով մի փոքր փորել, բայց գետինը պարի պես պինդ էր:

Նա ոչ ժամանակի զգացողություն գիտեր, որպեսզի կարողանար անցյալը բաղդատել ներկայի հետ, ոչ հիշողություն՝ տարբերակելու տափաստանային ամայությունը վաղուցվա անցուդարձերից: Շունը չգիտեր՝ ինչ է անում եւ ինչ է լինելու վաղը, հաջորդ օրը, ինչ էր եղել երեկ. մեկ եւ նույն օրը նրա համար սկսվում էր կերի եւ ջրի փնտրտուքով եւ ավարտվում, երբ ունենում էր երկու բերան լափ եւ մի լեզու թրջելու ջուր: Երբեմն տնակի տերերը բարիանում՝ ճմռթված ամանով լափ էին տալիս, բայց ավելի հաճախ խփում- հեռու էին քշում, եւ Շունը երկար ժամանակ տխրում էր:

Մարդկանց նա գիտեր հողագույն կամ խայտաբղետ հագուստներով եւ ձայներով, բայց նրանց արարքներից ոչինչ չէր հասկանում: Եւ չունեի իր տեսակից ուրիշ մեկի գոյության զգացողություն կամ կարոտ. օրվա հաստատ մի ժամի դուրս էր գալիս ուռուտից, հոտոտում հեղեղատի չորահունը, ապա գլաքարերի վրա կարճ ցատկոտոցով հասնում տնակին եւ ծմրկում՝ դունչը վեր պարզած: Դա նրա գիտեցած միակ խնդրանքն էր:

Մարդկանց հարափոփոխ վարքից, օձի թշնամանքից եւ մողեսի վախլուկ փախուստից գատ Շունը ոչինչ չգիտեր, դրա համար էլ թողել էր լքված գյուղի ավերակները եւ թաքստոց ընտրել ուռուտը եւ գոհ էր, որ մոտերքում կեր է գտնում եւ ջուր, թեեւ եր-

բեմն դժվար էր լինում տնակի զարմանալի արարածներին այդ-
քան պարզ պահանջը հասկացնել. նա դիմանում էր, քանի որ շր-
ջակայքը չէր հուշում, որ մի տեղ կյանքն ավելի հեշտ է գեղեցիկ
է: Նրա մեջ վարժեցված չէր բակապահը, որսաշունը, գելխեղը,
որովհետեւ մարդու տուն չէր տեսել եւ գուցե կթողներ, կգնար,
եթե տափաստանը մի տեղ պահած կեր ունենար: Շատ վաղուց
այդ հողը չէր հերկվել, չէր ցանվել եւ հատիկ չունե՞ր՝ դաշտամկան
եւ երկնքի թռչունների կեր: Մարդիկ կարողանում են մենակ ապ-
րել, իրենց ապրուստը նրանք մտքով ծրագրում են, աշխատան-
քով ստեղծում, իսկ տափաստանում ամեն կենդանի արարած
ապրում է ավելի թույլի եւ զուտ բնության տվածի հաշվին: Եւ
Շունն ամենավերջին թույլն էր, քանի որ ապրում էր մարդկանց,
օձերի եւ մողեսների հարեւանությամբ: Մարդիկ նրան հեռու էին
քշում, քանի որ շան կարիք չունեին, բայց Շունը չէր հեռանում,
որովհետեւ օձերից վախենում էր:

Շունը չգիտեր, որ հանդիպակաց արարածները մարդ են կոչ-
վում: Չէր հասկանում, թե ինչու՞ են նրանք հայտնվել այդտեղ,
ի՞նչ են անում: Ինչքան էլ ուշադրությունը սրեր՝ չէր կարող գանա-
զանել նրանց զբաղմունքը: Նրա գիտեցածը ջրի կլորափոր մեքե-
նան էր, որ գալիս էր օրումեջ, դաշտային խոհանոցը եւ մի երկու
արարած, որ երբեմն դուրս էին վազում, երբ շատ էր մոտենում,
քար նետում, ապա կրկին մտնում հողապատնեշի մեջ փորված
իրենց կացարանն ու դուռը պինդ փակում: Նա արդեն վարժվել
էր դժվար համակեցության առօրյային. երբ ծուխ է անում դաշ-
տային խոհանոցը,- Շունն, իհարկե, այդ անվանումը չգիտեր եւ
կողմնորոշվում էր եփվող կերակուրի հոտով,- ուրեմն կարելի է
դուրս գալ ուռուտից, անցնել հեղեղատն ու տնակի առաջ ծմր-
կալ: Բազում օրերի փորձով նա հասկացել էր, որ տարօրինակ
արարածները ճաշթողի ժամերին բարիանում, իրեն մոտ են թող-
նում, եւ դեռ երբեք չէր սխալվել:

Կամուրջը լուռ կեցած էր: Միջօրեի կուրացնող լույսի մեջ հե-
նասյունների բետոնը Շանը հեռավոր զովություն էր հուշում. եր-
բեմն նա գնում- պառկում էր այնտեղ, երբ օրվա կերն ու ջուրը
գտած էր լինում եւ երանության մեջ վայելում ստվերի, ավելի
հազվադեպ՝ միջանցիկ սյուքի հաճույքները: Եթե գետակն ամռա-

նը չչորանար, գևար- հասներ մի մեծ գետի, որ ինչ-որ տեղ կա եւ թափվում է հեռավոր ծով, ապա հակառակ ուղղությամբ քամի կբերեր, եւ ամռան շոգը կմեղմվեր, բայց արար աշխարհում աստված Շանը տվել էր մանրատերեւ ուռուտը, չորահուն հեղեղատը եւ տափաստանի մեռյալ ամայությունը, որտեղ հակառակորդ գորքերը կանգնած էին դեմ - դիմաց եւ սպասում էին, թե առաջինն ո՞վ է սկսելու այն, ինչ տարիներ առաջ ընդհատվել, բայց չէր ավարտվել:

Արտառոցն առավոտվանից տիրող ամայի խաղաղությունն էր, եւ Շունը փորձում էր հասկանալ. թաքստոցի իր դիրքից նայում էր հողապատնեշի ուղղությամբ, ուր ոչինչ տեղի չէր ունենում: Մանրիկ դողն անցնում էր ողնաշարով մեկ, թաթերը լարումից չանգտում էին փորատակի կարծր գետինը, եւ Շունը դժվար էր գսպում հեղեղատը երկու կարճ ցատկով անցնելու մղումը: Կամուրջն արեւի տակ կանգնած էր՝ բարձր հենասյուների վրա, եւ զով բետոնի հրապույրը նրան համառորեն կանչում, գրավում էր ջրի հիշողության կախարդանքով: Շունը հայացքը հեռացրեց հողապատնեշից եւ դիտեց կամուրջը. նույն տեսարանն էր՝ ինչ որ ամեն օր, բայց ինչու՞ թվում է, թե արտառոց մի բան է կատարվել:

Նա թաթով քշեց դնչի մժեղներին, գլուխը մի փոքր դուրս հանեց ուռուտից: Այնտեղ, ուր հողապատնեշը մի թելով հասնում էր մայրուղու հանդիպակաց հատվածին, Շունը չոր խոտերի մեջ շարժում տեսավ, նույն պահին նա թիկունքից հռնոյուն լսեց, ապա դեմից ռունգերին խփեց տաք խարկահամը: Շունը վախով ետ՝ թաքստոցի խորքը քաշվեց եւ գետնամած կուչ եկավ:

...Շոգ է, թե՛ պաղ, քամի կա, թե՛ ոչ, ձյուն է կամ անձրեւ, այստեղ օրացույցն իմաստ չունի: Խրամատներում տարվա ընթացքը հասկացվում է միայն նորեկների եւ զորացրվողների հաջորդայնությամբ՝ գարնանը եւ աշնանը: Մնացած ամբողջ ժամանակը բաժանված է հերթափոխերի միջեւ: Խրամատներում մշտական բնակչություն չկա, եւ Շան հարեւանությունը չէր կարելորվում: Մի շուն մարդկային քնքշանքի կամ հրամանի վարժեցնելու ժամանակ թշնամու լուռ կամ երբեմն դիպուկահար կրակոցներով հիշեցվող ներկայությամբ ոչ ոքի, նույնիսկ դաշտային կրտսեր հրամանատարներին, տրված չէր: Նրանց համար շունը գոյու-

թյուն ուներ այնքանով, որ օրը մեկ անգամ գալիս- ծմրկում էր խոհանոցի մոտ, լափում քարթու հաց, մի շերտի ոսպ կամ մակարոն, լակում ամանվա ջուրը եւ նորից քաշվում ուռուտ:

Չինվորներին չոր օրապահիկ էին բաժանել, նոր քողարկագ- գեստ, կարգադրել էին մաքուր թրաշվել, թարմացնել օձիքները, փայլեցնել ճտքակոշիկները: Հատկապես ուշադիր էին եղել դի- պլոկահարների հանդեպ, եւ խրամատներում տարածվել էր կասկածը՝ ի՞նչ է պատահել: Սերժանտական կազմը մի թեթեւ ակնարկել էր, որ բարձրաստիճան հյուրերի են սպասում, թե ու՞մ,- իրենց էլ հայտնի չէ: Միայն գիտեն, որ ուղղության առաջա- պահում ականագերծվել է նեղ անցուղի: Եւ լուսաբացից բոլորն իրենց հատկացված տեղերում էին, իսկ դիպլոկահարները, խո- տերի մեջ քողարկված, մայրուղու երկու կողմերում գրավել էին հարմար դիրքեր: Նրանց հրամայված էր նշանառության տակ վերցնել կամուրջը, որի զուգահեռ երկու հատված գծանշվել էր դեղին- կարմիր՝ շերտավոր ժապավեններով:

Շունը թիկունքից հռնոյուն լսեց, ապա ռունգերին խփեց տաք խարկահամը, եւ մինչ նա կտափակվեր ուռուտի կարծր գետնին, լքված գյուղի կողմից մեքենաների շարասյունը մայրուղուց թեք- վեց եւ հողափոր ճանապարհով մտավ չորահուն հեղեղատը: Առ- ջեւից ընթանում էր «Ուազ»-ը, ապա՝ OSCE կողանշումով երկու ջիփ, վերջում՝ մի քանի «Նիվա»: Շարասյունն անցավ հեղեղատը եւ հողապատնեշի մոտ, որտեղ նախօրեից մնացել էր ջրի կլորա- փոր մեքենան, կանգ առավ: Ուղղության հրամանատարը թռու- ցիկ ընդունեց դիրքապահ սպայի գեկույցը, ապա բոլորին խոր- հուրդ տվեց զգույշ լինել եւ իջավ խրամատ: Մյուսները հետեւե- ցին նրան:

Նույն ժամին գորքերի շփման գծի հակառակ կողմից խրա- մատ իջավ միջնորդ առաքելությունը՝ դաշտային հրամանատա- րի առաջնորդությամբ: Մինչ այդ նրանք Բաքու- Բարդա ճանա- պարհը կտրել էին ուղղաթիռով: Կողմերի ուղղության հրամանա- տարներին տրվել էր միջնորդ կապի հաճախականություններից մեկը, որպեսզի անսպասելի ոչինչ տեղի չունենա:

Միջնորդների համար անցուղի բացել էին վաղուց ականա- պատված «չեզոք գոտում», բայց ո՞վ էր երաշխիք տվել, որ տե-



ղանքի հետագա քարտեզագրումը համապատասխանում է իրականությանը. պատերազմի օրերին կողմերից ոչ մեկը չէր պատկերացնի, որ տարիներ հետո հատկապես իրենց հատվածում հարկ կլինի բարձրաստիճան հյուրերի համար միջանցք բացել եւ ականապատել էին՝ ինչպես կարողացել էին, որքան հերիքել էր սակրավորների պատրաստվածությունը կամ, ավելի շուտ, պահանջել էր ապահով լինելու նպատակահարմարությունը:

Դեմ-դիմաց գործում է մի սկզբունք՝ ինչքան հնարավոր է՝ սահմանափակել հակառակորդի շարժունակությունը, նրան գամել խրամատներին, ծավալվելու չնչին իսկ հնարավորությունից զրկել: Հակառակորդ գորքերը շփման որեւէ այլ միջոց չունեն, քան՝ փոխադարձ զսպման ազդեցությունը, եւ ականապատ միջակայքն այդ համակարգի ամենաազդեցիկ բաղադրիչն է, որ գրեթե չէզոքացնում է առաջապահ հետախուզության վտանգը, թեեւ երբեմն պատահում է անհավատալին. մեկը հայտնվում է մյուսի թիկունքային դասավորությունում, բայց կողմերը փոխադարձաբար թաքցնում են նման դեպքերը:

...Կողմերի ուղղության հրամանատարները սառը բարեւեցին: Նրանք հագել էին առանց տարբերանշանների երթադաշտային քողարկազգեստ եւ կողքից նայող անծանոթն առաջին պահ կոժվարանար ըմբռնել, որ հակառակորդ բանակներ են ներկայացնում: Մյուսներն ամառային քաղաքացիական հագուստով էին, իսկ միջնորդները նաեւ գրահաբաճկոն էին կրում եւ քրտնամխած էին: Նման դեպքերի համար մշակված արարողակարգը պահանջում էր մի կերպ մեղմել օտարությունը. այն կողմից սառնախցիկ արկղերով բերել էին խավիարով լցոնած կլորահացեր: Նույն կերպ այստեղից մայրուղու կամրջահատված էին բարձրացրել սառնությունը դեռ պահած՝ մի երկու դյուժին «Կիլիկիա» գարեջուր:

Այն կողմի ուղղության հրամանատարի ձեռքից մյուսը վերցրեց խավիարով լցոնած կլորահացը եւ փոխանցեց գարեջրի շիշը՝ նախապես մի կում խմելով, հակառակորդ սպան գարեջրի շիշը տարավ շուրթերին, մի թեթեւ բերանը ողողեց, եւ մյուսը մի պատառ խավիարահաց ծամծմեց: Միջնորդները ծափահարեցին: Հետո հանեցին գրահաբաճկոնները, անձեռոցիկներով սր-

բեցին քրտիկները, ապա ձյունաթույր թաշկինակներով քամհարվեցին: Նրանց ուղեկցող լրագրողները երեւի շատ կուզե՞նային լուսանկարել այդ հազվագյուտ պահը, բայց շփման առաջավոր գծում դա կդիտվեր որպէս կողմերից մեկի համար լրտեսություն, եւ նրանք դա հասկանում էին:

Արարողակարգն սպառնալից: Հակառակորդ կողմերի ուղղության հրամանատարները զուսպ ձեռքսեղմումով բաժանվեցին: Միջնորդները հրաժեշտ տվեցին այն կողմից ուղեկցողներին եւ իջան խրամատ: Դիրքապահ զինվորը ձիգ կանգնած էր: Ուղեկցողներից մեկը թառափածկան խավիարով լցունած կլորահացը պարզեց, բայց նա ուշադրություն չդարձրեց, թէ իրեն հյուրասիրում են:

Միջնորդները դուրս եկան խրամատից, շրջանցեցին հողափոր տնակը եւ նստեցին OSCE կողանշումով ջիփերը: Ուղղության հրամանատարի «Ուազ»-ը դարձյալ կանգնեց շարասյան առաջամասում: Մյուսները խառն տեղավորվում էին «Նիվա»- ներում:

Արեւը մեխվել էր գենիթում: Վերջին «Նիվա»-ի ուղեւորներից մեկը բացեց ջրի մեքենայի ծորակը: Ջուրը գոլ էր, բայց նա, այնուամենայնիվ, մի երկու բուռ ցայեց դեմքին: Շարասյունը շարժվեց: Նա շտապեց տեղավորվել մեքենայում՝ մոռանալով, որ ծորակը չի փակել: Ուղղության հրամանատարի «Ուազ»-ն արդեն անցել էր հեղեղատը, փողորակից ջուրը թափվում էր հորդ շիթերով: Տնակի մոտ ոչ ոք չկար:

..Շունը դուրս թռավ ուռուտից, ցատկոտեց շիկացած գլաքարերի վրա եւ նետվեց դեպի կլորափոր մեքենան: Վերջապահ «Նիվա»- ի ուշացած ուղեւորը, որ տեղում չէր հարմարվել դեռ, ակամա ետ նայեց այն պահին, երբ վազքի մեջ Շունը մի կարճ վերցատկ արեց, ապա անսպասելի զարնվեց գետնին եւ թեք լանջով գլորվեց:

-Ի՞նչ շուն էր, ի՞նչ եղավ,-տազնապեց ուշացած ուղեւորը:

-Շուն էր, էլի, երեւի խփեցին:- կողապակու մեջ նայելով, անտարբեր ասաց վարորդն ու դրեց երրորդ արագություն:

Հրամանատարական «Ուազ»-ը մտնում էր մայրուղի:

Հեղեղատը չոր էր: Շան մորթը՝ գորշ- հողագույն, իսկ Զա՛հա՛ը... դուրս էր եկել իրիկնային գրոսանքի: Եւ ուրախ էր: Հան-

գիստ: Գրանոթները լուռ էին: Թշնամի խրամատներով երբեմն տազնապ էր անցնում: Գետոտ ամեն ինչ վերադառնում էր սկզբին: Գրադադարը պահպանվում է: Առհասարակ: Իսկ զոհվողը զոհվում է:

Աղջիկները... Փողոցն ի վեր՝ փողոցն ի վար: Քայլում են: Գեղեցիկ:

Տխրություն էր հմայքդ մսե,

Կարինե, մշուշ Կարինե:-

Քաղաք: Սրճարան: «Կաֆե»՝ ինչպես կասեր Չարենցը: Մշուշ:

«Շավարշ Բասենցյան: Խմբապետ Շավարշ»: Խմում է: Բայց

դեմքին ոչ մի սպի էլ չկա:

Իմն է, Շավարշ, չեմ տա,

Իմ ձեռքից փախավ շան քածը:-

-Ո՞նց թե՛ «չեմ տա»:

Արա, դու ո՞վ ես:

Ապե, էս ո՞վ աս:

Թաթիկը: Եգորը:

«Դրոն՝ մինիստր»:

Դրոն՝ մինիստր:

Մուղղուսին՝ մինիստր:

Ես Մուղղուսու մերը...

Աղասի Խանջյան: Կինը՝ ջիուդ: Ում սիրահետում էր Լավրենտի Բերիան՝ ըստ Աղասի Այվազյան՝ թիֆլիսցի հայ գրողի երեւակայության՝ Դարաչիչակի ճանապարհին: Դարաչիչակը Մովսես Խորենացու իմացած Ծաղկունիքն է: Ծաղկածոր: Ծոպանուղի: «Բուրան»: Գրողների միության հանգստի տուն:

-Չարենց, արի մեզ տար, տնից դուրս են արել: -1937 -ի «արեւդարձային ամառ»՝ Արփենիկ Չարենցի հուշով:

«Անդրկովկասի բուլշեւիկյան կազմակերպությունների պատմությունը»: Զեղինակը՝ Լավրենտի Պավլովիչ Բերիա: Քննադատը՝ ԶԽՍՀ լուսժողկոմ Ներսիկ Ստեփանյանը: «Այ մարդ, ի՞նչ ես կորցրել, պե՞տքդ է՝ ով է Կովկասում առաջին բուլշեւիկյան քիչներ ստեղծել, ժողկոմ ես՝ քեզ համար ապրիր, էլի: Ունեցածդ մի կին էր՝ էն էլ թողել-գնացել էր, Բերիայի հետ ի՞նչ գործ ունեիր, մտավորական հայ»: Խեղճ Բակունց Ակսել: «Զիմ ծիրանի

փող...»:

Իսկ Գորիսի նրանց այգու թթենուց Դուլունց Արտաշն արաղ է քաշում, պետությունից աշխատավարձ ստանում, որովհետև Բակունցի տուն-թանգարանի տնօրենն է, խմում եւ այցելուներին պատմում, որ Ակսել Բակունցի մոր անունը Բոխչագյուլ էր, նրա «պատկերքը քաշել է ռուս Լանսերեն, երբ Չանգեզուր էր եկել», - իսկ հայրը վշտին երկար չի դիմացել, Բակունց ողջ տոհմն Ակսելից հետո փախել-ցրվել է՝ Միջին Ասիա՞, թե՞ Բաքու»,- Արտաշը լավ չի հիշում: «Դե պատմում ես, հին կյորեսեցիք էին ասում», - խմած-խմած կանգնել է բակում, իսկ այնտեղ գարնանամուտ ամսավերջի թույլ արեւ է, ցանկապատի տակ՝ մի երկու կարմրագլուխ եղինջ, եւ հուշադրյուրի ժանգոտ ծորակից ջրի մի բարակ շիթ ծորում է՝ որպես «չքնաղ կյորեսերեն»...

Արփենիկ Չարենց՝ դուստրը: Որ տեսնում էր՝ որբանցային դաստիարակչուհի Վարյա Բակունցը,- աքսորի իր բաժինը կրել՝ Ակսել Բակունցի կինը վերադարձել էր Երեւան, աշխատանք էին տվել, ապրելու տեղ՝ նույն մանկատանը, որտեղ Չարենցի Բոժիկ-Արփենիկն էր ապաստանել,- ճաշի մակարոն է չորացնում ուսանող որդու համար: Սեւադա Բակունց: «Սեւադա՛ իշխան Սյունաց»:
«Կաքավաբերդի գլխին տարին բոլոր ամպ է նստում»:
ՉԷ՞ր կարելի «Իոսիֆ», «Լավրենտի»: Կամ՝ «Վալոդ»:
«Կլիմ»:
«Վորոշիլով»:
«Մարշալ»:
Ինչ Սյունիք, ինչ իշխան, անունն էլ՝ Սեւադա: Սեւադա անուն կլինի՞:-

-Ինչու՞ չի կառուցվում Երեւան- Աղստաֆա երկաթուղին: Ինչու՞ է ժողտան շինարարությունը ձգձգվում, ինչ է, թե Դավալու-ի ցեմգործարանի արտադրանքը գնում է Թիֆլիս: -

Թե քո ինչ գործն էր՝ Թիֆլիս՞ էին տանում, թե՞ Թուրքիա: «Ընկ. Մուստաֆա Սուբխու եւ ընկերների հիշատակին»՝ դարձյալ Չարենց- «որ մտնի համաշխարհային սով-նար-կոմ»- «Յայկական Բուլալոն եւ իր արբանյակները»- «Օ՛, ցնդած պոետ, Եղիշե Չարենց»:

-Ես անչափ երջանիկ եմ, որ կարողացա մտնել Կրեմլ: Թանկագին Իոսիֆ Վիսարիոնովիչ, թույլ տվեք հայերեն արտասանել մի բանաստեղծություն, որ գիշերս եմ գրել.

Աքիլլեսին Յոմերն երգեց, Ռուստամ Չալին՝ Ֆիրդուսին,

Ոսկեգոծվեց հազար երգով Բոնապարտի փառքը սին»:-

Վանի Խառակոնիս գյուղից՝ Հայաստան Եղիազարի Եղիազարյան, որին «Նաիրի Չարյան» Չարենցն էր կնքել: Դարձավ շքանշանակիր: ԼԵՆԻՆԻ:

-Ինչպե՞ս է իրեն զգում բանաստեղծ Չարենցը: Նրան, կարծեմ, նեղացնում են:- Իոսիֆ Ստալին:

-Հիմա նա իրեն լավ է զգում:- Ստեփան Չորյան:

-Ոո՛ո՛ո՛ո՛ո՛ո՛ն՛չ, չնչին ամպերի սեւ զորքը

Պաշարեց արեւից առաջ՝ Քեզ,- («քեզ»-ի մեծատառը հնարեցինք- Վ. Ա.)

Իսկ այնտեղ՝ ներքելում, երգի սով էր,

Բայց հրճվում էր Պառնասն՝ առանց Քեզ:- Եղիշե Չարենց:

Արփենիկ: Անահիտ: «Բոժիկ»: «Ադոկ»: Իզաբելա Կողաբաշյան: Աքսոր:

«Մայրդ գեղեցկուհի է, կամուսնանա»:- Վարյա Բակունցը՝ Արփենիկին:

«Որպեսզի ձեռքեձեռք չընկնի»:- Արփենիկը՝ Վարյա Բակունցին: Եւ՝ Իզաբելայի գրկին՝ շեղաչք, դեղնամորթ մի երեխա. Չարենցի կինն աքսորում ամուսնացել էր իրեն մահվան ճիրաններից փրկած մի բաշկիրի՞, թե՞ ուղմուրտի հետ, բայց տարիներ հետո հասել էր Երեւան՝ որպես նահատակ բանաստեղծի այրի... Նա ձեռքեձեռք չէր ընկել, մանկատան դաստիարակչուհի Վարյա Բակունցն էր «ձեռքեձեռք ընկել»:

-Ես խորհրդային գրականության քեղածին էի, թողեք Խորհրդային Հայաստանի դռան շուրջ լինեմ,- Ակսել Բակունցը՝ ՆԳ Ժողկոմ Խաչիկ Մուղդուսուն: Դատավճիռը՝ գնդակահարություն: - Լուսնահար ուրվականի պես՝ ինքն ինչպե՞ս է թաքուն գնդակահարության այդ պատկերը գեղագրել՝ «Եղբայրության ընկուզենիներ»-ում- գրելիս, ուրեմն, ունեցե՞՞լ է նույնկերպ նահատակված լինելու «աստեղային մորմոքը»- չգիտեմ, բայց գրականության մեջ ոչինչ պատահական չի նշատեսվում-

Իսահակյան Ավո: Դեմիրճյան Դերենիկ, որ «Վարդանանք» էր գրել եւ Վարպետի տանը ճաշին ուտում էր... լորի տապակած լեզու...Տիկին Սոֆի: Վիգեն: Բելլա: Ավիկ:- Շնորհակալություն քեզ, Արփենիկ Չարենց, որ հասկացրել ես մեզ «ոչ երկրորդական»

Ավետիք Իսահակյանի՝ սովյալ 1940-ականների Երեւանի համեմատ, «կոմս»-ական կյանքից ինչ-որ բաներ...

Հայ Յեղափոխական դաշնակցություն: Արշակ Չոպանեանի նամակը՝ Աղասի Խանջյանին. «Կուզեի, որ Նախճավանի հարցը հարուցեիր»: Իոսիֆ Ստալինի առաջ՝ հարուցեր: «Դոֆինը Նաիրյան»:

Իսկ Փարիզը չքնաղ է:

Ավետիս Ահարոնյան:

-Դարերի մշուշի վրա գրում է՝ «վեց վիլայեթ»:-

Բեյրութը՝ արեւելյան Փարիզ:

Լեւոն Շանթ: Աստվածները մեռան: Բոլորը: Հին եւ նոր:

Սիմոն Վրացյանին.

-Սիրելի Սիմոն, ալ չեմ հիշեր, թե Լեգրան ինչ ըսավ, խնդրեմ՝ կարգադրես՝ Փարիզին գործս ի՞նչ եղած է:

«Ըսի՝ ըսավ»:

«Նորին գերագանցություն Մեծարգո Օսմանյան կառավարության զինվորական մինիստր՝ Էնվեր փաշային Կոստանդնուպոլիս

Հայաստանի Հանրապետության կառավարությունը պատիվ ունի հայտնելու Ձերդ գերագանցությանը, հանուն մեր բարեկամության, իրազեկ դարձնել Ձեզ այն մասին, որ Անդրանիկ փաշան խուսափել է մեր կառավարությունից, իմանալով, որ զինվորական դատի պիտի ենթարկվի մեր զինվորական մինիստրին չենթարկվելու համար: Անդրանիկ փաշան տաճկահպատակ հայերից կազմել է առանձին զորաբանակ, նպատակ ունենալով անցնել Ջուլֆայի կամուրջը եւ Խոյի ու Սալմաստի շրջանում միանալ Վանից նահանջող ժողովրդին: Նա մտադիր է ուժեղ բանակ կազմել, ստեղծել սեպարատ պետություն եւ հարձակվել ձեզ վրա: Խնդրում ենք միջոցներ ձեռք առնել նրան վերջնականապես ջախջախելու համար:

Հայաստանի Հանրապետության կառավարության նախագահ՝ Զ. Բաջազնունի

Հայաստանի Հանրապետության զինվորական մինիստր՝ Արամ փաշա Մանուկյան

Հուլիսի 17-ին, 1918թ.»:

Թող ոչ մի զոհ չպահանջվի ինձնից բացի,
Որիչ ոտքեր կախաղանին թող մոտ չգան:-
Չնդապետ Մազմանյանի մի հատիկ կրակոցը՝ սեփական
քունքին:

Թիֆլիսից հասել Երեւան՝ ասում է. «Խնդրեմ՝ ընկ. Չարենցը
մի տեղեկանք տա, որ ես Մեռելի Ենոքը չեմ»: Նախկին կարսեցի
է: Կարդացել է «Երկիր Նաիրի»-ն եւ նաիրցու խելքով մտահոգ-
վել, թե ինչու՞ պիտի իրեն Մեռելի Ենոք ասեն: Իսկ «Մազուրի Յա-
մո»-ները տեսք են անում, թե Չարենցի հերոսը չեն, չեն եղել, չեն
լինելու...

Անշիրիմ Չարենցը...

Եռաբլուր...

Դրաստամատ Կանայան: Չեներալ:

Ո՞ր ճակատամարտի:

Բաշ- Ապարանի, որտեղից թուրքերն անցան Լոռի, իջան՝ Աղս-
տեւի հովտով մտան Գանձակ եւ հռչակեցին «Ադրբեջանի դեմոկ-
րատիկ հանրապետություն»: Նուրի փաշա: Յետո շարժվեցին
Բաքու:

Շահումյան Ստեփան: Կոմունա: 26 կոմիսարներ: Անապատ:
Ախչա- Կույմա: «Պյատաչոկ» -ից Շահումյան Ստեփանը դեռ նա-
յում է Արեւելք: Որտեղ Կասպից ծովն է: Յներն ասում էին՝ Կրկա-
նա...

Իսկ Քաղաքը հարբում է Շավարշ Բասենցյանի նման, որ բոլոր
մարտերում պարտվել էր: Բայց հերոս էր: Որովհետեւ վառել էր
«թուրքական Թալինը»: Եւ նժույգի սմբակների տակ տրորել... Մի
թրքուհու՞ պատճառով, որ իրեն բաժին չէր ընկել, թե՞՝ որ տղեր-
քից մեկն ուզեցել էր «շնանա՞» թրքուհու հետ...

Երկիր Նաիրի, երազ հեռավոր

Քնած ես քնքուշ թագուհու նման,

Մի՞թե քեզ պիտի ես երգեմ օրոր

Եւ արքայական դնեմ գերեզման,- Վահան Տերյան... 1914թ.:

...Մեր կյանքի հիմերն անդունդը ընկան

Եւ արևոտ միգում ճարճատում են դեռ,- ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ՝
«բանաստեղծ՝ ծնված Մակու քաղաքում».....

**Իսկ Զաղաքը Չարենց չի կարդում, չի կարդում առհասարակ:
Եւ չգիտեմ, թե այս ոչ օրինաչափ գիրքն ում է հասցեագրվում:
Ազնիվ խոսք՝ չգիտեմ, եթե՝ «մի երկու տարի առաջ խոսում էի ոս-
կեպարցի թուրք գրողի հետ, ասաց՝ «Ադրբեջանում երկու անգ-
լուխ լեշ կա թաղված՝ Յիցիանովի եւ Հաջի Մուրադի»: Մեկին որ-
պես դավաճանի են սպանել, մյուսին՝ նվաճողի», - Հրանտ Մա-
թեւոսյան՝ «վերջին երգիչը Նաիրյան քնարի», իսկ Վարդան Հա-
կոբյան բանաստեղծը Փոքր Միերի դարձին սպասում է... Մատե-
նադարանի դռներից...**

*Երթամ հիմա, տամ պարանոցս կարոտին այն երկնուղեշ
Եւ օրորվեմ եղերական ու անբասիր...*

1994-2014 ամի Տեառն Մերոյ Հիսուսի Զրիստոսի:

«ԵՐԿՐԻ ԺԱՄԱՆԱԿԸ» ԳԻՐՔԸ

Մի անգամ մարդը գիշերային երկնքի անծայրածիր մութ անդունդներին նայեց, ասաց. «Վախենում եմ նրա տիեզերական անսահմանությունից»: Աստված մանանեխի հատիկ վերցրեց եւ համեմատեց անսահմանության հետ, ասաց. «Մի վախենա, ես քեզ կպահպանեմ, այո, մի հատիկն ու տիեզերքի մեծությունը չեն տարբերվում իրարից»:

Պատերազմը փոխակերպել է Արցախին, նրա ժողովրդին տարել է այնտեղ, ուր բնավ չէր կարող հասնել խաղաղության օրերին: Նրան նաեւ ապրելու կենսունակություն եւ հնարավորություն է տվել, որպեսզի մարդկային փխրուն ուժերը կարողանան հարմարվել հետպատերազմյան ժամանակաշրջանի ծայրահեղորեն զորեղ ազդեցություններին եւ այդ ամենի հետ մեկտեղ նրան տալով՝ ազատություն ձեռք բերելու մտավոր ընդունակություն, ճաշակ եւ կամք, որոնք ավելին են, քան այն ամենը, ինչ կտար խաղաղ, հնազանդ կյանքը: Վահրամ Աթանեսյանի էսսեն կամ արձակագրությունը յուրահատուկ տեսանկյունով է դիտարկում պատմա-կենսագրական, փիլիսոփայական, հրապարակախոսական արժեքներ ունեցող իրադարձությունները:

Կոմպոզիցիոն ազատ կառույցի մեջ է ներառել անձնական տպավորությունները՝ սկսած պատանեկության տարիներից, մտորումները՝ Արցախի վաղնջականության, պատերազմի եւ հետպատերազմյան ժամանակաշրջանի վերաբերյալ: Միահեղ այդ ամենը ասացվածաբանություններով, կենսունակ կերպարայնությամբ, ժողովրդի խոսակցական երանգավորումներով, երբեմն էլ բարբառով ասելու այնպիսի պատմելաձեւ է ընտրվել, որ թվում է՝ արծարծվող իրադարձություններին եւ խնդիրներին վերջնական պատասխաններ կամ կոնկրետ գնահատականներ տալու նպատակներ չի էլ հետապնդում, ինչից վեպն ավելի խորհրդավոր է դառնում:

Ժողովրդի հետ դեմառդեմ հանդիպած պատերազմի ուղնուծուծը պայմանականորեն անորոշ է նկարագրված, երբեմն համընդհանուր ընդունված չափանիշներ են օգտագործվում, երբեմն

շնորհաշատի չվնասող կամայականություններ է հանդես բերում, սակայն կուռ նյութի եւ առավելագույն ճարտար ձեւի, մաքուր խոսքի շնորհիվ հնարավորություն է բացվում արցախյան փորձությունների անցուդարձի մասին մեր պատկերացումները Վահրամի խղճի, բարության չափանիշներով ճշգրտել: Այս գործը կորուստներին հաջորդած՝ հետպատերազմյան ժամանակաշրջանում երբեւէ գրված ամենաբարոյական գրքերից մեկն է:

Յեղիսակը սաստիկ շահագրգիռ է՝ բացել ու առանց չափազանցությունների խոսել մինչպատերազմական եւ պատերազմական բոլոր սխալների եւ թուլությունների մասին, դրանք մանրամասնորեն արժեւորում է՝ նշանավոր կուսակցական պաշտոնյաների, մերօրյա չինովնիկների, զինվորական հրամանատարների եւ մասնակից հասարակ ժողովրդի կատարած գործերի թողած հետեւանքներով, որոնց՝ անտանելի պատերազմական աղետը կամ հրեշտակների, կամ կենդանիների էր վերածել: 1992թ. Մարտակերտի ճակատամարտերը անասելի տպավորիչ են նկարագրված: Մարդն արթուն է, հրացանավոր է, կենդանի է, բայց պատերազմական իրադարձությունների միջով հոսող նրա կյանքը կարծես մեկ ուրիշի կյանքն է, երագի մեջ է կատարվում, այդպես է՝ նաեւ Մարտակերտի ամեն մի թիզ հողի համար մեկը մյուսի հետեւից տղաների անհետանալը: Նրանք բոլորն ապրում էին, մեկ էլ հանկարծ, ինչպես երագում է պատահում՝ ոչ ոք չկա, մի աներեւույթ միստիկ գոյություն բոլորին տարել է: Դռները բաց էին, դռները փակվել են:

Գիրքը վկայում է, որ նա կարողացել է իր ժամանակի աստծուն՝ ամեն ինչ ապրեցնող եւ ամեն ինչ մեռցնող պատերազմը զննել գրողի մեկ ուրիշ՝ այն աչքով, որով նա տեսնում է անհայտ տեղից մոտեցող աղետը, թե ինչպես են նրա խորքում կրակն ու սառույցը, բացն ու փակը, լույսն ու ստվերը, շարժունն ու անշարժը, սատանան ու խաչը, ճշմարիտն ու կեղծիքը գործում որպես հրաբխային անկասելի ուժեր, եւ դրանք պատերազմի եւ հետպատերազմյան խաղաղ ժամանակաշրջանի օրերին դառնում են ժողովրդի ազնիվ հոգեկերտվածքի դեմ գործող անխուսափելի քառս եւ հակամարտություն սփռող աղետներ:

Գրքում անհավասարաչափ, բայց նշանակալի նկարագրություններ կան, ուր փայլատակում են գեղարվեստի հմայքն ու ռիթմի երաժշտականությունը, հեղինակի՝ տեսնելու բարձր շնորհքը: Գրում եմ, միաժամանակ, գիտենալով, որ իմ բառերը իրենց խորքում կերպար զարդարող գայթակղիչ ուժ ունեն, հեշտ են օգտագործվում բնութագրությունների ժամանակ, եւ պետք է դրանք զգուշորեն գործածել: Այնուամենայնիվ, Վահրամի՝ հեռուն տեսնելու ընդունակությունը, վերլուծությունների զորությունը, տրամաբանության եւ երեւակայության ունակությունը, այլուրից մոտեցող միստիցիզմին մասնակից լինելը, խոշորածավալ գաղափարներ կառուցել կարողանալու ճշգրիտ հաշվարկները, հոգեբանություն ստեղծելը վստահություն են ներշնչում եւ միայն ու միայն լավ գրքի լույս աշխարհ գալու մասին են վկայում, որը կարող է հոգեւոր ազդեցություն ունենալ ամենատարբեր ընթերցողների վրա եւ նրանց մոտեցնել խոկուն իմաստությանը:

ԼԵՎՈՆ ԽԵՉՈՅԱՆ

ՎԱՅՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

ԵՐԿՐԻ ԺԱՄԱՆԱԿԸ

Խմբագիր՝	Վարդան Յակոբյան
Սրբագրիչ՝	Շողեր Յայրապետյան
Էջադրումը՝	Մարինա Ավանեսյանի
Կազմի ձեւավորումը՝	Մերի Դրավյանի
Գծանկարները՝	Ալվարո Գրիգորյանի

Թուղթը՝ օֆսեթ, չափսը՝ 60x84 1/16: Ծավալը՝
16 տպ. մամուլ: Տպաքանակը՝ 250

Տպագրվել է «Դիզակ պլուս» հրատարակչության տպարանում
Ստեփանակերտ, Բ. Յակոբյան, 25